# Hawak‘owmn patmowt‘ean Vardanay Vardapeti

## lowsabaneal

**Vardan <Arevelc'i>**

urn:nbn:de:hbz:5:1-9756

Goussen 3095

## ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

# ՆԱԽՆԵԱՑ

---

## ՊԱՏՄԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

hat meist nur Mar Michael, dem Großen gefolgt!

3095

ՀԱՒԱՔՈՒՄՆ

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

# ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

*ԼՈՒՍԱԲԱՆԵԱԼ*



**Ի ՎԵՆԵՏԻԿ**

Ի ՍՈՒՐԲ ՂԱԶԱՐ

**1862**

3095

Թ
նամ
մերո
և բա
Թութ
գարո
Թեա
արկա
գրեա
յաղգ
անհա
գամ
ժամա
մենա
յիշա
պայմ
գիտե
խարհ
Բայց
կան
այլոց
պէտ

1 · Ա
գործա

# ՅԱՌԱՋԱԲԱՆ

Թախանձեալք 'ի բազմաց յառտնին և յօտարազգի բանասիրաց՝ չարայարել տպագրութեամբ զկարգ պատմագրաց մերոց , անտես առնելով առ վայր մի զընտրութեամբ ոճոյ և բանակարգութեան հայերէն խօսից , ուր ունել ծանօթութեան անցից և դիպաց , մանաւանդ միջին անուանեալ դարուց ժամանակաց , յոր առաւել ինձ սերտիւ պնդութեամբ դեգերին այժմուս պատմաբանք և հնախօսք , ձեռն արկաք նախ յ' առ 'ի բազմաց ըղձացեալն և 'ի չև ևս տպագրեալ[1], 'ի Վարդան պատմիչ , որոյ համբաւ մեծ հռչակի յազգիս , որպէս գերազանցելոյ առ ժամանակակցօքն և անհաւասար մնացելոյ առ 'ի յետնոցն ։ Ցոր սակս , միանգամայն և յորջումն յայլոց համանուանցն մերձաւորաց ժամանակաւ , Մեծ կոչի Վարդանս այս վարդապետ , և ամենապատիւ մակագրական անուամբք մեծարի յամենայն յիշատակագրաց . որպէս , Ամենազով , արդիւնական , պանծապայծառ , հոգիապայծառ , մեծիմաստ , իմաստախոհ , եռամեծ , գիտնական , տրամաբան , աստուածաբան , մեծ սոփեստոս , աշխարհալոյս , աշխարհաքարոզ , տիեզերալոյս , սուրբ , և այլն ։ Բայց այս ամենայն կոչմունք պատուականք չեղեն բաւական առ անխառն պահել զգործս և զգրուածս նորին ընդ այլոցն . և յոլովից յարանուանց վաստակք պիտանի և անպէտ՝ միոյս այսմ վերընծայեցան ։ Եւ ոչ միայն յիրս և 'ի

1 · Մինչ 'ի պատրաստել էաք զգործս զայս՝ լուաք զի 'ի Մոսկով քաղաքի տպագրեալ է պատմիչս , այլ չև ևս հանդիպեցաք մատենին։

գիրս, այլ ինձ Թուի և 'ի հայրենեացն կոչումն սխալեալ, որոց Բարձրբերդցի զսա ասեն. քանզի ոչ ոք 'ի նախնեաց անտի կոչէ զնա այսպէս, այլ մանաւանդ բանք նոցին ցուցանեն յարևելից Մեծաց Հայոց լինել զնա, և ամս ինչ պանդխտութեամբ կեցեալ 'ի Հռոմկլայ և ոչ 'ի Բարձրբերդ. զայլ ումն Վարդան Բարձրբերդցի ցուցանելով ժամանակակից նորին կրսեր, որպէս յիշէ մատենագիծ ումն յամի 1286, որ է իբր վեշտասան ամաւ յետոյ քան զմահ մեծիս այսորիկ Վարդանայ: իսկ զմիւսն զայն զկրսեր՝ Երկրորդ Վարդան կոչէ Ղազար Ջահկեցի կաթուղիկոս, և նմա ընծայէ զՀամառօտ մեկնութիւն չորից աւետարանաց, զԱռակսն, զՀամառօտ աշխարհագրութիւնն, զՄեկնութիւն քերականի. որոց յետինքդ կարծին երրորդի ուրումն կրսերագունի Վարդանայ գործք:

Արդ մերս այս պատմագիր Թուի հայրենեօք յարևելեայ Հայոց 'ի սահմանակցութենէ Աղուանից տան, ուր և աշակերտեցաւ Վանականայ վարդապետի, և նախապատւածանուցաւ քան զերեսին եւս աշակերտակիցս իւր ձեռասունս հաչակելոյ վարժապետին, (յորոց մի պատմիչն Կիրակոս, և միւս՝ Յովսէփ արքեպիսկոպոս առաջնորդ Թադէի վանաց), և առ կենդանեաւ իսկ նորուն համբաւեցաւ զգօնութեամբն և հմտութեամբ. որպէս զի յերթն յերուսաղէմ ուխտագնացութեան աղագաւ հանդիպելով 'ի Կիլիկիա, բազում մեծարանօք ոչ միայն ընկալեալ եղև 'ի Հեթմոյ Թագաւորէ և 'ի Կոստանդեայ կաթուղիկոսէ, այլ և զամս հինգ և աւելի բռնադատեալ ասպնջականեցաւ 'ի յետնոյս, յօժանդակութիւն կարևոր գործոց հայրապետանոյին. որպէս և խոստովանի գովութեամբ կաթուղիկոսն 'ի շրջաբերականի Թղթին՝ զոր առաքեացն առ արևելեայս 'ի ձեռն նորին ինքեան Վարդանայ. « Առաքեցի առ
» ձեզ զարդիւնական վարդապետն զՎարդան՝ փոխանակ
» անձին իմոյ, զոր եւ նախախնամութիւնն Աստուծոյ ձգե-
» լով առ իս 'ի կողմանց ձերոց, 'ի հինգ ամաց հետէ.
» զոր իբրև տեսի՝ ճանաչելով ըստ կարի՝ կապեցի զդա
» միջնորդութեամբ Աստուծոյ ընդ անձին իմոյ կենօք և մա-
» հուամբ, մեծաւ հարկիւ և սիրով բռնաբար ընդ իս յա-
» ւիտեան ... որ ունի զիմ սիրտ և զբան յամենայն իրս »:
Ընդ Թղթոյն տարաւ յարևելս և զկանոնս ժողովոյն Սսոյ՝ գումարելոյ յամի 1243, յորում բազմէր և ինքն ընդ եպիս-

կոստանս և ընդ վանահայրս Կիլիկիոյ. և Թուի 'ի Նշանակեալ Թուականէդ յետս երթալով հասանել 'ի սկիզբն հնգամեայ բնակութեանն յարեւմտեան Հայս, 'ի Թագաւորութեան Հեթմոյ. յորոյ խնդրոյ արար մեկնութիւնս և լուծմունս, որպէս և գրէն առ նա ինքն. « Յիշեա զոր 'ի » ձեռն Թորոսի հրամայեցիք, վասն Եզաբերիցն կանանցն » գրել ձեզ, և 'ի խորհուրդ պատարագին. և ապա երեսօք » յանդուգն հրամայեցիք, որ գրէաք ձեզ ժղլանք 'ի մեկ- » նութենէն քերականին. և ես այլ աւելի սիրով գրել » ձեզ ձեռամբ լուծմունս յաւետարանէն և յարարածոցն ». այսպիսի պարզ և ռամկական ոճով գրեալ են լուծմունքդ և ժղլանքդ (գրոյցք) իբր վաթսուն և վեց թուով. և մեծաւ համարձակութեամբ իբրև ընտանի առ ընտանի, կամ դաստիարակ առ արքայ մանուկ, որում ասէ, « Աստուծով տղայահասակ և մտօք և աչօք զօրաւոր էք », առ 'ի կարող լինել ընթեռնուլ զիւր խակագիր անսեթևեթ գրածն. զոր և աղերսէ մնալ առ դշխոյին Զապելոյ յիւր յիշատակ. « Թող Թագուհի պահէ, և 'ի պիտոյ ժամս առնոյք 'ի Ներմանէ »:

Զգիր կաթուղիկոսին և զկանոնս ժողովոյն բերեալ յարեւելս յամի 1246, և ընկալեալ զձեռնագիր հաւանութեան առաջնորդաց տեղւոյն՝ դարձաւ եբեր առ հոգևոր տէրն, և այլ ևս ժամանակս ինչ յամեալ առ նմա, յայսմ նուազի յամի 1248 Թարգմանեաց կամ յերիւրեաց 'ի հայ զփոխեալն յասորւոյն զընդհանուր Պատմութիւն Միխայէլի պատրիարքի, 'ի ձեռն Իշոխայ ուրումն երիցու Ասորւոյ[1]: Յետ երկրորդ անգամ դարձին 'ի Կիլիկիոյ՝ եկեալ յարեւելս դադարեաց յԱնդրէի վանս 'ի Ջորն Կայենոյ. և անդ, կամ այնուհետև յօրինեաց զգլխաւորս 'ի մատենագրութեանցն զոր արդ 'ի ձեռին ունիմք. և զի յառաջ քան զայն հռչակեալ էր անուն նորա, հարկ է թէ և յառաջագոյն հրատարակեալ էր այլ գիրս և ճառս, որք կամ չհասին առ մեզ կամ ոչ անուամբ նորին: Կարեւոր վաստակք Վարդանայ են մեկնութիւնք սուրբ գրոց, հաւաքեալք յառաջնոց մեկնչաց, յորս ժամանակի երիցութեամբ, Թուի Ա. Դանիէլի մեկնութիւն համառօտ, 'ի խնդրոյ եղբարց միաբանից. Բ. Սաղմոսաց

1. Ի յիշատակարանի Թարգմանութեանն՝ զոր 'ի ձեռին ունիմք, չէք անուն Վարդանայ, բայց վկայէ Ղազար կաթուղիկոս, և բազում հետևողութիւն իսկ հեղինակիս պատմելոյն 'ի Միքայէլէ:

մեկնութիւն, համառօտ քան զՎամբրոնացւոյն, 'ի խնդրոյ առաջնորդին Հաղբատայ՝ տեառն Յովհաննու, որ ոմանց նախորդն Համազասպայ կարծի, և ինձ յաջորդ նորուն, որ նոյնպէս Յովհաննէս կոչիւր. Գ. Մեկնութիւն Հնգամատենին Մովսէսի, 'ի խնդրոյ տեառն Համազասպայ, աւարտեալ յամի 1261. Դ. Մեկնութիւն Երգոց երգոյն, 'ի խնդրոյ աշակերտակցին իւրոյ Կիրակոսի վարդապետի պատմչի, գրեալ յամի 1265, եօթն ամաւ յառաջ քան զմահ իւրեանց, յորոյ վերջաբանին մտերիմ խանդաղատանօք խօսի ընդ ուսմնակցին և ծերակցին. «Իսկ դու միակդ մորենեաց և
» աղտաղտ անբուսաբեր վայրաց, անոյշ մեզ ճաշակ յարա-
» ժամ և յոյս յԱստուած, վարդապետ Կիրակոս, որ հար-
» կեցուցիչ հրամանաւ և զուժին մահու քեզ՝ առեալ զմերն
» մերձակայ, մուծեր զմեզ 'ի տուն գինւոյ և իւղոյ, խնձո-
» րոյ և նռնենեաց, շղթայից արժանաւոր ոսկւոյ, հայել
» լսել և խօսել, հոտոտել և շօշափել զկեանս և զանմա-
» հութիւն»: Առ այսոսիկ որք ծանօթք են մեզ և բազմաց, յաւելոյր ոմն և զմեկնութիւնս Դատաւորաց և Ցեսուայ, և զմարգարէիցն Եսայեայ և Երեմիայ, զոր այլուստ չէ մեր լուեալ յանուն Վարդանայ: Կրկնակի պատուական են մեզ գրուածքդ. մի, զհարց նախնեաց, զորոց զմանց չունիմք արդ լիովին զգործս, 'ի սմա գտանելով գէթ զհատուկտորս բանից, յորս սիրելագոյն մեզ Եղիշեայ բանքն 'ի մեկնութեան գրոց Մովսէսի. և միւս՝ չափ և կուռ համառօտութիւն իմաստից և լուծմանց յորում ոչ սակաւ զգօնութիւն և ճարտարութիւն երևի հաւաքողին. և յառաջաբանք և վերջաբանք գրոցն, որպէս և պատմագրութեանն, խոհականք են և գորովականք, և ախորժագոյնք յընթերցումն. յորոց և քաջիկ մարթ է 'ի վերայ կալ հանճարոյ և ոճոյ արձակ գրութեան հեղինակին, քան 'ի սեղմ և 'ի համառօտ մեկնողական բանիցն, որպիսիք են վերոյիշեալքդ, և Մեկնութիւն տէրունական աղօթիցն, Հաւատամքն 'ի Հայրանց վանուց, և այլն: Իսկ ճառիցն և խրատական բանից՝ յորոց մարթ էր լիովին գտանել զնա, ընդ երկբայութեամբ է հարազատութիւնն. վասն որոյ և զանց առնեմք զնոքօք առ տեղեաւս. բայց 'ի Ներբողէ Լուսաւորչին, զոր գրեալ է 'ի խնդրոյ Նախանձանակեալ տեառն Համազասպայ, որ և չափաւոր ճաշակօքն 'ի գովութիւն կրթի նորա: Զնոյն առաւելութեամբ հաստատեն և շարականք նորին, Որ եախիմացն,

ի յանուանմանն առաքելոցն , Թարգմանչացն և Ս . Սարգսին[1]. չորեքին ևս յառաջին կողմանէ ձայնի (ԱԿ), դանդաղագնացք յերգ և յ' եղանակ , Թերևս հանդարտ բարուց երգողին ցոյցք . նմա ընծայեն ոմանք և զԱերատամ ծաղիկ երեք տուն շարական պերճաբան , իսկ այլք զմեկնութիւն նորին : Վասն սորին Առաքել Սիւնեցի 'ի չափաբանեալ անուանակարգութեան յօրինողաց շարականի՝ կոչէ ,

Սուրբըն Վարդան յուսոյ տեղին :

Այսորիկ հաւաստի երկասիրութիւնք Վարդանայ . իսկ գործք և անցք կենաց նորին յետ դարձին 'ի Կիւլիկիոյ , չեն նշանակեալք ըստ բաւականին. յիշատակի գոլութեամբ յամի 1255 մեծ վարդապետ և աստուածազգեաց այրն Վարդան , նախ 'ի Վիրապին վանս նստեալ ուսուցչապետ , ապա 'ի Սաղմոսավանս և 'ի Թեղենիս , այլ ոչ ունիմք հաստատել՝ Թէ սոյն իսկ մերս իցէ : Նոյնպէս և Վարդանն վարդապետ որ ընդ տեառն Գրիգորիսի Դադիվանից առաջնորդի գնաց 'ի հերքումն և 'ի յանդիմանութիւն ԴաւԹի գիւապատիր մոլորեցուցչի , ոչ է մերս այս , որպէս համարի նոր պատմահայրս Զամչեան[2], զի Կիրակոս պատմիչ իրացն՝ զՎարդանդ զայդ և զԳրիգորիս զայդ Յօժարորդիս ասէ մականուանեալ: Քաջանշան և սխրալի դէպք կենացն այն է՝ զոր ինքնին պատմէ մերձ յաւարտ գրոցն , որ և վկայ է մեծի համբաւոյ նորա առ իւրսն և առ օտարս , մինչև 'ի դուռն աշխարհակալին արևմտից Ասիոյ՝ Հուլաղու ղանի , յորմէ և կոչեցաւ ընդ Թագաւորս և ընդ աւագ իշխանս . և համարձակագոյն քան զամենայն որ , ըստ շնորհաց իմաստութեանն և ալևոր հասակին՝ խօսեցաւ ընդ ահեղին այնմիկ , լուաւ զգաղտնիս նորա և Թելադիր եղև խորհրդակցութեամբ : Բազում ինչ կարևոր և հետաքննելի իրք են յայս դէպս , որ և քան զամենայն մասունս պատմութեանն հանոյագոյն գտանի գեղերելոցն 'ի քննութիւն արևելեան

1 . Ոմանք ոչ համարին Վարդանայ զՆմնաստուրըն Ս . Սարգսի, այլ հաւաստի նորա լինել եղանակաւն և վերջին տամբք , յորս յիշէ Գագ լեառնաբլուր , և իշխող կողմանցն , զոր Խչխան մեր կոչէ , և է Վահրամն յիշեալ 'ի պատմուԹեանն ( յէջ 144 ) և յայտ է Թէ յայն կողմանս յօրինեաց զերգն . որպէս և զՆախիմացն 'ի Կիւլիկիա, մոլըԹելով 'ի նմին զԿենդանութեան Տեառն Թագաւորին, ՀեԹմոյ , և զՓառաւորն Իշխանութեան Տեառն հայրապետին , Կոստանդնի :

2 . ՊատմուԹիւն Հայոց . Գ . 233:

անցից այնր ժամանակի [1]։ Ի դարձի անդ իւրում 'ի դրանէ ղանին՝ Թուլի հանդիպել աւազակաց Հարամեաց. և անկանել զրենոյն 'ի ձեռս նոցա և յաջողութեամբ Թափել զնոսին [2]։ Զյետին ամս կենացն՝ հաւանորէն՝ եկեաց 'ի Հաղբատ, ուր և գրեացն 'ի խնդրոյ Կիրակոսի զմեկնութիւն Երգոցերգոյն, յամի մահուան Հուլաղուի. յետ երկուց ամաց վախճան արար պատմագրութեանն, և յետ չորից ամաց, այն է յամի Տեառն 1271, յորում ամի և ամոլակիցն իւր Կիւրակոս, վախճանեալ Թաղեցաւ 'ի Հաղբատ. և զգերեզման սորա համարիմ իբրև ուխտատեղի կամ պատուելի յիշել Թումայի Վանանդեցւոյ ընդ այլոց հոյակապ արանց անդ Թաղելոց,

Վարդան մեկնիչըն քաջաբան.

քանզի անդէն Թաղեալ է և այլ ոմն Վարդան վարդապետ նշանաւոր՝ երիցագոյն ժամանակաւ, այն՝ յորոյ խնդրոյ Ներսէս Շնորհալի գրեաց զմեկնութիւն բարձրացուցեաց ճառի։

Պատմագրութիւնս այս Վարդանայ, յետին գրաւոր վաստակ նորա, և գլուխ գործոց հեղինակին համարեալ 'ի յոլովից, Թերևս 'ի նախահաշակ համբաւոյն ստացեալ է զայդ վարկ, քան յիւր ուրոյն արժանեաց. զի ոչ գեղեցկաբան ինչ չարամանութեամբ լեզուին և ոչ մանրապատում ծանօթութեամբք կամ նկարագրութեամբք ախորժական ընծայի. զի Թէպէտ և 'ի հասարակի չափաւոր, այլ և ուրեք ռամկօրէն վարի ոճով, որպէս 'ի պատմութեան անդ տեսաւորութեանն ընդ Հուլաղուի, Թերևս 'ի հասկացումն ծանօթից իւրոց աշխարհիկ իշխանաց գրեալ։ Դարձեալ և ըստ քանակի գրոցն, զվեցհազար ամաց պատմութիւն ամփոփել կամելով յերկվեցեակ Թերթս, հարկաւորէր խմկարգել ցամաք բանս և ուրեք լոկ շարս անուանց և Թուոց.

1. Յորոց մի և հմուտն արևելագէտ Պ. Եդուարդ Տիւլորիէ, այժմ վարժապետ հայերէն խօսից 'ի կայսերական մատենադարանի Ֆռանկաց, 'ի Բարիզ. Թարգմանեալ է յիւր լեզու և հրատարակեալ զայս դէպս, որպէս և այլ հատուածս բանից 'ի պատմչէս յայլ ինչ գիրս իւր։ Նոյնպէս և համազգի նորին Պ. Մէքայէլ Պրոսէ պարագլուխ գիտնոց վրացի դպրութեան, բազում բանս 'ի հեղինակէս Թարգմանեալ և յեռեալ է 'ի յաւելուածս հաշակելւոյ իւրոյ Պատմութեանն Վրաց։ Ծանօթ է պատմիչս մեր և այլոց արևելագիտաց ոչ սակաւուց սկսեալ 'ի Սէն Մարդէնայ և 'ի Գաթրըմէրէ։

2. Տես յէջ 161։

և զի այս ոճ պահանջէ աչալուրջ քննութիւն և ճշդութիւն ժամանակագիր թուոյն և կարգաց յաջորդութեան աթոռոց և գաւառաց, ոչ անվրէպ և յայսմ գտանի հեղինակս, կամ առ ծերութեան հասակին ոչ բաւեալ մանրախուզել 'ի ստոյգ պատմչաց, կամ առաջնոյ ընդօրինակողաց գրոցն ըդնոյն սխալեալ. որով բազում ուրեք պակասաւորք են կարգք օտար և հեռաւոր թագաւորաց և սխալ ամք իշխանութեան նոցին. զոր և ուրեք ուրեք ազդ առնելով ծանօթութեամբք՝ զայլովքն զանց արարաք. զի ոչ համարիմք 'ի հեղինակէ աստի ուսանել զայնոցիկ կարգս, մինչդեռ առձեռն պատրաստ գտանին խնդրողաց՝ այժմու ստուգաքնին ժամանակագիրք: Բայց ստուգագոյն է 'ի յիշատակս ազգայնոց իրաց և դրացեաց մերոց, յորս են են արդարև և 'ի համառօտութեան անդ ոչ սակաւ կարևոր գիտելիք, և դէպք աննշանակք առ 'ի յայլոց, արդասիք մեծի մատենայած հմտութեան հեղինակին և ծանօթութեան գիտնոց արանց ժամանակին, առ որս ընտանութիւն և մուտ և ել ունէր. և զարանք հռչակեալ դիւանաց Հաղբատայ և Սանահնի և այլոց վանորէից Ձորոյգետոյ և Աղուանից և տան կաթուղիկոսարանին՝ օժանդակք աննախանձք կային նմա. և ըստ այսմ երախտապարտ գտանիմք Վարդանայ, որ տայ մեզ ծանօթս և զմանց կորուսելոց արդ պատմագրաց մերոց՝ յանուանէ կամ անանուն. յակն արկեալ իւր դրևթէ զամենայն երիցագոյն պատմիչս մեր, զերկուց նախ քան զիւրն դարուց դէպս առնու յոլովակի 'ի Սամուէլէ և 'ի Մխիթարայ Անեցւոյ, յՈւռհայեցւոյն Մատթէէ, յԱսորւոյն Միխայէլէ, և 'ի Վրաց պատմութենէ և այլուստ. իսկ զիւրոյ՝ զ' ՃԳ ամաւ դէպքն 'ի լրոյ և 'ի տեսութենէ: Այդքան բազումս ունելով օրինակագիրս և առաջնորդս, մեծարէ յաճախ անխտրապէս և զկարծիս նոցին. մանաւանդ ուր ազգին և նշանաւոր կամ սրբազան անձանց չքոյ և պատւոյ և կրօնից վարդապետութեան իրք կայցեն, դիւրահաւան գտանի առ հաճոյն և պանծալին և առ հրաշանըչան երևոյթս. զնոյն և յայլ գիրս նորին է տեսանել. իսկ 'ի պատմագրութեանս յայդպիսեաց սակի են պատմեալքն ինչ զԼուսաւորչէն և զդաշնակցութեանց կամ թղթակցութեանց ընդ գերագոյն գահու Հռովմայ, և տեսիլք վարդապետաց ոմանց[1]. առ որովք հարկ համարեցաք ազդ ինչ առ-

1. Տես յէջս 40. 46. 48. 54. 78. 87. 101. 112. 134 154. 155:

նել կամ ծանօթարանել ։ Զնոյն յայտ արարաք և երբեմն
լոկով նշանակաւս (!), ուր զժողովոյն կամ զհաւատոց Քաղ֊
կեդոնի բանք էին, և սպրդեալ ինչ էր անճահ 'ի լուր՝ ոչ
միայն մերումս ողջմտութեան, այլ և ոչ ինքեան՝ յայլոն ըղ֊
ձուշաւոր և բարեպաշտ հեղինակին, եթէ յետնոցս հա֊
սեալ էր ժամանակաց, յորս պարզագոյն ես բացատրի և
ճանաչի դաւանութիւն սրբոյ ժողովոյն, համաձայն նախա֊
գումար երիցն ժողովոց և մերոց երիցագոյն Հարց եկեղե֊
ցւոյ. և եթէ կամեցեալ էր կամ կարող լեալ՝ առաւել անա֊
չառապէս քան կանխակալ մեծարանօք զյառաջ քան զինքն
կացեալ վարդապետսն քննել, յորոց ոչ սակաւք նովին
թերուղիղ այլ անչար մտօք խաբեալք կամ անհասք նրբու֊
թեան խնդրոյն՝ խորշէին 'ի քաղկեդոնականաց, քամնե֊
լով 'ի կարծեցեալ նեստորական բաժանմանց՝ որ յանձն և
'ի բնութիւնս աստուածայրականին Քրիստոսի ։ Բայց և
զայս արժան է ազդել զբարեսէր հեղինակէս, զի թէպէտ
և իւր հարազատ բանս համարեսցուք զգրեալսն զքաղկե֊
դոնականաց, տակաւին հեզագոյն և հանդարտ դատնի
քան զյոլովս յայլախոհից, և ոչ թերանայ 'ի մեծարելոյ
զհարս ժողովոյն և զայլս նոցին հետևողս արժանաւոր ան֊
ձինս ։ Գրելով զայսմ խնդրոյ առ Հեթում արքայ, յառա֊
ջաբերեալ զբանս Աթանասի և Կիւրղի և զԳրիգորի Ա֊
ստուածաբանի, որք երկուս ասեն բնութիւնս, և ընդունե֊
լով զնոյնս՝ ասէ. « Ամէն բան անդի և պատճառ ունի. զի
» որպէս լսողին և ժամանակին և կարեացն պէտք եղեալ՝
» խօսեցեալ են. զի այլ է կւսոյ բանն, և այլ է ճշմարիտ
» խոստովանութիւնն 'ի խաղաղ ժամու. զի Աթանաս ա֊
» սացեալ է ընդդէմ Արիոսի երկու բնութիւն. . . Իսկ Ա֊
» ստուածաբանին՝ որ ասէ 'ի ճառին որ առ Կղաւդոնիոս,
» Բնութիւնք երկու, քանզի Աստուած և մարդ, բայց որ֊
» դիք ոչ երկու. և այս մէճ է ընդդէմ Ապողինարի, որ
» մի բնութիւն ասէր զՔրիստոս. . ։ Իսկ Կիւրեղ ընդդէմ
» Նեստորի գիտաբերանի, որ առաջօք ասէր և կերպարանօք
» զանաւն երևումն և մի բնութիւն, այսինքն ոչինչ առեալ
» 'ի մէնջ, ասաց, Երկուք և ոչ մի » ։ Արդ որպէս Կիւրղիդ՝
նոյնպէս և ժողովակցացն 'ի Քաղկեդոնի՝ են բանքն, ո՛վ
վարդապետ. և թէ նոքին իսկ Հարքն որք յառաջ և որք յե֊
տոյ ժողովոյդ՝ զանազանելով մի կամ երկուս ասեն բնու֊
թիւնս, ըստ քո իսկ վկայելոյ՝ « Ամէն բան անդի և պատ֊

» ճառ ունի ». և որ կամի ոք քննել՝ իբրև զհաւատոյ սրբազան իւրս, որպէս և էնն իսկ ամենայն իրօք, պարտի քննել, յստակ և անկիր մտօք, և մի ընդ եկեղեցւոյ վարդապետութեան խառնել զազգային խտիրս և խնդիրս, կամ ընդ Հոգւոյ Աստուծոյ՝ զհոգի մարդոյս, հակառակողի ընդ մարդոյ, որով և աստուածամարտ գտանի բազում անգամ։

Զայսոսիկ առ յուշ ինչ արժան համարեցաք ազդել աստանօր, որպէս զի եթէ և յետ այսորիկ առ պատմական և ուսումնական օգտի հրատարակիցեմք և զայլս 'ի պատմչաց կամ 'ի գրչաց, առ որս շատ կամ սակաւ խծբիծբ գտանիցին զայսմ՝ աստուածաբանական խնդրոյ, ծանիցեն քաջ հանդիպողք մատենիցն՝ զմերս տեսութիւն. որոյ՝ սիրելի է նախնեացս մատենագրութիւն և մատենագիրք՝ բարեկամք, այլ բուն սէր և բարի՝ ճշմարիտն միայն, որ է ուղիղ վարդապետութիւն. զոր և ցանկամք և խնդրեմք ուխտիւք նոյնպէս լինել ամենեցուն, ես առաւել մերոցս համազգեաց, որպէս և զխարդ ընկալցին զմեր իղձ: — Եւ զի վերագոյնդ իբր երկբայութեամբ իմն ասէաք թէ արդարև հարազատ բանք հեղինակին իցեն ասացեալքն, և մի իբրու այլայլեալք յիրահամարձակ և 'ի կողմնասէր գրչաց, ոչ եթէ խոպառ օտար 'ի կարծեաց նորին համարիմք զայնս, մանաւանդ զի և օրինակք գրոցն հնագոյնք են, այլ զի և 'ի հինս անդ օրինակս մատենից հեղինակին՝ գոն խարդախեալ բանք: Օրինակի աղագաւ, յԱրարածոց մեկնութեանն, ուր զՀոգւոյն սրբոյ ելումն և բղխումն յիշէ ըստ Եղիշեայ բանից ուղղափառ դաւանութեան, որում և ինքն հաւանի յիւրում պատմութեան [1], և մատենագիր ոմն 'ի յաջորդ դարու սաստիկ նախանձայոյզ հռոմէական՝ բերէ զովութեամբ զնոյն վկայութիւն յըմբերանումն ոմանց հակառակողաց յիւրում ժամանակի, զնոյն վկայութիւն գտանեմք ակներև և անհեղեդ այլայլեալ յօրինակս ինչ գրոցն, որք սակաւ ամօք զկնի մահուան հեղինակին են գրեալք [2]: Զայսր կողմնատար և թիւրեալ հոգւոյ առհաւատչեայ ընծայէին ուրեք և օրինակք պատմագրութեանս, ըստ իւրաքանչիւր

1. Տես յէջ 148:

2. Զբանն՝ «Երեք են. առաջինն չէ ծնեալ յումեքէ. երկրորդն՝ ծնունդ է առաջնոյն. երրորդն՝ երկրորդին և առաջնոյն ելումն և բղխումն ». խարդաւանակ մատունք փոխեն, «Երրորդն ոչ երկրորդին՝ այլ առաջնոյն ելումն և բղխումն »:

կրից ընդարձակելով կամ սաստկացուցանելով զբանս հեղինակին. զոր արդարև ոչ է դիւրին ընտրել և ջոկել՝ որոյ այլուստ չիցեն հաւաստի վարք և միտք հեղինակացն. և յայսմանէ խաբին ոմանք Թանձրապէս (ընդ Գալանոսի), մինչև մերոյս Վարդանայ վերագրել զանալի և զլուտական Թուղթ հոմանուանն Սեաւլեռնցոյ, որ և յաւէտ Վահրամ կոչի, զգրեալն առ Հեթում, պարսաւանս Լատինաց, իբրև 'ի պատասխանի Թղթոյ քահանայապետին Հռովմայ, զոր եբեր առ արքայն Հայոց՝ սպանիացի նուիրակն Տիմանջ, յամի 1247:

Արդ այսոքիկ բաւ, թէ շատ և թէ սակաւ՝ առ տեղեաւս. դարձցուք անդրէն առ պատմագիր մեր. և յաւելցուք ընդ թերութեանցն՝ 'ի գովութիւն, զնոյն ինքն իսկ զհամառօտութիւնն. այսինքն զճարտարութիւն՝ զայնքան հարուստ ամաց և զզանազան ազգաց և յեղանակաց դէպս զլխաւորս՝ յեռուլ և 'ի շար արկանել. որում յիրաւի յայս ոճ վիպասանից մերոց նախամեծար գտանի. զի և ոչ մի ոք 'ի սոցանէ յետ Ժ դարու՝ այսքան ճոխ և 'ի համառօտութեանն՝ հաւաքեաց զընդհանուր պատմութիւն. և քաջ 'ի ճահ գործոյն յարմարի վերնագիրն, զոր ընտիր Բ օրինակս մեր ունէր. Հաւաքումն պատմութեան մեկնողօրէն համառօտ և բովանդակ, դիւրամատ ընթերցողաց. յԱդամայ մինչ բուելով ըզժամանակսն. պատմելով զգիրս եղելոց որ 'ի նմա. նա և զ'ի բազմաց տարակոյսն 'ի բազում տեղիս յուծեալ խորամանկաց խորհրդով և քննմամբ իմաստութեամբ, որոց պատասխանի յանձնիւրսն: Ոչ է յայտ երբ սկսեալ իցէ հաւաքել զհամառօտս զայս, այլ աւարտեալ է յամի 1265, որպէս և ասէն իսկ, յետոյ քան զերթն առ Հուլաղու զան և զառաջնոց քան զայն երեսնից ամաց դէպս (1235–1265) համառօտիւ յոյժ նշանակեալ կամ 'ի բաց թողեալ, վասն ոճով գրելոյ զայնս Վանականայ և Կիրակոսի յիւրեանց պատմագիրսն. սակայն յետ դարձին 'ի ճամբարէ Թաթարաց, վերստին ձեռն արկեալ է՝ զնշանաւորն զայն տեսութիւն և զրուցատրութիւն ընդ աշխարհակալին՝ յիշել 'ի կարգս բանիցն առաջնոցն, շաղկապ ընդ երկուսն արկանելով և զայլ հանդիպեալսն 'ի միջոց ժամանակին: Յետ այնորիկ դարձեալ յիշատակէ զմահ զանին, և զհարուածս Կիւլիկիոյ յԵգիպտացւոց, և զմահ ասպնջականին իւրոյ մեծարգոյ զԿոստանդեայ կաթողիկոսի, և սրտառուչ ող-

բովք 'ի նոյն՝ կնքէ զգիրսն . ոչ ժամանեալ նշանակել , թերեւս և ոչ իսկ լսել՝ և զմահ մտերիմ մեկենասի իւրոյ՝ Թագաւորին Հեթմոյ , որ մեռաւ յելս հոկտեմբերի 1270 ամին, իսկ պատմիչս 'ի յետագայ տարւոջ յառաջ քան զհասարակել նորին , որպէս մեզ թուի ։

Սուղ ինչ և զգրչագիր օրինակաց մատենի պատմագրութեանս ասասցուք , յորոց զտպագիրս ընծայեմք . զանց արարեալ զնորագիծ գաղափարօք՝ յերկուց հնագրաց ևեթ արարաք զընտրութիւն ընթերցուածոցն . յորոց մին՝ Ա. կամ Հ. և յոլովակի Հին Օ. (օրինակ) նշանակեալ 'ի ծանօթութիւնս , է արդարև հնագիր և հնատառ, և հնացեալ յըստէպ կիրառութենէ , որպէս երևի , այլոյ նշանաւոր պատմչի , Ստեփաննոսի Օրբելեան , վասն որոյ իսկ գրեալ է , իբր քսան ամօք աւելի կամ պակաս՝ յետ մահուան հեղինակին . որ և անթերի և բովանդակ ունի զպատմութիւնն . բայց յուղղագրութեանն և 'ի հարազատութեան ստորև գտանի քան զ՝ Բ Օ . այսինքն Բնագիր օրինակն կամ Երկրորդ . զի զսա յաւէտ կալաք մեզ առաջնորդ , վասն ճարտար և անսխալ գրչութեան և ուղղութեան թըւոց , և զկնովին իսկ շարաբանութեանն . և սա իսկ հին է , գրեալ յամի 1307, որ է երեսուն և վեց ամ յետ մահու հեղինակին . և զի դադարէ սա , ուր նախ աւարտեալ էր Վարդանայ զպատմութիւնն[1], թուի թէ յիսկագրէ անտի յօրինակին կամ յայլմէ կանուխ ուրեմն գաղափարելոյ՝ առեալ է հաւասար ։ իսկ ՕՕ . նշանակէ զի երկոքին եւս կամ ամենայն օրինակք այնպէս ունէին զընթերցուածն ։

1 . Տես յէջ 147 ։

գ
վե
է
որ
ու
մե
մի
որ
Ու
նա
ան
րա
նմ
տա
ան
տա
գդ
թ
Օ
նի
նո
զե
բա
նմ
թ
ժա
այ
լի
սկ

# ՎԱՐԴԱՆԱՅ ՎԱՐԴԱՊԵՏԻ

## ՀԱՒԱՔՈՒՄՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Նախ քան զամենայն խնդիրս հայցեսցուք եղեալքս զԷն, և սկսեալքս զանսկիզբնն, և ստորնայինքս ըզ-վերնայինն. ոչ զորքանն զամէնն, որ ինքեան միայնոյն է, այլ յանհասական փառացն փայլակն ինչ երևման՝ որով ուղղեսցուք զբաղձանս մեր, և այն միջնորդիւ և ոչ անձամբ իշխեցեալ. և է նա բարեկամն Աստուծոյ մեծն Մովսէս: Եւ զի հեզ է քան զամենայն մարդիկ, մի գարշեսցի 'ի մէնջ տալ մեզ զձեռն, և զգաւազանն որ Աստուծոյ, յորմէ բուռն հարեալ իմաստնասցուք: Որպէս նա 'ի հարցանել զանուն Տեառն լուաւ եթէ Նա է Որ էնն, յորմէ բացան խորք իմաստից նորա, և անտի վստահացեալ կոչեաց զնա Աստուած և տէր, ա-րարիչ և ստեղծող ամենայնի. զի թէպէտ և լուաւ 'ի նմանէ զիւրաքանչիւրն, այլ էիւն հասկացեալ հաւա-տաց զի Աստուած է նա, որով Է՛ է, զի աստ ածող է. և անուն նորա տէր է, զի յիւրմէ եղելոցն իշխան և դա-տաւոր է: Եւ զի միշտ Է՛ է, ոչ է եղեալ. քանզի ըզ-գոյութիւնն յայտնէ Էն, և Աստուածն՝ զարարչու-թիւնն. որպէս և զանուն գրոյն առաջին՝ Արարածք և Ծնունդք կոչեաց, զի առ ինչք են սոքա, որպէս յայտ-նիչք և քարոզք, արարածք՝ արարչին, և ծնունդք՝ ծը-նողին: Եւ գիտաց թէ մի և միակ է Էն, քանզի ե-ղեալքս բազում են, և ոչ է բազմութիւն առանց միոյն, բայց մինն է առանց բազմութեան. և ոչ թաքեաւ 'ի նմանէ իմաստք Երրորդութեանն, քանզի ծանեաւ ե-թէ Էն երեք է, որպէս և յառնելն զմարդն և 'ի բա-ժանել լեզուացն և յայլսն՝ խոստովանի զերեքն: Եւ այլ եղեալքս կամ 'ի վեր են քան զմինն և կամ աւե-լի են քան զերեքն, զի անկատարք են: Իսկ Էն երեք է, սկիզբն ունելով և միջոց և կատարումն. քանզի նա է

Աստուած՝ առաջին, միջին, և վերջին. և թէ այլ ինչ գտանին այսպիսիք՝ նմանութիւնք են, և ոչ իւիք հաւասարք ։ Իմացաւ իսկ զԲն սկիզբն ամենայնի. քանզի ամենայն ինչ որ եղեալ է և լինի, նախ էութիւնն է սկիզբն և յԲէն էանայ ։ Այլ և գիտաց եթէ պարզ է Բն. որովհետեւ զեղեալքս պատմեաց, թանձր և մարմնականս ծանեաւ ։ Իսկ եթէ բարի է Բն, և անփոփոխ և անվախճան, և անորակ և անքանակ, և անորպիսութիւն. քանզի Բն բարի ոչ կամեցաւ միայն ունել զբարին, այլ արար բարի արարածս, վայելել յանծախելի բարիս արարչին ։ Զոր սկսանի այսպէս ։

Ա. Իսկզբանէ արար Աստուած զերկին և զերկիր ։ Ոչ պատմելով սոցա նիւթ, զի անկարօտ է արուեստաւորն, սակայն արար չորս սկզբունս. ջերմ և թեթև, զհուր և զօդ. ցուրտ և ծանր, զջուր և զերկիր, ունելով ցամքութիւն և գիջութիւն ։ Եւ իսկզբանէ ասաց, զի անժամանակ ցուցցէ զառնելն. քանզի երեք իրօք պատկերացոյց ինքեան զեղեալն, անժամանակութեամբն և անքաւութեամբն և անտեղութեամբն, Զի իսկզբանէն ոչ ունի ժամանակ, ոչ տարի և ոչ օր և ոչ ժամ և ոչ մասն հատածի, և ոչ ոք է բաւական գիտել զեղեալքս ամենայն. և ոչ է 'ի տեղւոջ վերայ. որպէս ինքն Աստուած է ։ Իսկ փոփոխմամբ և շարժմամբ և քանակաւ և որակութեամբ և եղելութեամբն, զատչին 'ի բնութենէ արարչին ։ Արդ իմաստութիւնն Աստուծոյ՝ արուեստ, և զօրութիւնն՝ առնօղ, և բարութիւնն՝ նիւթ անմարմին, զոր նիւթացոյց և տեսակացոյց կամքն առատ և հնարաւոր, և յոչէից ընչացոյց զձև երկնի և երկրի յանպատրաստ հիման վերայ եդեալ ։ Քանզի երեք կամարք են մի.քան զմի վերագոյն, հրեղէն, և ջրեղէն 'ի վայր քան զնա, և օդեղէն՝ որ է հաստատութիւնդ ։ Որք երեքեան հողմով խառնեալ շուրջ գան բոլորեալ զերկրաւս, և երկիր 'ի վերայ ինքեան ունի զջուր՝ հաստատունն, հողմով անդուստ 'ի վեր փչեցեալ. զոր իւր բնական ծանրութիւնն 'ի վեր չթողու թաչել, և յանդնդոց 'ի վեր փչումն 'ի վայր չթողու անկանել, և Բանն Աստուծոյ բարձեալ կրէ թեթեւութեամբ զոլորն ։ Եւ ընդ լինել երկնի, կենդանածնեցաւ հրեշտակօք հրեղինօք,

որպէս և գաւառն է նոցա հրեղէն․ տասնեակ դասուք զետեղեալք․ տեղեաւ և փառօք և զօրութեամբ զանազանեալք, արտաքոյ չորից տարերց, ըստ որում անայլայլականք են, և անմահք․ և է երկինն վերին վարագոյր ընդ մէջ նոցա և Աստուծոյ, որ է անասելի օրինակն ։

Այլ ասեն իմաստունք՝ եթէ յառաջին շուրջն երկնից գոյացաւ Բնութիւնն, որ է արուեստն Աստուծոյ, արարող զօրութիւն յետ Աստուծոյ․ թերևս ներգործութիւն տարերացս չորից ։

Այլ երկրորդն շուրջ՝ կառոյց զհաստատութիւնն, և վերացոյց զկէս ջրոյն առ երկու իրս պիտանացու, զի բարձցէ զծանրութիւն երկրի զառաւելն, և զի արգելցէ զկիզողութիւն հրեղէն երկնիցն 'ի մարմնաւորացս ։

Այլ երրորդ շուրջն՝ ակնարկելով կամացն Աստուծոյ՝ շարժեաց զբոյսս և զբանջարս, որոյ սկիզբն բորբոս հողոյն, և կատարումն սերմն որ 'ի նմա, և զծառս՝ որոյ սկիզբն մամուռն մօտ 'ի բոյսս, և կատարումն արմաւենին մերձ 'ի կենդանիս՝ յորս արու և էգ է ։

Այլ 'ի չորրորդ շրջմանն եղև հրամանն Տեառն 'ի վերայ լուսոյն, որ խղածն է յարփւոյն․ և եհատ զնա յերիս մասունս, և յամենս բազումս, յարեգակն, և 'ի լուսին, և 'ի բազմութիւն աստեղաց․ և երկոտասան կենդանատեսակք եղեն Ճանապարհ արեգական և լուսնի, և եօթն այլ ևս աստեղաց․ երիւքն առնէ արեգակն զարուն, և յայլ ևս յերիսն բարձրացեալ՝ առնէ ամառն, և 'ի կշիռն ելեալ ցածնու․ և երիւքն գործէ աշուն․ և ևս ցածեալ ընդ հարաւ կազմէ ձմեռն ։ Այլ յաղագս կարի բարձրութեան և ցածութեան աշխարհաց՝ աճէ տիւն մինչև 'ի քսաներորդ ժամն, և պակասի մինչև 'ի չորրորդն ։ Այլ որպէս ասեն իմաստունքն չորեքտասան կլիմ է աշխարհս, այսինքն բաժինս․ և եօթն կլիմն անբնակ է մարդկան․ զի վասն յոյժ ցածութեան երկրին՝ ցուրտ է և խաւար․ զի միշտ վեց ամիսն տիւ է 'ի խոյէն մինչև 'ի կշիռն, և վեց ամիսն գիշեր 'ի կշռէն մինչ 'ի ձուկն ։ Իսկ խորին Հնդիկք [1]

1․ Ստուգապէս չկայ մասն Հընդկաց աշխարհի զոյգ կշիռ ընդ հասարակածիւ, ուր հաւասար ժամք լինին տուընջեան և գիշերոյ․ բայց եթէ Ափրիկէ իմացին խորին Հնդիկք ։

միշտ հասարակ է, ոչ աճեն ժամքն, և ոչ պակասեն, այլ միայն երկոտասանք։

Իսկ 'ի հինգ շուրջն և 'ի վեցն, եւ հրաման 'ի ջուր և յերկիր վասն կենդանեաց, սկսեալ 'ի կառաբոյսս և 'ի սպունգս, և կատարեալ 'ի մարդն 'ի կատարեալ կենդանին բանաւորութեամբ, 'ի հազար ազգս, գլխաւորջքն իւրեանց լեւիաթանաւ[1] որ 'ի ջուրս, և բեհեմովթաւն որ 'ի ցամաքային անապատս. և այս է ըստ Արիստոտելի հոգի ընդհանուր տուող գոյութեան ամենայնի։

Նոյն արդ բնութիւնն շարժէ զգունդն երկնից, և նա զժամանակն, և նա զտարրն, և նա զտունկս և զկենդանիս. և զհալական նիւթս, զոսկի և զարծաթ, և զակն, և զայլն զոր գործէ բնութիւնն ծծմբով, և ժիպակաւ՝ որպէս ասեն գիտողք[2]։

Իսկ 'ի գլուխն հաստացեալ զանդամոցն յօրինուած, որպէս քաջ պատկերագիրքն՝ զի յատիցն սկսանին, հըրաշագործէ իմն նոր յօրինելով բնութիւնս յերկնէ և յերկրէ, և որ 'ի մէջս են, վեցից ձեռաց խոնարհելոց 'ի միոյ պատկերի շինուած, զի մինն նման իցէ երիցն, որովք մի հաւատացի ստեղծողին բնութիւն և էութիւն և աստուածութիւն. գիտելով որ ինչ լինելոցն էր զմեղանսն, այլ ոչ կարէր արգելուլ նախագիտութիւնն զշարժումն յորդառատ բարերարութեանն. այլ և 'ի նոյն իսկ բարերարութենէն ոչ հրաժարէր ոտիւք գալ հիւանդատես այնմ զոր ձեռօքն ստեղծ, և տուեալ զնա երկրի, մատնէ դահճին մահու կարճել զմեղսն, և հանել զչարութիւնն 'ի նմանէ, և ցուցանել նմա զվնաս օձին և զնենգութիւն չարին, զի այլ մի լուիցէ նմա, գիտելով զոր ինչ առնելոց էր՝ զվերըստին նորոգումն. այլ և ոչ ետ նմա գութն իւր կատարել զվճիռ մահուն՝ զոր եհատ նմա, զի ահա ոչ մեռաւ հոգին, այլ հողն հող եղև, և բնակիչն մնաց։ Այլ ա-

1. Լեւիաթան ըստ Եբրայեցւոց գրոց Վիշապ թարգմանի 'ի մերս. (Յոբ Խ. 20. Եսայի ԻԷ. 1.) և ըստ նկարագրին կարծի կէտ ձուկն կամ ախտեան. իսկ բեհեմովթն թարգմանի գազանք, որպէս և թարգմանեալ իսկ է 'ի Յոբայ գիրս (Խ. 10), և կարծի փիղ կամ ձիագետի։

2. Այժմուս գիտողք ոչ ասեն յամենայն հալական նիւթս զծըծումբ և զժիպակ, որ է սնդիկն։

բուեստաւորն կարող է և գթած, և նիւթն 'ի ձեռին նորա, և ժամանակ յարութեանն անմահաց 'ի նմա [1]։

Բ. Արդ սորբեկիք բոցապատ պարարեալ Աստուծոյ դրախտն՝ որ կայ ընդ արևելս, յերկրի արմատացեալ 'ի կատարս լերինն բարձու [2], որ հաւասար է գնդին լուսնի, անծորելի պտղով և անթառամ սաղարթիւք, ուր ոչ ներգործէ արեգակն տիւ և գիշեր, այլ յարփւոյն պայծառանայ, և կամ նշողիւք փառացն Աստուծոյ, որպէս զմեծ գործ նորա, և հրաշալի տեղի. որում ոչ համարեցաւ արժանի զանցաւորն տեսլեան անգամ, այլ յամենայն կողմանց վառեաց զնա հրով՝ 'ի կողմանց և 'ի վերուստ, որպէս զշանթական հուրդ, որ յորժամ անկանի՝ զլինքն և զտեղին ծածկէ յաչաց, զի մի ժպրհեսցի ոք խնդրել զնա առանց կամացն Աստուծոյ։ Ուստի զամս երեսուն ողբացեալ Ադամայ Եւայիւ զանխորհրդութիւնս իւրեանց կուսութեամբ, ապա գիտացին զմիմեանս յանասնոցն անկեալ յանարգանս, և ծնան զԿայէն հիւանդ ծնողացն ցաւած ծնունդ, որպէս ասեն բժիշկք, քերբ միով Կլիմաս կոչեցեալ. և զկնի երեսուն ամաց ծնան զԱբէլ, և զԱբելուհի քոյր նորա [3]։ Եւ զկնի այլևս երեսուն ամի սպան Կայէն զԱբէլ. քանզի ուսեալ 'ի ծնողացն պատուել զԱստուած պատարագօք պատուականաց և առաջնովք, և վասն սիրելոյն զմիմեանս՝ ընդ անձին և ընդ եղբօրն մատուցանել։ Իսկ Աբելի ածեալ յանդրանկաց գառանց և 'ի պարարտաց զխուր և զեղբօրն, վասն որոյ հայեցաւ Աստուած նախ 'ի Հաբէլ և 'ի պատարագս նորա, և 'ի Կայէն ոչ նայեցաւ, զի զյուրն եբեր, ընդ անձին միայն, և ոչ զմասն եղբօրն. և ոչ եղև ընկալեալ 'ի վերուստ հրով, որպէս զՀաբելին. վասն որոյ 'ի կարծիս եղեալ Կայէն վասն Աբելի, թէ առնու զնա 'ի դրախտն Աստուած վասն ընդունելի պատարագին, և նախանձու վառեալ՝ սպան զնա։ Եւ իմացեալ Ադամայ և Եւայի,

1 Ասա հին օրինակքն յաւելուն. Սուրբք սրբոց, գերաբնեան և աղբերաբնեան խորք, քեզ փառք և գոհութիւն 'ի քոյոց արարածոց։

2. Բազում հաւանութեան է դրախտին լինել 'ի բարձրաւանդակում երկրի, այլ ոչ լուսնամերձ։

3. Քերց կանանց Կայենի և Աբելի պէսպէս անուանս ընծայեն հնախօս պատմիչք, ըստ հրէից աւանդութեանց և ըստ Ասորւոց։

սգացին զնա ամս հարիւր և քառասուն։ Այլ 'ի կոչելն Աստուծոյ զԿային ողորմութեամբ յապաշխարանս, ստեաց և յաւել մեղս 'ի վերայ մեղաց, և առեալ պիսակ 'ի ճակատն [1], որպէս ասեն, և դողդոջմամբ յամենայն անդամսն, և ծնեալ որդիս և թոռունս, յերկարակեաց եղեալ՝ տանջանօք և նախատանօք մեռանի։ Այլ զի որդիք նորա Ենովք և Գայերիդադ և Մայաէլ և Մաթուսաղա և Ղամէք նման հօրն չարք էին. որպէս Ղամէք խոստովանի կանանցն, այր և երիտասարդ սպանեալ, զոր ասեն եղբարք արդարոյն Ենովքայ, զոր սպան և առ զկանայս նոցա, և ոչ թէ զԿային և զորդի նորա, որ նման հօրն ասեն, զոր Աստուած ասաց ոչ ումեք սպանանել զնա։ Այս Ղամէքայ որդիք, Թովբէլ և Յուբաղ, և քոյր նոցա Նոյեմի, արարին քնարս և երգս, և մնգոյրս, և գտաւ 'ի նոցանէ դարբնութիւն պղնձոյ և երկաթոյ։

Դ. Իսկ զկնի երկերիւր և երեսուն ամաց ելիցն 'ի դրախտէն, եղև որդի մխիթարութեան Ադամայ Սէթ, որ յետ երկերիւր և հինգ ամին՝ ծնանի զԵնովս, որ և վարս ուղիղս ցուցեալ յուսացաւ յԱստուած հատուցանել նմա, և կոչեաց զանուն տեառն Աստուծոյ յօգնութիւն. և արար գիր, և գրեաց յերկուս տախտակս պղնձիս և խեցիս [2], և մարգարէացաւ եթէ երկու անգամ անցանի աշխարհ, ջրով և հրով, և գրեաց զայս, և զանուանս ամենայն իրաց, զորս եդեալ էր Ադամ զի պահեսցին 'ի սնակլիտսն, 'ի ջրոյն՝ 'ի պղինձն մնայցէ ասէ, և 'ի հրոյն թրծեալ աղիւսն խեցեայ. և վասն այսորիկ աստուած կոչեցաւ, և որդիք նորա՝ որդիք աստուծոյ։ Այլք ասեն՝ յորդւոց նորա երկերիւր անձինք յիշեցին զկեանս դրախտին, և ելին 'ի լերինս պահել կուսութիւն, և աստի կոչեցան որդիք Աստուծոյ. և ապա ձանձրացեալք իջին 'ի լեռնէն Ահերմոնի [3]. և հալածեցին զնոսա եղբարք իւրեանց. Այլ որդիքն

1 Պիսակն Կայենի ըստ ոմանց եղջիւր է բուսեալ 'ի ճակատ եղբայրասպանին, ըստ այլոց կեղ կամ խայծ իմն. և ըստ բազմաց՝ երերելն և տատանելն իսկ է նշան անիծից նորին։

2. Երկու արձանքն Ենովսայ ըստ Յովսեպոսի և բաբունական աւանդութեանց, զոր ընկալեալ է և Հայոց։

3. Մենակեցութիւն նահապետացս յԱհերմոն լերին պատմի յԵնովքայն անուանեալ անվաւեր գիրս։

Կայենի և դստերքն 'ի քնարս և 'ի մնգոյրս պատրեալ զնոսա՝ առ ինքեանս դարձուցին, առնուլ կանայս զորս ընտրեսցեն. և արարին այնպէս, անցեալք զուխտիւն Աստուծոյ, որ եդեալ էր նոցա մի՛ առնել խնամութիւն ընդ նոսա:

Դ. Այլ ասեն զկնի հազար ամին ելիցն 'ի դրախտէն, որդիքն Կայենի եդին իւրեանց թագաւոր, Սամիրոս անուն[1], նոյնպէս և որդիքն Սեթայ՝ Ագորոս անուն, որ եգիտ զթիւ կենդանակերպիցդ և զմոլորակացդ, և 'ի նմանէ անուանեցաւ քաղդէութիւնն, որ է հմայութիւն աստեղաց. և անտի թուեն տասն թագաւոր, և ժամանակ նոցա հազար հարիւր և ութսուն ամ: Ենովս հարիւր և իննսուն ամաց ծնանի զԿայնան. Կայնան հարիւր և եօթանասուն ամաց ծնանի զՄաղաղիէլ. Մաղաղիէլ հարիւր վաթսուն և հինգ ամաց՝ ծնանի զՅարեդ. Յարեդ հարիւր վաթսուն և երկու ամաց՝ ծնանի զԵնովք: Ենովք հարիւր վաթսուն և հինգ ամաց՝ ծնաւ զՄաթուսաղա. Մաթուսաղա հարիւր վաթսուն և հինգ ամաց՝ ծնաւ զՂամէք. Ղամէք հարիւր ութսուն և ութ ամաց՝ ծնաւ զՆոյ. և լեալ եօթն հարիւր եօթանասուն և երեք ամաց՝ մեռաւ նախ քան զհայրն քսանեհինգ ամօք: Ի հազար վեցհարիւր վաթսուն և վեց ամի ելիցն Ադամայ ծնաւ Նոյ. յորում ժամանակի բազմացան չարիք, և յաճախեաց անիրաւութիւնն:

Զի նախ եգիտ սատանայ իւր զէն զորկորամոլութիւնն, ապա զկնասիրութիւնն, ապա զսպանութիւնն. և արար զայս սատանայ, զի 'ի շատ խառնիցն լինէին կանայք անծնունդք և կենդանիքն սպանանեն զմիմեանս, և բառնայ մարդկութիւն: Քանզի քառասուն այր մեռանէր վասն միոյ կնոջ, և ընդ կանայսն միայն ունէին խաղաղութիւն, ասէ սուրբ հայրն Եփրեմ: Իսկ խընամք Տեառն ընդդէմ չարին՝ զբազում խառնման առնէր պատճառս ծնանելոյ հսկայիցն անձոռնեաց. և զի 'ի

1. Զայսպիսի աւանդութիւնս 'ի Միքայելէ Ասորւոյ պատմէ անու հեղինակս: Սամիրոսի յաջորդութիւն ոչ ուրեք յիշի, զԱգորոսին թուեն Քաղդեացիք մինչև 'ի ջրհեղեղն ազգս տասն, վասն այսորիկ և բազումք նոյն համարին ընդ Նահապետն յԱդամայ ցՆոյ. որպէս և մերս Խորենացի. Ա. Է:

կանանցն եղև կանաց ախտն, 'ի ծնանել զյաղթանդամ կորիւնսն՝ մեռանէին մարքն, և ապրէին ծնեալքն․ որ և աճեցեալք, և 'ի կոյտս իւրեանց հասակին հայեցեալք, հպարտացեալք՝ յաւխտենից արք անուանէին զինքեանս ։ Վասն որոյ զի Աստուած բազմակեաց արար զնոսա, զի փոխանակ գրոյ լինիցին զաւակացն, և շատս ծնանիցին, նոքա վիսացեալք ընաւ ակն ոչ ունէին մահու․ զոր կարծեալ արարչին, և առեալ յաղտեղեալ անձանց նոցա զհոգւոյն շնորհն, ասաց՝ եղիցին տարիք դոցա հարիւր և քսան, և հոգի իմ մի մնասցէ 'ի դոսա․ և հարիւր և քսան ամ՝ ոչ հասարակաց մարդկան յանմհետէ, այլ արանց ժամանակին ներումն ապաշաւանաց ։ Նաւ եղեալ՝ Նոյի հինգ հարիւր ամաց անբամբաս կենօք յանապատի բնակելով կուսութեամբ, հրբամայէ Աստուած կին առնուլ, և որդիս ծնանել, և արկղ շինել՝ որ վերաբերի ջուրց ։ Նաւ եղեն իրքն․ զհարիւր ամն ապաշխարութեան տուեալ ժամանակին[1]․ և զի ոչ ապաշաւեցին՝ կարծեաց զքսան ամն․ զոր ասեն յինհարիւր վաթսուն և երկու ամացն Մաթուսաղայի յաւելեալ և անցեալ 'ի ներքոյ ջրոյն[2]․ վասն որոյ 'ի վեցհարիւրերորդի ամին՝ Նոյի եղև ջրհեղեղն, և կորոյս զամենայն կենդանիս, բայց յայնմանէ՝ որ ընդ Նոյի կային 'ի տապանին, ընդ ութ բանականսն ։

Ե․ Այլ զթիւ յամելոյն Ադամայ 'ի դրախտին ոչ ոք կարէ ասել․ մի՝ զի ժամանակագործ արեգակնս այս ոչ սպասաւորէ դրախտին, և երկրորդ՝ զի որքան անմեղ էր Ադամ՝ ընդ անմահսն էր նորա վիճակն, որք չէն ընդ տարեօք ։ Իսկ զկնի յանցմանն՝ ոչ յամեաց 'ի դրախտին․ զի ընդ մահու վճռաւ եմուտ, և Աստուծոյ մեռաւ, և գերեզմանի պէտք էին, և դրախտն անմահից էր տեղի, վասն որոյ յերկիր հանեալ՝ մտանէ ընդ ժամանակաւ ։ Նաւ անտի համարէ Հոգին զտարիսն 'ի ձեռն Մովսիսի[3]․ որ լինի ըստ եօթանասնիցն թարգ-

1․ Հին Օ․ Ն– [illegible] հարիւր ամաց ։

2․ Ըստ օրինակաց ոմանց թարգմանութեանն եօթանասնից ջրհեղեղին թուական կանխէ 14 կամ եօթն ամաւ քան զմահ Մաթուսաղայի․ բայց ըստ այլոց և ըստ ընագրին 'ի նմին իսկ ամի ջուրցն հանդիպի մահ նորա ։

3․ Արդարև հարկ է զպատմական ժամանակի սկիզբն ոչ յարարչութենէն Ադամայ առնուլ, և ոչ իսկ յելիցն 'ի դրախտէն, այլ 'ի լինելութենէն Կայենի, յորմէ

մանութեանն յելիցն 'ի դրախտէն մինչև ցջրհեղեղն՝ երկու հազար երկու հարիւր քառասուն և երկու ամք. և ըստ եբրայեցւոցն՝ հազար վեց հարիւր յիսուն և վեց ամք, պակաս հինգ հարիւր ութսուն և վեց ամօք. և զպատճառն ասեն թէ կնաւերք էին Հրեայքն, կարճեցին զտարիս ամուսնանալոյ առաջնոցն, զի մի ոք արգելցէ զնոսա 'ի տղայութեանն առնուլ կանայս. քանզի անմիաբանութիւն նոցա նախ քան զամուսնանալն է: Զի զԱդամ հարիւր և երեսուն ամաց ասեն ծնանել զՍէթ, և Սեթայ հարիւր և հինգ ամաց ծնանել զԵնովս. իսկ զյետ ամուսնութեան ժամանակն զույգ բերեն եօթանասնիցն. և 'ի Յարեդին և 'ի Մաթուսաղային և 'ի Ղամեքայն միաբանին դարձեալ. որ առաւել յանդիմանէ զնոցա ստութիւնն, զի թէ կըրտսերքն շատ պահեցին զողջախոհութիւնն, քանի՞ առաւել աւագքն և լաւքն: Արդ Նոյ լեալ ամաց հինգ հարիւր՝ ծնաւ զՍեմ, զՔամ և զՅաբեթ, որովք ապրեցաւ 'ի ջրոյն, որ եղև 'ի վեցհարիւրերորդի ամին իւրոյ, և զկնի ելիցն 'ի տապանէն եկաց այլ ևս երեքհարիւր և յիսուն ամ. և ծնաւ ասեն որդի մի այլ Մանիտոն անուն [1], և դուստր մի Աստղիկ անուն, որոց և բաժանեաց զամենայն աշխարհս. նախ յերիս հատեալ բաժինս՝ ըստ երից որդւոցն որք ելին 'ի տապանէն, յԵւրոպիա, 'ի Լիբիա, յԱսիա: Եւրոպիա՝ մասնեալ ասի, քանզի մասնեաց Նոյ զարևմուտս կցելով 'ի նա յարևելից յԵմաւոն լեռնէ, և ետ զնա Յաբեթի, որ ձգեցան ևս մինչև ցեզերինս Կասբից և Կովկասու և լցին զկղզիս. և մասն ինչ յարևմտից հատեալ՝ ետ Մանիտոնի, որ ասեն խնդրեաց յոսկերացն Ադամայ, զոր ունէր Նոյ 'ի տապանն. և ետ նմա զլուռունս ծնգացն, և գնաց. որ և եգիտ զհաւահմայութիւնն. և նա է հայր բնակչաց Բրիտոնացւոց: Եւ Լիբիա լիաբաժին ասի, որ է մեծասահման կողմն հարաւոյ, Եգիպտոս, և ամենայն Հնդկաստան և Եթէովպիա, զոր ետ Քա-

յառաջ խաղոյ և ազգաբանութիւն Ս. Գրոց:

1. Զմանիտոն յիշէն պատմիչք մեր և Յայսմաւուրք, և Մեթոդիոս 'ի գուշակական բանին երկբայելիս: Ըստ հեղինակիդ յանուն դորա կոչեցի Ման կղզի Անգղիոյ: Այլք ոմանք 'ի Բրուտոնէ որդւոյ Նոյի ասեն կոչեցեալ Բրիտանիա:

մայ. և զերկիրն խնկաբեր, որ կոչեցաւ Երջանիկ Արաբիա, ետ Յեկտանայ դստեր իւրոյ, ուստի եկն տիկինն Սաբայ, զի յայնմ հետէ կանայք ժառանգեն զնա։ Իսկ Ասիա աստուածային ասի[1], որ է արեւելք. տայ զնա Սեմայ, 'ի Կարմիր ծովէն և յԵւիլայ[2] և 'ի Պաղեստինայ և յԱսորեաց մինչև ցՊարթևս և ցՎրկան, և ցելն արեւու։ Տայ նմա և զոսկերս նախաստեղծիցն արկեղբ, զոր 'ի բռնանալն Քամայ 'ի վերայ նորա, թաղէ 'ի Գողգոթա և 'ի Բեթղեհեմ. և եդ նզովս զի մի յափշտակեսցեն զմիմեանց։

Յետ աշխարհահեղեղ ջրոյն յերկրորդում ամին ծնաւ Սեմ զԱրփաքսադ 'ի հարիւրերորդի երկրորդի ամին իւրոյ[3]. Արփաքսադ 'ի հարիւրերորդի երեսներորդի և հինգերորդի ամին ծնաւ զԿայնան. սա բազմացոյց զքաղդէութիւն և եգիտ զկախարդեն աստեղօք, վասն որոյ որդիք իւր աստուած համարեցան զնա, և արարին նմա պատկեր 'ի կենդանութեանն և պաշտեցին զնա։ Կայնան հարիւր և քսան ամաց ծնաւ զՍաղա. Սաղա հարիւր և երեսուն ամաց ծնաւ զԵբեր. Եբեր հարիւր երեսուն և չորս ամաց ծնաւ զՓաղէկ, որ է բաժանումն, քանզի անհաւան լեալ վիճակացն տուելոցն 'ի Նոյէ, վիճէին մինչև դարձեալ բաժանեցին, ըստ բազմին և ըստ սակաւին անձանց ազգի մարդկան. և ապա միաբանեալք ընդ միմեանս սիրով խորհեցան զնալ յարեւելս, տեսանել զդրախտն՝ զոր լուեալ էին եթէ անտի ելին նախաստեղծքն։ Եւ իբրև չոգան զշատ աւուրս, և ահա ծով լայնանիստ անջրպետեալ էր զնա յերկրէ. և դարձան անտի խորհելով 'ի մտիս, եթէ վասն մեղաց ջուր աւերեաց զերկիր, և անց ծով ընդ մէջ դրախտին, և մեղքն այն գտանի այսօր առ մեզ և ոչ պակասի յաշխարհէ. և արդ եկայք շինեսցուք մեզ աշտարակ պահել զմեզ 'ի գալ պատուհասի մեղաց ջրոյ։ Եւ էր Փաղէկ ամաց հարիւր երեսուն և երից և ծնաւ

1. Աս՝ աստուած ըսի 'ի լեզու հիւսիսային ազանց Եւրոպիոյ, որպէս և Ասկարդ աստուածակերտ կամ աստուածաքաղաք, արքայութիւն գից նոցին։

2. Եւիլա արեւմտեան կողմանք Արաբիոյ են յեզերս Կարմիր ծովու հանդէպ Եթէովպիոյ և Եգիպտոսի։

3. Ս. Գիրք հարիւրամեայ ասեն զՍեմ 'ի ծննդեան Արփաքսադայ։

նմա Ռագաւ . և եկեալ իշխանաց աշխարհի յերկիրն Սենայար, 'ի դաշտն Բաղանէ[1], արկին հիմն քաղաքի, և շինեցին զնա վաղվաղակի, և սկսան ապա զաշտարակն յառաջին ամին Ռագաւու . ասեն ոսկեղէն և արծաթեղէն սարսխօք շուրջ զնելով աղիւս, խորովեալ հրով, զանգեալ բռով, կրով և կպերբ, արձակահիմն, խորամէջ, լայնափողոց, բացեալ պատուհանօք լուսաբերօք . ասեն և ակունս լուսարձակս դնել առ պատուհանօքն : Անխոնջ վաստակօք զամառն և զձմեռն գործէին, և հող տեղւոյն ձեռն տայր . շար իմն մրջմանց յամենայն կողմանց ելողաց և իջողաց, այր զայր գրգռէր, և կին զընկեր իւր : Եւ ոչ ոք ասէր եթէ ես շատ գործեցի քան զքեզ, այլ եթէ դու շատ գործեցեր քան զիս . զի դեռ անախտ և անցաւ ունէին բնութիւնս . և մինչև ցքառասներորդ ամն Ռագաւու՝ ոչ առին պարապ գործոյն, մինչև հասուցին յօդն անտես, յործուտն և 'ի մղձկուտն և 'ի սաստակողն, յոր թռչունն ոչ վերանայ, և թէ ձկտի՝ թևակիզեալ անկանի . և ասեն թէ զոսկին յատակացն սկսեալ տարան ընդ մէջն մինչ 'ի վեր, և հալէր 'ի ջերմութենէն, և մարդիկն ջանային ես հնարիւք անկեզ մնալ, և ոչ կասել 'ի գործոյն, մինչ ինքն Տէր ողորմեալ դադար տայր առնուլ յանօգուտ ջանիցն . և գտանին զրոյցք 'ի տանն Նեբրովթայ[2], եթէ նախ հրեշտակ եկն առ Նեբրովթ, որ իշխան էր, և որսայր[3] շինողացն կերակուր, և ասէ ցնա . Ես եմ հրեշտակ Աստուծոյ, կողմնապետ արևելից . այսպէս ասէ տէր Աստուած երկնի և երկրի, լռեցէք դադարեցէք 'ի գալոյդ առ իս, զի ոչ կարէք . այլ ես եկից առ ձեզ 'ի ժամանակի, և տաց ձեզ սանդուխս որով կարէք և դուք գալ առ իս : Եւ ոչ լուան հրեշտակին . ապա ինքն ասաց ցէակիցսն իւր . Եկայք մեք իջցուք և բաժանեսցուք զլեզուս նոցա . և զի ստեղծուածք ձեռաց նորա 'ի ցասմանէ զարհուրեալք փախչէին առ

1 . Սենայար և Բաղանէ ստորին կողմն են Միջագետաց ըստ արևելից կուսէ, որ յետոյ Բաբելոն կոչեցաւ և այժմ Իրագ-Արէպի :

2 . Զրոյցք տանն Նեբրովթայ թըւին տառապելաւանդ գիրք պատմութեան Նեբրովթայ, զոր յիշէ և Վրացն պատմիչ :

3 . Ի հին Օ . յետոյ փոխեալ է որ փայր :

նա, ոչ պատժեաց զնոսա, այլ հոտով դրախտին արբեցոյց զնոսա. զի հանդէպ կայր դրախտին գլուխ բրգանն։ Եւ այսպէս մխիթարեալք զմայլմամբ յանձառելի բուրմանէ հոգւոյն, մոռացան զառաջին լեզուն. և չարար զնոսա վաստակ միւսանգամ քակելով, այլ հողմոյ հրամայեաց գործ, և ոչ զոք սպան 'ի նոցանէ. զի ոչ շըրջեաց՝ այլ հոսեաց։ Եւ շատ ինչ բարի եղև. մի զի ծանեան մարդիկ զիւրեանց տկարութիւնն. և դարձեալ պատճառք իմաստից և գեղեցկաբանութեան, 'ի խոշոր լեզուէն առաջնոյ և 'ի կոպտաձև. փափկագոյնն Ելլէնական, և սաստկագինն Հռովմայեցւոց, Հոնն սպառնական, և Ասորին աղաչական, Պարսիկն պերճական, և Ալանն գեղեցկաձև, Գուդն ծաղրական, Եգիպտացին խարափանձայն, և Հնդիկն ճճուող, Հայն համեղ և ամենազարդ և համեմական. և որպէս ազգի ազգի գոյնք գեղեցկութիւն առնեն, և զանազանութիւնք հաստակաց, այսպէս և լեզուաց զանազանութիւնք։ Եւ առաջին լեզուն մնաց առ Եբերայ, որ ոչ միաբանեաց ընդ այլսն, և որպէս մեղքն բաժանեաց յերկու տուն զմարդիկ, 'ի Կայենին և 'ի Սեթայն, նոյնպէս և աստ, յերկու եղեն ազգ մարդկան, յԵբեր, և յեօթանասուն և երկու տանուտէրսն. որպէս մի Աստուած միազօր, համակ քաղցրն 'ի մէնջ հարկեալ և տանջէ ևս, և կոչի Աստուած և տէր։ Եւ եթէ 'ի յարութեանն հասարակի յԵբերայն խօսին, բայց զայս է ասել, եթէ ցեղացեղ և բազմակարօտ մեր բնութիւնս և յօքնանուն, երբ մաքրի և պարզի՝ անկարօտ լինի. զլեզուս հրեշտակաց առնու, ասէ սուրբն Եղիշէ, որով ընդ Աստուած և ընդ միմեանս խօսին։ Այլ Տէրն ելից ըղկարօտութիւն մարդկան, զխաչն տուեալ աշտարակ յերկինս ելից, և զաստիճանս առաքինութեան զօրինակն Յակոբայ ցուցեալ, և անդ իսկ կոչեաց Հոգին որ փոխեաց զլեզուս նոցա, հրեշտակս Աստուծոյ փոխանակ մարդկան, զի յօժարեսցին առ հրեշտակս ելանել։ Կացոյց ասէ զսահմանս ազգաց ըստ թուոյ հրեշտակաց Աստուծոյ, թուեաց 'ի հրեշտակս և յայլամենայն լեզուաց կացոյց վերակացուս 'ի հրեշտակաց Աստուծոյ, զի մի օտարասցին ամենևին յԱստուծոյ հեթանոսք։

Դ. Բայց Բէլ հպարտացեալ յանձնանի հասակն վաթսուն կանգուն[1], հնազանդեցոյց ինքեան զամենայն իշխանսն որպէս աստուծոյ, և ապա արձակեաց, բայց 'ի Հայկայ՝ որ էր որդի Թորգոմայ, որդւոյ Թիրասայ, որդւոյ Գամիրայ, որդւոյ Յաբեթի, որդւոյ Նոյի, որ ոչ պաշտեաց զնա աստուած, այլ և շուն կոչեաց զնա. և զի եկն 'ի վերայ նորա ծանր ամբոխիւ, եսպան զնա Հայկն նետիւ հարեալ զսիրտն՝ պղնձեօք տախտակեալ:

Իսկ որդիքն Քամայ 'ի գնալն յերկիրն կալուածոց իւրեանց, տեսին զՊաղեստինեայ և զկողմանսն Յորդանանու զի պարարտ և յուռթի էր. բնակեցան անդ ուժովն Բելայ ազգականին իւրեանց և զրկեցին զորդիսն Սեմայ, և եղև պատերազմ սաստիկ: Այլ և որդիքն Յեկտանայ, Սաբա և Եւիլա և Ոփիր, իմացան զկազմած զինուց, և խնդրէին իւրեանց տեղի ընդարձակ, զի աճեցին 'ի բազմութիւն: Եւ յերեսաց նոցա գաղթէին մարդիկ յամրոցս ինքնագործս, և ապա սկըսան շինել բերդս, և պատերազմօղքն գտին զմեքենայս առման ամրոցացն, մինչ ձանձրացեալ ազգացն յըստիր առնէին նոցա զերկիր զոր և կամեցին. և առ Սաբայն զխնկաբեր երկիրն, զոր Սաբա կոչեաց, և Ոփիր զաշխարհն ոսկեհանաց, որ է Հնդիկք. և Եւիլա՝ զերկիրն պատուական ականց և անուամբն իւր կոչեաց Եւիլատ:

Այլ Ռագաւ հարիւր երեսուն և երկու ամաց ծնաւ զՍերուք. Սերուք հարիւր և երեսուն ամաց ծնաւ զՆաքովր, և շինեաց Սերուք զՍրուճ. Նաքովր ամաց եօթանասուն և ինունց ծնաւ զԹարա. Թարա եօթանասուն ամաց ծնաւ զԱբրահամ: Յայնմ ժամանակի ասեն լեալ զԱմազոնս[2], որ է կանանց զինուորութիւն. քանզի զկին ոմն ասեն յազգէն Թորգո-

1. Թուի 'ի պատկերէն կանգնելոյ 'ի Նաբուգոդոնոսորայ համեմատեալ զբարձրութիւն Բելայ 60 կանգուն: Յայլ ինչ գիրս իւր հեղինակս ԺԵ կանգնեայս ասէ զհսկայն, և վասն այնորիկ նովին չափով ամբարձեալ ջուրց հեղեղին 'ի վերոյ քան զլերինս 'ի բապառասպուռ ընջուլին նոցին:

2. Ամազոնաց (միասերն կանանց) զորոց պէսպէս առասպելք և Թուիք, երկիր հաւանելի է ըղ-Թերմոգոն գետով Պոնտոսի, Թերմէ-չայ յայժմուս. ուր լոի ցարդ Մուտն-թաղ լեռան:

մայ ժառանգ մնացեալ թագաւորութեանն ազգին, հատեալ զարու զաւակայն, և էր քաջասիրտ և արի, և աւերէր զազգս բազումս, և եղև գժտութիւն 'ի զօրացն, և կոտորեաց զնոսա, և ստացաւ զօրս 'ի կանանց, և նոյնպէս առնէր եղեալ զաթոռ թագաւորութեան իւր յԱլիոն[1] քաղաքի ։

Է. Յիշեսցուք համառօտիւք և զմերն նախնին Յաբեթ, որ զկնի ջրոյն ծնաւ զԳամիր, ուստի Գամիրք, և զՄագոգ, յորմէ Սկիւթք և Գաղատացիք, և զՄեդա, որ զՄարս ծնեաց, և զԹոբէլ, յորմէ Թետալք, և զՄոսոք որ առ զԼիւրիկիա. և զԹիրաս՝ յորմէ մերն Ասքանազ և Թորգոմ. և Յաւանայ՝ Յոյնք, և 'ի Թարշըշայ՝ Վիրք և Տիւրենացիք. և 'ի Կիտիմայ Հռովմայեցիք և Լատինացիք։ Եւ Թորգոմ[2] ծնաւ զՀայկն, և զեօթն եղբարս նորա, զԳարթլոս, զԿովկաս և զայլսն, որք ժառանգեցին զհիւսիսի։ Եւ 'ի Հայկայ Արամանեակ, յորմէ կոչեցաւ լեառն Արագած, և յԱրմանեկայ Արմայիս, որ շինեաց զԱրմաւիր։ Եւ Արմայիս ծնաւ զԱմասիա, յորմէ կոչեցաւ Մասիս լեառն. և Ամասիա ծնաւ զԳեղամ, որ շինեաց զԳեղարքունի. Գեղամ ծնաւ զՍիսակ, յորմէ Սիւնիք, և զՀարմա, որ ծնաւ զԱրամ, յորմէ ամենայն ազգ կոչէ զմեզ Արմէն։ Զի սա ընդարձակեաց զսահմանս Հայոց, որ զԿապադովկացիս և զՊոնտոս[3] և զկլիմայն ընդ իւրև նուաճեալ, Արամանեակ կոչէր։ Եւ յԱրամանեկայ և 'ի Պոնտոս՝ Առաջին Հայք. և 'ի Պոնտո-

1. Ալիոն քաղաքաւ նշանակէ զԻլիոն, այսինքն զՏրովա ։

2. Ըստ Ս. Գրոց Թորգոմ որդի է Գամերայ որդւոյն Յաբեթի. ըստ Խորենացւոյ (որ ըստ Աբիւդենեայ և Մար Իբասայ) Թորգոմ հայր Հայկայ որդի է Թիրասայ որդւոյ Գամերի. Թէպէտ և 'ի մերում Թարգմանութեան Ս. Գրոց ասէ ոչ գտանի այս, նաև ոչ յայլսն։ Նոյնպէս և զԱսքանազ Ս. Գիրք Գամերայ որդի ասեն, պատմիչք մեր՝ Թիրասայ. չփոթութեամբ և կամ մանրագոյն կարգելով զազգաբանութիւն Գամերայ և զհամանուանն եղբօրորդիս, զորովք զանց առնեն Ս. Գիրք, որպէս և զայլովք բազմօք ։

3. Ակնարկէ 'ի բան Խորենացւոյ. Ա. ԺԴ. «Զկլիմոյն զայն Պոնտոս (Բրոգին) Արմենիան կոչեն (Յոյնք) որ թարգմանի Ա Հայք»։ Հեղինակս զԱ Հայս կամ զգաւառն Կեսարիոյ համարի Արամանեակ կոչեցեալ. նոյն ինքն այլուր և այլ ոք՝ Արամանեակ գաւառ ցուցանեն զկողմանս այժմեան Ագշէհրօվայի, զոր Հայք կոչեն Աշխարհաբերդ ։

սէ 'ի քաղաքն Մելտենի՝ Երկրորդ Հայք. և անտի 'ի Ծոփաց գաւառն՝ Երրորդ Հայք. և անտի 'ի քաղաքն Մարտիրոսաց և յԱրզնիս՝ Չորրորդ Հայք. և զսե-փական աշխարհն իւր կոչէ Մեծ Հայք: Սա ծնաւ զԱրայն գեղեցիկ, որ մեռաւ 'ի Շամիրամայ, թող-լով որդի զԱնուշաւան. որոց կարգի ազգն այսպէս:

Պարէտ, Արբակ, Զաւան, Փառան[1], Սուր յա-ւուրս Յեսուայ, Յոնակ, Համբակ, Առնակ, Նորայր, Վստամ, Կար, Դռակ[2], Հուան, Ընձակ, Դռակ[3], Հա-ւան, Զարմայր, որ յԻլիական պատերազմին ընդ Ե-թովպացւոց զօրուն մեռանի: Պերճ յաւուրս Դաւթի արքային. Արբուն, Հոյն, Յուսակ, Կայպակ, զոր պը-սակէ Վարբակէս Մար, որ հանեալ զթագ 'ի Սար-դանապալեայ, տիրէ Ասորեստանի և Նինուէի: Առ սա եկին որդիքն Սենեքերիմայ և պատուեցան ևս 'ի Պարոյրայ: Զոր յաջորդէ Հրաչէ՝ որդի իւր, որ էր ընդ Նաբուգոդոնոսորայ յԵրուսաղէմ, և ած զՇամ-բատ ընդ իւր 'ի Հայս, յորմէ ազգ Բագրատունեաց: Եւ յետ Հրաչէի Փառնաւազ, Պաճոյճ, Կոռնակ, Փաւոս, Հայկակ, Երուանդ, որ ծնաւ զմեծն Տիգրան, որ սպան զԱժդահակ, և զԿիւրոս ըմբռնեաց և արձա-կեաց. Բաբ, Տիրան, Վահագն, Արաւան, յորմէ Արաւեղեանք, Ներսեհ, Զարեհ, Արմոգ, Պայգամ, Վան, Վահէ, զոր սպան Աղեքսանդր Մակեդոնացին:

Իսկ 'ի Քամայ որ մնաց մեզ ասել, Քուշ, Մես-տրիմ, Նեբրովթ, որ է Բէլ, Բաբ, Անեբիս, Արբէլ, Քայաղ, միւս Արբէլ, Նինոս այրն Շամիրամայ:

Ը. Ասացուք և զկարգ թագաւորացն: Առաջին թագաւորեաց Նեբրովթ 'ի Բաբելոն հիւսածոյ թագաւ պսակեալ և ոչ կռածու, 'ի յիսուն և վեց ամին Սե-րուքայ. սա շինեաց զՇօշ քաղաք, որ ասեն Ասպա-հան, և սա սպանաւ 'ի Հայկայ, որդւոյ Թորգոմայ: Եւ թագաւորեաց Քսիրոս քաղդէացի. յաւուրս սորա գտաւ արուեստ ոսկեհանութեան և արծաթագործու-թեան: Եւ յետ նորա թագաւորեաց Սամիրոս յազ-գէն Սեմայ ամս եօթանասուն և երկու. սա սկսաւ գա-

1. Օ. Փառնան:

2. ՕՕ. Կորդակ կամ Կոր-դլակ:

3. Հինն Յուսկ.. Գլակ:

հեկան և գրամ գործել անուամբ գրոյ, և առ սովաւ գտաւ քանդուած նկարու, և կաղապործութիւն և չափ և կշիռ, և ամենայն բարեկարգութիւն։ Զամանէկաաէ Մենադրոս մոգ եթէ երիս աչս ունէր։ Ի քսան և հինգ ամին Նաքովրայ էր ձգնութիւնն Յոբայ որդւոյ Զարեհի, որդւոյ Ռագուէլի, որդւոյ Եսաւայ, որ զամս երեսուն և ութ պատերազմեալ ընդ սատանայի, յաղթեաց համբերութեամբ և փառաւորեցաւ։ Յեօթներորդ ամին Թարայի թագաւորեաց Արփիազատ ամս ութևտասն. և զկնի նորա Միլոս Աթուրացի ամս վաթսուն և երկու, հանեալ զպատիւն ՚ի Բաբելոնէ յԱթուրիայ, որ է Նինուէ. բայց Բասարոս ոմն թագաւորեաց ՚ի Բաբելոն։ Իսկ Աահերոն եղբայր Թարայի սպան զնա, վասն հանելոյ ՚ի նմանէ զԿայնան կուռքն, զի էր քրմապետ։ Աստ շինեցաւ Դամասկոս յԱրամայ Խիթացւոյն։ Աբրահամու մօրն Ամալքաթու էր անունն. և յետ տասն ամի ծնանելոյն Աբրահամու, ծնաւ Թարա զՍառա ՚ի Զմրութայ կնոջէ իւրմէ, և ոչ ՚ի մօրէն Աբրահամու, որպէս ինքն ասաց ցԱբիմելէք. Քոյր իմ է, ասէ, ՚ի հօրէ և ոչ ՚ի մօրէ։ Իսկ լեալ Աբրահամ հնգետասան ամաց, ըսկըսաւ խնդրել զԱստուած, մինչև ցեօթանասուն ամն. քանզի պարարտ և բազմահաշահ երկիրն Քաղդէացւոց գրգռեաց զնոսա յամենայն չարիս, յորում այց արար Աստուած, և արածել հրամայեաց ձայից բազմաց զանդս և զայգիս նոցա բազում ժամանակս, և իւրաքանչիւր ոք սակաւ ինչ վաստակէր և պահէր իբրև զտարածոցս, և անկան յաղքատութիւն։ Իսկ Աբրահամ էր պահապան ՚ի հայրենիս իւր և ուսանէր ՚ի գիշերի զաստեղագիտութիւն, և զտիւն վաստակէր ՚ի պահել զանդս. և զամենայն զոհս և զուխտս և զաղօթս կատարելով պաշտեցեալ դիցն իւրեանց, և ոչ լինէր դիւրութիւն. զնոյն և Աբրահամ առնէր, և մտախոհ լինէր ապա յինքեան թէ չէ պատուհաս ՚ի մեռոցս պաշտելեաց, վասն զի ոչ կարեն բառնալ. այլ և յարուեստէ աստի յաստեղացս պարտ է ձանաչել զի ՚ի շարժման կան միշտ, և ՚ի ներքոյ հարկի, և յայտ է թէ գոյ ոմն կառավար սոցա մեծ անծանօթ։ Իսկ ապա սկսաւ պաղատանօք ասել. Անծանօթ Աստուած ամենայնի արա-

րիչ, և այս թռչնոցս, դու հալածեալ զսոսա. և նոյն ժամայն անյայտ եղեն։ Եւ ասաց Աբրամ. Ահա գտաք զԱստուած. օրհնեալ է տէրութիւն քո և փառք քո լցցէ զամենայն երկիր. և պատմեաց 'ի տան հօր իւրոյ, և անփոյթ եղև նոցա զիրացն։ Յայնմ ժամանակի մեռաւ Բելօս թագաւոր և առ զթագն Նինոս որդի նորա, որ շինեաց զկուռս հօր իւրոյ ոսկեղէն, և ընդարձակեաց զԱթուր քաղաք, և յանուն իւր կոչեաց Նինուէ։

Ի սորա ժամանակս շինեաց Մելքիսեդեկ[1] զԵրուսաղէմ, և Աբրամ ոչ դադարէր 'ի խնդրելոյ զերեւումն Աստուծոյ. և լուաւ նմա, և ըստ տանելոյ նորա յայտնեցաւ նմա, և ասէ. Ե՛լ յերկրէ քումմէ և յազգէ և տարայց զքեզ 'ի զրկեալ վիճակն ձեր, և քեզ և զաւակի քում տաց զնա. և ասաց զբանն հօր իւրում։ Եւ ել ընդ նմա, և եկին մինչև ցԽառան, և ստացան անդ տուն. և շինեաց անդ Թարա մեհեան կռոց, և այրեաց զնա Աբրամ, և Առան եղբայր նորա կամեցաւ շիջուցանել, և այրեցաւ անդէն. ոմանք ասեն թէ զի-շակէսն նա հնարեցաւ, և մեռաւ 'ի Տեառնէ։

Եւ դարձեալ լինի առ Աբրամ ձայն Աստուծոյ ելանել 'ի Խառանէ, և ել ըստ բանի Տեառն. ասեն այլ կին ունել Աբրամ, և որդի Օվրեստէս անուն, զորս թողեալ զամենեսեան գնաց 'ի Պաղեստինեայ եօթանասուն և հինգ ամաց, և ութսուն և եօթնամեայ էջ յԵգիպտոս. և ել անտի անմռաց 'ի Տեառնէ. և հարիւր եօթնևտասն ամաց լեալ՝ ած զորդին 'ի զենումն. և հարիւր քառասուն և ութ ամաց առ զԿենտուր, և վեց որդիս ստացաւ 'ի նմանէ. 'ի հարիւր եօթանասուն և հինգերորդին վախճանեցաւ, յերեսներորդի եօթներորդի ամին Յակոբայ։ Ի քառասուն ամին առ Իսահակ զՌեբեկա, և 'ի վաթսուն ամին յղացաւ և գնաց հարցանել 'ի Մելքիսեդեկայ, և նա ասէ. Երկու ազգ է յորդանդի քում, և երկու ժողովուրդք։ Յեօթանասներորդի երկրորդի ամին Սահակայ՝ հնգետասաներորդ հարստութիւն իշխանացաւ յԵգիպտոս Ապիս, և աստուած կարծեցաւ. զնա Սա-

1. Ըստ աւանդութեան՝ Մել- Արփաքսադայ որդւոյ Սեմայ։
քիսեդեկ որդի է Մելքեայ որդւոյ

րայլս ոմանք ասացին ։ Ի հարիւր երեսուն և եօթն ամին Սահակայ գնաց Յակոբ 'ի Խառան առ Լաբան, և ութսուն ամաց առ զԼիա դուստրն Լաբանայ ։ Յաւուրս Յակոբայ փորոն թագաւոր Եգիպտոսի օրէնս և դատաւորս եդ, և Ովգեգիս շինեաց զԷլեւսինեա յԱտտիկէ ։ Յակոբ 'ի հարիւր ամին եկ առ Իսահակ հայր իւր, և մետասան ամաց էր Ղևի ։ զի յութսուն և իններորդի ամին ծնաւ զնա ։ Յեօթնևտասներորդի ամին վաճառեցաւ Յովսէփ, յերեսներորդի ամին էկաց առաջի Փարաւոնի ։ Ի հարիւրերորդի երեսներորդի ամին էջ Յակոբ յԵգիպտոս · հարիւր քառասուն և եօթն ամաց մեռաւ ։ Ղևի քառասուն և վեց ամաց ծնաւ զԿահաթ ։ Ոմանք զփորձանքն Յոբայ աստ ասեն ։ Կահաթ վաթսուն ամաց ծնաւ զԱմրամ ։ Ամրամ եօթանասուն ամաց ծնաւ զՄովսէս ։ Յովսէփ հարիւր տասն ամաց վճարեցաւ 'ի վեցերորդի ամին Ամրամայ, և աւետեացն Աստուծոյ երկուհարիւր վաթսուն և վեց · յորում ամի թագաւորեաց յԵգիպտոս Քեբրոն ամս երեքտասան, և յետ նորա Մենափթիս ամս քառասուն և երեք · սա առնէր գետասոյզ զտղայն Իսրայէլի · յորմէ ապրեցաւ Մովսէս՝ բարձեալ զնա Թերմութեայ դստեր նորին թագաւորին, որ եղև կին Քանդարայ թագաւորին Մեմփիս քաղաքի · և երեքհարիւրերորդ յիններորդ ամ էր աւետեացն Աստուծոյ · և տասնամեայ լեալ Մովսէս՝ տուաւ յուսումն Յանէսն և Յամբէս ։ Ի քսաներորդի երկրորդի ամին Մովսեսի սկսան զկաւակոխութիւնն որդիքն Իսրայէլի · 'ի քսաներորդի ութերորդի ամին՝ Մովսէս իշխան եղև, և շինեաց զքաղաքն Թերմուպոլիս, անուամբն Թերմութեայ, զոր և Մառիս կոչէին ։

թ · Իսկ Եթէովպացւոցն՝ որ էին հարկատուք Եգիպտացւոցն՝ ապստամբեալ ասպատակեցին և գերեցին զԵգիպտոս, և զմայրագիրն Մովսէսի · և գնացեալ Մովսէս պատերազմեցաւ տասն ամ · և առ զԹագուհի նոցա զԹեսբաս, և զմայր իւր, և դարձաւ յԵգիպտոս · և նախանձեցաւ ընդ նմա այրն Մառեայ, որ է Թերմութիս · և 'ի մեռանելն Մառեայ, թաղեաց զնա Մովսէս ։ Եւ առաքեաց այր նորա զՔանթիս չարչարիչն Իսրայէլի սպանանել զՄովսէս · և սպան զնա

Մովսէս և փախեաւ 'ի Մադիամ։ և Յանէս և Յամբրէս առին զորդիսն Իսրայէլի և տարան զնոսա հնդետաստան աւուր ճանապարհ ընդ անապատն, և շինեցին զգրախտն իւրեանց, զհնդետաստան տարի. և 'ի կատարման շինուածին՝ յորդւոցն Իսրայէլի առին տղայս ինն հարիւր և ութսուն, և զոհեցին դիւաց. և հաւաքեցան առ նոսա, և եդին պահապանս դրախտին. և յայնմ հետէ առաւել հնազանդեցան դևք կախարդաց. և չորեքհարիւր դևք, ասեն, ոչ հնազանդեցան, մինչև կըրկին զոհեցին յանուն նոցա, և ապա եկեալ առին հաւանութիւն. բայց զչւօտ ամիսն անհնազանդեալ գործեն զկամս իւրեանց տանելով զոմանս 'ի մարդկանէ։

Իսկ Մովսէս սա 'ի կնութիւն զՍեփովրա դուստր Ռագուելի, որդւոյ Դադանայ, որդւոյ Յեկսանայ, յորդւոց անտի Կենդուրայ, և ծնաւ 'ի նմանէ երկու որդիս։ Եւ սա ասեն լեալ առ Դևկալիոնիւ [1] ջրհեղեղ 'ի Թեսաղիա, և առ Փայեթոնիւ Եթեովպիա հրայրեայցք, և այլ բազում ապականութիւնք 'ի տեղիս տեղիս, որպէս պատմէ Պղատոն։ Իսկ Դևկալիոն Պառնասացւոց կողմանցն թագաւորէր։ Մովսէս լեալ եօթանասուն ամաց՝ արժանի եղև երևմանն Տեառն, և հրամայէր գնալ յԵգիպտոս և հանել զԻսրայէլ. և նա յապաղէր զտասն ամ. և եղեալ ութսնամեայ, գընաց յԵգիպտոս, 'ի չորեքհարիւրերորդի երեսներորդի ամի աւետեացն Տեառն։ Յեօթանասներորդէ հինգերորդէ ամէն Աբրահամու՝ երկերիւր և հինգ ամ մինչ 'ի մտանելն Յակոբայ յԵգիպտոս, և երկերիւր քսան և եօթն ամ կացին յԵգիպտոս. և տասն հարուածովք հարեալ Եգիպտացիքն, ստիպով հանին զորդիսն Իսրայէլի յերեք հազար ութհարիւր քառասուն և երկու ամի ելիցն 'ի դրախտէն. և ելին 'ի հնգշաբաթոջ, և 'ի կիրակէի անցին ընդ ծովն Կարմիր, և աստի կոչեցան Եբրայեցիք. զի Եբրայն անցիկ թարգմա-

1. Դևկալիոն թագաւոր Թեսաղիոյ կացեալ 'ի ԺԶ. դարու յառաջ քան զԹուականութիւն փըրկչին. առ որով անուանի ջրհեղեղն զոր յիշէ Պղատոն 'ի ճառէն զԱտալանդն կղզւոյ կամ աշխարհէ։ Իսկ Փայեթոնն արեգական որդի, ըստ առասպելեաց, զորոյ զկառս ախմարաբար վարեալ և չեղեալ հրկիզէր զերկիր, վասն որոյ շանթահարեալ յԱրամազդայ՝ անկաւ 'ի Պադոս (Բոյ) գետ Իտալիոյ։

նի. և առին նոր լեզու պարգևօք, և այնու երգէին զօրհնեսցուքն, և էր նման հայրենի լեզուին։ Եւ եօթն ամիս շարժեցաւ Եգիպտոս, և տապալեցան յոլով շինուածք և ելին արտաքս 'ի շինուածոցն բնակիչքն։ Ի նմին ամի պարտեցաւ Ամաղէկ 'ի Յեսուայ, և 'ի նոյն ամի՝ յամսեանն երրորդի՝ ել 'ի լեառն Սինա Մովսէս։ Ապողիմոս իմաստասէրն եբրայեցի ասէ, եթէ նախ Մովսէս յԱստուծոյ իմաստնացեալ գիր արար քսան և երկու, և այնու գրեաց Աստուած զտասն պատգամն, և ետ ցՄովսէս, և նովիմք գրեաց Մովսէս նախ զԵլից գիրսն, և ապա զքսան և երկու արարածսն 'ի Ծննդոց գիրսն և զայլ երիս գիրսն. և զօրինակ արարածոցս զգալի խորանաւն եցոյց, որ գործեցաւ եօթն ամիս ընդ եօթնօրեայ արարածոցս։ Եւ ունին հինգ գիրք Մովսէսի զլոյցս երեք հազարաց և եօթն հարիւր և երեսուն ամաց ըստ Եւսեբեայ։

Ժ. Աստուածածանօթն Մովսէս կատարեցաւ հարիւր և քսան ամաց, և առ զգաւազան նորա Յեսու Նաւեայ ամս քսան և եօթն։ Ի վեցերորդի ամին Յեսուայ Դանաւոս եղբայր Եգիպտոսի թագաւորի Եգիպտացւոց յիսուն դստերօք զյիսուն որդիս եղբօր իւրոյ կոտորեաց, և Լինգոս զերծեալ թագաւորեաց, զոր ասեն ամենայն ուստեք աչացեալ, զի իմաստուն էր։ Յութևտասն ամին Յեսուայ Փիւնիկս և Կադմոս 'ի Թեբացւոց յԱսորիս եկեալ թագաւորեցին, և աշխարհն կոչեցաւ Փիւնիկէ, և տուն Կադմեայ։ Եւ սոքա բերին անդ զիմաստութիւն, որպէս Կեկրոփս եած 'ի Մեմփիս քաղաքէ բնակիչս Աթենայ և եղև տուն իմաստից, և Կեկրոփս արար գիր Յունաց, զոր այլք զԿադմոս ասեն։ Կատարեցաւ Յեսու հարիւր եօթն ամաց, և դատաւոր եղև Գոթոնիէլ ամս քառասուն։ Ափրիկանոս երեսուն ամ դնէ 'ի մէջ Յեսուայ և Գոթոնիէլի, և Յոյնք յիսուն ամ ասեն Գոթոնիէլի. զի ութ ամ ծառայեցին Քուսայ, զոր սմա հաշուեն։ Աստ թագաւորեաց Արգիացւոցն Պելապոս, ուստի Փիլոզոմն էր, բարոյախօսն ամենայն կենդանեաց[1]։ Զկնի Գոթոնիէլի ծառայեցին Իսրայելացիքն

1. Փիլիստոս անուն պատմագիր նախ քան զՔրիստոս, յաւուրս մի Ճանաչի կացեալ 'ի Դ դարու Դիոնիսեայ Կրտսերոյ 'ի Սիրակու-

Եգղոմայ արքային Մովսէս ամս ութևտասն, զոր կցեն յամսն Աւոդայ, որ դատեաց զԻսրայէլ ամս ութսուն: Աստ լցաւ չորեքհազար ամն յԱդամայ:

Յետ Աւոդայ ծառայեցին այլազգեացն ամս քսան. և զօրացաւ Սամեգար, և սպան 'ի փղշտացւոց վեցհարիւր այր մաճով արօրոյն: Եւ դատեաց զԻսրայէլ Բարակ Դեբովրայիւ ամս քառասուն, յարելով զծառայութիւն այլազգեացն: Յաւուրս սորա Յովն կացեալ ապարապետ Աթենացւոցն, Յոյնք անուանեցան և նոքա[1]: Յաւուրս սորա հարիւր իմաստասէրք[2] տեսին զմի տեսիլ 'ի միում գիշերի, եօթն արեգակն. զոր Սաբիլէ կին մեկնեաց 'ի վերայ եօթն դարուց, և զվեցերորդն 'ի Քրիստոս մեկնեաց, որոյ Ճառագայթն թագուցանէր զայլսն: Զկնի Բարակայ իշխեցին Մադիանացիքն ամս եօթն, և դատեաց զԻսրայէլ Գեդէոն ամս քառասուն յարելով զայլազգեացն: Դեդալոս[3] հիւսն և նկարիչ աստ երևեցաւ, որ ասեն թէ շարժէր պատկերն զոր գործէր թուեցուցեալ: Զկնի Գեդէոնի զեօթանասուն որդիսն կոտորեաց Աբիմելէք և դատեաց զԻսրայէլ ամս երեք. և զկնի նորա Թովղա ամս քսան և երկու: Եւ Հերակլէս ասեն զԻլիոն աւար հարկանէր, սպանանելով զԱնտէոս[4], զոր երկրածին համարէին: Յայիր Գաղաադացի, ամս քսան և երկու. յետ սորա ծառայեցին այլազգեացն ամս ութ, ոմանք ութևտասն ասեն, և յայլս յարեն: Յեփթայի, ամս վեց: Աղեքսանդրոս զԵղենէ առևանգեաց, և տասն ամ պատերազմ վասն այնր, և առնուլն զԻլիոն. և Հերակլէս խոցեալ ընկեաց զինքն 'ի հուր: Եսեբոն ամս եօթն: Եւ յետ նորա Եղոն տասն ամս, որ չկայ յեօթանաս-

տա. իսկ առակախօսն կենդանեաց հետևող կամ նախօրինակ Եզովբոսի, անծանօթ է ինձ:

1. Ըստ Եւսեբի. բայց զՅոյնս գիտեմք 'ի Յաւանայ որդւոյ Յաբեթի. իսկ Յոնդ զօրավար էր Աթենացւոց որ մարտեաւ ընդ Եւմոլպեայ Թրակացւոյ փախստեայ եկելոյ յԱտտիկէ:

2. Հարիւր իմաստասէրքն անծանօթք. իսկ Սաբիլէ կինն է Սիբիլլա մարգարէուհի 'ի հեթանոսս, որ եօթն կամ ինն համարին. մատեանն որ յանուն նոցին գտանի՝ աղանդաւորաց քրիստոնէից գործ է:

3. Դեդալ հիւսն և նկարիչ Աթենացի, որ զբաւիղն (լաբիւրինթոս) շինեաց Մինովայ արքայի 'ի Կրետէ:

4. Անտէոս հսկայ Լիբիացի, երկրի և ծովու (Պոսիդոնի) ծնունդ, խեղդամահ լեալ 'ի Հերակլեայ, ըստ առասպելաց:

նիցն, այլ յեբրայեցին. Լաբդոն, ամս ութ ։ Եւ թագաւորեցին Հռոմայեցիքն. առաջին թագաւոր Ենիաս անուն ։ Զկնի Լաբդոնի ծառայեցին Փղշտացւոցն ամ քառասուն. և ապա յարեաւ Սամփսոն փրկեալ զնոսա, ամս քսան ։ Ի հինգերորդի ամին սորա եղեն իրքն Հռութայ ։ Յաւուրս սորա մեռաւ Զես և թաղեցաւ 'ի Կրետէ, զոր ասեն կեցեալ ամս ութհարիւր և յիսուն, զի յաղագս բազմակեցութեանն Զես կոչեցաւ, որ 'ի ծննդենէ Պիա ասիւր ։ Եւ Եբրայեցիքն քառասուն ամ ասեն զՍամփսոնի դատաւորութեանն ։ Յոհաննէս յետ Սամփսոնի կարգէ զոմն դատաւոր Եմագոր անուն քառասուն ամաւ ։ Բայց Ափրիկանոս ասէ՝ թէ զքառասուն ամ ոչ գոյր դատաւոր. և էր խաղաղութիւն ։ Հեղի ամս քսան ըստ եօթանասնիցն, և ըստ Ասորւոց՝ քառասուն ։ Բայց գիտասցես, զի սուրբ առաքեալն չորեքհարիւր և յիսուն ամ կարգէ մինչև 'ի Սամուէլ, և այն լինի յորժամ զՅեսուայ ամքն և զՍամուէլին ոչ առնուս 'ի համարս. քանզի դատեաց զԻսրայէլ Սամուէլ ամս քառասուն ըստ եբրայեցւոցն, և ըստ եօթանասնիցն քսան. զի 'ի քսաներորդի ամին նորա խնդրեցին թագաւոր. և յայնմհետէ կարգին ժամանակք թագաւորացն ։ Բայց Սաւուղայն՝ որչափ կենդանի էր Սամուէլ՝ նմա է համարեալ 'ի կենացն Սաւուղայ, որ չէր հաճոյ Աստուծոյ, բայց յերկու ամացն ։ Սաւուղ թագաւորեաց ամս քառասուն ։ Ի տասներորդ ամի թագաւորութեան Սաւուղի ծնաւ Դաւիթ. և 'ի քսաներորդ երրորդն՝ օծաւ, և քսանևութ ամաց էր 'ի սպանանելն զԳողիաթ ։ Յերեսներորդ ամի ծննդեանն Դաւթի մեռաւ Սամուէլ. և զկնի հինգ ամի մահուանն Սամուէլի սպանաւ Սաւուղ, և Յոնաթան. և թագաւորեաց Դաւիթ ամս քառասուն ։ Ի տասներորդ ամի թագաւորութեանն իւրոյ՝ եհան զտապանակն 'ի տանէն Աբեդդարայ, և էր քահանայապետ Աբիաթար, և մարգարէք՝ Գադ և Ասափ և Նաթան, որ յանդիմանէր զԴաւիթ ։ Յերեսներորդի ութերորդի ամի թագաւորութեանն իւրոյ՝ ընտրեաց Դաւիթ հարիւր ութսուն և ութ անձինս 'ի Ղևտացւոց անտի, և արար քսան և չորս դաս, երկոտասան այր 'ի դաս մի սաղմոսասացս, և սպասաւորս տապանակին Տեառն ։

Եւ կեցեալ ամս եօթանասուն վախճանի, տուեալ զթագն Սողոմոնի, ամս քառասուն. և էր երկոտասան ամաց, և յառաջին ամին եղև նմա Ռոբովամ, 'ի Նամայէ կնոջէ յամմանացւոյն: Ի չորրորդ ամի թագաւորութեանն իւրոյ սկսաւ շինել զտաճարն, 'ի չորեքհարիւրերորդի ութսներորդի ամի ելանելոյ նոցա յերկրէն Եգիպտացւոց, ըստ թագաւորութեան գրոց եօթանասնիցն ասացեալ, զոր Եբրայեցին չորեքհարիւր քառասուն ասէ. բայց անսխալ այսպէս է. քառասուն ամ Մովսեսին, քսան և եօթն ամ Յեսուայն, որ է վաթսուն և եօթն ամ. և չորեքարիւր և յիսուն ամ դատաւորացն, ծառայութեամբ այլազգեաց՝ որ է հինգհարիւր և եօթնևտասն. յետ որոյ Սամուէլ և Սաւուղ քառասուն ամ, և քառասուն ամ Դաւթի, լինի իննըսուն և եօթն, և չորս ամ Սողոմոնին, և լինին միանգամայն ամք վեց հարիւր և մի: Եւ չափ տաճարին վաթսուն կանգուն, և քսան լայն, և հարիւր և քսան բարձր: Եւ շինեաց քաղաքս եօթն. և առ սա եկն դշխոյն հարաւոյ, և գովեաց զպաշտօնեայս տաճարին. զքսան և չորս դասն զԴաւթի կարգեալն, զոր Սողոմոն երկոտասան դաս յօրինեաց, քսան և չորս հազար այր 'ի դաս մի, և զվեց հազար դատաւորսն, և չորս հազար քնարերգակսն, և զչորս հազար դռնապանսն, և զայլ ամենայն յօրինուածսն. և գնաց 'ի նմանէ տիկինն: Եւ մեղաւ Սողոմոն յերեսուն և եօթն ամի թագաւորութեանն իւրոյ, և մեռաւ յիսուն և երկու ամաց: Եւ էին մարգարէք Սադովկ, և Աքիաս և Սամեա: Եւ իմաստասէրք՝ Հոմերոս, և Սիգոս. և քահանայապետ՝ Սադովկ 'ի ցեղէն Եղիազարու, կէսք 'ի Թամարայ ասեն, որպէս կայ 'ի գիրս թագաւորութեանցն: Կայ 'ի գիրս Փիւնիկեցւոցն, եթէ տաճարն յԵրուսաղէմ շինեցաւ հարիւր քառասուն և երեք ամօք յառաջ քան զշինելն Տիւրացւոցն զԿարքեդոն. և գրեն առակս ինչ առ միմեանս Սողոմոն և Քիրամ, և ոչ կարէր Քիրամ լուծանել զՍողոմոնին. բայց գտաւ այր մի, Աբդամոնոս անուն 'ի Տիւրոս՝ որ կարողանայր առեղծուլ, այլ և գրէր առ Սողոմոն, և տարակուսէր Սողոմոն:

ԺԱ. Ռոբովամ որդի Սողոմոնի թագաւորեաց զկնի հօրն ամս եօթնևտասն 'ի վերայ Յուդայ և Բենիա-

մենի, և այլ տասն ցեղքն թագաւորեցուցին յինքեանց զՌոբովամ՝ որդի Նաբատայ՝ յազգէն Եփրեմի ։ Յաւուրս սորա՝ ել Սուսակիմ արքայ Եգիպտացւոց և կողոպտեաց զտաճարն Տեառն և գնաց ։ Զկնի Ռոբովամայ թագաւորեաց Աբիա որդի նորա ամս երեք . և յետ նորա Ասա որդի նորա ամս քառասուն և մի ։ Իսկ զկնի Ռոբովամու, թագաւորեաց Իսրայէլի Նաբատ որդի նորա ամս երկու . և յետ նորա Բաասա ամս քսան և չորս . յաւուրս սոցա մարգարէք՝ Աքիա, Սամեա, Յովէլ, Ազարիա, որ և Ադդով, և Անանիա . Յովան, զոր այլք Զաքարիա ասեն, և Եղիփան Իուդ ասէ, զայն զոր սպան առիւծն ։ Ի քսան և իններորդ ամին Ասայ թագաւորեաց 'ի վերայ Իսրայէլի Եղաս ամս երկու . և Զամբրի ծառայ նորա սպան զնա, և թագաւորեաց աւուրս եօթն . և առ զթագն Ամրի, ամս երկոտասան . որ շինեաց զՍամարիա, որ կոչեցաւ նա Սեբաստիա, և արդ ասի Մամլուզ . իսկ զկնի Ասայ թագաւորեաց Յովսափատ, ամս քսան և ինն . և զկնի երկու ամաց թագաւորեաց Իսրայէլի Աքաաբ որդի Ամրեայ ամս քսան և երեք, որ էառ կին զԵզաբէլ, դուստր Իքթիլ թագաւորի Սիդոնի ։ Ի քսան և ութերորդ ամին Յովսափատու թագաւորեաց Իսրայէլի Ոքոզիա ամ մի, և զկնի նորա եղբայր նորա Յովրամ ամս երկոտասան, և զկնի նորա Յէու ամս քսան և ութ, և յետ նորա Յովաքազ ամս եօթն և տասն ։ Եւ թագաւորեաց 'ի վերայ Յուդայ Յովրամ ամս ութ . և զկնի նորա Ոքոզիա ամ մի . յեօթներորդ ամին Յովրամայ վերացաւ Եղիա ։ Զկնի Ոքոզիայ՝ մայր նորա Գոդողիա, որ էր դուստր Եզաբէլի, և ապա թագաւորեցոյց Յովիդեա քահանայապետ զՅովաս որդի Ոքոզիայ եօթնամեայ 'ի վերայ Յուդայ, և եկեաց Յովիդեա միայն զկնի Մովսեսի, ամս հարիւր և երեսուն . որոյ որդին Ազարիա մարգարէանայր, և եղև քահանայապետ զկնի հօրն, և սպան զնա Յովաս յերեսներորդ ամի թագաւորութեան իւրոյ . և յերեսուն և եօթներորդ ամին մեռաւ Եղիսէ . և 'ի քառասներորդ ամի թագաւորութեան իւրում, սպանաւ Յովաս 'ի ծառայից իւրոց, և թագաւորեաց 'ի վերայ Յուդայ Ամասիա քսան և ինն ամ ։ Ի սորա տասներորդ ամին թագաւորեաց Իսրայէլի Յո-

վաս ամ վեշտասան . և զկնի նորա Ռոբովամ՝ ամ քառասուն . ոմանք ասեն թէ սպան զԱմասիա , և քակեաց ՚ի պարսպէն Երուսաղեմի չորեքհարիւր գիրկ . և Թագաւորեաց ՚ի վերայ Յուդայ Ոզիա ամ յիսուն և երկու : Ի քսան և իններորդ ամին նորա Թագաւորէ Իսրայէլի Զաքարիա ամ վեց . և զկնի նորա Սելլում ամիս մի , և զկնի նորա Մանայեմ ամ տասն : Ի քսաներորդ չորրորդ ամին բորոտեցաւ Ոզիա , և լռեաց Եսայի մինչև ցմահ նորա քսան և ութ ամ , և վերստին մարգարեացաւ Եսայի վաթսուն և մի ամ . և նախ քան զլռութիւնն քսան և չորս ամ : Յերեսներորդ չորրորդ ամին Ոզիայ եկն Փուա , և առ ՚ի Մանայեմայ հազար քանքար ոսկւոյ . և ՚ի քառասներորդ ամին Ոզիայ , Թագաւորէ Իսրայէլի Փակէէ միւս ամ տասն : Ի քառասուն և ութերորդ ամին Ոզիայ եկ Թակղաթփաղասար , և գերեաց զմեծ մասն տասն ցեղիցն : Զկնի Ոզիայ Թագաւորէ Յովաթամ որդի նորա ամ տասն : Պորփիւրոս[1] պուետէս Ճանաչիւր , և մարգարէք՝ Եսայի , Յովնան , Ամովս , Ովսէէ . և Կուկր[2] Եգիպտացւոց օրէնս դնէր . առ որով գառն խօսեցաւ : Եւ յետ Յովաթամու Թագաւորէ Աքազ ամ վեշտասան . յաւուրս սորա Փակէէ և Հռասոն արքայ Դամասկոսի կոտորեցին յԵրուսաղէմ երկոտասան բիւր . և Աքազ վարձեաց զԹակղաթփաղասար , և եկեալ առ զԴամասկոս , և սպան զՀռասոն արքայ Դամասկոսի , և գերեաց զԵդոմ : Յերկրորդ ամին Աքազու Ովսէէ սպան զՓակէէ , և Թագաւորեաց ամ ինն : Յութերորդ ամին Աքազու եկ Սաղմանասար , և հարկ եդ Իսրայէլի և գնաց :

ԺԲ . Յետ Աքազու Թագաւորէ Եզեկիա . յերրորդ ամին սորա՝ եկն Սաղմանասար , և առ զՍամարիա , և գերեաց զտասն ցեղսն , և տարաւ ՚ի Բաբելոն , և բարձաւ Թագաւորութիւնն Իսրայէլի , տևեալ ամ երկերիւր և յիսուն . լինին յԱդամայ չորեք հազար երեք հարիւր և երեսուն ամք : Ռոբովամ՝ Նաբատ , Բաասա ,

1 . Պորփիւրոս պուէտ ոչ ուրեք լսի . ընդ Որփէոսի կամ Եսիոդեայ կամ այլում Թուի շփոթել հեղինակս :

2 . ՕՕ . Կուկր [illegible] օրէնս դնէր . ուղղագրելի է ըստ Եւսեբեայ « Բոկքորիս Եգիպտացւոց օրէնս դնէր » :

Եղա, Զամբրի, Ամրի, Աքաաբ, Ոքոզիա, Յովրամ; Յէու՝ որ սպան զՈվրամ և զԵզաբէլ մայր իւր, Յովաքազ, Յովաս, Երոբովամ, Զաքարիա, Սելլոմ, Մանաեմ, Փակէէ, Փակէէ, Ովսէէ վերջին ։ Ի վեցերորդ ամին Եզեկիայ գերեցաւ Իսրայէլ. որ թագաւորեաց 'ի վերայ Յուդայ ամս քսան և ինն ։ Յիններորդ ամին սորա Հռոմելոս շինեաց զՀռոմ։ Մանասէ ամս յիսուն և հինգ, Ամոն՝ ամս եօթն և տասն. Ովսիա՝ ամս երեսուն և մի. Յովաքազ՝ ամիսս երեք. Եղիակիմ եղբայր նորա ամս մետասան. Յեքոնիա՝ ամիսս երեք. Սեդեկիա՝ ամս մետասան, որ գերեցաւ, և աւերեցաւ տաճարն ։ Ամենայն ժամանակ թագաւորացն Յուդայ են չորեքհարիւր երեսուն և երկու ամ. և տևեաց տաճարն չէն չորեքհարիւր քառասուն և երկու ամք ։

Յութերորդ ամի թագաւորութեան իւրոյ Նաբուգոդոնոսոր տարաւ զՅեքոնիա և եդ 'ի բանտի, երեսուն և հինգ ամ. քանզի Նաբուգոդոնոսոր որդի Նաբուպալասարայ՝ թագաւորեաց ամս քառասուն և երկու. յութերորդ ամին գերեաց զՅեքոնիա, և եդ 'ի բանտի զամենայն ժամանակս իւր, որ է երեսուն և չորս ամ մնացեալն, զոր փոխեալ Եւմարովդակ զաթոռ հօր իւրոյ ամս երեք, և յառաջին ամին իւրոյ թագաւորութեանն եհան զՅեքոնիաս 'ի բանտէ, և ուտէր 'ի սեղան արքայի ։ Յետ որոյ եղբայր նորա Բաղտասար ամ մի, առ որով Դանիէլ զգիր բառնալոյ թագաւորութեանն Քաղդէացւոց ընթերցաւ, զոր էառ Դարեհ արքայն Մարաց, որ թուի թէ Աժդահակն է[1], զի երկմանուն ասեն զնա, որ յերեսներորդ վեցերորդ ամի թագաւորութեանն իւրում 'ի վերայ Մարաց, առ և զՔաղդէացւոցն ամս երկու. և Կիւրոս պարսիկ սպան զնա, և տիրեաց Մարաց և Պարսից և Քաղդէացւոց և Ասորւոց ամս երեսուն ։ Զոր ասեն թէ յառաջին ամին չարչարեաց զՀրեայսն և սպան զԱնանիանսն, և չարչարեաց զնա Տէր 'ի տեսլեանն, և սպառնացաւ նմա. յորմէ զարհուրեալ՝ ետ հրաման արձակել զգերին Հրէից, տալով զսպաս տաճարին ցՍամանասար հան-

1. Դարեհ արքայ Մարաց արդարև Աժդահակն է ։

դերձապետ Յուդայ արծաթի և ոսկի ամանս հազար չորեքհարիւր. քառասուն և երեք. բայց ոչ բերաւ յԵրուսաղէմ, մինչև ցԶօրաբաբէլի գալն ։ Եւ աստ լցաւ եօթանասուն ամացն վճիռն, յԵրեմիայէ ասացեալն, որ հաշուեալ լինի յութևտասներորդ ամէն Ովսիայ արքայի, որպէս Եզեկիէլ երեսուն ամ ասէ 'ի հինգերորդ ամի գերութեանն Յեքոնիայ, յորում սկսաւ մարգարէանալ. քանզի Յովսիա երեսուն և մի ամ թագաւորեաց, և յութևտասներորդ ամին վճիռն հատաւ եօթանասուն ամին, չորեքտասան Ովսիայն, և մետասան Յովակիմայն՝ լինի քսան և հինգ, և հինգ գերութեանն՝ լինի երեսուն. և երեսուն և չորս ամ Նաբուգոդոնոսորայն, մնացեալն լինի վաթսուն և չորս. երեք՝ Իլմարոդայն. մի՝ Բաղդասարայն, և երկու Դարեհին, լինի եօթանասուն. և զի լցեալ էր եօթանասունն, և Կիւրոս յաղթէր, բարկացաւ նմա Տէր. և Դանիէլի ասէր հրեշտակն թէ իշխանն Պարսից կռուի ընդ իս, չտալով թոյլ արձակել զգերին ըստ աղօթից քոց ։ Եւ յառաջին գալն էին Հրեայքն հինգ բիւրք, որք կանգնեցին սեղան, և արկին հիմն տաճարին, և նեղեալ 'ի շրջակայ ազգացն, մնաց անկատար մինչև ցԴարեհ արքայ ։ Յետ Կիւրոսի Կամբիւսոս որդի նորա ամս ութ. Հրեայք Նաբուգոդոնոսոր զսա կոչեն. Մոգքն երկու եղբարք, ամիսս եօթն. Դարեհ Վշտասպ ամս երեսուն և վեց. Քսերքսէս Դարեհի որդի, ամս քսան և մի. 'ի սորա հօրն յերկրորդ ամի Զօրաբաբէլէլ յԵրուսաղէմ, և շինեաց զտաճարն. առ որով լցաւ երկրորդ անգամ եօթանասունն յաւերմանէ տաճարին, երկու ամ աւելի. Նաբուգոդոնոսորի և որդւոցն՝ երեսուն և երկու, և երկու Դարեհ մարին, և երեսուն և ութ Կիւրոսին և որդւոյն, լինի եօթանասուն և երկու. և զԴարեհին երկրորդն եդեալ՝ լինի եօթանասուն և չորս. որ լինի աւելիքն չարութեանն և ծուլութեանն Հրէից, և ոչ Աստուծոյ քաղցրութեանն ։

ԺԳ. Արտաշէս երկայնաբազուկ քառասուն և մի ամ. առ սովաւ Եզրաս և Նէեմի տակառապետ եկին յԵրուսաղէմ և շինեցին զպարիսպն ։ Դարեհ հարճորդի ամս իննևտասն. Արտաշէս, ամս քառասուն, առ սովաւ Եսթեր ։ Արտաշէս Ոքոս, ամս չորս. Դա-

րեհ Արշամայ, ամս վեց. զոր սպան Աղեքսանդր, և եկեաց ինքն այլ ևս ամս վեց. յերկրորդ ամէն Դարեհի Վշտասպեայ մինչ 'ի մահն Աղեքսանդրի՝ լինին ամք հարիւր եօթանասուն և մի[1]։ Զկնի որոյ թագաւորեաց Պտղոմէոս Լագիպտոս, որ Լագոսեանն կոչի, ամս քառասուն. Պտղոմէոս Փիղադելփոս, ամս երեսուն և ութ. առ որով թարգմանեցան Հրէից գրեանն։ Պտղոմէոս Եւերգետէս, ամս քսան և չորս. Պտղոմէոս Փիլուպատոր, ամս քսան և մի. Պտղոմէոս Եպիփանէս, ամս քսան և երկու. Պտղոմէոս Փիլոպատոր, ամս երեսուն և երեք. առ որով Անտիոքոս Եպիփանէս նեղէր զՀրեայսն, որ թագաւորեաց ամս մետասան։ Անտիոքոս Եւպատոր ամս երկու. 'ի սոյն ամի և 'ի Փիլոպատոր Պտղոմեայ եօթնեւտասներորդն, ամբարձաւ Յուդա Մակաբեայ ամս երեք. և լինի 'ի թագաւորութենէն Զօրաբաբելի մինչև ցՅուդա Մակաբեայ՝ ամք երեքհարիւր երեսուն և երկու։ Յուդա Մակաբեայ, ամս երեք. Յովնաթանէս, ամս տասն. Շմաւոն, ամս ինն։ Հիւրկիանոս՝ որ և Յոհաննէս, ամս քսան և վեց. Արիստաբուլոս, ամ մի. Յաննէոս, որ և Աղեքսանդրոս, ամս քսան և եօթն. Աղեքսանդրիա կինն, ամս ինն. Հիւրկանոս, ամս երեսուն և չորս. Հերովդէս այլազգի, ամս երեսուն և եօթն։ Յերեսներորդ երկրորդ ամի սորա ծնանի Քրիստոս Աստուած։ Լինի 'ի Յուդայէ Մակաբեայ մինչև 'ի ծնունդն Քրիստոսի հարիւր յիսուն և մի ամք. և 'ի Զօրաբաբելէ մինչև ցՀերովդէի յերեսներորդ երկրորդ ամն, յորում Տէրն ծնաւ, չորեքհարիւր ութսուն և երեք ամք։ Իսկ ըստ Դանիէլի եօթներորդացն, որ ասէ եօթներորդք եօթն և եօթներորդք վաթսուն և երկու, որ լինի վաթսուն և ինն. և եօթներորդ մի, և կէս եօթներորդի. զմի եօթներորդն 'ի վերայ հաշուեալ, եօթանասուն եօթներորդք է, որ լինի չորեքհարիւր իննսուն. և զի յայս թուոյս, որ չո-

1. Յերկրորդ ամէ Դարեհի Վշտասպեայ (521 նախ քան զՔրիստոս) ցմահ Աղեքսանդրի Մեծի (324ն. Քրիստոս) լինին ամք 197։ Գտանին և այլուր վրիպակք յամս և 'ի կարգս թագաւորաց յիշեալս 'ի հեղինակէդ, զոր դիւրին է ըստուգել 'ի ժամանակագրական գրոց. վասն այսորիկ և զանց արարաք առ տեղեաւն յիշատակել։

ըեքհարիւր ութսուն և երեք է, մոգքն եօթն ամիս կացին Թագաւորք, այն մի եօթներորդն եօթն ժամանակ է, այն չէ հաշուած, զայն 'ի վերայ չորեքհարիւր ութսուն և երիցդ դիր, և լինի չորեքհարիւր իննսուն. զի այս միաւոր եօթնս՝ ամսօք է, իսկ կէս եօթներորդի՝ երեսուն և երեք տարի և կէսն է, յորում սպանաւ Օծեալն: Օ ի այլ եօթներորդքն քառասուն և ինն, քառասուն և ինն է հաշուած, և այս կէս է, զի դեռ չէ 'ի լրմն. քառասուն և ինն այլ կէս է, այսինքն պակաս է. զի սովոր եմք կէս ասել Թերոյն: Ահա կամիս ընկալ, Թէ ոչ՝ Թողութիւն շնորհեա:

ԺԴ. Հայրն բազմորդի մեծն Աբրահամ եղև ազգիս մերոյ ըստ մարմնոյ և ըստ հոգւոյ հայր պարծանաց, քանզի վեց որդիս ստացաւ 'ի Կենդուրայ, զԵմրան, և զԵկսան, զՄադան, զՄադիման, զԵսբոկ և զՍովիէ: Իսկ երեց որդին Եմրան՝ սպան զԵկսան և զՄադան. և վասն այսորիկ արձակեաց զնա հայր իւր յարևելս, յԻսահակայ որդւոյն իւրմէ. յորմէ սերեցան ազգն Պարթևաց, ուստի քաջն Արշակ. որ զկնի վաթսուն ամաց մահուանն Աղեքսանդրի, ապստամբեալ 'ի Մակեդոնացւոցն՝ Թագաւորեաց յերկրին Քուշանաց, 'ի Բահլ շահաստանի ամս քսան և վեց, տիրեալ ամենայն արևելից և Ասորեստանեայց, սպանանելով զԱնտիոքոս, հալածէ 'ի Բաբելոնէ և 'ի Քաղդէացւոց երկրէն զՄակեդոնացիս: Ասեն Թէ սա էր որդի Արշաւրայ, որ էր Մարաց արքայ: Սա էառ կին յազգէ որդւոցն Մովսիսի՝ որ բնակեալ էին 'ի Տափնաս, և խնամացեալ ցեղին Տաճկաց, և եկեալ բնակեցաւ 'ի մէջ Մարաց և Պարսից, Հայոց և Քուշանաց: Եւ զի 'ի դիմաց և 'ի Թիկանց, յաջմէ և 'ի ձախմէ Թեւեալ էին չորք ազգք, Պարթևք կոչեցան, պարունակեալք 'ի չորից ազգաց, և վասն Բահլ քաղաքին արքունական՝ Պահլաւք կոչեցան[1]:

Օ սա փոխէ Արշամ որդի իւր, որ և Արտաշէս ասի, չքնաղ այր և անձնեայ և գոռ պատերազմող. սմա

1. Վասն ծագման և կարգի Թագաւորաց Պարթևաց բազում և տարաձայն բանք են առ մերսն և առ օտար պատմիչս, յորս ոչներէ մեզ մխել գործս այս: Իսկ Պարթևդ անուն փախստեայ և գաղթ նշանակէ, ըստ բազմաց:

մնի որդի Արշակ, որ կոչեցաւ Մեծ. զորմէ ասեն տիրել երրորդ մասին աշխարհիս, Ասիոյ, Լիբիոյ և մեծ բաժնի Եւրոպայ։ Սա թագաւորեցուցանէ զեղբայր իւր զՎաղարշակ 'ի վերայ Հայոց, և սահման հատանէ նմա զՊաղեստին, և զԱսորեստան և զՄիջերկրեայս, և զԹետալիա[1] 'ի ծովէն Պոնտոսի մինչև ցուրանօր Կովկաս յարևմտական ծովն խառնի, և այլ ևս, ասէ, որչափ իմաստութիւն քո և զէն հատանէ։ Սորա սպանեալ զՄորն-փիլիկա, որ բռնացեալ ունէր զկողմն Պոնտու[2] և հաստատեալ կազմէ զթագաւորութիւնն տանուտէրական ցեղապետութեամբ՝ զորս կոչէ յաստիճանս նոցա անուն պերճանաց. Բագրատունիս զթագադիրսն՝ յանուանէն Բագարատայ, որ 'ի յազգէն Սմբատայ հրէէ, 'ի ցեղէն Յուդայ. և Բնթունիս զգեստողն իւր, յազգէն Բանանու. և Խորխոռունիս զթիկնապահն իւր 'ի ցեղէն Հայկայ. և Մարաժունիս և Արծրունիս և Գնունիս և Գաբեղեանս և Զիւնականս և Հաւունիս, և Սիսակեանս՝ զտեարսն Սիւնեաց, և Մուրացանս՝ զոր երկրորդ իւր կարգէ, յարենէն Աժդահակայ Մարաց արքայի. և Մուրցանն Տէր ասի. և Աղուանիս, և Առանիս՝[3] 'ի թոռանցն Հայկայ։ ԶԱռան[4] ամն կողմնապետ արևելից հիւսիսոյ կացուցանէ, յորմէ սերեցան ազգն Ուտիացւոց և Գարդմանացւոց և Գարգարացւոց և Ծօդացւոց[5]. և Գուշարացիս՝ յորդւոցն Շարայի մնացելոց, որոց տայ զլեառն Մթին, զԿանկարս, և զկէս մասինն Ջաւախաց։ Եւ զկողմնակալն հիւսիսոյ Կովկասու բդեաշխ կոչէ Գուգարացւոց, և կարգէ զնա 'ի վերայ գերւոցն

1. Թետալիա, Խաղաղական աշխարհ՝ առ Եղիշեայ, է մասն Թուրքաստանի, ընդ մէջ Ջահան գետոյ և Խորասանայ Պարսից աշխարհի։

2. ՕՕ. Պոնտու։

3. Առանիս. Առան կոչի արևելակողմն և հարաւակողմն Սիւնեաց մինչև 'ի Կուր գետ և յԵրասխ, յորում Հայոց աշխարհք Արցախ և Ուտի, որոց տիրեցին Աղուանք 'ի Ե դարու։ Ի վաղնջուց ժամանակաց ընդ ամին և հարաւակողմն Երասխայ կոչէր Առան կամ Իրան, և նոյն ինքն համարի Էրիվէնէ-Վէքիլ սրբազան և հին երկիր մարդկան, ըստ զանդիկ գրոց։

4. Ա.ԻԼ.Օ. զԱռանպաք։

5. Ծուդեից երկիր յարևելից Կուր գետոյ, յաշխարհին Աղուանից կամ սահմանակից նմին։ Իսկ այլք յազգացդ յիշելոց յարևմտից գետոյն կան, և վիճակք են Ուտիոյ, բայց Գուշարացիք մասն են Գուգարաց։

Վիրացւոց[1], զոր ած Նաբուգոդոնոսոր 'ի Վիրիոյ յարեւմտից Լիբիացւոց, յորոց մասն ինչ առ ծովուն Պոնտոսի բնակեցուցանէ: Նա Պոռնին[2] կոչէ զմեծ նախապետն Բասենոյ 'ի զաւակէն Հայկայ. և Ընգեայս[3] կոչէ զկողմնականն արեւմտից զՏուրքն հայկայի, զոր հարիւր քսան փղի ոյժ ասեն ունել, և զորձաքարս ձեռամբն ձեւել ըստ կամաց, և բլրաձև վիմս կորուսանել բազում նաւս յեզր ծովուն Պոնտոսի[4]: Նա կուսակալին արեւելից հարաւոյ Շարշանայ[5], Սասանական կոչէ, զոր կացուցանէ 'ի վերայ Տիգրիս գետոյ. և զՄոկացին 'ի նմին գաւառէ, և զԿորդուացին, և զԱնձևացին, և զԱկայեցին, և զՏրպատունին, և զԱնձտայն. և այլ այսպիսիս. կորովին այն և խոհեմամիտ արքայն, դպիրս և դանապանս, և բարեխնչեցուցիչս արքայի 'ի բարկութեան ժամու:

ԺԵ. Բայց լուաք և տեսաք գրով, եթէ որդի էր սա Արշակայ մեծի, և ոչ եղբայր: Նա էր բանն այսպիսի, եթէ Թագաւորն Պարսից խնդրեաց զսիւնն կձեայ՝ որ 'ի Մծբին յապարանս արքայութեանն Հայոց[6]. և 'ի յառնուլն գտաւ գիր յունարէն, եթէ Նա գրեցի Արգաթանգեղոս. զի մեծն Արշակ ունէր չորս որդիս. զառաջինն Թագաւորեցոյց Թետալացւոց, և զերկրորդն Լիւրիկեցւոց, և զերրորդն Պարթեաց. զչորրորդն Հայոց, տալով նմա զսահմանն՝ զոր Հայկն ստացաւ զաւակօքն իւրովք, և որդւովք եօթն դստերաց իւրոց:

Արդ կարգաւորեալ զարքունիսն Վաղարշակայ, պահէ առ ինքն զԱրշակ զորդի իւր, և զԱրտաշէս

1. [illegible]. Խորենացի (Բ. Ը) ըստ Մեգասթենեայ և Աբիւդենեայ յիշէ Նաբուգոդոնոսորի վարեալ գերի յափանց Լիբիոյ և Իբերիոյ (Սպանիոյ) և բնակեցուցեալ յաջմէ Պոնտոս ծովու. յորմէ ասէ Ուխտանէս պատմիչ, և մեզ ըստ սմանէ, սերեալ զՎիրս. բայց ոչ է հաւանելի. և գերութիւնն իսկ Լիբէացւոց ընդ երկբայութեամբ է:

2. Ըստ Խորենի. Որդոռնին:

3. Անգեղեայս ըստ Խորենի:

4. Խորենացի (Բ. Ը) վասն Ռոստոմայ Սագճկի, այն է Ռիւստեմ իշխան Սէճէստանոյ, ասէ ունել զոյժ, ըստ բաջաղանաց Պարսից, և բաղդատէ ընդ անգեղեայ հայկազնին Տորքայ:

5. Շարաշան սերունդ Սանասարայ կամ Սանեսանայ որդւոյ Սենեքերիմայ. վասն որոյ Սանանախան կամ Սանախան կոչելի էր:

6. Այս ըստ մնացորդաց պատմչացն որ յարեալ են 'ի սկզբան պատմութեանն Հերակլեայ կայսեր 'ի Սեբէոսէ:

որդի նորա, և զայլ արքայազունսն առաքէ 'ի Հաշտեան գաւառն: Եւ եղև այս 'ի կրօնս ամենայն թագաւորաց, զմի որ ունել ընդ ինքեանս ժառանգ և զայլսն 'ի Հաշտէնս առաքել, զի կայցեն յազատութեան: Թագաւորեալ Վաղարշակայ ամս քսան և երկու, մեռանի 'ի Մծբին. և թագաւորեաց Արշակ որդի նորա ամս քսան և երեք: Սա կռուոյց զնիզակն յորձաքարի յեզերս ծովուն Պոնտոսի, մխեալ արեամբ թիկնաւոր սողնոց, զոր պաշտեցին Պոնտացիք իբրև զգործ աստուծոյ: Զկնի նորա թագաւորեաց Արտաշէս որդի նորա ամս քսան և չորս, յերրորդ ամի Արշակայ Պարսից արքայի. զոր իւր երկրորդ կացոյց և տիրեաց բոլոր ցամաքի, և անց յայնկոյս ովկիանու, և եհաս մինչև 'ի Սպանիա, և դարձաւ ձերբակալ արարեալ զԿրիսոս Լիդայ թագաւորն[1]. առանց թուոյ ունելով զօրս. և 'ի յերկրորդ անգամ գնալն յարևմուտս, մեռանի 'ի ծովուն: Եւ առնու զթագն Տիգրան որդի նորա, 'ի քսաներորդ և եօթներորդ ամի թագաւորութեանն Արշականայ. սա գերեաց զԵրուսաղէմ, և սատակեաց զԿրասոս[2] զօրավարն Հռովմայեցւոց, և կացուցանէ զՄիրդատ 'ի Մաժաք. որոյ որդին ապստամբեալ երթայ առ Հռովմայեցիս, առեալ զՊերգեա քաղաք, և զՄաժակ ընդարձակեալ կոչէ յանուն Կայսեր. և զկնի Բարզափրան վերըստին գերէ զԵրուսաղէմ, ածեալ գերի զՀիրկանոս քահանայապետ՝ բնակեցուցանէ 'ի Վան: Իսկ Տիգրան թագաւորեալ ամս երեսուն և երեք, մեռանի. և առնու զթագն Արտաւազդ որդի նորա, և բնակեցուցանէ զեղբարս և զքորս իւր յԱղիովիտ և յԱռբերանի, որպէս զայլ Արշակունիս՝ 'ի Հաշտէնս. ինքն խաղայ 'ի Միջագետս, և Անտոնինոսի լուեալ գայ կոտորէ զզօրս նորա, և զնա գերեալ տանի յԵգիպտոս՝ պարգև Կղէոպատրայ դշխոյի: Եւ առնու զթագն Արշամ որդի Արտաշէսի, եղբայր Տիգրանայ[3], և տայ

1. Շահատակութիւնք Արտաշէսի ըստ Խորենացւոյ պատմութեան, այլ ոչ անդր քան զՅունաստան ձգէ սա. նոյնպէս և խընդիր Կրեսոսի, որոյ անպատշաճութիւն յայտնի է, այլ պատճառ վրիպանացն և բանից պատմչաց զոր յիշէ Խորենացին, տակաւին ոչ քաջայայտ:

2. ՕՕ. Կրասոս:

3. Ընդ մահ Արտաշէսի հօր Տիգրանայ և ընդ թագաւորու-

հարկս 'ի Միջագետաց Հռովմայեցւոցն, յաւուրս
Հերովդի, զոր կացոյց Անտոնինոս արքայ Հրէից, և
յաւուրս Արշաւրայ Պարսից թագաւորի յոյժ տղայոյ,
որ չկարէր օգնել Արշամայ. վասն որոյ հնազանդե-
ցաւ կայսեր, և գործաւորս տայր Հերովդի, սալակապ
առնել զփողոցն Անտիոքայ: Սա թագաւորեալ ամս
քսան՝ մեռանի, և առնու զթագն որդի նորա Աւագ-
այրն, զոր Ասորիք Աբգար կոչեն: Ի սորա երկրորդ ա-
մին ծնաւ Տէրն, և ել հրաման յՕգոստոս կայսերէ
աշխարհագրութեան, և բերաւ պատկեր նորա 'ի Հայս,
և ամենայն Հայք մտին ընդ հարկաւ. սոյնպէս և Ա-
սորեստան և Եգիպտոս և ամենայն Միջերկրայք: Եւ
էր յելիցն Ադամայ, ըստ Հրէիցն՝ չորեք հազար, և
ըստ եօթանասնիցն՝ հինգ հազար հարիւր ինսուն և
ութ. ըստ Ենանոսի՝ [1] հինգ հազար ինսուն և մի. ըստ
Ասորւոց՝ հինգ հազար քսան և վեց. և տարին երկո-
տասանալուսնեայ:

ԺԶ. Եւ Օգոստոս երկրորդ ինքնակալ զկնի Յու-
լիոսի զոր ասեն Փորահան [2], որ և Կայսր կոչեցաւ, և
թագաւորեաց զկնի չորս հարիւր վաթսուն և երկու
ամի խափանելոյ արքայութեանն Հռոմայ. և Օգոս-
տոս եւս մեծացաւ 'ի ծնանել մեծին Աստուծոյ և ամե-
նակալ արքային. յորում աւուրս եկին մոգքն երկոտա-
սան հազար հեծելովք, և լուեալ եթէ սով է 'ի Պա-
ղեստին, թողին զզօրսն առ Աբգար, և ինքեանք որ
մեծք էին գնացին երկոտասան իշխանօք, և հազար
հեծելօք. Մելքոն Պարսիկ, Գասպար Հնդիկ, Բաղ-
տասար Արաբ. ոսկի, կնդրուկ, զմուռ ընդ ինքեանս
ունելով: Զայս գրեաց Լուկիանոս ոմն փռանկ [3], որ
կայր յԱսորիս, առ կայսրն Օգոստոս. Գտանցէ ինք-

թիւնն Արշամայ 70 ամք են, և զի սա թագաւորեաց 20 ամ, 'ի դէպ գայ եղբօրորդի ասել զնա և ոչ եղբայր Տիգրանայ. ապա թէ ոչ՝ առաւել քան զսա ինքն որ ընդ երկարակեացս յիշի 'ի Լուկիանոսէ սոփեստիսէ (85 ամաց մեռեալ), յիշեալ էր ինքն՝ անցեալ զիննամենիւք:

1. Ենանոս պատմիչ ըստ Միքայելի Ասորւոյ, կրօնաւոր էր Աղեքսանդրացի, որ գրեաց զպատմութիւնն յԱդամայ ցԿոստանդիանոս:

2. Յուլիոս Կեսար Փորահան ասի, զի յետ մօրն մեռանելոյ հանաւ յարգանդէն:

3. Լուկիանոս փռանկ, այսինքն հռովմայեցի:

նակալութիւնդ քո, զի եկին 'ի հարաւոյ արեւելից արք մեծաշուքք և երկրպագեցին տղայոյ միոյ ծնելոյ 'ի Պաղեստին, հրաման առեալ 'ի վերուստ յաստեղէ մեծէ, որ առաջնորդէր նոցա։ Իսկ 'ի գնալ մոգուցն ընդ այլ ճանապարհս յաշխարհն իւրեանց, կոտորեաց Հերովդէս հազար չորեք հարիւր վաթսուն և երկու մանկունս յերթալն Տեառն յԵգիպտոս։ Եւ Օգոստոս երթայ յԵգիպտոս, և սպանանէ զԱնտոնինոս զօրավարն իւր, որ ապստամբեալ 'ի նմանէ թագաւորեաց։ Եւ Աբգար շինեաց զՈւռհա, և անդ փոխեաց զաթոռն իւր և զդիւանն 'ի Մծբնայ, որպէս Տիգրան շինեաց զՏիգրանակերտ, որ ասի Ամիթ։ Յերեսներորդ երրորդ ամի Տեառն մերոյ ծննդեանն, մեռաւ Աբշաւիր թագաւորն Պարսից, թողեալ երեք որդի և դուստր մի, որք վիճէին 'ի վերայ թագաւորութեանն, զորս խաղաղացոյց հաշտութեամբ Աբգար՝ անդ գնալով. զաւագ որդին Արտաշէս՝ թագաւորեցուցանէ, և զՍուրէն և զԿարէն և զԿոշմ քոյր նոցա՝ պատուէ Պահլաւ անուամբ, և 'ի դառնալն պատահէ նմա ցաւ ուրկութեան։ Եւ եկեալ յԵդեսիա՝ առաքէ առ Մառինոս[1] զօրավարն Հռովմայ զՄարիհահ[2] բդեշխն Աղձնեաց, և զՇամշագրամ նահապետն Ապահունեաց, և զԱնանէ հաւատարիմ իւր, զի մի խորհուրդ նենգութեան կարծեսցեն զերթն նորա յարեւելս։ Եւ պատահեալ Մառինեայ յԵլեւթերապօլիս[3], լուան բանս բարիս և ելին յԵրուսաղէմ. և տեսին զՏէրն զի առնէր նշանս մեծամեծս, և հաւատացին 'ի նա, և բերին զտեսեալ նշանսն Աբգարու, և դարձան մեծարել զնա և բերին զպատկերն, և եկաց յՈւռհա, մինչ 'ի Նիկիփոռ թագաւորն Յունաց, որ տարաւ 'ի Կոստանդնուպօլիս 'ի ձեռն Աբրահամու մետրապօլտի։

ԺԷ. Առ սա եկն Թադէոս առաքեալ և մկրտեաց զսա և զամենայն քաղաքն, և գնացեալ առ Սանատրուկ կատարի 'ի նմանէ յԱրտազ։ Ի նոյն միջակեալ և Բար-

1. Մառինոսդ՝ Սաբինոս կոչի 'ի պատմութեան կամ 'ի Թղթին Աբգարու։

2. Այսպէս ՕՕ. բայց հնագոյն պատմիչք Մար Իհաբ ասեն։

3. Ուղիղն Ելեւթերոպօլիս (Ազատ-քաղաք) որ և Բեթոգաբրա, որ նշանակէ տուն հսկայից, մերձ յԱսկաղոն. այժմ կոչի Պէյթ-Ճէպրին, և է գեօղաւան։

դողիմքի , վճարի 'ի նոյն թագաւորէ յԱրաբիոն [1] քաղաքի ։ Իսկ Արգարու թագաւորեալ ամս երեսուն և ութ կատարի 'ի Տէր . և Սանատրուկ տիրէ Միջագետաց . և շինէ զՄծբին , որ 'ի շարժմանէ փլեալ էր , և մեռանի յորսի թագաւորեալ ամս քսան , և առնու ըզթագն Երուանդ որդի կնոջ արշակունւոյ , և կոտորէ զամենայն զաւակս Սանատրկոյ , զերծեալ մանուկ մի Արտաշէս անուն , զոր առեալ Սմբատայ՝ անկանի 'ի Պարսս , առ Դարեհ արքայ վերջին ։ Իսկ Երուանդ թողու զՄիջագետս 'ի Տիտոս , և առնէ զնա յ'ոյժ . և շինեալ զԵրուանդաքաղաք , անդ փոխէ զարքունիս յԱրմաւրոյ , և 'ի նմանէ հեռագոյն շինէ զԲագարան տուն կռոց 'ի վերայ Ախուրեանայ գետոյ , և քուրմն դնէ զԵրուազ եղբայր իւր . մինչև 'ի յամն քսան և մի , յորում դառնայ Արտաշէս թագաւորեալ . և տուեալ ճակատ 'ի Մարաց-Մարգ յԱխուրեան գետ , փախչի Երուանդ 'ի քարն [2] և սատակի չարաչարն այն ։ Իսկ առնու զթագն Արտաշէս . սա շինէ զԱրտաշատ 'ի տեղւոջ ուր խառնի Մեծամօր յԵրասխ ։ Սա գերի ածեալ յամենայն կողմանց՝ չեթող տեղի անգործ 'ի Հայս . և չորեքանկիւնի քարիւ նշանակէ զկոպարսն . և կարգէ աւուրս շաբաթուց և ամսոց և բոլորման տարեաց , և կազմուած նաւագնացութեան , և արուեստ ձկնորսաց [3] ։ Թագաւորեալ սորա ամս քառասուն և մի մեռանի . որում մահակից լինին ոչ սակաւ ծառայք ։ Իսկ առնու զթագն Արտաւազդ որդի նորա , որ զկնի աւուրց ինչ 'ի յորս գետամոյն լինի , առ կամրջաւն Մեծամօրի , ըկեալ յայսոց ։ Իսկ առնու զթագն եղբայր նորա Տիրան , յերրորդ ամի առաջնոյ Պերոզի , ամս քսան և մի . որում ձիք ասեն երկու երագունս զոր թեւաւորս կոչէին ։ Սա մեռանի 'ի ճանապարհին Եկեղեաց , պատահեալ

1 . Քաղաք նահատակութեան Բարթուղիմեայ պէսպէս գրի , Արեբանոս , Ուրբանոս , Արարիոն , Արեբիոն , Բարմա . առաջինն և վերջինն ստուգագոյնք են , զի Բարմ բառ Խորենացւոյ նշանաւոր ինչ մասն էր քաղաքին , որ և էր 'ի Մեծն Աղբակ 'ի սահմանակցութեան Պարսկահայոց , որ այժմ կոչի Սէր-Աղպաղ՝ նովին հին հայկական նշանակութեամբ . բայց և քաղաքն և տեղի նահատակութեանն անծանօթք մնան այժմ ։

2 . Այսինքն միջնաբերդն 'ի քարաբլեր Երուանդաշատ քաղաքի ։

3 . Հին Օ . որսոյ ձկանց ։

ձեան [1] սաստկագունի. և առնու զԹագն Տիգրան վերջին եղբայր նորա ամ քառասուն և երկու։ Զնա փոխէ Վաղարշ որդի նորա, յամի երեսներորդի երկրորդի հոմանուանն իւրոյ Պարսից արքայի։ Սա շինէ ըզՎաղարշաւան 'ի գաւառին Բասենոյ, ուր ծնաւ զնա մայրն իւր, և պատեաց զՎարդգէս աւանն 'ի վերայ Քասաղ գետոյ. և Վարդգէս քեռայրն Երուանդայ հայկազնոյ սակաւակեացն շինեալ էր զնա. զոր սա պատեալ պարսպով Վաղարշապատ կոչեաց, որ և Նոր-քաղաք [2]։

Յաւուրս սորա միաբանեալ ազգն Բուլղարաց [3] և Խազրաց [4], Թագաւոր ունելով զՎնասեպ ոմն Սուրհապգան առ Կուր գետով անհուն բանակօք, զոր տարեալ Վաղարշու կոտորմամբ անցուցանէ ընդ դուռն Ճորայ [5]. սակայն 'ի նետէ հարեալ յանկարծ մեռանի, թագաւորեալ ամ քսան։ Եւ առնու զԹագն Խոսրով որդի նորա, յերկրորդում ամի Արտեւանայ Պարսից արքայի. և նոյնժամայն անցանէ ընդ լեառն Կովկաս յառնուլ զվրէժ հօրն, և մաշէ սրով զերկոսին ազգսն. և 'ի լաւացն պատանդս առեալ մի 'ի հարիւրոցն, դառնայ այսրէն, զիւրոյ տէրութեանն նշան արձան հաստատեալ հելլենացի գրով։ Յորում ժամանակի սպան զԱրտաւան Արտաշիր Սասանացի. և լուեալ Խոսրովու ազդ առնէ Փիլիպպոսի կայսեր, և առեալ զզօրս Եգիպտոսի, և առ անապատօք մինչև ցծովեզրն Պոնտոսի, աւերէ զաշխարհն Պարսից ամ տասն, փախուցեալ զԱրտաշիր 'ի Հնդիկս. մինչև եկն Անակ, և նենգութեամբ սպան զքաջն, և մեռաւ ինքն և իւրքն։ Եւ զորդին Անակայ զԳրիգոր առեալ Բուռնդարայ պարսկի որ եկեալ էր զկնի Անակայ, և գնացեալ 'ի Կեսարիա.

1. Հին Օ. Նէֆ։

2. Քաղաքաւանն՝ առ որում այժմ Էջմիածին։

3. Բուլղարաց ազգ սկիւթացի յառաջ քան զամենայն 'ի մերում պատմութեան յիշի, հաստուածաբնակութեամբն Վոլգայ ուրումն 'ի սահմանս Կողայ և Բասենոյ։

4. Խազիրք ցեղակիցք Բուլղարաց, նշանաւորք ասպատակութեամբ իւրեանց յարեւմտեան Ասիա և 'ի Բիւզանդեան ինքնակալութիւն. յետ Ժ դարու անյիշատակ լինին։

5. Դուռն Չորայ կամ Ճորայ, որ և Պահակն Հոնաց, Դարբանդայ դուռն է. Տէրպէնտ կամ Տէմիր-գափու Թուրքաց, մերձ 'ի ապառաժն Կովկասու յեզր ծովուն Կասպից։

և առեալ կին զքոյրն Աւթաղեայ զՍոփի. և զկնի ամի միոյ դարձաւ գնալ 'ի Պարսս, և հասեալ աներոյն արգելու 'ի Սաղարշապատ քաղաքի. ուր մնանէ Սոփի ստնտու մանկանն Գրիգորի, ցնա տուեալ այր իւր, 'ի գրկացն Ոգոհեայ առեալ 'ի ժամ կոտորածոյ ազգին Անակայ: Նա տարեալ 'ի Կեսարիա ընծայեն Քրիստոսի. և վարժեալ անդ յոյն և ասորի գրով, և եղեալ երկոտասան ամաց, Դաւիթ ոմն ամուսնացուցանէ զնա 'ի դուստր իւր Մարիամ. և եղեալ երկուց որդւոց, մեկնին 'ի միմեանց. Մարիամ 'ի կանանց վանս գնաց երէց որդւովն, և կրտսերն գնաց զկնի ճգնաւորի ումեմն Նիկոմաքեայ. և դարձոյց մայրն զԱրթանէս առ դայեակն իւր, որ և սնուցեալ ամուսնացոյց և զնա ևս: Իսկ զկնի մահուանն Խոսրովու՝ կոտորէ Արտաշիր զյիշատակս նորա. բայց զմանուկ մի փոքրիկ Տրդատ անուն, Արտաւազդ անուն ոմն նախարար յազգէ Մանդակունի, փախուցանէ 'ի Յոյնս, որ և սնաւ առ Լիկիանեայ իշխանի:

Նա լուեալ Գրիգորի զամենայն պատահումն ինքեանց, գնաց առ Տրդատ, և ծառայէր զնա: Իսկ միւս եղբայր Գրիգորի Սուրէն անուն, տարեալ եղև առ Արտաշիր, և սնաւ առ հօրաքեռն որ էր կին որդւոյն Ջուանշիրի, արքային Հեփթաղաց[1]. որ և զարգացեալ՝ չոգաւ յերկիրն Ճենաց[2] և Դարբանդայ, և թագաւորեաց 'ի վերայ նոցա: Բայց ոմանք ասեն Օգօն ոմն անուն կոչեցեալ Յակոբ, թէ նա է եղբայր Գրիգորի. բայց Յակոբ որդի է քեռն Անակայ Խոսրովուհեայ, որ էր կին Տիրանայ արքայի, զոր սպան թագաւորն Լփնաց Առիդէս. և Յակոբայ առեալ զքոյր իւր զՄակդէն որդւովն իւրով Հրաչէիւ, զկնի մահուան ծնողացն՝ գնաց յերկիրն Գոթաց. ուր և թագաւորեաց Հրաչէն 'ի բարի պատահմանէ. և նա է որ եկն 'ի վերայ արքային Յունաց, և խնդրէր ախոյեան իւր ըզկայսրն Դիոկղետիանոս. և յերկնչելն նորա 'ի Հրա-

1. Հեփթաղք կոչին և Թետալք կամ Թետաղացիք, և 'ի Բիւզանդացւոց՝ Սպիտակ Հոնք, ազգակից սոցին գոլով, բնակեալք 'ի հիւսիսակողմն աշխարհին Պարթևաց. ըստ քննութեան ուրումն Դիպեգաց են տոհմն:

2. Ճենքս ոչ են Չինք, այլ տոհմ կովկասեան 'ի սահմանս Դարբանդայ:

չէ՝ խնդրեցաւ այլ ոք զօրաւոր. և գտեալ եղև Տրդատ, և կազմեալ կայսերակերպ՝ ըմբռնէր զՀրաչէ և ածէր առ կայսր: Վասն որոյ և թագաւորեալ գայ ՚ի Հայս, Գրիգորիւ. որ և յառաջին ամին իւրոյ չարչարէ զսուրբն Աստուծոյ, և արկանէ ՚ի վիրապն: Իսկ ՚ի հնգետասաներորդ ամին Տրդատայ՝ գան սուրբ տիկնայքն ՚ի Հայս և մարտիրոսանան. և պատահարքն հասին ՚ի վերայ թագաւորին. և ելեալ սուրբն Գրիգոր զհինգ օր անսուաղ պահելով, և այլ ևս վաթսուն օր վարդապետելով, ազատէ զաշխարհս ՚ի դիւապաշտութենէ. և յեօթնևտասներորդ ամին Տրդատայ քահանայանայ ՚ի Տէր:

ԺԸ. Յուլիոս կայսր թագաւորեալ ամս չորս և ամիսս եօթն, սպանանէ զնա Ներքինի մի ծածուկ, և այրեաց հրով[1]. ՚ի սմանէ կոչեցան Կայսերք՝ Հռոմայ թագաւորքն, վասն յաջողելոյն սմա: Օգոստոս՝ ամս յիսուն և վեց. սա ՚ի սպանանելն զԱնտոնիոս և յառնուլն զԵգիպտոս և զԱսորիս, Սեբաստոս կոչեցաւ, և Հօկտաւիոս՝ որ է յաղթող և բախտաւոր: Ի սորա քառասներորդ ամին ծնաւ Տէրն: Տիբերիոս, ամս քսան և երկու: Ի սորա հնգետասաներորդ[2] ամին Տէրն մեր Աստուածն Յիսուս մկրտեցաւ: Գայիոս ամս չորս. սա աստուած ետ անուանել զինքն, և սպան զնա Աստուած: Կղօդիոս, ամս երեքտասան և ամիս ինն: Սորա կինն և որդիքն հաւատացին ՚ի Քրիստոս, և գտին զխաչն Տեառն[3]: Ներոն, ամս երեքտասան. սա կոտորեաց զսուրբ առաքեալսն: Վեսպիանոս, ամս տասն: Տիտոս որդի նորա, ամս երկու. որ առ զԵրուսաղէմ: Դոմետիանոս, եղբայր Տիտոսի, ամս հնգետասան. սա աքսորեաց զՅովհաննէս ՚ի Պատմոս: Ներուաս, ամ մի. սա դարձոյց զՅովհաննէս յԱսիա: Տրայիանոս, ամս իննևտասն, որ սպան զԻգնատիոս: Ադրիանոս, ամս քսան և մի. սա շինեաց զԵրուսաղէմ ՚ի ձեռն Ակիւղասայ աներոյ իւրոյ: Տիտոս Անտոնինոս,

1. Զարմանք են աշխարհալուր սպանման Յ. Կեսարու անծանօթանալ ՚ի պատմիչս:

2. ՕՕ. յօթնևտասաներորդ:

3. Կղօդեայ կինն Պատրոնիկէ կոչի ՚ի պատմութեան գիւտի խաչին, որ գտանի առ մեզ թարգմանեալ ՚ի նախնեաց, այլ ընդ անվաւերս դասի:

որ կոչեցան Բարեպաշտ՝ որդւովքն, ամս քսան և երկու։ Աւրեղիոս, ամս իննևտասն. Կոմիդոս, ամս երեքտասան. Պերտինաքս, ամս վեց. Սեւերոս, ամս ութևտասն. Անտոնինոս որդի Սեւերեայ, ամս չորս. Աղեքսանդրոս Մամէի, ամս երեքտասան. Մաքսիմոս, ամս երեք. Գորդիանոս՝ ամս վեց. զսմանէ ասեն հաւատացեալ 'ի Տէր։ Փիլիպպոս ամս վեց. սա աջակցեաց մերում Խոսրովու. Դեկոս, ամ մի. Գալլոս, ամս երկս. Վաղերիոս, ամս եօթնևտասն. Կղօդէոս, ամ մի։ Աւրեղիոս, ամս եօթն։ Տակիտոս, ամիսս վեց. սա վրէժխնդիր եղև մահուանն Խոսրովու և սպանաւ։ Պռոբոս, ամս վեց. ոմանք ասեն թէ սա պսակեաց զՏրդատ[1]։ Կարոս հանդերձ որդւովքն, ամս երկու։ Դիոկղետիանոս, և Մաքսիմիանոս, ամս իննևտասն[2]։

Յերրորդ ամին սորա պսակեալ Տրդատայ գայ 'ի Հայս, և գտանէ զիշխանն Օտա զի պահեալ էր զգանձն արքունի, և զքոյր նորա Խոսրովիդուխտ յամուրն Անի. և յոլովք 'ի նախարարացն Հայոց ընդ առաջ գային նմա։ Ի հնգետասաներորդ[3] ամին Տրդատայ՝ սուրբն Գրիգոր նստի յաթոռ սրբոյն Թադէոսի առաքելոյն, 'ի Ղեւոնդէ 'ի Կեսարիոյ պատրիարգէն ձեռնադրեալ. բերելով ընդ իւր զնշխարս սուրբ Կարապետին Յովաննու, զոր Յովհաննէս 'ի դառնալն 'ի Պատմոյ և 'ի գնալ յԵրուսաղէմ՝ ած յԵփեսոս, և յաւուրս Դեկոսի Փերմելիանոս եբեր 'ի Կեսարիա. և հայցեաց սուրբն Գրիգոր, և ոչ կամէր տալ, մինչև առ հրամանն 'ի հրեշտակէն սրբոյ սուրբն Ղեւոնդ, որ և ետ ապա երկու լուսաւոր ակունս, զոր էր տուեալ նմա հայրապետն Հռոմայ, և զնշխարս սրբոյն Աթանագինեայ, զոր ասեն թէ եղբայր էր Մարիամու ամուսնոյ սրբոյն Գրիգորի։ Զոր բերեալ սերմանէր յերկիրս Հայոց, զհասարակն յԱշտիշատ պահելով, 'ի տեղիս Դեմետրեայ և Գիսանեայ, երկուց

1. Պռոբոս նախ դաշն հաշտութեան եդ ընդ Պարսս, ապա մարտ, և յայնժամ հաւաստի պսակիլն Տրդատայ՝ որ ընդ օգնական գնդին Հռոմայ զինուորէր, այլ ոչ յաջողէ նմա թագաւորել զայն նուագ։

2. Պակասեն 'ի կարգէ կայսերացդ երկր մասամբ, և թիւ ամաց իշխանութեան ոմանց ոչ է ուղիղ։

3. Ստուգիւ յեօթնևտասներորդում ամին։

եղբարց Հնդկաց իշխանաց, որք եկին առ Վաղարշակ արքայ, և զկնի հնդետասան ամի սպանան 'ի տեղւոջն, որոց որդիքն ժառանգեցին զՏարօն. և էին գիտաւորք և դեռ ևս կերպարանին ոմանք՝ ծամս պահելով. զոր մի ոք տացէ Թոյլ[1]: Յորում աւուրս հաւատաց 'ի Տէր մեծն Կոստանդիանոս սպանիացի, որ Թագաւորեաց ամս երեսուն և չորս, կալեալ զամենայն Եւրոպիա և զՄիջերկրայս, և զՄիջագետս. զոր լուեալ մերն Տրդատ և սուրբն Գրիգոր, չոգան առ նա եօԹանասուն հազար հեծելօք, և եղեն դաշնադիրք միմեանց. և լուաւ սուրբն Կոստանդիանոս 'ի բերանոյն Գրիգորի զտնօրէնուԹիւնն Քրիստոսի ոճով. և հրաման եհան ընդ ամենայն Իտալիա՝ նաւակատիս առնել գալստեան նոցա զենլեօք, ասելով՝ եԹէ լիցուք խնդակից երկնային զօրացն: Եւ հրամայեաց սուրբն Գրիգոր աղ մատուցանել, օրհնեաց և առաքեաց յաշխարհն ամենայն, զի առանց այնր մի զենցեն անասուն. զի յինչ որ ոչ խառնի, ասէ, քահանայական օրհնուԹիւնն՝ 'ի կռապաշտուԹիւն համարի[2]. զոր Հրեայքն լուանային և ապա ուտէին. և ասէ սուրբն Գրիգոր, եԹէ որդիք են նոցա՝ որ զԹլփատուԹիւնն յանԹլփատուԹիւն դարձուցանէին: Եղին երկու արքայքն և երկու պապքն՝ Գրիգոր և Սեղբեստրոս, դաշն ուխտի կեալ և մեռանել 'ի միմեանց վերայ. զգիր ուխտին, ասեն, 'ի գրեն Թացին յահաւոր խորհրդն[3]: Եւ 'ի դառնալն յարևմտից մեծացն այնոցիկ, լցեալ էին հիւսիսականքն զկողմն Աղուանից, 'ի բանս Շապհոյ Պարսից արքայի. և նահապետ ազգին Սկունեաց ապստամբեալ՝ մտեալ էր յամուրն Ողկան, զոր երԹեալ Մամգունայ Չենացւոյ՝ կորեալ զգլուխն առաքէր առ Տրդատ, և նա տայր նմա զգաւառն, և յանուն իւր կոչէր տուն Մամիկոնեան: Եւ հոկայն Տրդատէս հարկանէր զհիւսիսականսն 'ի Գարգարացւոց գաւառին, ուր և սպան իսկ զԲասլացն արքայ զճոպանաձիգ հսկայն:

1. Զայս բան ասէ Զենոբ Գլակ վասն իւրոյ ժամանակին:

2. ՕՕ. Համանէ:

3. Առ բազմերախտ հայրս մեր Լուսաւորիչ՝ տարապայման մեծարանք ոմանց յորդւոցն՝ զայսպիսիս բարբեցին բանս, որոց նախօրինակ է Դաշանցն անուանեալ Թուղթ. ոչ եԹէ Դաշինքն՝ այլ բանքն անհեդեդք երկբայականք են և անընդունելք:

Յերեմներորդ ամի լուսաւորչութեանն իւրոյ սուրբն Գրիգոր զԱրիստակէս առաքէ 'ի Կեսարիա ձեռնադրել, վասն զառաջին ձեռնադրութիւնն անդ առնելոյ Թադէոսի առաքելոյն և արկանելոյն հիմունս եկեղեցւոյ. և անուն եպիսկոպոսապետին՝ զոր արար անդ սուրբ առաքեալն՝ Թէոփիլոս կոչիւր:

Եւ յորժամ եղև Նիկիոյ սինհոդոսն, և Արիստակէս դարձայր կանոնական սահմանաւ, սուրբ պատրիարգն Գրիգոր երթեալ 'ի Տարօն, առնէր չորս ամիս առ Անտոն և Կրօնիդէս: Որք և ասացին ցնա, եթէ ծածկեա զքեզ յառաւել փառացդ՝ մօտ 'ի ծերութիւնդ, որպէս զմեծն Մովսէս, զի մի պաշտեսցեն զոսկերս քո նորադարձ ժողովուրդդ, և կամ գայթակղեսցին 'ի մեռանելն քո տկարամիտ կարծեօք: Զոր և արար իսկ. զի գնաց անտի յայրն Մանեայ. և կատարեցաւ 'ի լեառնն, յեցեալ 'ի գաւազանն. զոր գըտեալ հովուաց թաղեցին, ոչ գիտելով զով. զոր յետոյ իմացեալ մեծարեցաւ տեղին: Ասեն թէ յորժամ Թագաւորն Զենոն խնդրէր զնշխարն, 'ի տեսլեան յայտնեցաւ ձգնաւորի ումեմն, զի տարցէ զնա գաղտ և ծածկեսցէ 'ի ներքոյ հիման եկեղեցւոյն Թորդանայ, զոր ես, ասէ, շինեցի. և կայ անդէն անյայտ. և զոր ետուն կայսերն՝ ասեն, Արշարունեաց եպիսկոպոս էր Գրիգորիս անուն, և յանուն նորա մեծարեցաւ, ուր և գտանի մասն ինչ. այլ և նա այր առաքինի էր յոյժ և բարի[1]:

ԺԹ. Իսկ սուրբն Կոստանդիանոս եբարձ զՄաքսիմիանոս ամպարիշտն և զՄաքսինտէս, և զՄաքսիմոս, և զԼիկիանոս անօրէն. որ եհան հարիւրապետ զոմն իւրով գնդաւն 'ի գաւառն Կապոտակէք, և 'ի Թեմն

1. Տարաձայնութիւն մեծ է առ պատմիչս վասն գիւտի և փոխադրութեան նշխարաց Լուսաւորչին. որ զի յիշի և յառաջ քան զաւուրս Զենոնի, ապա երկրորդ գիւտ է առ Նովաւն, և հաւանելի է փոխադրութիւն մեծի մասին 'ի Կոստանդնուպօլիս, ուստի դարձեալ մասն մի բերաւ 'ի Հայս, և մասն մի յետ ժամանակաց յԽտալիա. իսկ զոր հեղինակդ յիշէ Գրիգորիս Արշարունեաց եպիսկոպոս՝ այդ անձահ է, զի առաջին եպիսկոպոս Գրիգորիս անուն յԱրշարունիս՝ 200 ամաւ կրսեր է քան զԶենոն: Անհաւաստի է և այլոց զրուցածն թէ Գրիգորիսի Թոռին Լուսաւորչին էին տարեալ նշխարքն 'ի Յոյնս:

Թուլախունեք և Անատոլիկեայք, և Իսաւրանեք և Արամենակք և Գաղիմն, չարչարել զորս գտցէ քրիստոնեայս։ Յորմէ խրտուցեալք փախեան 'ի կողմանս Սեբաստիոյ, ոմանք 'ի Մելեսիտն, որ է ամրոց 'ի լեռնակողմն, և այլք 'ի Տախալասան լեառնն. որք բռնութեամբ արտաքս ածեալ կոտորեցան յԱկեղեցածորն կոչեցեալ, որ և պատուի մինչև ցայսօր։ Իսկ սուրբ քառասունքն երթեալ Թաքեան յայրին՝ որ կայ 'ի վերայ Ալիս գետոյ, որ այժմ կոչի Քաջ Վահանայ [1]. ուր կառուցին խաչ, և գրեցին զիւրաքանչիւր անուանս 'ի քարին. զոր գիտացեալ պատմեցին Լիկիանեայ. և հրամանաւ նորա եկեալ հանին յայրէ անտի, 'ի հնգետասան արեգ ամսոյ. զոր Ուխթանէս [2] տօն կարգեաց՝ որ է սկիզբն հանգստինոցա. և կատարումն 'ի մարտի ինն։

Յետ այսորիկ խաղաղութիւն խնդրեաց Շապուհ արքայ Պարսից 'ի Կոստանդեայ, նեղեալ 'ի Տրդատայ արքայէն. և նորա հաւանեալ խնդրեաց 'ի նմանէ զԹագն Դաւթի մարգարէին, զոր առ Յովաբ յորդւոցն Ամոնայ, 'ի տանէ Մեղքոմայ, և եդ 'ի գլուխն Թագաւորին Դաւթի. որ անկաւ 'ի Քաղդեացին, և ապա 'ի Կիւրոս, և 'ի Դարեհէ յԱղեքսանդրոս, որով պսակեցան Մակեդոնացիք մինչև ցԱնտիոքոս՝ զոր սպան պարթևն Արշակ և էառ 'ի նմանէ. և եկն մինչև ցՇապուհ. յորմէ խնդրեաց կայսրն, զի օրինակաւն արասցէ իւր Թագ, և զնորայն առ նա դարձուսցէ։ Նա յորժամ ետ կազմել, եդ զերկոսին 'ի վերայ սեղանոյ, և ասաց ծառայիցն Շապհոյ առնուլ զիւրեանցն. և նոցա աչք կալեալ՝ առին զնորն և գնա-

1. Կապադովկէ ուղղագոյն ևս կոչումն է Կապպադովկիոյ։ — Թուլախոնեայ Թեմն 'ի սահմանս Կապպադովկիոյ, ճշգրտիւ ոչ է յայտնի յայժմուս։ — Անատոլիկէ նշանակէ զԱրևելեան Թեմն 'ի Փոքր Հայս, որոյ սահմանք փոփոխեցան ըստ ժամանակս ժամանակս։ — Արամենակ ըստ Բիւզանդացւոց Թեմադրութեան մասն Փոքր Հայոց՝ որում զօրավարք Հայք կամ Յոյնք 'ի գրանէ ինքնակալին վերակացուք կային։ — Իսաւրանէ Թեմ 'ի սահմանս Մելիտինոյ և Հայոց Մեծաց։ — Գաղիմն կամ Գափիմն կողմանք Եւդոկիոյ (Թօքաթու)։ — Տախալասսա, պարտի լինել Մասալասա, յոր անուն քաղաք մերձ 'ի հարաւոյ մօտ Սեբաստիոյ։ — Վիմամէջք ուր Թաքեան Քառասունքն՝ ամուր և ամայի վայրք էին և Քաջ Վահանայ ամրոց կոչէին յաւուրս Ուխտանէսի։

2. Այս է եպիսկոպոսն Սեբաստիոյ և պատմիչն, յորմէ առնումս և յիշէ զդէպքս։

ցին, քանզի խնդրեաց յԱստուծոյ Կոստանդիանոս զի առ նա մնասցէ սրբոյն Դաւթի յիշատակն ։

Ի. Իսկ սուրբն Տրդատ կոչեցեալն յաւազանէն Յովհաննէս, յաղագս պարկեշտ կենացն և չարատեաց բարուցն՝ դեղակուր եղեալ մեռանի յանաստուածից ումանց, թագաւորեալ ամս յիսուն և վեց ։ Իսկ զսուրբն Արստակէս սպան Արքեղայոս իշխանն չորրորդ Հայոց 'ի ճանապարհին Ծոփաց, յաղագս միշտ յանդիմանելոյն զնա 'ի գործս իւր չարս ։ Եւ յաջորդէ զաթոռն Վրթանէս եղբայր նորա, մինչ կենդանին էր Տրդատ 'ի յիսներորդ չորրորդ ամի արքայութեան նորա. և զԱրստակէս տարեալ եդին 'ի Թորդան առ հօրն ։

Իսկ զկնի մահուանն Տրդատայ՝ երկրորդ Սանատրուկ արշակունին, զոր կացուցեալ էր 'ի Փայտակարան, թագ եդեալ՝ խորհէր տիրել բոլոր Հայոց. որ և սպանանել ետ զմանուկն Գրիգորիս բարբարոս ազգին 'ի Վատնեան դաշտին, զորոյ զմարմինն բերեալ յԱմարաս հանգուցին ։ Լուեալ զայս մեծ իշխանն Աղձնեաց Բակուր, ձեռն ետ յՈրմիզդ Պարսից արքայ, և խորհէր զՍանատրկոյն. զոր իմացեալ նախարարքն Հայոց, ժողովեցան առ մեծն Վրթանէս, և առաքեցին երկուս 'ի գլխաւորացն առ Կոստանդին որդի մեծին Կոստանդիանոսի, որ զկնի մահուան հօրն թագաւորեաց ամս քսան և չորս, զի օգնեսցէ Հայոց, և թագ դիցէն Խոսրովու որդւոյն Տրդատայ ։ Զոր ընկալեալ զխնդիրն առաքէ զԱնտիոքոս զօրագլուխն. և թագ եդեալ Խոսրովու, խաղան 'ի վերայ Սանատրկոյ. որ իբրև լուաւ, փախեաւ 'ի Պարս. և յաւարի առեալ զաշխարհն զօրացն մերոց՝[2] դարձան ։ Եւ Մանաճիհր Ռշտունի գնացեալ 'ի վերայ Բակուրայ՝ սատակէ զնա, և առեալ գերի բազում 'ի կողմանցն Մծբնայ՝ դառնայ. ընդ որս և զեօթն սարկաւագունս սրբոյն Յակոբայ. և զհետ եկեալ սրբոյն և խնդրեալ. ոչ տայր, և նորա կամեցեալ գնալ առ արքայ, գետընկէց առնէր. և սրբոյն իմացեալ դառնայր 'ի տեղի իւր՝ անիծանելով զՄանաճիհր, և զաշխարհն իւր. յորմէ չարաչար մահուամբ սատակի, և գաւառն անպտուղ լինի՝ մինչև

2. Հին Օ. Հայոց ։

որդի Մանաճրի արժանաւոր ապաշխարութիւն ցուցեալ, և բերեալ հող զկնի մահուանն 'ի գերեզմանէ սրբոյն, օրհնի երկիրն հաշտութեամբն Աստուծոյ, բարեխօսութեամբ սրբոյն Յակոբայ։

ԻԱ. Իսկ մեծն Կոստանդիանոս ունէր և եղբայր մի Դաղմատիոս կոչեցեալ, որոյ էին երկու որդիք, Գաղոս և Յուլիանոս. և երեք որդիս, աւագն Կոստանդ՝ անուամբ իւրոյ հօրն, որում ետ զԿոստանդնուպօլիս 'ի կտակին՝ զոր գրեաց. և միջինն իւր անուամբն, որում ետ զԱնտիոք աթոռ, և կրտսերոյն զՀռոմ. և խաբեաց միջնեկն[1] զկտակապահն, և առ զԿոստանդնուպօլիս, խոստովանելով պահել զաղանդն նորա, զի արիոսեան էր. և կալաւ աւագն զԱնտիոք, և չոգաւ 'ի վերայ կրտսերոյն վասն Հռոմայ. և ել ընդդէմ նորա հօրեղբայրն Դաղմատիոս, և սպան զնա։ Իսկ կրտսերն Կոստաս սպան զնա վասն եղբօրն, և որդիքն փախեան առ միջինն. և 'ի վեցերորդ ամին Կոստասայ բռնացաւ Մագնիտիս, յափշտակեաց զԻտալիա և զԱփրիկէ, և թագ եդ 'ի Սերմի[2]. և յայն ապաստան չարք ոմանք, սպանին զԿոստաս և զեղբօրորդի նորա։ Իսկ լուեալ միջին եղբայրն գայ սպանանէ զՄագնիտ և լինի ինքնակալ, և կարգէ զԳաղոս կեսար յԱնտաք, և զՅուլիանոս յուսումն առաքէ յԱթէնս. և զկնի այնորիկ ապստամբէ Գաղոս և մեռանի, և Յուլիանոս ապրի աղաչանօք Թագուհւոյն. զոր կեսար կարգէ յարևմտեայ կողմանն, տալով նմա զքոյր իւր զԵլինէ 'ի կնութիւն, և ինքն չոգաւ յԱնտիոք։ Իսկ Յուլիանոս յաղթեալ բարբարոսացն, և թագ եդեալ գայ 'ի Կոստանդնուպօլիս. և ելանէ ընդդէմ նորա Կոստանդիոս, առեալ մկրտութիւն 'ի Զոյիոսէ, և մեռանի 'ի մէջ Կիլիկիոյ և Սորիոյ. ասեն զղջացաւ մօտ 'ի վախճանն, և ուղղափառ հաւատով կատարեցաւ 'ի տէր։ Զկնի նորա Յուլիանոս, ամս երկու և ամիս ութ. և յետ նորա Յուբիանոս, ամ մի. զոր գովէ Սոկրատ, բայց ոմանք ասեն զնա աղանդովն Արիոսի, և վրիժառու ուղղափառաց. վասն որոյ և խեղդեցաւն ասեն։ Յետ որոյ

1. Հինն միջնակն։

2. Սերմի, Սիրմիոն քաղաք Պաննոնիոյ, առ Սաւա գետով, որոյ աւերակք միայն մնան առ Միդրովից աւանաւ։

Վաղէս, ամս չորեքտասան, որ էր արիանոս։ Նա զկնի քառասուն աւուր, եղբայր նորա Վաղենտիանոս կը- ցորդէ նմա ամս երկոտասան, և մեռանի վասն ուժգին բարբառելոյն խրոխտանօք 'ի վերայ բարբարոսացն։ Իսկ Վաղէս՝ որ աքսորեաց զմերն Ներսէս, չանթահար եղեալ սատակի յԱդրիանուպօլիս հրաւիրանաւ գեհե- նոյն։

ԻԲ. Իսկ մերն Խոսրով յերկրորդ ամի Որմզդի Պարսից արքային, և յութերորդ ամին Կոստանդեայ թագաւորեալ 'ի վերայ հայրենեացն ամս ինն, շինէ զԴուին, որ ասի բլուր. անդ ածելով զբնակիչսն Ար- տաշատու, իւրեանց իսկ կամօք, վասն հրախառն օդոյն. դնէ զարքունիսն իւր անդ։ Յաւուրս սորա միաբանեալ կողմն Ծմակային[1], բիւրք երեք, ապստամբեցին յԱ- րարատ. ուր և առաքինացաւ Վահան ամատունի, սա- տակելով զզօրագլուխն նոցա, զվառեալն կճաւակուռ[2] թաղեաւ, և յաղթահարեալ զօրքն դարձան 'ի փա- խուստ։ Բայց զօրավարն Վաչէ անկեալ 'ի պատերազ- մին, յիշել հրամայեաց զանուն նորա 'ի պատարագին սուրբն Վրթանէս։ Կատարեալ զկեանս Խոսրովու, թաղի առ հօր իւրում 'ի Կամախ։ Նա ինքնակալն Կոս- տանդիոս յեօթնեւտասներորդ ամին իւրում դնէ թագ Տիրանայ որդւոյ նորա, և առաքէ 'ի Հայս. որ ոչ գը- նայր ընդ շաւիղս հարց իւրոց բարեգործաց։ Ի յերրորդ ամին սորա փոխի յաշխարհէս սուրբ պատրիարգն Վըր- թանէս, և դնի 'ի Թորդան. և առնու զաթոռն սուրբն Յուսիկ որդի նորա, ամս վեց. որ և սաստիկ յանդի- մանէր զթագաւորն վասն զազիր գործոց նորա։ Յորում աւուր բերաւ պատկերն Յուլիանոսի առ Տիրան. և նա դնել կամեցաւ յեկեղեցւոջն 'ի գաւառին Ծոփաց. և սուրբն Յուսիկ կոխեաց և մանրեաց զնա առ սեմօքն։ Նա սրտառեալ թագաւորն, հրամայեաց հարկանել զնա ջլօտեօք մինչև յաւանդումն հոգւոյն. զոր տա- րեալ եդին առ հօր իւրում։ Նա եկեալ սուրբն Դա- նիէլ ծերունի քորեպիսկոպոս, որ լեալ էր աշակերտ սրբոյն Գրիգորի, անէծ զՏիրան. ընդ որ զայրեալ

1. Կողմն Ծմակային՝ հիւսի- սակողմն է, Կովկասային ազգաց երկիր։

2. Հինն կճախուռ։

թագաւորն, խեղդամահ ետ առնել զնա, որ թաղե-ցաւ յիւր մենարանին, որ ասի Հացեաց դրախտ. եւ առ-նու զաթոռն Փառներսեհ յԱշտիշատու, այր լաւ, ամս չորս։ Յորում ժամանակի եկն զօրավարն Պարսից մեծ ամբոխիւ, եւ խաբկանօք առ ինքն կոչեաց զՏիրան, եւ խաւարեցոյց զաչս նորա 'ի գաւառին Ապահունեաց 'ի գեօղն՝ որ Արծուղն կոչեցաւ 'ի պատահմանէ գործոյն։ Նա ետ իրաւունս Տիրան Աստուծոյ, ասելով. Զի զեր-կու լուսաւորս խաւարեցուցի, վասն այնորիկ խաւարե-ցան երկու աչքս իմ։

Զսուրբն Յուսիկ միանգամ ասեն գիտացեալ զկին իւր, եւ յայնմանէ ծնեալ նորա երկու որդիս եր-կուորեակս, այսինքն 'ի միում յարգանդի, Պապ եւ Ա-թանագինէս. որք 'ի սարկաւագութիւն կոչեցեալք, եւ նոցա աղտեղութեան տուեալ զանձինս, շանթահարք եղեն 'ի միում աւուր. մնացեալ որդի մի Աթանագի-նէի Ներսէս անուն, ետուն յուսումն 'ի Կեսարիա։ Իսկ 'ի թագաւորել Արշակայ, որդւոյն Տիրանայ, եկն առ նա, եւ կայր նմա 'ի հպատակութեան, կրելով զսուսերն պողովատիկ առաջի նորա. զոր յոլով թա-խանձանօք ածեալ 'ի հաւանութիւն, եւ առաքեն 'ի Կե-սարիա՝ առնուլ զաթոռ սրբոյն Թադէի եւ Գրիգորի. զոր սուրբ Հոգին հրաշագործեաց իջմամբ աղաւնա-կերպ 'ի վերայ նորա 'ի զարմացումն տեսողացն։ Նա ե-կեալ բարիոք կարգաւորէր զաշխարհս մեր, շինելով վանորեայս եւ օտարանոցս եւ հիւրանոցս եւ հիւանդա-նոցս եւ տունս ուրկաց. բառնալով զխակութիւն եւ զան-ողորմութիւն, եւ զկոծս 'ի վերայ մեռելոց, եւ զազգա-կցացն խնամութիւնս. եւ էր տեսանել այնուհետեւ զաշ-խարհս մեր իբրեւ զվերինն Երուսաղէմ, լի ամենայն բարեձեւութեամբ։ Զոր տեսեալ թագաւորին եւ նա-խարարացն, եւ իմաստուն առաջնորդաց եկեղեցւոյ, անուանեն զնա պատրիարգ. զի առ մեզ կան, ասեն, սիւնքն անշարժելիք՝ Բարդուղիմէոս եւ Թադէոս, եւ սուրբ Լուսաւորիչն՝ որ պապն կոչեցաւ 'ի Հռոմ, հա-ւասար այնմ՝ որ նստի յաթոռն Պետրոսի առաքե-լոյն[1]։ Զի զառաջինն չորս միայն էին, յԱնտիոք՝

1. Ոչ Արշակայ եւ ոչ նախարարաց նորին են բանքդ, այլ համա-

Մատթէոսին, 'ի Հռոմ՝ Ղուկայն, յԵփեսոս՝ Յովհաննուն, յԱղեքսանդր՝ Մարկոսին. և յաւուրս որդւոցն մեծին Կոստանդիանոսի, Կոստանդնուպօլսեցիք և Երուսաղեմացիք համարձակեալ պատրիարգունք կոչեցին զառաջնորդս իւրեանց, զԿոստանդնուպօլիս՝ վասն զՅոհաննուն անդ փոխելոյն, և զԵրուսաղէմ՝ վասն տնօրինականացն. և մեք, ասէն, վստահացուք 'ի մեծ պարծանս մեր: Իսկ զՍեբաստիայ, և զՄելտենոյ, և զՄարտիրոսաց քաղաքի զեպիսկոպոսն՝ մետրապօլիտս կոչեցին. և յօրինեցին զինն դասուցն երկնից զխորհուրդն 'ի Հայս. այսինքն պատրիարգ, մետրապօլիտ, եպիսկոպոս, քահանայ, սարկաւագ, կէս սարկաւագ, դպրապետ, կրօնաւոր[1], ժողովուրդք:

ԻԳ. Յորում աւուրս նշկահեալ Արշակայ զՎաղենտիանոս կայսր, և նորա բարկացեալ սպան զՏրդատ զեղբայր Արշակայ, որ կայր 'ի պատանդի: Եւ գնացեալ մեծին Ներսեսի, պատուի 'ի կայսերէ, շնորհաւորեալ նմա զանուն պատրիարգութեանն[2], և տուեալ ցնա զորդի սպանելոյն, և պարգևս բազումս՝ դարձուցանէ 'ի Հայս: Իսկ զկնի մահուանն Վաղենտիանու, չարափառն Վաղէս լուծեալ զխաղաղութիւնն ընդ Հայս՝ խնդրէ զանձն Արշակայ 'ի ձեռն զօրավարին Թէոդոսի: Եւ սուրբ պատրիարքն առեալ զՊապ որդի Արշակայ գնաց առ Թէոդոս, և նովաւ[3] 'ի դուռն կայսեր. և տեսեալ զԹագաւորն, քարոզէ նմա ուղղափառութիւն, և 'ի չհաւանելն՝ մեռանէր որդի նորա: Եւ բարկացեալ աքսորէ զնա 'ի կղզի անբնակ եօթանասուն ոգւով զինն ամիս. որք շնորհօքն Աստուծոյ կերակրեալ լինէին 'ի շաբաթն և 'ի կիւրակէսն ձկամբք, զորս ընկենոյր ալիք ջուրցն հանդերձ փայտիւ և հրով: Եւ որպէս ասէն՝ սպանեալ զՎաղէս Գէորգիոս վկայն, և հրկէզ լեալ մարմինն. և առնու զԹագն մեծն Թէոդոս. և նա դարձուցանէ զսուրբն 'ի կղզւոյն. և առնէ նովաւ ժողով ընդդէմ հոգեմարտին հարիւր և յիսուն

խոհից անուանեալ Դաշանց Թղթոյն. իսկ ինքնագլխութիւն կաթուղիկոսաց Հայոց յետ մահուան Ս. Ներսիսի, մանաւանդ յետ փոխման մեծին Սահակայ և ժողովոյն Քաղկեդոնի եղև:

1. Նոր Օ. [illegible]:

2. Հեղինակից է իմացուած և ոչ կայսերն:

3. Նոր Օ. Նոքաւ:

եպիսկոպոսաց՝ նզովելով զՄակեդոն, և զամենայն խմորեալս 'ի նմանէ. Եւ հաստատեալ պատրիարգն Ներսէս վկայութեամբ հարիւր և յիսուն եպիսկոպոսացն [1], դառնայ 'ի Հայս: Իսկ Արշակայ սպանեալ զԳնէլ եղբօրորդի իւր, վասն Փառանձեմայ կնոջ նորա 'ի քըսութենէ Տիրիթայ, նզովէ զնա սուրբն Ներսէս, և ինքն գնայ 'ի Յոյնս, փոխանորդ իւր թողեալ զԽադ եպիսկոպոս Բագրևանդայ, որոյ շտեմարանքն աղբերացան, որպէս Եղիայի կնոջն այրոյ:

ԻԴ. Ընդ այն ժամանակս Շապուհ արքայն Պարսից գայ յԱտրպատական, և առ ինքն կոչէ զԱրշակ, կապէ զնա և տայ տանել յԱնուշն կոչեցեալ դղեակ, ուր և մեռաւ իսկ անձին արարեալ սրով: Իսկ սուրբն Ներսէս լուեալ զայս՝ խնդրէ 'ի կայսերէ թագաւորեցուցանել զՊապ որդի Արշակայ, զոր և արար իսկ. առաքէ զօրու ծանու 'ի Հայս պատրիարգաւն Ներսիսիւ. որք եկեալ գտին զաշխարհս միապետեալ Մեհրուժանայ արծրունւոյ ուրացողին զՔրիստոս, պարսկական զօրօք լցեալ. ընդ որս մարտուցեալ սպառեն զՊարսիկսն աղօթիւք սրբոյն, և զՄեհրուժան կալեալ Սմբատայ բագրատունւոյ, հրացեալ շանթիւք պսակէ զնա, նախատանօք սատակեալ. և հաստատեցաւ երկիրս ընդ ձեռամբ Պապայ ամն եօթն: Յորում ժամանակի շինեաց Անատոլիս զօրագլուխն Յունաց յանուն կայսերն զԹէոդուպօլիս [2]: Բայց Պապ յանդիմանեալ 'ի Ներսիսէ յաղագս զազիր գործոցն, տայ նմա դեղ մահու 'ի գեօղն Խախ յԵկեղեաց գաւառին զանխլաբար, և թաղեցաւ 'ի Թիլն, որ կալաւ զաթոռն ամն երեսուն և չորս [3]: Եւ կացոյց Պապ 'ի տեղի նորա զՇունակ ոմն սակաւ աւուրս, և ապա զՇահակ 'ի գաւառէն Ապահունեաց, առանց մետրապօլտին Կեսարու, ըստ օրինի պատրիարգաց, որ պաշտեաց զաթոռն ամն չորս:

Իսկ զօրավարին Անատոլեայ կալեալ զՊապ խաբանօք և կապեալ զնա յերկաթս, առաքէ առ Թէոդոս, որ

1. Եւ այս գիւտ ըստ վերնոյդ:
2. Շինութիւն Թէոդուպօլսեայ, որ է Կարնոյ քաղաք, անուանեալ յաւուրս փոքուն Թէոդոսի:
3. Թերևս 'ի նահատակութենէն սրբոյ Յուսկան մինչև ցաթոռակալութիւն մեծին Սահակայ հաշուեսցին երեսուն և չորք ամք. բայց սուրբն Ներսէս ոչ աւելի քան զտասն ամ եկաց քահանայապետ:

չարար զնա արժանի տեսանելոյ, այլ հրամայեաց զնա ընկենուլ 'ի ծով[1]: Եւ թագաւորեցուցանէ Հայոց զԱրտաւազդ ոմն արշակունի ամս չորս: Յերկրորդ ամին սորա ննջէ Շահակ, և յաջորդէ զնա Զաւէն եղբայր նորա, լաւ իբրև զնա, զամս չորս: Իսկ Արտաւազդ որսացեալ վասն սպանանելոյն զքաջն Մուշեղ, հալածի յազգէն Մամիկոնէից, և Թէոդոս աքսորէ զնա 'ի Թուլիս կղզի: Եւ թագաւորեցուցանէ Հայոց զերկուս որդիսն Պապայ, զԱրշակ և զՎաղարշակ: Ի յերրորդ ամին Արշակայ ննջէ Զաւէն. և առնու զաթոռն Ասպուրակէս եղբայր նոցունց և առաքինակեաց, ամս հինգ:

Եւ բաժանեն զաշխարհս Շապուհ Պարսից և Արկադէոս որդին Թէոդոսի, սէր արարեալ ընդ միմեանս. Արշակ առնու յանձն զկողմն Յունաց վասն հաւատակցութեանն. իսկ Վաղարշակ՝ որ ունէր զմասն Պարսից զարևելակողմն՝ մեռանի. և դնէ 'ի տեղի նորա Շապուհ զԽոսրով ոմն արշակունի, որ զկնի երից ամաց մերժի 'ի տէրութենէն 'ի քսութենէ գործակալաց աշխարհիս. այն որ նստոյց յաթոռ պատրիարգութեան զսուրբն Սահակ, որդի մեծին Ներսեսի, որ պաշտեաց զսուրբ աթոռն ամս յիսուն: Իսկ թագաւորն Պարսից կացոյց 'ի տեղին Խոսրովու զՎռամշապուհ եղբայր նորին, ամս հնգետասան:

ԻԵ. Ի հինգերորդ ամին սորա և յառաջին ամին Արտաշրի որդւոյ Շապհոյ՝ սուրբն Մեսրոպ յօրինէ զդպրութիւն հայերէն. քան և երկու գիր առ Դանիէլի Ասորւոյ գտեալ 'ի հին ժամանակաց, որ վասն ոչ պարզելոյն զընդարձակութիւն լեզուիս, անհոգացեալ եղև յառաջնոյն, յոյն և ասորի և պարսիկ գրով շատացեալք. և ոչ Մեսրոպ կարէր նոքօք փոխել զաստուածաշունչ մատեանս 'ի հայ բարբառ: Վասն որոյ աղօթից տուեալ զանձն գործակցութեամբ սրբոյն Սահակայ, տայ նմա Աստուած զխնդրելին, չորեքտասան գիրս, աջով իւրով գրոշմեալ առաջի նորա որպէս մեծին Մովսեսի 'ի լերանն Սինայ, և սմա 'ի լերանն Բա-

1. Ոչ 'ի ծով ընկեցեալ, այլ սակրով սպանեալ ասեն զՊապ հնագոյն պատմիչք:

լուայ [1], որպէս տակաւին ցուցանի դրոշմն աստուածագիծ վիմին և նկարք գրերոյն, և պատուի տեղին խընկօք և ջահիւք միշտ 'ի (Տաճկաց և քրիստոնէից [2]) բընակչաց տեղւոյն։ Նա զի լեալ է հայերէն գիր հնոյն՝ վկայեցաւ 'ի ժամանակս Լևոնի արքայի, զի գտաւ դրամ 'ի Կիլիկիա, հայերէն գրով դրոշմեալ զանուն կռապաշտ Թագաւորացն Հայկազանց [3]. զորոյ զԹերութիւնն ելից նորս մեր Եզրաս, աստուածախառն շնորհօք լցեալ, նորոգիչ նորոյս Իսրայելի և կարգաւորիչ։ Որ և 'ի ձեռն աստուածատուր պարգևացն զճառագայթս սրբոյ Երրորդութեանն առեալ, մարգարէիւք և առաքելովք և աւետարանչօք և երկնային դասուք և ամենայն արդարոցն խմբիւք, գայր մտանէր 'ի Հայաստան աշխարհս, և գանձէր յեկեղեցիս մեր զանասելի գեղեցկութիւնս 'ի զարդ հոգւոց և մարմնոց, և 'ի պարծանս յաւիտենից, զոր ոչ արար ամենայն ազգաց Տէրն բոլորից։ Քանզի ոչ ճարտարօք և ոչ միջնորդովք իմաստնացաք, և առաջնորդեցաք առ նա, այլ 'ի յերկնապարգև և յաշխարհաստեղծ աջոյն գրեցաւ մեզ դպրութիւն ուսման. և տեառն մերոյ և Աստուծոյ յիշատակն կենդանի է 'ի մատեանս մեր, զօրութիւն տալով և շնորհս, որք հաւատովն մատչին և բանականապէս։ Վասն որոյ փառք պատիւ և գոհութիւն տուողին և օրհնութիւն 'ի Տեառնէ ածողին առ մեզ, և պայծառութիւն յիշատակի անուան նորա 'ի գիրն կենաց, (Մեսրոպայ, որ է կանաչացեալ, այսինքն յարազուարճ և բերկրեալ [4], հօր մերում տեղի և յիշատակ ընդ առաւել սուրբսն, և մեզ աղօթիւք նորա ողորմու-

1. Աշակերտք Ս. Մեսրովպայ 'ի Սամոսացւոց քաղաքի, այսինքն 'ի Սամոս կղզւոջ առեն լեալ զգիւտ հայկական տառիցս, զոր ոմանք Սամոստացւոց քաղաք ընթեռնուն և կարծեն։ Բալուայ գիւտդ անճահ է այլ Թերևս ոչ անպատճառ, զի ոչ միայն աղօթարան և մատուռն Ս. Մեսրովպայ պատուի անդ 'ի գլուխ լերին՝ յորում բերդն Բալուայ, և յիշատակի անդստին 'ի ԺԴ դարէ, այլ զի և յանձաւի անդ լերինն՝ ուր հեղինակս առէ զաստուածագիծ վէմն, գտաւ 'ի նորումս բևեռաքանդակ արձանագիր հին։

2. ( ) ըստ Հ. օրինակին։

3. Ցանկալի գիւտ և հետաքննելի, այլ և երկբայելի, զի արդ ոչ ուրեք ճանաչի հայատառ դրամ Թագաւորաց մերոց Հայկազանց և Արշակունեաց։

4. Ի սեմական լեզուաց ստուգաբանելով, [illegible] مسرور բերկրեալ լսի յարաբացին։

թիւն և գթութիւն յԱստուծոյ 'ի համար աշակերտաց նորա, և հոգևոր որդւոց [1])։

Զուարճացեալ ապա սուրբ պատրիարքն Սահակ երկնառաք պարգևօքն, ընտրէ մանկունս առաքինազարդս, և առաքէ յազգս, բերել յամենայն ազգաց զարուեստ մատենից. զՅովսէփ և զՂևոնդ, զՅովհաննէս, զԱբրահամ, զԱրձան, զՄուշէ, զԽազնիկ, զԿորիւն, և զայլս. ապա և զկնի սակաւուց զՄովսէս և զԴաւիթ և զԵղիշէ և զՄամբրէ՝ զեղբայր Մովսիսի։ Զկնի սոցա և զԱրձան արծրունի և զԽոսրով և զՂազար պատմագիր. սոքօք թարգմանեցին զամենայն մատեանս 'ի սուրբ օրինակաց սրբոյն Ղևոնդի։ Նորոգեաց սուրբն Սահակ և զտաճար սրբոց Հռիփսիմեանցն, զաւերեալն 'ի Շապհոյ, և անյայտ եղեալ նշխարացն՝ խնդրեալ յԱստուծոյ՝ յայտնեցաւ նմա։ Սա ետես զբառնալ թագաւորութեանն և զքահանայապետութեան յազգէն Պահլաւունեաց, և վերստին անդրէն նորոգել 'ի լման աւուրց։ Սորա էր դուստր միամօր [2], զոր տայ յամուսնութիւն Համազասպայ Մամիկոնենոյ, յորմէ ծնաւ սուրբն Վարդան։ Այլ սքանչելի այրն Աստուծոյ Մեսրոպ անցեալ 'ի Վիրս, առնէ և նոցա գիրս, 'ի ձեռն Ջաղելի ումեմն, որ աշակերտեցաւ նմա. և գնացեալ յԱղուանս, ստեղծու և նոցա գիր ըստ նոցա լեզուին, ձեռօք Բենիամինի՝ որ անտի աշակերտեցաւ նմա։

ԻԶ. Իսկ Վռամշապուհ բարիոք կատարեալ զկեանս իւր. և գնացեալ սուրբն Սահակ առ Յազկերտ, խնդրէ զԽոսրով՝ որ կայր 'ի բանտի, և վերստին թագաւորեցուցանէ զնա, որ ոչ աւելի կացեալ քան զտարի մի՝ վախճանի։ Եւ 'ի մեռանելն Յազկերտի, նստի յաթոռն Վռամ երկրորդն. որ և բազում չարիս խորհէր ածել 'ի վերայ Հայոց։ Զոր իմացեալ սուրբն Սահակ՝ գնաց առ Յունօք, և առաքէ զսուրբն Մեսրոպ և զՎարդան թոռն իւր առ Թէոդոս որդի Արկադեայ. զոր խնդութեամբ ընկալեալ, կոչեն զՎարդան ստրատելատ, և զՄեսրովբ վարդապետաց վարդապետ, և

1. ( ) Այսչափս չէք 'ի Բ. Օ։ [illegible], բայց նախնիք Սահակա-
2. Նոր Օ. մի յաւելու Մա- նոյշ կոչեն զնա։

դպրոցս հրամայեն կարգել Թէոդոս և պատրիարքն Ատտիկոս, և ռոճիկս յարքունի տանէ կարգեն։ Եւ դարձան եկին առ սուրբն Սահակ, և կատարեն զհրամանն։

Յետ այսորիկ առաքէ զՄաշտոց առ Սահակ խորհրդել զհաշտութիւն, և թագաւորեցուցանել զԱրտաշիր, որդի Վռամշապհոյ, զոր և արարն իսկ։ Իսկ Մովսէս ասէ թէ զկնի Խոսրովու թագաւորեցոյց Յազկերտ զՇապուհ զորդին իւր, ամս երեք. որ և 'ի համբաւ մահու հօրն գնացեալ, մեռաւ 'ի զօրացն. և ասեն, մինաց երկիրս անիշխան և շփոթ ամս մետասան. և ապա թագաւորեաց Արտաշիր, որ և ատեցեալ եղև 'ի նախարարացն վասն չարիր գործոցն. վասն որոյ աղաչեն զմեծն Սահակ ընկենուլ զնա. և 'ի չհաւանել նորա՝ ինքեանք երթան 'ի դուռն Վռամայ, կոչել տան զԱրտաշիր և յղել 'ի Խուժաստան։ Եւ ընկեցեալ զսուրբն Սահակ, կարգեն 'ի տեղի նորա զՍուրմակ չարախօսակից իւրեանց, որ ոչ յամեալ տարի մի՝ հալածի. և դընեն զԲրքիշու ասորի, ամ մի. և ապա զՇմուէլ 'ի նոյն ցեղէ, ախցիփեխցք և վատակարք, յորոց տաղտկացեալ նախարարացն Հայոց՝ հալածեն, և աղաչեն ըզսուրբն Սահակ առնուլ զաթոռն. որոյ ոչ հաւանէր, բայց 'ի վարդապետութեանն ոչ ընաւ դադարէր, այլ դիեցուցանէր հոգևոր դառանցն զերկնաւոր աղբիւրն 'ի տուէ և 'ի գիշերի։ Ոմանք զկնի Բրքիշոյ և Շմուէլի ասեն առեալ Սուրմակայ զաթոռն ամս եօթն։ Բայց որբոյն Սահակայ արարեալ դպրոցս ժամանակս 'ի գաւառին Բագրևանդայ, 'ի գեօղն Բլուր, կատարի առ Քրիստոս, և ամփոփի յԱշտիշատ, զկնի սատակմանն Վռամայ և տիրելոյն Յազկերտի որդւոյ նորա։ Զկնի ապա վեցից ամսոց կատարի սուրբն Մեսրոպ 'ի Վաղարշապատ, և դնի 'ի յՕշական գեօղն, խաչանման լոյս երկնաւոր կալով 'ի վերայ դագաղացն, մինչև եդաւ 'ի գերեզմանի։ Բայց զաթոռն տեղապահութեամբ խնամէր Յովսէփ աշակերտ Մեսրոպայ, 'ի Վայոց ձորոյ, 'ի գեղջէն Հողոցմանց. և ասեն Սուրմակն կատարէր զձեռնադրութիւն, մինչ կենդանին էր, զամս եօթն։

ԻԷ. Իսկ նախարարացն 'ի մի վայր ժողովեալ, կացուցանեն տեղապահ թագաւորութեան զսուրբն Վար-

գան ։ Օ այսու ժամանակօք դարձան 'ի Թարգմանութենէ Ղեւոնդ, Կորիւն և Երձան, որ գնացեալ 'ի ժողովն Եփեսոսի, զոր արար Թէոդոս 'ի մետասաներորդ[1] ամի Թագաւորութեանն իւրում վասն Նեստորի չարի, և բերին անտի կանոնս գլուխս վեց ։

Բայց գունդն Հայոց՝ էր զի հնազանդէին Պարսից, և էր զի դիմանային պատերազմաւ, յորժամ վասն հաւատոց սաստ հասանէր ։ Քանզի Տաւասպ արծրունի և Վնդոյ աւագ նախարարք ուրացեալք զհաւատս՝ շինեն 'ի Դուին մեհեան Որմզդի և տուն կրակի, և քրմապետ դնեն զՏերոյ զորդին Վնդոյի ․ զոր լուեալ սուրբն Վարդան, գայր իւրով գնդաւն, և սատակեր զՏաւասպ և զմարզպանն Մշկան փախստական առնէր, և զպիղծն Վնդոյ յատրուշանն հրոյ արկեալ այրէր, և զՏերոյ 'ի վերայ բագնին կախէր զփայտէ, և զտեղին շինէր եկեղեցի անուամբ սրբոյն Գրիգորի ։ Եւ զսուրբն Յովսէփ ձեռնադրեն կաթողիկոս, որ արար զժողովն 'ի Շահապիվանս, ուր զտուգանաց կանոնն կարգեցին ։ Որ զկնի երկու ամաց եկեալ զունդ 'ի Պարսից, և ըմբռնեալ զնա և զՍահակ և զՂեւոնդ և զայլս, եղին 'ի բանտի, որպէս զխրատտու Վարդանայ, հեռագոյն որսացեալ 'ի յըմբռնել զսուրբսն ․ զոր և խնդութեամբ ընկալան զկապանս վասն Քրիստոսի, և ոչ յօժարեցին հանել զնոսա մինչ ցժամանակն ։ Վասն որոյ 'ի մի վայր եկեալ իշխանքն Հայոց, դնեն զԳիւտ պատրիարք, և 'ի Դուին փոխեն զաթոռն, հրամանաւ նորին Յովսեփայ ․ յորմէ մանաւանդ հնազանդեցան սրբոյն Վարդանայ ամենայն նախարարքն Հայոց, որովք տայր պատերազմ ընդ Պարսս զամս հնգետասան, յաղթեալ քառասուն և երկու[2] պատերազմաց, մինչև ցկատարումն իւր մարտիրոսութեամբ, օրհնութեամբ սրբոյն Սահակայ ․ որ 'ի ժամ վախճանի իւրոյ յամսեանն նաւասարդի յերեսունն, յաւուր ծննդեանն իւրոյ, օրհնեաց զնա և զեղբարս իւր զՀմայեակ և զՀամազասպեան ․ Նոյնպէս և սուրբն Մեսրոպ յիւրում կատարմանն յերեքտասան մեհեկի

1 ․ Ոչ 'ի մետասաներորդի ամի այլ 'ի քսանևերեքն Թէոդոսի գումարեցաւ ժողովն ։

2 ․ Զայսպիսի դէպս գործոց արւոյն Վարդանայ ոչ գտանեմք առ հնագոյնս 'ի պատմչաց ։

ամաց. որոց աղօթիւք և օրհնութեամբ պարապեցան և պսակեցան։

Բանզի ընդ այն ժամանակս եկաց 'ի գործ հայրապետութեան Յազկերտի չարամտին Ներսէհ, և չոգաւ առ նա սեպուհն Վարազվաղան, որ էր փեսայ Վասակայ Սիւնեաց իշխանի, 'ի նոյն ազգէ, ատեցեալ և հալածեալ յաներոյն իւրոյ. որ և ուրացեալ զՔրիստոս, գրգռեաց զնա 'ի յանցանս զոր անցոյց ընդ Հայս. որ և 'ի նոյն խորխորատն սատանայի անկանէր աներ նորին Վասակ. և եղեն պատերազմք այնքան աղետից, որ էանց ընդ Հայս, զոր յընդարձակ պատմութիւնսն է ուսանել։ Նա վկայեցին Վարդանանքն, հազար երկերիւր երեսուն և երկու [1] 'ի հրոտից երեսունն, 'ի վեշտասանն Յազկերտի. և զկնի երկուց ամաց սուրբ երէցն Սամուէլ և սուրբ սարկաւագն Աբրահամ, 'ի հրոտից եօթն. և սուրբ եպիսկոպոսն Բասենոյ Թաթիկ, որ յառաջագոյն տարեալ էր 'ի Խուժաստան, դառն տանջանօք 'ի տասն հրոտից. և սուրբ կաթողիկոսն Յովսէփ և տէրն Սահակ և սուրբ քահանայքն Ղեւոնդ և Մուշէ և Արշէն, և սուրբ սարկաւագն Քաջաջ, վեցեքեան սոքա կատարեցան 'ի քսան և հինգն հրոտից, յԱպար աշխարհի 'ի փառս Աստուծոյ։ Նա երանելի մոգպետն 'ի մարգաց տասն։ Ասողիկն ասէ, թէ ստուգեցաք զվեշտասաներորդն Յազկերտի՝ երրորդ ամ Մարկիանոսի [2]։

ԻԲ. Յորում աւուր սուրբն Մովսէս և Մամբրէ և Դաւիթ եկեալ յուսմանէ, հոգային զտուն կաթողիկոսարանին։ Նա թուի թէ 'ի լինել ժողովոյն Քաղկեդոնի, վախճանեալ էր Գիւտ [3], և չև էր նստեալ

1. Ի թուոյ այսր երկերիւրքն յետոյ ուրեմն կատարեցան, և ոչ 'ի պատերազմին։

2. Ստոյգ օր նահատակութեան Վարդանանց է երկուքն յունիսի, 451 ամին Քրիստոսի. որ է երկրորդ ամ Մարկիանու։

3. Ի լինել ժողովոյն Քաղկեդոնի՝ ոչ միայն թէ վախճանեալ չէր Գիւտ, այլ և ոչ նստեալ կաթուղիկոս. աղմկին Պարսից և պատերազմին Վարդանանց ժամանակ էր 'ի Հայս, վասն այնորիկ և չգիտաց ոք 'ի մերոցս յայնմ ժողովի, գտնեալ իբրև երեսփոխան մերոյ հայրապետի։ Իսկ որ զՄովսէս և զԴաւիթ և զՄամբրէս բանք և հակաճառութիւք, գտանին և այժմ՝ իմաստակեալ և ճամարտակեալ բանքդ և ոչ յոյն իսկ գիրք. բայց ոչ 'ի Մովսիսեանց ասածի յօրինեալք կամ թելադրեալք, այլ զկնի ուրեմն կարկատեալք յաւուրս Եզրայ և Հերակլի կայսեր՝ 'ի համա-

Յոհան Մանդակունի․ և բերեալ առ սոսա Թուղթ դաւանութեան, ոչ ընկալան, զի արտաքոյ էր սուրբ հարցն աւանդից։ Այլ չոգան Մովսէս և Դաւիթ, թէ հնար իցէ օգնել ուղղափառութեանն (!)․ վասն զի գտանէին այսպիսի բանք առ մեզ, թէ Դաւիթ խօսեցաւ յերկար ընդ Յուբնաղայ, և ընդ դրան երէցն Պողքերայ (և ընդ Սամբրէի արքեպիսկոպոսն Կորնթացւոց [1]), և կարկեցան և յամօթ եղեն։ Եւ ապա յոյն եկաց Մելիտոս մետրապոլիտն Մակեդոնացւոց, և ասէ ցՄովսէս․ Գիտեմ զքեզ և զաշակերտդ քո 'ի մանկութենէ կրթեալ, և թեքեալ 'ի Ճոռոմ բանս կոկողաբանից և կկզայօնից փիլիսոփայից, և ոչ ոք կարէ յաղթել ձեզ․ այլ և նախանձու վառեալ էք զի ոչ կոչեցաք զձեզ, զի չէր կենդանի պատրիարգն ձեր։ Եւ ասէ Մովսէս․ Նպաքէն Ճանաչես զմեզ, զի անդրանիկ էաք եկեղեցւոյն, և դատաւորք հայրապետանոցին, և ընդէ՞ր ոչ կոչեցիք զմեզ, և զբազմահմտութիւնս մեր նախատինս ասես։ Բայց պատճառ ժողովոյն ձեր՝ չէ ծածկեալ յումեքէ, այլ մեք զՃշմարտութիւնն ոչ թողումք, մի բնութիւն ասել մարմնացելոյ բանին Աստուծոյ։ Ասէ Մելիտոս․ Որպէս ասես զմիննն, յատկացեա՞լ ասես զՈրդի 'ի Հօրէ, և միացեալ 'ի մարմնի։ Մովսէս ասէ․ Ոչ բաժանեալ 'ի Հօրէ, և միացեալ 'ի մարմնի։ Եւ այլ այսպիսի բազում բանս խօսեցան։ Ուստի կարծեցաք այսպիսի գոլ զժամանակըն, զի զտասն ամ կալեալ Գիւտայ զաթոռն՝ կատարի, և յաջորդէ զնա Յոհան Մանդակունի, իմաստասէր և լի հոգւով Աստուծոյ, որ բարիոք յօրինեաց զկարգս ձեռնադրութեան և ժամակարգութեան, և զՃառս խրատուց։ Եւ սա թարգմանեաց զերկրորդ Կորնթացւոց թուղթն, զՅոհանն, և այլ բազում օգուտս գործեաց 'ի կեանս իւր։ Կէսք 'ի կողմն Յունաց ասեն զԳիւտ կաթուղիկոս, և զՅովհան 'ի Պարսից 'ի միում ժամանակի։ Առ սոքօք էր Ճգնաւորն Անտոն, որ

խոհից Մայրագոմեցւոյն։ — Յուշ լեցի սատանոր և վասն ժամանակի կաթողիկոսացդ, զի անհամաձայնութիւն և շփոթութիւն է առ պատմիչս․ հնագոյնքն ընդ մէջ Յովսեփայ և Գիւտայ կարգեն զՄելիտէ և զՄովսէս, զոր յետինք ոչ յիշեն։

1․ Չիք 'ի Բ․ Օ։

և Թաթուլ, թողեալ զամենայն ինչ վասն Քրիստոսի Վարոսիւ հարազատաւն երթեալ կրօնաւորէր 'ի տե-ղւոջն՝ որ այժմ ասի սուրբ Թաթուլ։

ԻԹ. Իսկ զկնի վճարման սուրբ նահատակացն մեր, չարն Վասակ՝ զկին և զերեսին որդիս Հմայեկայ 'ի դուռն տանէր որպէս զորդիս մահապարտաց. զոր խըն-դրեալ Աշուշայի Վրաց բդեշխին 'ի Յազկերտէ, տայ նմա զանակնունելի պարգեւն. որ և աւագն 'ի նոյանէ Վահան՝ սպարապետ եղև Հայոց. քանզի սատակեալ Յազկերտի, Պերոզ որդի նորա սպանեալ զեղբայր իւր՝ թագաւորէ, և հաշտութիւն առնէ աշխարհիս, և զՎահան կացուցանէ հարկահան արքունի, և 'ի քսու արանց նեղեալ՝ տկարանայր 'ի հաւատոյն. և զկնի հարեալ զնա սիրտն իւր զղջանայ, և ապստամբեալ յարքայէ հարկանէ զզօրսն Պարսից յոլով անգամ։ Իսկ Վարազվաղան տիրեալ Սիւնեաց վասն ուրացութեանն, 'ի բազում աւուրս նեղեալ 'ի դիւաց՝ խեղդի անզեղջ։ Յորում աւուրս սպանաւ ուրացողն Վազգէն, և այլ բազում ուրացողք ընկալան աստէն զառհաւատչեայ գեհենոյն։

Յետ այսորիկ զօրավարն Պարսից Միհրան գայ բա-զում զօրօք 'ի վերայ Վախտանգայ Վրաց արքայի. և յղէ աղաչանս առ Վահան օգնել նմա, և գնաց յօժա-րութեամբ. և 'ի խմբել պատերազմին՝ վատ զօրն Վը-րաց փախեան թագաւորաւն հանդերձ, այլ և վատօք 'ի Հայոց, և նահատակեցաւ սուրբն Վասակ եղբայրն Վահանայ, որոյ երեսքն փառաւորեալ փայլէին որպէս զՄովսիսին՝ 'ի ժամ կազմելոյն, յորս ոչ կարէին հայել տեսողքն, և իմացան թէ մեռանելոց է յայնմ աւուր. պսակեցաւ և սուրբ սեպուհն Սիւնեաց Յազդ, յամ-սեանն հոռի 'ի վեշտասանն, 'ի գեօղն Ագուան. զոր ըմբռնեալ Միհրան հարկեր[1] ուրանալ զհաւատն և կեալ մեծութեամբ. և տուեալ ընդդէմ պատասխա-նի, մեռանի վասն Քրիստոսի, և պսակի։ Նոյնպէս և քաջ ասպետն Սահակ կատարի 'ի ժամ պատերազմին 'ի վերայ սուրբ ուխտին օրինաց։ Զկնի այսորիկ սպա-նաւ Պերոզ 'ի Հեփթաղաց եօթն որդւովք. և թա-

1. Հին Օ. հարկանէր և հարկէր։

գաւորեցուցին զՎաղարշ եղբայր նորա. և կոչեաց ըզՎաղարշ, և ետ նմա զզօրավարութիւնն Հայոց, և յետ այնորիկ եթող 'ի նա և զմարզպանութիւնն : Զկնի Վաղարշու՝ նստի Վասակ որդի նորա. և յետ նորա Խոսրով ամս քառասուն և ութ : Իսկ Վահան շինեաց զեկեղեցիսն Արտաշատու՝ զաւերեալսն 'ի Պարսից :

Յորում ժամանակս երանելին Տեառնթադ յԱրշարունեաց պսակեցաւ 'ի Զառնաւուխտոյ[1] զօրագըլխէն Պարսից, և այլ ևս բազումք ընդ նմա :

Լ. Իսկ տէր Յոհան կալեալ զաթոռն ամս վեց. և զկնի նորա տէր Բաբգէն զամս հինգ. և յետ նորա տէր Սամուէլ ամս հինգ. և զկնի նորա տէր Մուշէ ամս ութ. և յետ նորա տէր Սահակ ամս եօթն. և յետ նորա տէր Քրիստափոր փիլիսոփայ ամս եօթն : Իսկ Վահանայ բարիոք վախճանեալ, փոխէ զիշխանութիւն նորա եղբայր իւր Վարդ, ամս չորս. զՎահան կեաց քսան ամ, և կեաց երեսուն և մի ամեն կացեալ իշխան : Այլ զտէր Քրիստափոր յաջորդէ տէր Ղեւոնդ ամս երկու. և ապա տէր Ներսէս ամս ինն : Ի ժամանակս նորա առաքեաց Խոսրով թագաւորն Պարսից հրեշտակս, զի կալցեն զՎարդ. և եղև մեծ պատերազմ 'ի դաշտին Խաղամախոյ[2], և կոտորեն զզօրսն Պարսից աղօթիւք սուրբ հայրապետին Ներսիսի : Եւ յայն ժամանակս կատարեցաւ սուրբն Յիզտբուզիտ, որ է աստուածապրեցոյց. կատարեցաւ 'ի Դուին՝ 'ի մարզպանէն Վարհամայ. զի զկնի Վարդայ՝ պարսիկք իշխէին մարզպանք. և զմարմին սրբոյ վկային ամփոփեալ սուրբ հայրապետին Ներսիսի առընթեր կաթուղիկոսարանին, շինեալ վկայարան կոփածոյ 'ի վերայ նորա :

Ի սոյն աւուրս Եզրաս Անգեղացի զդասս Ճարտասանաց բազմացոյց : Զկնի Ներսիսի՝ տէր Յոհաննէս ամս հնգետասան. և յետ նորա տէր Մովսէս յԵղիվարդայ ամս երեսուն : Սա 'ի տասներորդ ամի հայրապետութեանն իւրոյ, և յերեսներորդ առաջներորդ ամին Խոսրովու, որդւոյ Կաւատայ, և 'ի չորեքտասա-

1. Տեառնթադայ նահատակութեան որպէսն անծանօթ է մեզ :

2. Խաղամախ հաւանօրէն է Խուղմախն ըստ Բիւզանդացւոց, 'ի Դ. Հայս, այժմ անծանօթ :

ներորդն[1] Յուստինոսի, որ զսուրբն Սոփի շինեաց, եղիր Թուական Հայոց և տոմար. յորում ժամանակի լցեալ էր շրջանն հինգհարիւր երեսուն և երկուց. և մարզպան Հայոց Մէժէժ գնունի, որ կալաւ զիշխանութիւնն ամս երեսուն և մի: Իսկ 'ի գլիր Թուականին էին Պետրոս եպիսկոպոս քերթողն Սիւնեաց, և Ներշապուհ 'ի Տարօնոյ, և Աբդիշոյ 'ի Մասնայ, զոր եպիսկոպոս ձեռնադրեաց Մովսէս. որ և զԿիւրիոն, որ էր ազգաւ 'ի Վրաց, 'ի գաւառէն Ջաւախաց 'ի գեղջէ Սկուտրի, և գիտէր դպրութիւն հայ և վրացի, ձեռնադրեաց Վրաց կաթուղիկոս, որ եղև յետոյ քաղկեդոնիկ[2]: Քանզի 'ի տղայութեանն գնացեալ էր 'ի Յոյնս, 'ի Կողոնիա գաւառ, և բնակեալ 'ի գեօղն Նիկոպօլիս յեզր Գայլ գետոյ, որ և վարժեցաւ յոյն դպրութեամբ. և յետ հնգետասան ամին, եկն առ Մովսէս 'ի Դուին, և կացոյց զնա վանաց երէց սրբոյ Կաթողիկէին, այլ և քորեպիսկոպոս Այրարատեան գաւառին, ամս եօթն. և յորժամ մեռաւ կաթողիկոսն Վրաց, առաքեցին իշխանք աշխարհին առ տէր Մովսէս, ըստ առաջին կարգին, զի տացէ նոցա առաջնորդ, և զնա կամեցաւ տալ որպէս 'ի տանէ իւրմէ. և երթեալ նուաճեաց զամենայն երկիրն. և ապա եկն առ նա խուժիկ մի նեստորական, որ Կիւա կոչիւր, այսինքն խստութիւն, որպէս եղեն, որ էր 'ի Կողոնիոյ, 'ի գեղջէն Զուտառիմայ, մօտ Նիկոպօլսի. որ լեալ էին միմեանց ուսումնակիցք և աղանդակիցք. զնա ձեռնադրէ եպիսկոպոս, և կոչի Նուլաւ, և ամենայն աշխարհաւն: Զոր իմացեալ Մովսիսի եպիսկոպոսի՝ որ 'ի Յուրտաւ՝ որ այժմ ասի Գանչէնք, ծանուցանէ պատրիարգին Մովսիսի, և նա գրէ առ նա Թուղթ յանդիմանութեան և սպառնալեաց, և նա բնաւ ուրանայ յերկեղէ սրբոյն զաղանդն: Իսկ զկնի սակաւ ժամանակաց մեռաւ պատրիարգն յերեսներորդ ամի հայրապետութեան իւրոյ, և Կիւրիոն յանհօգս եղեալ ընդունի զժողովս Քաղկեդոնի:

ԼԱ. Իսկ Խոսրով Թագաւոր Պարսից մօտ 'ի վախ-

1. Ոչ 'ի չորեքտասաներորդի տեսաւ 'ի հեղինակէդ և 'ի համա-
այլ 'ի քսաներորդի չորրորդի ամին: կարծեացն:
2. Յայն սակս և զատափե-

ճանն հաւատայ 'ի Քրիստոս, և կոչեցեալ առ ինքն զԵրան կաթողիկոսն՝ զոր տէր Գրիգոր էր ձեռնադրեալ հանգերձ այլօք եպիսկոպոսօք, 'ի գնալն իւրում առ Պերոզ արքայ՝ ուր յանդիմանեաց զմոլորութիւնն Պարսից, ցանկալով մահու, մկրտեցաւ յԵրանայ և հաղորդեցաւ. և զկնի սակաւուց կատարեցաւ, և թաղեցին զնա քրիստոնեայքն յարքունական գերեզմանս։ Եւ առ զԹագ նորա որդի նորա Որմիզդ. որոյ նենգ գործեալ սպանին զնա յիւրում դահլճի, և առնու ըզԹագն որդի նորա Խոսրով. յորոյ վերայ յառնէ Վահրամ գլուխ զօրացն, և առնէ զնա փախստական։ Եւ նա գնայ առ Մօրիկ կայսր, և գտեալ 'ի նմանէ օգնութիւն դառնայ և տիրէ հայրենեացն, և լինի երախտահատոյց. Թողլով 'ի Մօրիկ զՄիջագետս, և 'ի Հայոց զաշխարհն՝ որ Տանուտէրական գունդն կոչի[1]. բայց յոստանէն Դունայ, և յերկուց գաւառացն՝ որ է Ոստն Մասեաց և կողմն Արագածու, Թողու 'ի Մօրիկ 'ի լեռնէն որ կոչի Ընծաքիսար, մինչև ցԱռեստն աւան և ցՀացիւնս։ Որ յանդգնեալ զեղեալ անուանս յԱրայէն՝[2] փոխէ. զԱրմէնն կոչեցեալ 'ի նմանէ՝ որ է Առաջին Հայք՝ Երկրորդ Հայք զնա կոչէ, յորում մայրաքաղաքն Սեբաստ. և զԿապոտկիա, յորում մայրաքաղաքն Կեսարիա՝ Երրորդ կոչէ Հայք, և առնէ զնա եպարքի. և զՄելտենի՝ որ ունի զհոմանուն գաւառն իւր, կոչէ զնա Առաջին Հայք. և զՊոնտոս, յորում մայրաքաղաքն Տրապիզոն, Մեծ մասն Հայոց կոչէ զնա. և զՉորրորդ Հայք, յորում մայրաքաղաքն Նփրկերտ որ ասեն Մուփարկին, Յուստինիանոս գրէ զնա 'ի դիւան արքունի. և զաշխարհն Կարնոյ՝ յորում քաղաքն Թէոդուպօլիս՝ Մեծ մասն Հայոց կոչէ. և որ 'ի Մեծ Հայոց մասն էր առ նոսա, 'ի կողմանց Բասենոյ մինչև ցսահմանս Ասորեստանի, Մեծ Հայք անուանէ. և զկողմանս Տայոց սահմանօքն իւրովք՝ Խորագոյն Հայք կոչէ. և զկողմն Դունայ՝ Ներքսագոյն Հայք կոչէ։ Զայս անուանս գրէ 'ի դիւանի։

Յորում աւուր Սմբատ Բագրատունի քաջապէս խոնարհեցուցանէ ընդ ոտիւք Խոսրովու զամենայն Թշնա-

1. Տանուտէրական երկիր՝ կողմն Նախիջևանայ է, այլ աստանօր ընդարձակագոյն իմանի :

2. Պարտ է առել յԱրամայ :

միս նորա. և նորա պատուասիրեալ նմա տայ զմարզպանութիւնն Վրկան աշխարհի, ուր երթեալ գտանէ ազգս Հայոց գերեալ, և բնակեալ 'ի Թուրքաստան անապատին մեծի՝ որ Սագաստանն կոչի, մնացեալ զլեզու և զդպրութիւն. որք տեսեալ զՍմբատ խրախ լինէին, և նորոգէին զլեզու և զգիր. և զերեց մի նոցա Աբէլ անուն՝ տայ եպիսկոպոս ձեռնադրել մեծի հայրապետին Մովսիսի. հաստատէ զնոսա վիճակ սրբոյն Գրիգորի, և առեալ հրաման յարքայէ՝ գայ տեսանել զերկիր իւր: Նա եկեալ 'ի Դուին՝ սկսաւ շինել զփայտաշէն սուրբ Գրիգորն 'ի Վարդանայ սրբոյ. և պահնակ բերդին բողոքէ 'ի դուռն՝, թէ վնասակար է բերդիս. և ելանէ հրաման քակել զերդն, և հեռագոյն շինել. և խնդացեալ Սմբատ 'ի փառս Քրիստոսի, շինէ զեկեղեցին կոփածոյ վիմօք, և տայ ձեռնադրել պատրիարգ զտէր Աբրահամ զեպիսկոպոսն Ռշտունեաց, որ շատ ջանացեալ թղթով 'ի ձեռն Պետրոսի՝ ոչ կարաց դարձուցանել զԿիւրիոն յուղղափառութիւն(!). վասն որոյ արարեալ ժողով 'ի Դուին, անիծին զԿիւրիոն հերետիկոսեայ(!): Նա Մորիկ կացոյց յիւր կողմանն կաթողիկոս զՅոհան որ նստէր 'ի գեօղն Աւան[1], շինեալ անդ եկեղեցի, այր սուրբ, և ընտրեալ յամենեցունց[2]:

ԼԲ. Յայնմ ժամանակի նախարարքն Մորկայ սպանին զնա, և եղին թագաւոր զՓոկաս, որ և եկեալ 'ի Բասեն՝[3] ջանայր նուաճել զՀայս. և ընդ առաջ երթեալ Աշոտ, հարկանէ անչափ կոտորմամբ. հրամանաւ Խոսրովու, և առնու զԿարնոյ քաղաք, և փոխէ զբնակիչսն յԱհմատան, տարեալ զՅոհան կաթողիկոս զկնի, որ կայր 'ի գաղթի անդ. որ և անդէն վախճանեալ, բերաւ զին 'ի գեօղն Աւան, որ կալաւ զկաթողիկոսութիւնն ամս քսան և վեց. և սուրբ պատրիարգն Աբրահամ փոխի զկնի քսան և երեք ամի

1. Աւան գիւղ Կոտայից 'ի կողմն Երևանու: — Տարակուսական են ժամանակք կաթուղիկոսութեան Յովհաննու և Աբրահամու, ըստ այլակերպի գրութեան պատմչաց:

2. Այսպէս 'ի բնագրին. իսկ միւսն կամակորէ. Այլ ուրէ, և բնաւ չխոտորեալ յաղանդն Յունաց:

3. Թերևս մի 'ի զօրավարաց կայսերն՝ որ տայր մարտ ընդ Պարսից, հանդիպեալ իցէ 'ի Բասեն, այլ ոչ ինքն Փոկաս:

աթոռակալութեանն. և յաջորդէ զնա տէր Կումիտաս, 'ի գեղջէ Աղցից:

Իսկ յիշխանաց կարգի զկնի Սմբատայ պարսիկք կացին. նախ Վնդոշապուհ, որ զշինութիւնս շատացոյց, և յետ նորա Վարազդատ ոմն, և ապա Սուրէն ազգական Խոսրովու, որ չնայր ընդ կանայս իշխանացն. ընդ որ զայրացեալ Վարդանայ՝ որդւոյ Վասակայ Մամիկոնենոյ՝ սպան զնա, և առեալ զընտանիս իւր գնաց 'ի Կոստանդնուպօլիս: Բայց Հերակլ սպանեալ զՓոկաս, թագաւորեցուցանէ զորդի իւր, և ինքն խաղայ յարևելս. և Խոռեմ աւերէ զՅոյնս հրամանաւ Խոսրովու, քինախնդիր մահուանն Մօրկայ, և գերէ զԵրուսաղէմ և զփայտն փրկական, և զԶաքարիա պատրիարգն Երուսաղեմի: Յայնմ ժամանակի պատրիարգն Կումիտաս ընդարձակէ զկայարան սրբոց Հռիփսիմեանցն, և պատահէ սուրբ նշխարաց նոցա. և լինի ոչ սակաւ մխիթարութիւն քրիստոնէից, և էր կնքեալ մատանեաւ սրբոյն Գրիգորի, և սրբոյն Սահակայ, զոր ոչ իշխեաց բանալ, այլ և զկիրն եդ 'ի վերայ. և չափ հասակին Հռիփսիմեայ՝ տասն թիզ և չորս մատն, և զսուրբն Գրիգոր ասեն ինն թիզ, և զՏրդատ՝ մետասան թիզ:

ԼԳ. Առաքեաց Հերակլ դեսպանս պատարագօք առ Խոսրով խնդրել զխաղաղութիւն, որում ոչ ետ պատասխանի. և բարկացեալ Հերակլի, առնու ընդ իւր զեղբայր իւր զԹէոդոս, երկիցս հարկանէ զզօրսն Պարսից առ Նախիջաւ, և երթայ ընդ Հայս 'ի վերայ Խոսրովու. և զնա սպառեալ[1] Կաւատայ որդւոյ առաջնոյ Խոսրովու, սպանանէ զԽոսրով, և խնդրեալ սէր 'ի Հերակլէ՝ թողու 'ի նա զՄիջագետս. և դառնայ Հերակլ և գայ 'ի Կարնոյ քաղաք: Յորում յաւուրս յաջորդեալ էր զսուրբ աթոռն Կոմիտասայ տէր Քրիստափոր, և հանեալ զնա զի առնէր խռովութիւն 'ի մէջ իշխանացն, դնեն զԵզր Նիգացի, զոր կոչեաց թագաւորն 'ի Կարնոյ քաղաք, որ վասն ագահութեանն[2] իւրոյ քաղկեդոնիկ եղև, առեալ զԱզգք,

1. Այլքն յՕՕ:
2. Գէթ յայսմ մասին զխոնադոյն գասու քան զհեղինակդ:

և զերրորդ մասն Կողբայ [1] զլին հաւատոյն ։ Եւ 'ի դառնալ նորա կշտամբեաց զնա Յոհան [2] վարդապետ կաթուղիկոսարանին, ասելով. Յիրաւի Եզր կոչեցար, զի յեզր ելեր յուղղափառութենէ. և ինքն չոգաւ յԱղուանս, 'ի գլուխ Գարդման գաւառի, և ճգնեցաւ խիստ վարիւք ։ Սա գրեաց երիս գիրս, զանուն իւր չդնելով 'ի նոսա. զմինն կոչեաց Խրատավարք, զմինն Հաւատարմատ, և զմինն Նշեմակ ։ Էր սորա աշակերտ մի Սարգիս անուն, որ զՍաբելլին ախտանայր. զոր հալածեալ մերժեաց յինքենէ ։ Յաւուրս յայսոսիկ մեռանի Կաւատ արքայ, և թագաւորէ տղայ որդի նորա Արտաշիր. և լուեալ Հերակլ, յորդորէ զԽոռեմ՝ առնուլ զթագն, սպանանելով զտղայն ։ Զոր և արար իսկ. և ետ զխաչն սուրբ 'ի Հերակլ ։ Եւ ըսպանեալ զօրացն զԽոռեմ՝ տան զթագն 'ի Բորն դուստըր Խոսրովու, և զկնի նորա 'ի Զամբիկ քոյր նորա. և յետ նորա, զԱրմիզդ թոռն Խոսրովու, զոր խեղդամահ արարին, և եդին զՅազկերտ թոռն Խոսրովու [3] ։

Իսկ Հերակլ զխաչն տարեալ յԵրուսաղէմ, կանգնէ 'ի տեղւոջ իւրում. յորում ժամանակի կարգէ զօրավար Հայոց զՄժեժ, զոր սպանեալ Դաւիթ Սահառունի, ինքն լինի իշխան հրամանաւ Հերակլի, ամս երեք, որ շինեաց զեկեղեցին Մրենոյ [4]. և ապա անարգեալ յիշխանացն հալածեցաւ. և անկաւ շփոթ մեծ 'ի Հայս, զմիմեամբք ելանելով. յորում աւուրս ընդարձակեաց Եզր զվկայարան սրբոյն Գայիանեայ. և տէր Քրիստափոր շինեաց միայնարան 'ի յՈտն Մասեաց, և առաքինանայր բազում ջանացող աղօթիւք, երեքհարիւր խարազնազգեստ արամբք ։ Յորում աւուր ժողովեալ յԵդեսիա երկոտասան հազար Հրեայ՝ ապստամբեցին 'ի Հերակլեայ, և նա երթեալ պաշարեաց զՈւռհա, և առ զնա և արձակեաց զՀրեայսն կենդանի, յո և կամիցին երթիցեն, ոչ ըն-

1. Իմա զմասն աղահանից տեղեացն ։
2. Մայրագոմեցին մոլորեալ ։
3. Ի կարգի թագաւորացդ պակասեն և այլք ։ Բոր է Բրոր կամ Բեբոր, որ և Բորանդուխտ. իսկ Զամբիկն՝ Ազերմիգուխտ ։
4. Մրէն 'ի Շիրակ գաւառի. կիսականգուն կայ ցարդ եկեղեցին այն ։

սելով Թէոդորոսի եղբօրն՝ որ կամեցաւ սատակել զնոսա ։ Եւ գնացեալ անտի ընդ անապատ չոգան 'ի Տաճկաստան առ որդիսն Իսմայէլի, որպէս առ ազգայինս, և կոչէին յօգնութիւն. և կէսք ախորժէին, և ոմանք ոչ, վասն այլ և այլ աղանդոց նոցա, որպէս երբեմն Եգիպտացւոցն, ըստ զանազան պաշտամանց նոցա ։

ԼԴ. Յայնժամ ապա այր մի յորդւոցն Իսմայէլի, որում անուն էր Մահմէթ Թանգար, որ էր ծնեալ 'ի քաղաքին Մադինա [1], մերձ 'ի Մաքա երկօրեայ ճանապարհաւ, յազգէն՝ որ կոչի Կորէշ [2], որդի Աբդլայ, որ մեռաւ որբ թողեալ զնա. որ և յարեցաւ 'ի վաճառական մի, և եղև 'ի տան նորա յառաջադէմ. մեռաւ վաճառականն և տիրացաւ տան տեառն իւրոյ, առեալ զկին նորա. և երթայր ուղտօք յԵգիպտոս, և պատահեաց նմա միայնակեաց մի Սարգիս անուն յաղանդոյն Արիոսի և Կերինթոսի, որ և ուսոյց նմա 'ի հին մատենից զԱստուած, և զգիրս տղայութեան Տեառն մերոյ. և 'ի դառնալն 'ի տուն քարոզեաց զոր ուսաւն. և հալածեցին զնա ազգն իւր. և եկն յանապատն Փառանու [3]. և յորժամ եկին երկոտասան հազար Հրեայքն, առեալ պատճառս 'ի նոցանէ, քարոզեաց որդւոցն Իսմայէլի զԱստուածն Աբրահամու, և եղև երաշխաւոր նոցա, որ թէ պաշտեն զնա՝ ժառանգեն զերկիրն զոր ետ Աստուած Աբրահամու ։

Եւ ուսան նմա, և ժողովեցան յԵւիլայ մինչև ցՍուր [4], որ է հանդէպ Եգիպտոսի, և զերկոտասան հազարսն ըստ ցեղից Իսրայէլի երկոտասանից նահապետացն, հազար հազար արկին յինքեանս, և եղեն երկոտասան բաժին, ազգապետ դնելով ինքեանց, յորոց անուն կոչեցան իսկ՝ Նաբէովթ, Կեդար, Աբդլա, Մարսամ, Մասմա, Իդումա, Մասէ, Քողդադ, Թեման, Յետուր, Նաբէս, Կեդմա ։ Եւ գնացին բանակս բանակս յանապատէն Փառանու ցՌաբովթ Մովաբու [5], և անցին յայնկոյս Յորդանանու 'ի

1. Մադինա որ յառաջն Յաթրիպ կոչէր՝ է Մէտինէ ։

2. Քօրէշ՝ Քուրէյշ قريش ։

3. Փառանու անապատն ընդ մէջ Սինեայ և Հրէաստանի է ։

4. Սուր անապատ ընդ մէջ Պաղեստինեայ, Ապառաժն Արաբիոյ, Կարմիր ծովու և Եգիպտոսի ։

5. Ռաբովթ Մովաբու մայրաքաղաք Մովաբացւոց յարևելեան

վիճակն Ռուբենի ։ Եւ զօրն Յունաց էր յԱրաբիա. հարին զնոսա, և փախեաւ Թէոդորոս եղբայր կայսերն մազապուրծ ։ Եւ դարձան ինքեանք յԱրաբիա, բնակեցան ըստ ցեղից ցեղից, և ժողովեցան առ նոսա ամենայն մնացեալքն յորդւոցն Իսմայէլի, և եղեն զօր մեծ ։ Եւ յղեն բանս առ կայսր, Թողուլ զերկիրն զոր ետ Աստուած Աբրահամու. և արար նոցա ընդդէմ պատասխանի, և գումարեաց զօրս եօթանասուն հազար ՚ի ձեռն ներքինւոյ մի հաւատարմի, և պատուիրեաց երթալ յԱրաբիա ՚ի վերայ Իսմայէլի, ուր և սատակեցան իսկ. և լցան մեծութեամբ բանակքն Մահմեդի ։

Եւ էր Թիւս մեր վաթսուն և եօթն[1]. և զի յաջողեաց նոցա խրատն Մահմեդի, խնդրէն ՚ի նմանէ օրէնս, և նա զտեղի մեհենից օձիցն՝ զոր պաշտէին, կոչեաց Ալ-քայութա[2], որ է դուռն Աստուծոյ. և կոչեաց զբնակութիւն քաղաքին իւրոյ՝ տուն Աբրահամու ։ Եւ քանզի ՚ի զօրանալ քրիստոնէութեանն, ըզկուռս Դամասկոսի, զԱսեմանա[3], որ նա ինքն է Հեփեստոս կաղ, տարեալ ընկեցին յանապատ, զոր գտեալ Տաճիկք տարան ՚ի մեհեանս օձիցն, և քուրմք օձիցն ոչ կամեցան անդ դնել, այլ հանեալ արտաքոյ աբարին տեղի միոյ ոտից ՚ի վերայ վիմի, և անդ եդին. զոր գողացան եթէովպացի վաճառականք վասն ոսկւոյն, զոր ձուլեցին Իսմայէլացիքն. և եղև պատերազմ սաստիկ ՚ի մէջ երկուց ազգացն, մինչև մեռացան ։ Օ այնմանէ ասաց, Թէ Աբրահամու ոտնահետն է, յորժամ եկն տեսանել զԻսմայէլ զորդի իւր. և քանզի յորս էր Իսմայէլ, հարցանէ ցկին նորա Թէ Ո՞ւր է այր քո. և նա ասէ. Գնա՛, աղճատեալ ալևոր. և ասէ Աբրահամ. Յորժամ գայ ՚ի տուն, ասա ցայրն քո, փոխեա՛ զդուռն տան քո ։ Իսկ յորժամ եկն Իսմայէլ և էառ զհոտ հօրն,

ափն Մեռեալ ծովու, ուր ցարդ նշմարին աւերակք նորին սակաւք ։

1. Ի. Օ. վաթսուն և հինգ. 616 ամ Տեառն, որ յառաջէ վեց ամօք քան զփախուստն և զիշխանութիւն Մահմետի, յորմէ Թուականին նորա սկիզբն, ՚ի 15 յուլիսի 622 ամին ։

2. Էլ-Քէապէ الكعبا ։

3. Ասեմանայ Դիք որ ՚ի Ս. Գիրս յիշին՝ յոմանց արեգական համարին, յայլոց Աստղիկ, և ՚ի բազմաց անծանօթ. վասն որոյ կարծիս հեղինակիդ նշանակելի է առ հնախոյզս ։ Իսկ պատմութիւնդ ոչ գիտեմ քանի՛ հաւատալի ունիցի ։

եհարց ցկինն . և նա ասաց զոր լուաւն . և իմացեալ Խոմայելի՝ եհան զկինն , և այլ եւս մինչև ցեօթներորդ կինն , որ մաղթեաց զԻբրահամ իջանել յիշէն , և օծցէ զոտսն . և իջոյց աւէ զմի ոտն , և եդ 'ի վերայ վիմին , և տեղի ետ վէմն ոտիցն . և զմի ոտնն ոչ իջոյց 'ի գրաստէն . զի երդուեմն տուեալ էր Սառայի՝ թէ մի իջանէր , երկուցեալ թէ լինի ընդ Հագարու : Զայս տաաս...եաց Մահմէտ : Իսկ հրամայեաց յամենայն կողմանց անդ առնել զերկրպագութիւնն , և զվիմաւն ասաց շուրջ գալ միոտանի , և ասել Լըպայք , լըպայք . և որպէս թէ պատասխանի ումեք առնել , Է՛յ այ , աւա՛ս աւա՛ս[1] . և անցեալ 'ի ձորն անապատն սպանանէն , և ելեալ 'ի գրաստ փախչին մինչև 'ի բլուրն Մաքայ , և թէ 'ի փախչելն հանդերձ անկանի կամ զուլամբի , ոչ ոք իշխէ յետս հայել . և 'ի մէջ երկուց վիմացն ընթանալով , զոր կոչեն Սաֆա և Նմիա , վիմէ 'ի վէմ երթան եօթն անգամ անհանգիստ և քարինս ձգեն . և Մահմէտ ասեն այսպէս արար և ուսոյց : Իսկ միոտանի վազելն՝ վասն ոտնահետին է , և 'ի ձորն անապատն կոտորելն և փախչելն , ասեն թէ զոհ արար Մահմէտ . . . . . . . . . . . . , զի տեսիլս ցուցցեն նմա , և երեւեալ նմա՝ փախեաւ : Իսկ յերկու վիմամիջին շրջելն և քար ձգելն , լեալ են վէմք նոցա պաշտելիք , նախ քան ըղկուռսն , և 'ի պաշտելն Մահմետի ըստ սովորութեանն , շուն կատաղի եկ ընդդէմ նորա , և նա ձգեաց նմա քարինս . և զնոյն հրամայեաց առնել : Իսկ օձք և սողունք՝ զի ոչ սպանանին , զի պաշտելիք լեալ են նոցա , և շուն կոտորելն այն է , որ ասեն թէ 'ի մեռանելն Մահմետի չկամեցան թաղել , ակն ունելով թէ յառնէ երեքօրեայ , . . . . . . . . . . . . . . . և յորժամ իմացան՝ կոտորեցին զշունսն , և 'ի նոյն ամսեան հրամայեցին զնոյն առնել : Նա ուսոյց ասել մի է Աստուած , և ոչ ոք է նմա ընկեր , և Մահմէտ ծառայ նորա : Իսկ որ ասեն հրէի միոյ բանիւ , թէ մարգարէքն խօսեցան որպէս վասն Քրիստոսի՝ և վասն Մահմետայ , զայն ասեն որ Եսայի տեսանէր երկու

1. Լէպպէյ Լէպպէյ , Էյ ֆէյեաս , لبيك لبيك ای فياض , Հրամայեա՛ հրամայեա ով Աստուած :

հեծեալս իշոց և ուղտուց։ Եւ յաւուր միում յանկարծակի .... անյայտ եղև Մահմէտ. և յետ սակաւուց երևեալ, ասէ. Խաղաղութիւն ընդ ձեզ և ողորմութիւն Աստուծոյ և շնորհք։ Եւ նոցա զարմացեալ ասեն. Ուստի գաս, և զի՞նչ է նոր ողջոյնդ, և զո՞ր Աստուծոյ շնորհք բերեր մեզ։ Եւ նա ասէ. Յառաջ գիս Աստուած 'ի Մաքա, 'ի տուն հօր մերում Աբրահամու, և պատմեաց զկամս իւր, և 'ի վաղիւն առաքելոց է մեզ օրէնս։ Եւ առեալ երինջ մի ծնեալ[1], և 'ի տեղի ժողովոյն մեկնեաց յորթոյն ............. և 'ի վաղիւն հրամայեաց արձակել, և ինքն հաւաքեալ զամբոխն՝ մնայր. և եկն կովն բջելով և քրտալով, և հերձեալ զամբոխն խնդրէր զորթն. և հրամայեաց ունել զնա, և առեալ զթուղթն համբուրեաց և ասաց յԱստուծոյ եկեալ. վասն որոյ ցայսօր գրեալ են 'ի սկիզբն զուրանին՝ Սուրաթ Ալ-բակարա[2], որ է կովու օրէնք։ Եւ հրամայէ հինգ անգամ կատարել աղօթս լուացմամբ, և փոխանակ փողոյն Իսրայելի՝ 'ի բարձուէ կանչել, վկայ առեալ՝ թէ Էլ 'ի վերայ լերինդ Սինի, աւետարանիչք. և Մօղին[3] կոչեն զձայնողն, որ է հաւատադիր, և զմատն յականջն ածել, ասեն. թէ որ կամու և որ ականջ՝ լսէ ականջօքն։ Եւ զՔրիստոս բան Աստուծոյ, և հոգի կոչեաց։ Եւ սքանչելիք զոր ասեն թէ անէր, զլուսինն բերեալ 'ի վայր, ասեն, չորս կտոր անէր, և դարձեալ բոլորեալ յերկինս առաքէր։

Բայց նախ Քաղըթ[4] էր իշխան Իսմայելի, և ապա գտեալ զՄահմէտ՝ հաւանի նմա յամենայն բանս։

ԼԵ. Եւ յորժամ զօրացան նոքա, երկուցեալ Երուսաղէմացւոյն, զխաչն տէրունի և զամենայն սպաս եկեղեցեացն հանեալ 'ի նաւ, տարան 'ի Կոստանդնուպօլիս, և ինքեանք հնազանդեցան Իսմայելի, զի կայսրն

1. Նոր օր. նորածնունդ։

2. Սուրէթ-իւլ-պէքարա سورة البقرة, Պատճէն կամ Յաղագս կովու. խորագիր երկրորդ պատճէնի կամ գլխոյ կուրանին, զոր ոմանք 'ի մեկնչաց համարին եղեալ վասն ճառելոյ 'ի համարս կզ-կթ զկովուն զոհագործութենէն ըստ Մովսիսեան աւանդից։

3. Մօղին, մունատի, منادى, Ձայնող։

4. Քաղըթ իշխան Իսմայելացւոց թուի անհեթեթ կոչումն խալէթ անուան, զի այսպէս կոչէր առաջնորդ զօրուն Մահմետի՝ որ եհար զՅոյնս յԱսորիս։

այլ ոչ կարաց զօր գումարել 'ի վերայ նոցա ։ Եւ նոքա բաժանեալ յերիս մասունս, մին յԵգիպտոս, և մին 'ի Յոյնս, և միւսն 'ի Հայս, և եղև ամենեցուն յաղթել. և որք եկին 'ի Հայս ընդ Մարեստան, և հասեալ 'ի Դուին առին զնա, և սպանին անթիւ. և գերեցին երեսուն և հինգ հազար անձինս 'ի ժամանակս իշխանութեան Թէոդորոսի Ռշտունւոյ, որ զկնի Դաւթի. և բիւր մի 'ի նոցանէ հարին զՊռոկոպոս[1] զօրագլուխն Յունաց, որ նստէր 'ի սահմանս Հայոց վեց բիւրու ։

Յորում յաւուրս մեռաւ Եզր, և յաջորդեաց զաթոռն Ներսէս եպիսկոպոս Տայոց, զկնի տասն ամին Եզրի. բայց յափշտակութիւն եղեալ վասն անհնարին կոտորելոյն, խորհեցաւ փախչել, իբր ոչ բաւական մեծի աստիճանին ։ Եւ աղաչեցեալ 'ի բազմաց դադարէ. և հաւաքեալ զբազմութիւն դիականցն թաղէր, և 'ի նմին տեղւոջ շինէր զհրդեհեալ վկայարան սրբոյն Սարգսի ։ Շինէ տաճար սրբութեան և 'ի վերայ վիրապին, և արկանէ հիմն տաճարին մեծի յառապարի յանուն սրբոյն Գրիգորի Լուսաւորչի, և դնէ 'ի ներքոյ չորից սեանցն զհասարակ նշխարս սրբոյն Գրիգորի, և զգլուխն 'ի գլխոցի եդեալ՝ պահէ 'ի պէտս բժշկութեան ախտաժետաց. անդ դնէն և զնշխարս սրբոյն Յիզտբուզտեայ, և զԴաւթի վկային[2] ։ Եւ զսուրբ Գրիգորի նշխարսն ասեն 'ի Հայս բերել Գրիգորոյ մամիկոնոյ, 'ի գնալ նորա դեսպան 'ի Կոստանդնուպօլիս, տուեալ ցնա կին մին յաւագաց՝ որ ունէր առ իւր. և նորա գաղտ հանեալ 'ի ծով և անցեալ գայ բերէ անգիտելի քաղաքին՝ զգանձն անանց մեծութեան. և զծնօտն տայ Եզուանից 'ի խնդրոյ Ջուանշիրի և քեռ իւրոյ՝ որ էր կին Գրիգորի[3] ։

ԻԶ. Յայնմ ժամանակի կայսրն Կոստանդին դաւեալ 'ի մօրուէն Մարտինեայ սպանանի, կացուցեալ զորդի իւր Հերակղակ. և Վաղէնտին զօրավարն սպանեալ զՄարտին և զՀերակղակ, թագաւորեցուցանէ

1. Պռոկոպիոս ըստ Ղևոնդեայ երիցու պատմչի, որոյ զօրահանգիստ էր 'ի Կոգովիտ գաւառի ։

2. Նոր Օ. Հյայն Դունայ ։

3. Ըստ հին պատմագրութեան յայտնութիւն նշխարաց Լուսաւորչի 'ի Կոստանդնուպօլիս երկերիւր ամաւ յետոյ եղև ։

զԿոստանդ՝ որդի Կոստանդեայ. և զի ապստամբեալ էր Սարագինոց, աղաչէ վասն նորա հայրապետն Ներսէս, և դնէ զնա կիւրապաղատ Հայոց. որ և յառնուլ զիշխանութիւնն մեռաւ, և թաղեցաւ 'ի Դարօնս առ հօր իւրում քաջին Սմբատայ: Եւ դնեն ըզՍմբատ 'ի պատիւ հօրն. և Թէոդորոս Ռշտունի էր զօրավար: Բայց Մահմէտ քսան ամ կալեալ զիշխանութիւնն.... և զկնի նորա առին զիշխանութիւնն Օմար և Ամր[1] և Բուբաքր[2], և սպանին զՅազկերտ թոռն Խոսրովու, և բարձին զթագաւորութիւնն Պարսից, որ տևեաց ամս չորեքհարիւր ութսուն և մի. և զկնի նոցա առ զիշխանութիւնն Մաւի: Իսկ Կոստանդիանոս թոռն Հերակլեայ, ընկենու զԹէոդորոս յիշխանութենէ, և հրամայէ զօրավարին Կիլիկիոյ ելանել ընդդէմ Մաւեայ. և Վարդ որդի Թէոդորոսի նենգ գործեաց զօրացն Յունաց՝ կտրելով զխելս կամրջացն 'ի վերայ Եփրատու 'ի փախչելն Յունաց: Եւ կացոյց Մաւի իշխան Հայոց զԳրիգոր Մամիկոնեան, և եդ հարկս Հայոց հինգ հարիւր դահեկան[3]: Ոմանք ասեն 'ի Թորգամայ բերեալ Գրիգորի զռովանդակ նշխարս Լուսաւորչին. և եկեալ Խորայէլ հրամանաւ Սարագորդատայ Ըզուանից իշխանի, և խնդրեալ զծնօտ Լուսաւորչին, տարեալ եդ 'ի Գըլխոյ վանս կոչեցեալ տեղւոջ[4]:

Իսկ զի 'ի հարկէ հնազանդեցան Հայք Հագարացւոց, ելանէ բարկութեամբ կայսրն 'ի Հայս, և Ներսէս կաթողիկոս աղերսելով տանի իջուցանէ 'ի Դուին 'ի կաթողիկոսարանին, և հաղորդին 'ի միասին կայսրն և կաթողիկոսն, և կան ութ օր 'ի խորհրդեանն ըստ Յունաց սովորութեան, և քարոզեցին զժողովն Քաղկեդոնի. և ոմն եպիսկոպոս 'ի վայր իջեալ 'ի բեմէն՝

1. Նոր օրինակք դնեն Օթման:

2. Ըստ կարգի յաջորդք Մահմետի են Էպուպէքր, Օմար, Օթման, Ալի, Միւավիէ:

3. Հարկդ Հայոց ՆՃ դահեկան, զոր նախ յիշէ Ղևոնդ պատմիչ, եթէ ստոյգ է թիւդ, թէթէ ինչ է, որպէս և իցէ դահեկանն, եթէ բիւզանդեան ոսկի, եթէ սասանեան, և եթէ արաբիկ դենար՝ որ արժէր 12 կամ 13 ֆրանգ. թէպէտ և բազմաց կարծիք են թէ Աբդլմէլք ամիրապետ նախ եհատ դրամ արաբացի, այլ գտաւ և Միւավեայ դրամ:

4. Տես Ծան 3. յէջ 67. և յէջ 41. 'ի Ծան:

եմուտ 'ի մէջ ամբոխին. և զկնի հարցեալ կայսերն ցեպիսկոպոսն, թէ Ընդէ՞ր ոչ հաղորդեցար ընդ քում պատրիարգին, նա ասէ. Դա իսկ եղև պատճառ զի յառաջ քան զերկուս ամս ժողով արար, և նզովեաց զամենայն հերձուածողս, և առաւել ևս զժողովն Քաղկեդոնի: Եւ մեղադրեաց յոյժ թագաւորն վասն նենգութեան նորա, և ապա հաղորդեցաւ և եպիսկոպոսն, և օրհնեաց զթագաւորն և թագաւորն զնա: Եւ 'ի գնալ թագաւորին երկուցեալ՝ Ներսէս յՄշտունեաց տեառնէն, գնայ 'ի Տայս. և զկնի վեց ամի դարձաւ լուեալ զմահն Թէոդորոսի. և շինէ հուր կայս առընթեր մեծ եկեղեցւոյն, և կացուցանէ ամբոխութիւնս երգումարդոց, ըստ օրինի քաղաքականութեան, և ածէ ջուր 'ի Քասախ գետոյ, և տնկէ անտառս և այգիս: Սա մեծ ժողովով առնէր զտօն վարդավառին, և ութ հարց փոխեցին, և ոչ կարացին առնուլ զմիմեանցն. ապա հրամայեաց ընտրել զարժանն և զայն միայն ուսանել, զոր և արար 'ի ձեռն սրբոյն Բարսղի, մականուն Ճոն կոչեցելոյ. որ էր առաջնորդ սուրբ ուխտին՝ որ Դպրավանքն կոչի, 'ի գաւառին Անոյ[1]. որում ասեն թէ եօթն անգամ ետես զՔրիստոս աքանչելի համարձակութեամբ. վասն որոյ Ճոնընտիր կոչի շարականս՝ որ այժմ պաշտի յեկեղեցիս մեր:

Եւ մինչ էր Ներսէս 'ի Տայս, Թէոդորոս աշտունի շինեաց զկզզին Աղթամարու: Ի Դպրավանից տարան զխաչն, որ յանուն սուրբ Աստուածածնին, որ արդ Վարձից[2] կոչի, յայնժամ Ճոնեանց կոչիւր. և տարաւ զնա Սարգիս Ճոնեանց 'ի գաղութ՝ յերեսաց այլազգեաց, ուր արար աքանչելիս ձեռօք Տիմոթ վարդապետի, զկնի Դեմետրեայ արքայի Վրաց՝ յուրկու-

1. Անւոյ գաւառ Շիրակ է:

2. Վարձիա աւան 'ի սահմանս այժմեան Ախալքալաքի, որ են կողմանք Ջաւախաց գաւառի Գուգարաց, զոր Վիրք ունէին յայնմ ժամանակի, և յանուն նորին կոչի վիճակն Վարձունիք կամ Վարձաունիք: Ժամանակ աքանչելեացդ անյայտ է. Բրոսէ ('ի Վրաց պատմութեան. Ա. 259) համարի զԴեմետրէ եղբայր Ստեփանոսի Վրաց կիւրապաղատի մերձաւորի ժամանակաւ Ներսեսի կաթուղիկոսի: Յառաջ քան զհեղինակս մեր թագաւոր Վրաց Դեմետր անուն մի ոք եկաց 'ի ԺԲ դարու: Իսկ Տիմոթէոս անուն վարդապետ ոմն մեկնիչ Արարածոց գրոց յիշի առ մեզ յել Ժ դարու:

թենէ բժշկեալ[1], վասն որոյ և առին 'ի Հայոց. և է սրբոյն Մեսրոբայ օրհնեալ, և կամ Բարսղի սրբոյ Ճոնին, և ունի գիր հայերէն յաջ թեւն ։

Վախճանեալ Ներսիսի մեծի պատրիարգի, Թաղի յիւրում ձեռակերտին[2], և առնու զաթոռն Անաստաս, սենեկապետն Ներսիսի որ էր յԱկոռոյ, որ նորին հրամանաւ շինէր զտուրբ Գրիգորն, մինչ էր նա 'ի Տայս ։ Յաւուրս սորա շինեաց Գրիգոր Մամիկոնեան զկաթուղիկէն Արձոյ, և զվանքն Նշխվարդայ. և Անաստաս շինէ զեկեղեցին Ակոռոյ, եղբայրանոց յօրինեալ և հիւրանոց[3]: Առ Գրիգոր իշխանն եկն Սուրհանն պարսիկ յազգէ Թագաւորաց, և խնդրեաց զՔրիստոս, և ետ զինքն մկրտել Անաստասայ, եղեալ ինքն նմա կնքահայր. և կոչեաց զնա յաւազանէն Դաւիթ յանուն հօր իւրոյ[4], և ետ նմա զՉագ 'ի Կոտայս ։

Յայնմ ժամանակի էր Անանիա Շիրակունի, որ առեալ հրաման յԱնաստասայ՝ յօրինէ տոմար հանապազորդ[5]. որ մինչ խորհէր պատրիարգն ժողովել հաստատել՝ կատարի, և յաջորդէ զնա Իսրայէլ՝ զկնի վեց ամ պաշտելոյն Անաստասայ ։ Յաւուրս սորա զՆառաբա ամն զօրագլուխ Տաճկաց՝ որ 'ի Հայս, վանեալ հալածէ Ներսեհ իշխանն Վրաց։ Իսրայէլ կեցեալ յաթոռն ամս տասն վախճանի, և առնու զքօղն սուրբն Սահակ, որ 'ի Ձորոփոր յԱրքունեացն։ Ի յեօթն ամին սորա՝ արշաւեցին Խազիրք 'ի Հայս, և սպանին զԳրիգոր իշխանն. և գերեցին զհնարաւորն իւրեանց ։ Եւ առնու զիշխանութիւնն Աշոտ Բագրատունի՝ որդի Սմբատայ ։

ԼԷ. Իսկ Մաւի իշխանն Իսմայէլի խորհեցաւ բառնալ զթագաւորութիւնն Յունաց, որպէս և զՊարսիցն, և կազմեաց երեք հարիւր նաւ մեծ, և յամէն նաւ հազար այր. և հազար նաւ փոքր, և յամէն նաւ հարիւր այր. և արձակեաց զնոսա ընդ ծովն. և ինքն ընդ ցա-

1. Հին Օ. տուղջ որոշեալ ան- նուն ։

2. Այլ օր. 'ի բերան Հիրոսքն ։

3. Ակոռւոյ եկեղեցիդ և վանք շինեալ 'ի կաթողիկոսէդ, կործանեցաւ 'ի մեծի փլածին Մասեաց յամի 1840 ։

4. Դաւիթդ նահատակեալ 'ի Դունին կոչեցաւ Ս. Դաւիթ Դըւնեցի ։

5. Այսինքն տոմար անշարժ ըստ աւուրց ամաց յարմարեալ, որ չէառ երբէք հաստատութիւն 'ի Հայս քաղաքօրէն վարմամբ ։

մաքն հասանէ 'ի Քաղկեդոն. և կորեան ամենայն նաւքն, և ինքն փախեաւ 'ի գիշերի և զերծաւ, և մեռաւ յԱսորիս: Եւ ա՛ռ զիշխանութիւնն Մրուան որդի իւր, և առաքեաց ոստիկան 'ի Հայս զՄահմետ ոմն, որ աւերեաց զՍեւան կղզի, և գերեաց զորս 'ի նմա. և խաբէութեամբ կողոպտեաց զսուրբ Գրիգոր, ծառայ մի սպանեալ և ընկեցեալ 'ի խորափիտ մի. և ապա խնդրեալ և գտեալ՝ վրէժխնդիրք լինէին, ծայրակատոր արարեալ զկրօնաւորսն, և քառասուն այր ըզփայտէ կախեալ: Եւ գնացեալ Մահմետի, այլ ոստիկան առաքէ 'ի Հայս՝ Աբդլա անուն, որ կամեցաւ բառնալ զազատազունդն Հայոց, և զՍահակ կաթուղիկոս կապեալ առաքէ 'ի Դամասկոս, և զիշխանն Հայոց զՍմբատ. և զսուրբն Դաւիթ խաչէ 'ի փայտի. և մնացեալ իշխանքն Հայոց, Սմբատ և Աշոտ և Վարդ, կամեցան փախչել 'ի Յոյնս. որոց հետամուտ եղեալ Իսմայելացիք հինգ հազար, հասին 'ի Վարդանակերտ և կռուեցան[1] և սրախողխող եղեն առ հասարակ յիշխանացն մերոց, օգնութեամբն Աստուծոյ, զորոց զունչսն հատեալ առաքէ առ կայսր, և առնու ըզկիւրապաղատութիւնն զկնի Աշոտոյ, որ շինեաց զԴարօնից[2] եկեղեցին յանուն փրկչական պատկերին, զոր եբեր որդի նորա յարևմտից, մասամբ. և 'ի նաւակատիսն երգեաց Օրոս ըստ պատկերին: Եւ զնա փոխէ Սմբատ Բագրատունի, և գնացեալ 'ի Տայս ամրանայ 'ի Թուխարս[3]: Եւ լուեալ զայս Աբդլմէլիք, հրամայէ Մահմետի ելանել 'ի Հայս, որ էր զօրավար նորա. զոր լուեալ Սահակայ 'ի կապանսն՝ գրէ աղաչանս, զի հրամայեսցէ նմա Մահմետ առ ինքն գնալ. որ և հասեալ 'ի Խառան և հիւանդացեալ, գրէ առ նա աղաչանօք թողուլ զոր արարին ընդ նոսա Հայք. զոր ընթերցեալ Մահմետ զգիրն Սահակայ, շիջոյց ըզբարկութիւնն իւր, և ոչ եկն չարութեամբ յաշ-

1. Վարդանակերտ կոչին յեզր Երասխայ եղև յամի 702, և հռչակեցաւ յայժ կոտորածիւ Արաբացւոց, մինչև յառակ և յանէծս կարգել նոցա զօրն զայն:

2. Դարօնից բերդ ըստ ոմանց 'ի Բասեն, հաւանագոյն է լինել 'ի Կոգովիտ, յայժմեանս Պայէզիտ:

3. Թուխարք կամ Թուղարք բերդ, այժմ անծանօթ, թուի 'ի կողմանս այժմեան Շաւշէթի:

խարհս [1]։ Զկնի քսան և եօթն ամի պատրիարգութեան նորա յաջորդէ Նշխա զաթոռն ։ Մեռաւ Եփդըլմէլիք, և առ զտեղին Վլիթ որդի նորա, որ հրամայէ Մահմետի բառնալ զազատսն Հայոց, 'ի Կասմայ ումեմնէ, որ էր հրամատար Նախճաւանի, որ խաբէութեամբ հաւաքեալ զնոսա, զոմանս յեկեղեցին Խրամայ [2], և զկէսսն յեկեղեցին Նախճաւանի, այրէ զնոսա 'ի ճԾԳ թուականին. և զգլխաւոր նախարարսն ըզփայտէ կախեալ չարչարէին. և զկանայս և զորդիս նոցա՝ 'ի գերութիւն վարեցին, ընդ որս և զՍահան՝ որդի Գողթան տեառն, որ և մարտիրոսացաւ ։

Զվլիթ փոխէ Սլիման եղբայր նորա, և զնա Ոււմար՝ որ զսուրբն Սահան նահատակեաց ։ Իսկ զկնի այսորիկ [3] Սմբատ կիւրապաղատն և ընդ նմա նախարարքն գնացեալ յԵգեր, առին 'ի կայսերէն զքաղաքն Փոյթ [4] և բնակեցան անդ. և զկնի յաւարի առեալ զնա, և զսպաս եկեղեցեացն, և եկին 'ի Հայս. և բարկացեալ Յունաց նզովս կարգեցին նոցա գրով, և 'ի զատկի տօնին կարդան ։

ԿԸ. Եայց մեծն Նշխա երթեալ յԵզուանս, զԻերսէս Եակուր, զզաւանողն ժողովոյն Քաղկեդոնի, և զտիկինն որ համախոհ էր նմա, 'ի ձեռն Ոււմարայ աքսորէ անարգանօք [5], և ձեռնադրէ այլ ուղղափառ (!) 'ի տեղի նորա. և ինքն դառնայ 'ի Հայս, և կատարի զկնի չորեքտասան ամի աստիճանին ։

Նա յաջորդէ զնա Յովհաննէս իմաստասէրն մեծ, որ 'ի ներքոյ ագանէր այծեայս ցփսիս և 'ի վերոյ պճնազարդեալ պաճուճէր զանձն, և ոսկի մանր աղացեալ փչէր ընդ ծաղկեալ ալեօք մօրուսն. զոր լուեալ Ոււմարայ կոչէ առ ինքն, և եօթն անգամ արքունական զգեստիւք խիլայէ զնա, և առաքէ 'ի Հայս. որոյ եկեալ ձգնէր 'ի պահս և յաղօթս, և 'ի լուսաւոր վար-

1. Հին Օ. յաւելու. Որմն+ զՈֆբայ ամն ամիրապետ ամէն, որ լոգաա անա Սահակ և Գրիգորի նաման հաւաստաբնան. և հանդերձ ասորք մարմնով նորա աստուծոյ չերէիրա ։

2. Խրամ աւան յեզր Երասխայ, ծանօթ մերձաւոր մենաստանաւ որբոյ Նախավկային ։

3. Հին Օ. Իսկ զկնի այսորիկ Իշխանացն ։

4. Փոյթ է Փոթի, քաղաք առ բերանով Փասիս կամ Րիոն գետոյ ։

5. Արգարև անարգիմաց աքսորանք ։

դապետութիւնս ։ Որ և արար ժողով 'ի Մանազկերտ Հայոց և Ասորւոց, և սրբեաց զհաւատս 'ի մարդադաւան աղանդոյն՝ յԱզգրի խոտորմանէն[1] ։

Յայնմ ժամանակի գրեաց Ումար առ Լեւոն կայսր շատ ինչ բանս, և զայն ևս, Թէ լուեալ է մեր Թէ եօԹանասուն և երկու բաժին են քրիստոնեայք ։ Նա գրեաց պատասխանի Թէ երկոտասան են. Յոյնք, Հոռոմք, Բաբելացիք, Եգիպտացիք, ԵԹէովպացիք, Հնդիկք, Ասորիք, Հայք, Սարակինոսք, Պարսք, Աղուանք, Վիրք ։ Իսկ դուք, ասէ, ընդէ՞ր կոչիք Աբուզի, Սաբրի, Թուռաբի, Կնարի, Մուրջի, Բաալի, անաստուած Ջհդի, որ ուրանան զէութիւնն Աստուծոյ և զյարութիւնն, և զասացեալ քո մարգարէն Հարիրի. և այն երկու. ոմն ասէ զձեզ, և ոմն ոչ է խռովասէր[2]. և զձեր գրեանն գրեցին Ումար և Աբութուռաբ և Սուլիման պարսիկ, զոր Հաջաջ ազգապետն Պարսից շըրջել ջանաց ։ Բայց մերս նոյն է, զի 'ի սուրբ Հոգւոյն է. և 'ի գերութեանն ամենայն գրեանն[3] ոչ կորեան, այլ մնացին առ ցրուեալսն, և յորժամ Եզր գրեաց զբովանդակն, միաբան գտան հնոյն, և է ըստ ալփաբետացն համարոյ, Թէպէտ հինգն կրկնի, ոչ առանց մեծի խորհրդոյ ։

Իսկ սուրբ պատրիարգն Յոհաննէս՝ եհան յաշխարհէս Հայոց զտարածեալ Յոյնն յամենայն տեղիս, հրամանաւ Ումարայ, և զիշխանն դեսպան արձակեալ 'ի Լեւոնէ Մասիդ անուն առ Յոհան, ասելով, Թէ ընդէ՞ր առնես զչար բանդ զայդ. և հիւանդացաւ իշխանն և ածեալ յոլով բժիշկս՝ ոչ կարացին օգնել և մերձեցաւ 'ի մահ. և ձեռն եդեալ սուրբն Յոհան՝ առժամայն ողջացաւ. և տեսեալ զսքանչելիսն հաւատաց 'ի մեր ուղղափառութիւնն, և ոչ ևս դարձաւ 'ի Յոյնս(!). եղև կրօնաւոր և ձգնեցաւ ամս հնգետասան յայրին, որ Հոռոմ-այրն կոչեցաւ անուամբ նորա. և

1. Ոչ է Յովհաննու Իմաստասիրի արարեալ, այլ Տիկորեցւոյ ուրումն Յովհաննու այդպիսի ինչ ։

2. Հին Օ. Եւ այն երկոտասանէ ընձեզ. և ոմն ոչ է խառնասէր ։

3. Նախնիքն հին կտակարանքն առ գերութեամբն Հրէից. զորս ոմանք քսանևեօԹն համարին, այլք քսան և երկու, ըստ այլ և այլ կարծեաց Թուոյ ալփաբետաց Եբրայեցւոց ։

զխաչն որ կայ՝ իշխանն առ ինքն ունէր 'ի գալն 'ի Հոռոմոց, և անդ մնաց[1]: Յոհան զկնի մետասան ամաց կատարի, և յաջորդէ զաթոռն Դաւիթ Կոտայեցի յԱրամօնից գեղջէ, որ լեալ էր միշտ 'ի տան կաթողիկոսարանին յաւուրց անտի Տրդատայ. ուր շինեաց եկեղեցի, անդ առնելով զաւուրս կենաց իւրոց զամս երեքտասան, նեղեալ 'ի . . . Տաճկաց որ 'ի Դուին: Եւ զսա յաջորդէ Տրդատ՝ յՕթմուս գեղջէն, այր լաւ և առաքինի. որ եղև 'ի սադրելոյ աղօթից նորա խաղաղութիւն, զամս քսան և երկու:

ԼԹ. Իսկ զՈւմար փոխէ Իզիտ.., որ զխաչ և զպատկեր եբարձ յերկրէ. և զխոզն սպանանէր, մինչ խեղդեցաւ. և եկաց յետ նորա Հեշմ, որ առաքեաց զեղբայր իւր զՄսլիմ մինչև ցԲիւթանիա եօթն բիւր հեծելով, և միւսանգամ դարձեալ գնայ և ծովասոյզ լինի 'ի զօրութենէ Քրիստոսի խաչին. բայց միայն յիսուն այր մնաց. և կայսր արձակեաց զՄսլիմ, պատմել զփառս Աստուծոյ:

Արձակէ Հեշմ զՄրուան որդի Մահմետի 'ի Հայս, որ եկեալ կացոյց զԱշոտ Բագրատունի կիւրապաղատ, և կամ պատրիկ ասել. և մախայլն նմա Սմբատ և Դաւիթ և Գրիգոր մամիկոնեանք: Եւ գնացեալ Մրուանայ 'ի Վարաչան քաղաքն Հոնաց, և դարձաւ յաղթութեամբ: Զկնի Հեշմայ նստաւ Վլիթ զազրագործ, որ և հրամանաւ կուռայիցն[2] սպանաւ, և եդաւ Սուլիման, և սպան զնա Մրուան, և ինքն տիրեաց. և տային Հայոց զօրուն ամի ամի հարիւր հազար դահեկան խածիթայս[3]: Եւ էառ Մրուան զԴամասկոս. և խայտառակեաց զնոսա, զի կապէր զմարդ 'ի չորս ցիցս և զերեսին կաշին հանել տայր. 'ի վերայ ամբարշտութեան նոցա և սպանութեան և ցանկութեան անառակութեան. յԱստուծոյ ակն ոչ ունէին պատուհասի[4]:

1. Հին Օ. յաւելու. Այսպէս լուաք, և դու ընկալ՝ թէ կամիս՝ ունիլ: Զնոյն ասելի է և վասն Վասիդայ իրացն, ըստ լրոյ լինել, այլայլեալ:

2. Կուռա, Պարսս قرّاء, ընթերցողք մահմետական օրինաց: Սպանեալ է Վալիտ Բ, յամի Տեառն 744:

3. Խածիթա նշանակէ զհառդ զօրականին, այլ ոչ գիտեմ՝ որպէս ստուգաբանի:

4. Հինն. Տաչէր չէրէսնոյս, 'ի վերայ երից և չորից ամբարշտութեանց նոցա,

Օ այսու ժամանակաւ ապստամբութիւն խորհեցան իշխանքն Հայոց . և ոչ կամեցաւ պատրիկն Աշոտ . և կալեալ կուրացուցին զնա մամիկոնեանքն Գրիգոր և Դաւիթ . սա է Նախնի Թագաւորացն Հայոց և Վրաց՝ Աշոտն : Ելանեն ապա երկու Աբդլայքն , որդիք Հեշմայ , և երկու ամ պատերազմին ընդ Մրուանայ կոտորմամբ սրոյ յոյժ յոյժ . որ 'ի միում նուագի անկան 'ի զօրուէն երեք հարիւր հազար , և սպանաւ Մրուան , և տիրեցին Աբդլայքն [1], որ և 'ի մեռելոցն պահանջէին հարկս . և առաքեցին 'ի Հայս զԻզիտ՝ դառն նեղիչ , և ապա զԲաքր , և ապա զՀասան կատաղի . ընդ որ դառնացեալ Մուշեղ Մամիկոնեան՝ ապստամբեալ սպան յԻսմայելէ երկերիւր այր , և ապա չորեք հազար . և ապա խաբեալք 'ի մանողմնէ միջէ , որ տեսիլս և երազս սուտս պատմէր , և ասէր թէ կատարեալ են ժամանակքն Իսմայելի , ժողովեցան հինգ հազարք , որոց գլխաւորքն՝ Մուշեղ և Սմբատ , որք մարտեան ընդ երեսուն հազարաց , և մեռան երեք հազարքն և Մուշեղ և Սմբատ [2]:

Խ . Իսկ զկնի Տրդատայ միւս այլ Տրդատ յաջորդէ զսուրբ աթոռն՝ ամս երիս . ապա Սիոն եպիսկոպոս Աղձնեաց , այր սուրբ և սքանչելի , որ զյորդառատ աղբիւրն ցամաքեալ առ ստորոտով Սիմ կոչեցեալ լերինն գաւառաւն հարեալ բխեցոյց . որ և զկնի ութ ամի կատարի , և առնու զաթոռն տէր Եսայի յԵղիպատրուշոյ [3]. զոր ասեն թէ մայրն աղքատութեամբ էր սնուցեալ , բազօթեայ , մուրով [4], ցրտահար 'ի ձմերանի և արևակէզ յամարանի . զոր ասեն թէ 'ի սաստելն ումանց 'ի դրան հայրապետանոցին , ասաց մայրն . Ո՞չ գիտէք թէ պատրիարգ սնուցանեմ զտղայս իմ . որպէս և եղեն իսկ , նախ եպիսկոպոս և ապա պատրիարգ , 'ի շնորհացն Աստուծոյ . որ զկնի երեքտասան ամի կատարի . և յաջորդէ զաթոռն Ստեփանոս ամս երկու :

որ է տգիտութեան և ընչից ցանկութեան և հեշտ ցանկութեան . և յորդորեն յԱստուածոյ ու տանէին ան պատուհասի :

1 . Ակնարկէ 'ի մեծ պատերազմին՝ որով Աբբասեանք բարձին զՕմմիաանեան խալիֆայս :

2 . Պատերազմիս և կոտորած Հայոց եղև 'ի կողմանս Արձիշու և Բագրևանդայ , յամի Տեառն 775 :

3 . Եղիպատրուշ գեօղ Նիգ գաւառի , այժմ վիճակ Ապարանու :

4 . Հինն . մուրացկանութեամբ :

Եւ ապա Յօբ ամիսս վեց. յորում աւուրս 'ի գեօղն Բագրեւանդ վասն ոսկեղէն զարդուց եկեղեցւոյն զըրպարտեալ յաստիկանէն սպանան քառասուն այր. և առին յոլով գանձ: Իսկ զկնի Յօբայ Աղոմն յաջորդէ զաթոռն, որ էր 'ի Դուանոյ, առաջնորդ սուրբ ուխտին Մաքենոցաց. որոյ երթեալ 'ի գաւառն Շիրակայ 'ի գեօղն Օրեսկ, մտեալ 'ի խուց ձգնի յայժ, ուստի հանեալ տանէին յաթոռն. զոր տեսեալ յայժ նեղեալ 'ի ձգնութեանցն՝ ասէն. Յո՞ երթաս. ասէ. Ածել զերեսս դեղով ընդ այլ հայրապետսն. որպէս և եղեն. զկնի ամի միոյ վախճանեալ՝ նկարի ընդ այլսն: Եւ յաջորդէ զնա Գէորգ յԱրագածայ ոտանէ:

Իսկ յետ Բեգլայի Սահմէտ որդի նորա. և առաքէ առ Լեւոն երկու գրիւ մանանեխ, և զօր զկնի, և չկարաց վնասել:

ԽԱ. Բայց անկելոցն 'ի մեծ պատերազմին[1] մնացորդք՝ էին այսոքիկ. երկու որդիք Սմբատայ որդւոյ Աշոտի, որոց անուանքն՝ Աշոտ և Շապուհ. և Սամուէլի եղբայր մի Շապուհ անուն. իսկ Մուշեղայ՝ երկու որդիք և չորս դստերք. անդրանիկն Շապուհ անուն: Արք անկան յերկիրն Վասպուրական. զորս եսպան զերկոսին Մեհրուժան Արծրունի, որպէս թէ 'ի պատճառս հօրն նոցա եղև աղէտն մեծ. և մի 'ի քերց նոցա ետ զինքն յամուսնութիւն Գահապի ումեմն խոմայելացւոյ՝ թիկունս առնելով զնա: Իսկ որդիքն Սըմբատայ Աշոտ և Շապուհ, հասարակ բաժանեցին ըզհայրենիս իւրեանց. և զի Գահապ յափշտակեալ էր մասն ինչ յԱրշարունեաց, և խորհէր տիրել 'ի ձեռն կնոջն բոլոր աշխարհին, զայն առին յինքեանս Աշոտ և Շապուհ. և ելեալք զկողմամբքն Շիրակայ՝ հարին զզօրսն Իսմայելի՝ որ անդ, և գրաւեցին յինքեանս զՇիրակ և զԱշոցք, և զգաւառն Տայոց: Եւ այսպէս ըստ բախտին ելեալ Աշոտի քաջի՝ շինէ զԿամախ[2], և բնակեցուցանէ 'ի նմա զընտանիս իւր. և ինքն նմանեալ նախնոյն իւրոյ Սմբատայ, որդւոյ Բիւրատայ իշ-

1. Պատերազմին Բագրեւանդայ. տես յէջ 75:

2. Հեղինակդ աստ և այլուր շփոթէ զԱնի Շիրակայ ընդ Անւոյ Դարանաղեաց՝ որ կոչէր և Կամախ:

խանի Սմբատաւանայ, որ է Ներբերդ[1] 'ի Սպեր գաւառի։ ·Քանզի յաւուր միում պաշարեցին զնա թըշնամիքն՝ մինչ կայր յաղօթս, և տեսեալ՝ ոչ խափանեաց զխօսելն ընդ Աստուծոյ մինչև ցկատարումն, և ապա ելեալ ընդդէմ նոցա, կոտրեր յերկուս զգլխաւորն, որում անուն էր Լիպառոն Ապդլա, և հարկանէր իբրև արս հինգ հարիւր։ Եւ սա բողոք կալեալ ազգին Գնունեաց՝[2] թափել զնոսա յԻսմայելացւոցն, որոյ երթեալ հազար արամբ յԱղիովիտ գաւառ, և առ ինքն գումարեալ զամենայն ազգն ախուին իւրեանց, տանի բնակեցուցանէ 'ի Տայս։

Յայնմ ժամանակի աղմկեալ Իսմայելի ընդ միմեանս, հանգչէր երկիրս Հայոց, և սկսան զօրանալ իշխանքն մեր յիւրաքանչիւր իւր տեղիս։ Եւ տայր իշխանն Իսմայելի Աշոտի որդւոյ Ատրներսեհի որդւոյ Վասակայ, որդւոյ Աշոտոյ Հայոց իշխանի՝ զերկիրն Վրաց. որոյ երթեալ հնազանդեցուցանէ ինքեան. և կայսրն առաքէ նմա պատիւ կիւրապաղատութեան։ Իսկ Ջահապն ապստամբեալ յիւրմէ իշխանէն, գայ նստի 'ի Դուին բռնութեամբ, որդւով իւրով Ապդլայիւ։ Եւ իբրև ետես զայն կիւրապաղատն Աշոտ, առաքէր առ կայսրն Լևոն օգնել նմա, և նա չէր պարապ. զի Միքայէլ ամն ջանացեալ սպանանել զնա, և ոչ յաջողեալ գործոյն, այլ իմացեալ կայսերն՝ կամեցաւ սպանանել զնա, և աղաչեցեալ 'ի թագուհւոյն՝ մինչև անցցէ զատկին օր, վասն որոյ եդաւ 'ի բանտի. և էր բանտապահն բարեկամ Միքայելի, որ կաշառեաց զմանկլաւիկքն, որք են սենեկապանք արքայի և մօտակայք. և սոքա յանկարծակի սրովք դիմեցին 'ի վերայ կայսերն յեկեղեցին 'ի ժամ պատարագին, և նորա փախուցեալ առ սեղանն բուռն եհար զնմանէ. իսկ նոքա անողորմ գազանաբար սպանին զնա 'ի տեղւոջն։ Եւ թագաւորեաց Միքայէլն. ելանէր 'ի խնդիր մեծ զօրավարին Սամուելի Մամիկոնենոյ. և նորա աճապարեալ հարիւր և յիսուն արամբք անկանի 'ի Կամախ, և անտի առ Սամուն իշխանն Իսմայելի, որ սպանեալ զեղբայրն

1. Այն է Բաբերդ, կամ Պայբուրդ, յետոյ Խաղտեաց լեալ քաղաք։

2. Գնունիք կոչին Աղկոյ և Բերկրոյ է, 'ի հիւսիսոյ երկրին Վանայ։

Մահմէտ՝ ինքն տիրեր Տաճկաց. և նորա յոյժ պատուեալ զնա, կոտրեաց ռամիկս աւուրն հազար երեքհարիւր և վեց կշիռ արծաթոյ, և զայլ օր ըստ օրէ պարգևս անչափ և անկշիռ։ Բայց կիւրապաղատն Աշոտ տիրեաց 'ի Կղարջաց մինչև 'ի Տփխիս, լեռնակողմամբն համդերձ։ Բայց տունն Ջահապայ զօրացեալ 'ի Դուին, իբրև հինգ հազարաւ կամեցան գնալ 'ի Տարօն, յիշխանութիւնն Աշոտոյ որդւոյ Սմբատայ. իսկ ողջախոհն այն և քաջն հաւատացեալ՝ երկերիւր հեծելօք և երեքհարիւր հետևակօք ել ընդդէմ նոցա չմնացեալ հաւաքման զօրացն, և կոտորեաց 'ի նոցանէ զերեք հազարսն, և հասեալ 'ի բանակս նոցա՝ էառ զամենայն մեծութիւնս նոցա, և դարձան խնդութեամբ փառաւորելով զՔրիստոս։ Եւ Շապուհ եղբայր նորա ապստամբեալ 'ի կողմանս Դունայ, և առեալ աւար բազում դառնայր. և թափեցաւ զօրն 'ի քաղաքէն ըզհետ նորա, և քաղաքացիքն դիմեալք 'ի վերայ Աբդըլմելքի[1], սպանին զնա, և ածին զդուռն քաղաքին. և դարձեալ զօրացն և իմացեալ զեղեալն, չքոտեցան և կորեան 'ի միջոյ։

ԽԲ. Յաւուրսն յայնոսիկ գայր եպիսկոպոս մի Ապիկուռա անուն առ Աշոտ, և ջանայր դարձուցանել զնա... 'Քաղկեդոնի. զոր լուեալ Բուրետ ոմն վարդապետ 'ի Միջագետս, առաքէ զարկաւագն 'Նանա, որոյ եկեալ մարտնչի ընդ Ապիկուռայ, և յաղթէ նմա զօրութեամբ... և հալածէ զնա իշխանն, և հաստատի ևս առաւել 'ի հաւատս սրբոյն Գրիգորի[2]։ Յետ այսորիկ վախճանի Աշոտ 'ի մահիճս, և առնու զիշխանութիւնն Սմբատ որդի նորա ամ մի. և ապա մարտուցեալ ընդ հօրից հազարաց[3], հինգ հարիւր արամբ պատկի 'ի Քրիստոս յիսմայելականայն։ Եւ եղբարք նորա Դաւիթ և Սահակ և Մուշեղ և Բագարատ, առեալ զմայրն իւրեանց չոգան 'ի 'Նփրկերտ, առ Խալաֆն[4] ամիրայ,

1. Աբդըլմելիքդ նոյն ինքն է անշուշտ որդին Ջահապայ, զոր վերագոյն Աբդըլա կոչեաց։

2. Հաւատք Ս. Գրիգորի ոչ են անմիաբան հաւատոյ Քաղկեդոնի։ Բայց զնոս զայսոսիկ յիշատակէ և հայ Թարգմանիչ Նանայի, մեկնըչին Յովհաննու, և զԱպիկուռա ասէ հալածեալ. այլ պատճառք իրացն ոչ են քաջայայտ։

3. Մարտուցեալ ընդ Հօլայ ոստիկանի բռնաւորի։

4. Նախ համառօտեանք Ճանաչին տիրապետք Նփրկերտոյ 'ի Ժ

սիրով ընկալեալք 'ի նմանէ ։ Իսկ Սեւադա ոմն 'ի տանէ Ջահապայ չորիւք հազարօք կռուեալ ընդ Աշոտոյ և ընդ եղբօր իւրում Շապհոյ, մեռաւ Շապուհ 'ի պատերազմին ․ և զկնի երկու ամաց մեռաւ՝ Աշոտ 'ի տան իւրում և առ զիշխանութիւնն Սմբատ որդի նորա, և խնամէր զմնացեալ որբսն, զորդիսն Շապհոյ, բնակեցուցեալ զնոսա յԱնի յապահովս ․ Խաղաղութիւն արարեալ ընդ Սեւադայի, առնու 'ի նմանէ ըզպատիւն հայրենի ասպարապետութեան ․ և ամուսնացեալ ընդ քեռն Գուրթի՝ ծնանի երկու որդիս, զԱշոտ և զՇապուհ, որոց քոյրն տուաւ յամուսնութիւն Բագարատայ որդւոյ Աշոտի կիւրապաղատի ․ և Գուրթ եղբայրն Սմբատայ շինէ զՕձ բերդ [1]։

Յաւուրսն յայնոսիկ այր մի յազգէն Պարսից Բաբ [2] անուն ելեալ 'ի Բաղտատայ, արկանէր զբազում 'ի սուր սուսերի յազգէն Իսմայելի, զբազում գերելով ․ և առէր զինքն անմահ ․ և 'ի միում նուագի սատակէր երեսուն հազար 'ի պատերազմէն իւրում ընդ Իսմայելի ։ Նա եկն մինչև ցԳեղարքունի, և մաշէր սըրով զմեծ և զփոքր ․ և Մամուն էր 'ի կողմանս Յունաց զամս եօթն, և առնոյր զանհպելի ամուրն Լուլուայ [3], և դառնայ 'ի Միջագետս ․ և Մանուիլ երթայր դարձեալ 'ի Յոյնս ։ Մեռաւ Մամուն ․ և առ զիշխանութիւնն Աբուսահակ [4] եղբայր նորա ․ և նա առաքէ զԱֆշինն ամենայն ուժով իւրով 'ի վերայ Բաբանայ ։ Նա Աֆշինն առաքէ 'ի Հայս, և ինքն կոտորէ զզօրսն Բաբանայ ։ Նա Սահլ որդի Սմբատայ ըմբռնէ զԲաբան, և առնու յԱֆշինէն պարգևս հազարից հազար կշիռ արծաթոյ, և այլ ևս հարիւր հազար առնու 'ի նըմանէ, և զԲաբանայ կտրեալ զձեռս և զոտս՝ հանեն զնա 'ի փայտ ։ Նա երթայ Աֆշինն յերկիրն Յունաց,

գարու, որ է Մուփարղին (որպէս գնէ Հին Օ)։ Իսկ որ յառաջ քան զցոււ ամիրայդ Խալաֆ՝ անծանօթ է մեզ։

1 ․ Օձ բերդ Թուի Օձ քաղաք Տարօնոյ ։

2 ․ Անուանին Պապէք մոլորեցուցիչ, ապստամբեալ 'ի խալիֆայէն յամի 817, որ զամս քառն 'ի տագնապի կացոյց զմահմեդական պետութիւն ամիրապետաց, և ձերբակալ եղև 'ի քաջէ հայկազնոյն Սահլայ, յամի 836 ։

3 ․ Լուլուա ամրոց 'ի Կիլիկիա ։

4 ․ Մոգասաէմ կոչի այս խալիֆա ։

և յաղթէ կայսերն. և առնու զԱմուրիա քաղաք[1], և գերեալ զնա դառնայ խաղաղութեամբ։ Յաւուրս յայնոսիկ Աբլհերթ[2] ոմն 'ի տանէն Ջահապայ, եւ չորեւք հազարօք յերկիրն Սիւնեաց, և եւ Բաբգէն ընդդէմ նորա երկերիւրօք, և ջնջեաց զնա իսպառ։

ԽԳ. Իսկ 'ի կարգի պատրիարգացն[3], յաջորդէ ըզ-Գէորգ՝ Յովսէփ, ամս մետասան. և փոխէ զնա Դաւիթ, ամս երեքտասան։ Յորում աւուրս ոստիկան ոմն եւ 'ի հայս՝ Ճաւլ անուն, որում ընդդէմ դարձան և մեռան Սմբատ և Սահակ Սիւնեաց տէրն[4]։ Իսկ զՅովսէփ յաջորդէ Յովհաննէս, այր սուրբ և պարկեշտ, որ զկնի ութ ամի չարախօսեալ զնա առ Բագարատ իշխան Տօրոս լերինն, խորհի ընկենուլ զնա, և պատուհասին 'ի Տեառնէ չարախօսքն։ Եւ ոստիկան ոմն եկեալ Աբուսէթ անուն, կալեալ առաքէ զԲագարատ առ ամիրայն. իսկ ամբոխն Տօրոսի շարժեալք 'ի բարկութիւն սպանին զԱբուսէթ[5]. զոր լուեալ ամիրայն՝ գումարէ զօր բազում 'ի ձեռն ընդոծնոյ իւրոյ Բուղայի[6], տուեալ պատուէր զնախարարս աշխարհիս կապանօք առ նա հասուցանել. որոյ եկեալ կատարէր ըզհրամայեալն։ Քանզի մտեալ 'ի Տարօն ըմբռնէր զորդիսն Բագարատայ գերելոյ՝ զԴաւիթ և զԱշոտ, և զմեծ իշխանն տանն Արծրունեաց զԱշոտ. և զգեղեցկադիտակն Ատոմ հարիւր յիսուն արամբ՝ բռնադատէր ուրանալ զՔրիստոս. որում ոչ հաւանեալք, դառն տանջանօք սրոյ և հրոյ և խաչի պսակեցան 'ի Քրիստոսէ, որ օր քսան և հինգ էր մեհեկի ամսոյ, զոր տօն կարգեաց սուրբ պատրիարգն Յովհաննէս։ Եւ ինքն վախճանեցաւ զկնի քսան և երկու ամի հայրապե-

1. Ամուրիա է Ամուրիոն քաղաք ամուր 'ի կողմանս Գաղատիոյ. բնիկ տեղին ընդ երկբայութեամբ է։

2. Իպն-Խալիթ կոչի յԱստղկոյ, և Վալիթ կամ Ալթ-Փառգս 'ի պատմչէն Աղուանից. դէպքն պատշաճին 842 ամի Տեառն։

3. Շփոթութիւն է 'ի կարգի կաթողիկոսացդ, որ ըստ այլոց ժամանակագրաց այսպէս է. Գէորգ 3 ամ, Յովսէփ, 11. Դաւիթ, 27. Յովհան, 22. Զաքարիա, 22. և այլն։

4. Տես 'ի վերդ, էջ 78 ծ. 3։

5. Սպանեալն 'ի Սասնեցւոց է Եուսուֆ Իպն-Մուհամմէտ, որդին Աբուսեթայ, յամի 851։

6. Արինախանձս այս ոստիկան՝ Թուրք էր ազգաւ, և կոչէր Գապա-Բուղա և Խաչարապի, և Ասադ՝ յորջորջումն 'ի կրսերոյն, որ է քեռորդի նորին։

տութեանն իւրոյ. և առնու զալթուն Զաքարիաս 'ի գեղջէ Չագայ: Իսկ Բուղայի կալեալ զիշխանն Սիսական զՎասակ և զեղբայր նորա զԱշոտ, և զմեծ իշխանն Ատրներսեհ 'ի գաւառէն Խաչենոյ, և զիշխանն Գարդմանայ զԿորիճն, և յՈւտի երթեալ՝ ըմբռնէ զՍտեփաննոս Կոնն, որ 'ի նախնոյն իւրմէ Սեկոյ՝ Սեւորդիք ազգն անուանին, և զիշխանն Աղուանից զԵսայի. զամենեսեան խաղացուցեալ տանի առ ամիրապետն. կոչելով զնի և զսպարապետն Սմբատ խաբէութեամբ, զոր իբրև չոգաւ՝ ընդ կապեալսն խառնէին, և պահանջէին ուրացութիւն. զոր ոչ կալաւ յանձին քաջ խոստովանողն Սմբատ, այլ անդէն 'ի բանտին կատարի 'ի Քրիստոս, և թաղի 'ի գերեզմանի Դանիէլի մարգարէի. և զպատիւ նորա առնու Աշոտ որդի նորա: Ի կայեաց և Ստեփաննոս բազում տանջանօք 'ի նմին տեղւոջ, Կոնն կոչեցեալ: Իսկ Գրիգոր Մամիկոնեան արիաբար պահեալ զհաւատն ելանէ 'ի բանտէն, և գայ մտանէ 'ի գաւառն իւր Բագրեւանդ, և կամէր ամրանալ 'ի գաւառն Գաբեղենից 'ի Գաղանածակսն. որ և զնի եօթն աւուրց մեռանի: Իսկ իմացեալ ոստիկանին Մահմետի որ 'ի Հայս, առաքէ առ Աշոտ որդի Սմբատայ, զի ուր և իցէ ըմբռնեալ առ նա տարցի, և նորա հատեալ զգլուխ մեռելոյն առաքէ առ նա, ասելով թէ Կամեցաւ անցանել առ Յոյնս, և իմ զնի առաքեալ՝ սպանի, և ահա գլուխ նորա: Իսկ խնդաց Մահմէտ, և զգացուցանէ Ջափրի [1], և նորին հրամանաւ պատուէ զԱշոտ, տալով նմա զգաւառն Բագրեւանդ, և արծաթ բիւրս հինգ. և յայնմհետէ բարձաւ 'ի Հայոց յաշխարհէս ազգն Մամիկոնէից:

ԽԴ. Բայց ասելի է աստ զսկիզբն թագաւորացն Հայոց և Վրաց, որք 'ի Բագրատունեաց անտի սերեցան: Քանզի որպէս ասացաւ՝ զնի քաջին Վարդանայ իշխանք Հայոց կացին ըստ դիպելոյ, մինչև 'ի Սմբատ Բագրատունի, և զնի նորա Աշոտ, որդի Վասակայ, զոր կուրացուցին Մամիկոնեանքն. սմա լինին երկու որդիք, Սմբատ՝ նախնի թագաւորացն Հայոց, և

1. Ամիրապետս Ջափր կոչեցեալ Թուի լինել Մոթաւքէլ (յամս 847-861), կամ մի 'ի յաջորդաց նորա՝ որք ոչ ճանաչէին յայլոց Ջափր անուամբ:

Վասն սկիզբն Թագաւորացն Վրաց. որոյ որդին Ատրներսեհ, սորա՝ Աշոտ, սորա՝ Բագարատ, որոյ եղբայրն Գուրամ [1], հետ սմա՝ Դաւիթ որդի Բագարատայ՝ որ սպանաւ 'ի Գուրամայ հօրեղբօրէ իւրմէ, որոյ որդին Ատրներսեհ, սորա որդի Դաւիթ. սմա եղբօրորդի Գուրգէն, որոյ որդին Բագարատ, որ առ իւր կին զդուստր Սենեքերիմայ Թագաւորին Վասպուրականի: Այս է կարգն: Իսկ Հայոց Նախնոյն Սմբատայ որդի Աշոտ Մսակեր, որոյ որդին Սմբատ խոստովանողն, որոյ որդին այս Աշոտ բարեպաշտ, որ անուանեալ իշխանաց իշխան 'ի յԱլեայ որդւոյ Մահէի [2] հրամանաւ ամիրապետին Ջափրայ: Առ սա առաքեաց Փոտ պատրիարգն Կոստանդնուպօլսի յերեքհարիւր ութևտասան Թուականին զՅոհան մետրապօլիտն Նիկիոյ [3], որ ունէր Թուղթ առ Զաքարիա պատասխանի հարցմանն, թէ վասն էր եղև չորրորդ ժողովն: Եւ արարին ժողով 'ի Շիրակաւանն. էր անդ և սարկաւագն Սուրբ Նանա, որ 'ի մահ մերձեցաւ 'ի Ջափրայ վասն հաւատոյ, և տեսլեամբ արհաւրաց արձակեցաւ: Եւ էր գրեալ, թէ զկնի յարութեանն Քրիստոսի՝ երեքհարիւր հնգետասան [4] ամի եղև ժողովն Նիկիոյ երեքհարիւր ութևտասանից. և պատրիարգունքն էին, Սեղբեստրոս՝ Հռոմայ, Աղեքսանդր՝ Կոստանդնուպօլսի, Աղեքսանդր՝ Աղեքսանդրի, Եւստաթէ՝ Անտիոքու, Արիստակէս՝ Հայոց: Եւ յետ եօթանասուն և չորս [5] ամի երկրորդ ժողովն եղև 'ի հինգերորդ ամի Թէոդոսի. և պատրիարգունք, Դամասոս՝ Հռոմայ, Նեքտարիոս՝ Կոստանդնուպօլսի, Տիմոթէոս՝ Աղեքսանդրի, Յոհան՝ Անտիոքու, Ներսէս՝ Հայոց: Զկնի

1. Բ. Օր. Գամր. Վիրք Կուրամ կամ Կուարամ կոչեն:

2. Ալի-իպն-Եահեա Էլ-Էրմանի, ըստ Արաբացւոց, որ 'ի Տարօն առաքեալ էր կուսակալ:

3. ԶՅովհաննէ կամ Վահանայ եպիսկոպոսէ Նիկիոյ, զԹղթոյն Փոտայ և զժողովոյն Շիրակաւանի՝ գտցեն ստուգագոյն խնդրողք ծանօթս 'ի Պատմութեան Հայոց, հատ. Բ. 823:

4. Նիկիոյ ժողովն գումարեցաւ յ' 325 ամի ծննդեան փրկչին. յորում ժամանակի ոչ 'ի Կոստանդնուպօլիս և ոչ 'ի Հայս դեռ ոչ ճանաչիւր պատրիարք:

5. Բ. ժողովն գումարեցաւ յամին 381, որ 56 ամաւ յետոյ է քան զառաջինն. և մերս Ներսէս փոխեալ էր յաստեացս:

քառասուն և եօթն[1] ամի յերկրորդ ամի Թէոդոսի փոքու՝ եղև ժողովն երրորդ, և պատրիարգքն այս էին. Կեղեստինոս՝ Հռոմայ, Կիւրղոս՝ Աղեքսանդրի, Յոհան՝ Անտիոքու, Յոբնաղ՝ Երուսաղէմի. և Թուղթ Սահակայ Հայոց: Զհետ որոյ երևեցաւ Եւտիքէս շամանդրիտ՝[2] Կոստանդնուպօլսի, որ շփոթմամբ մի բը-նութիւն ասէր Քրիստոսի. զոր հալածեաց Փլաբիանոս պատրիարգն, և նա աղաչեաց զներքինապետ ոմն Ոս-կեան կոչեցեալ գրել առ Դիոսկորոս, տալ հրաման ընդունել զնա, զոր և արար. բայց յետոյ զղջացաւ և արար կրկին ժողով յԵփեսոս, քսան և երկու ամօք զկնի Կիւրղին, և անդ աքսորեաց զՓլաբիանոս, և խոտեաց զԹուղթն Լևոնի, և ելոյծ զԴոմնոս Անտիոքու. վասն որոյ գայ գիր մեղադրանաց առ Թէոդոս, և հրաման զի ժողով արարեալ վերստին տեսցեն. և նա կատարեալ 'ի Տէր, արար Մարկիանոս յետ չորեքհարիւր վաթսուն և երկու ամաց յարութեանն Քրիստոսի, զկնի հնգետասան ամի[3] ննջմանն Սահակայ սրբոյ. յորում ամի կատարեցան սուրբ Վարդանանքն, 'ի պատրիարգութեանն Յոհաննու Մանդակունւոյ, որ չէր պարապ գալ 'ի ժողովն: Նա աքսորեաց զԴիոսկորոս 'ի ժողովն. և զՊետրոս յԱնտիոքայ և զԱնատօլիս եղբայր Դիոսկորեայ, նախ 'ի Կիզիկոն, ապա յԵրակլիա, և ապա 'ի Պամփլագոնիա: Մարկիանոս մեռեալ զկնի վեց ամի, առնու Լևոն զԹագն ամս ինն և տասն, յորմէ աքսորեցաւ Տիմոթէոս 'ի Քերսոն: Լևոն փոքր՝ ամս հինգ. Զենոն ամս վեշտասան. սա եբարձ զաղմուկ ժողովոյն Քաղկեդոնի, բայց Հռոմ պահեաց..: Անաստաս, ամս քսան և եօթն, որ եկաց 'ի նմին բարեպաշտութեան[4], և դարձոյց զՏիմոթէոս յԱղեքսանդր: Յուստիանոս՝ ամս ինն. սա դարձեալ նորոգեաց զաղանդ ժողովոյն (!). Յուստիանոս՝ ամս երեսուն և երեք. Յուստինոս՝ ամս ինն: Սա կամեցաւ հաստատել զուղ-

1. Զկնի 50 ամի. այն է 431 ամին:

2. Այսինքն Արքիմանդրիտ, աւագերէց:

3. Անմիաբան են Թուականքդ նշանակեալք. Ս. Սահակ ննջեաց յամի 439. ժողովն Քաղկեդոնի գումարեցաւ յամի 451, յորում և նահատակութիւն Վարդանանց:

4. Բարեպաշտութիւն սորա և ուղղափառութիւն Յուստինոսի ըստ մտաց հեղինակին:

ղախառութիւնն, և դաւով խեղդեցաւ։ Տիբեր՝ ամս եօթն. առ սովաւ եղև ժողով 'ի Կոստանդնուպօլիս [1], և Հայք ոչ ընկալան։ Մօրիկ՝ ամս քսան և երեք. Փոկաս՝ ամս ութ. Հերակլ՝ ամս երեսուն և հինգ. Կոստանդին՝ ամս երեք. Կոստանդին թոռն Հերակլի՝ ամս քսան և ինն. առ որով Մարտինոս արարեալ ժողով 'ի Հռոմ, և երկու կամս և երկու ներգործութիւնս ասաց Քրիստոսի։ Կոստանդին՝ ամս երեքտասան. առ սովաւ Ագաթոն արար ժողով և զՄարտինոսին հաստատեաց։ Յուստինիանոս՝ ամս երկու. Լեոն՝ ամս երեք. Ապսիմարոս՝ ամս եօթն. Յուստինիանոս՝ ամս եօթն. Փիլիպպոս Վարդան՝ ամս երկու. Արտեմիս՝ ամս երկու. Թէոդոս՝ ամս երկու. Լեոն՝ ամս եօթն. Կոստանդին՝ ամս հընգետասան. Լեոնդ՝ ամս հինգ. Նիկեփոր՝ ամս վեց. Ստաւրակոս՝ ամ մի. Միքայէլ՝ ամ մի. Լեոն Հայ՝ ամս տասն. Միքայէլ՝ ամ մի. Թէոփիլոս՝ ամ մի. Միքայէլ՝ ամս երկու. Վասիլ, առ որով Փոտ որ զթուղթըն գրեաց, և ասաց թէ չկայր հակառակութիւն մինչ 'ի վերջին Ներսէս, առ որով եղաւ թուականն Հայոց, զամս հարիւր և չորս. որ նա ապա արար ժողով 'ի Դուին 'ի ձեռն Աբրդիսոյ Ասորւոյ, որ եկեալ էր 'ի Սանոյ. և զՓիլաքսիոսի եպիսկոպոսի Նաբուկ քաղաքի և զՏիմոթէի Կզուն գրեանն թարգմանեցին. և 'ի վեշտասան թուին սպան հեռն Վարդան զՍուրէն մարզպան Պարսից, և ինքն ընտանեօք եկն առ Յուստինիանոս յերեսներորդ ամի թագաւորութեան նորա, և 'ի տօնի խաչավերացին չհաղորդեցաւ ընդ մեզ, ասելով թէ մեր վարդապետքն չհրամայեն մեզ։ Վասն որոյ արար ժողով թագաւորն հարիւր և յիսուն եպիսկոպոսաց, որ ասի հինգերորդ ժողով։ Եւ յորժամ Մուշեղ Հայոց և Յունաց զօրօքն նուաճեաց զԽոսրովու թագաւորութիւնն, և դարձաւ պարգևօք, բան անկաւ վասն հաւատոյ, և արար Մօրիկ ժողով հարիւր և վաթսուն եպիսկոպոսաց. քսան և հինգ եպիսկոպոսքն 'ի Հայոց էր [2]։ Արար և Հերակլ եօթներորդ ժողով.

1. Չորեքերական ժողով, որ է բ Կոստանդնուպօլսոյ, զոր չընկալան համակարծիք հեղինակիդ։

2. Վասն ժողովոյն Մօրկայ՝ զոր Փոտ միայն յիշէ, տես 'ի Պատմ. Հայ. բ. 630։

իսկ Մայրովանեցին Յոհան ոչ ընկալաւ · զոր Թէոդոս Ռշտունի և Ներսէս հալածեցին 'ի Կովկաս, և յետոյ եկն 'ի Հայս և արար զոր ինչ կամեցաւն · և 'ի Յունաց 'ի բաց կացին Հայք նզովիւք չարի, և առաւել յորժամ թարգմանեցին զգրեանն Յուլիանեայ[1] Աղիկառնեցւոյն 'ի ձեռն Սարգսի 'ի ժողովն Մանծկերտոյ[2]:

Այսքիկ 'ի Թղթոյն փոքոյ սակաւ ինչ գրեցաւ · որոյ գրեաց պատասխանի Սահակ Մռուտն[3] կոչեցեալ, որ եպիսկոպոս էր Տայոց 'ի յԱշունքն, և հալածեալ անտի վասն հաւատոց, եկն 'ի Հայս առ Աշոտ:

ԽԵ · Դարձեալ 'ի նոյն կայսերէ Վասլէ եկն ներքինի մի Նիկիտ կոչեցեալ յերեքհարիւր քսան և հինգ թուին, խնդրել 'ի յԱշոտոյ թագ, բերեալ շատ պարգևս · քանզի Վահան ոմն եպիսկոպոս Տարօնոյ ասէր նմա թէ արշակունի իցէ · զի մայրն հայ էր, և կատարիլ թուէր տեսլեանն Սահակայ սրբոյ՝ նստիլ թագաւոր արշակունի · և կամէր պսակիլ 'ի բագրատունեացն: Զոր կատարէ Աշոտ, ընդ նմին առաքէ և տասն հազար արծաթ ընծայ նորաշէն եկեղեցւոյն, որպէս Մամիկոնեանքն՝ հինգ գրիւ արծաթոյ, ասեն գնել զգուան արևմտեան սրբոյն Սոփիայ 'ի Յուստիանոսէ, յիշատակ Հայոց: Նա պատմեաց Նիկիտան թէ գտաք նշխար սրբոյն Գրիգորի Լուսաւորչին 'ի յաղուհացսն 'ի հինգերորդ շաբաթուն շաբաթ օրն, զոր տօն կարգեցին:

Յաւուրս յայսոսիկ տէր Զաքարիա երթայ տեսանել զՅիսէ որդի Շեխայ, և յոյժ մեծարի 'ի նմանէ, տուեալ նմա շատ ինչ պարգևս, և զգօշս՝ բառնալ խաչ 'ի վերայ նորա, և մտանել առաջի նորա միշտ: Զսա յաջորդէ Գէորգ 'ի տանէ պատրիարգարանին: Յորում աւուրս ընդարձակեալ մեծին Աշոտի 'ի Վիրս և Աղուանս, և զԿաւկասայինսն հնազանդեալ, և չէր ինչ պակաս՝ բայց 'ի թագէ · զոր խորհէին իշխանքն Հայոց, և 'ի ձեռն Յիսէի ազդ առնեն ամիրապետին, և նորա զուարթ սրտիւ առաքէ թագս և հանդերձս և երիվարս: Զնոյն և կայսրն Վասիլ առաքէ · և օրհնէ

1 · ՕՕ · Ալիխանեայ:
2 · ՕՕ · Ի ծովն:
3 · Սահակ Մռուտ՝ մականուանեալ Ապլիկուրեչ: Իսկ Աշունք եպիսկոպոսարան 'ի Տայս ոչ է ծանօթ, գուցէ նոյն անուամբ իցէ յայժմեան Թորթում վիճակի:

զԹագն տէր Գէորգ յերեքհարիւր երեսուն և վեց Թուին, և յերկոտասաներորդ ամի հայրապետութեան իւրում, և յութհարիւր ութսուն և ութ ամի ծննդեան Տեառն։ Որ բարիոք կարգաւորեաց զյօրինուածս Թագաւորութեանն ամս հինգ։

Յաւուրս սորա էր Համամ, որ գրեաց մեկնութիւն Առակացն և Ժողովողին, և 'ի Յոբայ՝ զՈ՞վ է դայն Թարգմանեաց, և զօրհնութիւնս որ 'ի գլուխս Սաղմոսացն ասացեալ գիրս մի, և զԱնբիծան գիրս մի։

Այլ Աշոտ արքայ դնէ իշխան Վրաց զքեռորդի իւր, և ինքն կատարի 'ի Քրիստոս եօԹանասուն և մի ամաց. և առնու զԹագն Սմբատ որդի նորա յերեքհարիւր քառասուն և չորս Թուականին, ամս քսան և չորս, կամակցութեամբ Լևոնի որդւոյ Վասլի, որ Թագաւորեաց յետ հօր իւրոյ ամս քսան և վեց, այր առատ 'ի տուրս և ոչ նման Հոռոմի[1], զի նա որդի Հայի էր և յոյժ սիրէր զՀայս։ Իսկ Սմբատ առեալ զպատիւն, շինէ զսուրբ Փրկիչն յԵրազգաւորն, որ է Շիրակաւանն. ուր և օծաւն իսկ. զի նա էր նախագահ Թագաւորացն Բագրատունեաց, մինչդեռ չև էր ընդարձակ շինեալ քաղաքն Անի, որ կոչի Խնամք[2], Թէպէտ ներքին բերդն ընդ այս անուամբ էր, և հին ժամանակաւ շինեալ. ուր Օտա նախարարն ամրացեալ պահէր ըզքոյրն Տրդատայ, և զկուռս և զգանձս Թագաւորացն Արշակունեաց զկնի մահուանն Խոսրովու. և 'ի դառնալ Տրդատայ 'ի Յունաց աշխարհէն, ընդ առաջ նորա ելանեն յԵկեղեաց գաւառն Օտայն և Տաճատ աներ իւր, Աշոցաց տէր. և այս Տաճատս էր որ տեղեկացոյց զԹագաւորն վասն Գրիգորի Թէ որդի է սա Անակայ։ Ասեն Թէ իշխան մի լուծեալ ոտիւք՝ 'ի ներքին բերդն ամրացեալ ոչ հաւանէր գալ 'ի մկրտութիւն, 'ի դառնալն Հայոց 'ի հաւատս. մինչ հնարս իմացեալ սրբոյն Գրիգորի, այլափոխէ զինքն և երԹայ հանդէպ բերդին, և ընդ զառ 'ի վայրն Թաւալգլոր գնայ անկանի 'ի ջուրն, և վաղվաղակի կանգնեալ յոտիցն փառա-

1. Հինն և նորբ յաւելուն, յայտ է որով ոգւով, որ ոչ կայ 'ի լեզու նոցա տառս, և աւելին ինքեանք, որպէս ասէնն։

2. Հինն յաւելու. Կոչի Անի և կամախն այժմ խուլէջեալ բերդ. բայց աւմուրն Անի ներքին բերդն է ամրացեալ։

ւորէ 'ի ձայն բարձր զԱստուած . որպէս թէ գօս գոլով ոտիցն առողջացաւ 'ի ջրոյն զօրութենէ . զոր տեսեալ և լուեալ իշխանին՝ առ ինքն կոչէ, և տեղեկացեալ մկրտի և ողջանայ ոտիւք 'ի նշան հոգևոր բժշկութեանն [1]։

ԽԶ. Իսկ պատուական թագաւորն Սմբատ 'ի Յու-սիփայ ոստիկանէն Տաճկաց խեղդամահ լեալ 'ի Դուին վասն Քրիստոսի, նշաւակի 'ի փայտի . յորմէ և որդի նորա Մուշեղ գեղակուր եղեալ կատարի 'ի Տէր վը-կայութեամբ, և թաղի 'ի Բագարան ընդ հարս իւր։ Այւ զամս եօթն անիշխան լեալ երկիրս, սպառեցաւ սրով և գերութեամբ։

Իսկ Աշոտ որդի Սմբատայ, որ և Երկաթն կոչեցեալ վասն արիական քաջութեանն, անկանի առ Լևոն կայսրն Յունաց, կոչեցեալն Կոստանդին։ Յորում ա-ւուրս կատարեցան 'ի Քրիստոս փառաւոր և մեծ իշ-խանքն Դաւիթ և Գուրգէն 'ի տանէն Գնունեաց 'ի Դուին քաղաքի, յանօրինէն Յուսփայ, վկայական ա-րեամբ պսակեալ. որոց պատուի օր կատարմանն 'ի մա-րերի ամսեան քսան. և սուրբն Սահակ եպիսկոպոս երկերիւր ոգւով և եօթն եկեղեցականօք կատարեցաւ 'ի Բիւրական, յահկի 'ի տասն. և երկու Կիրակոսքն 'ի նոյն ամսեան յեօթնևտասն. որոց տօն գերապայծառ կարգեաց սուրբ պատրիարգն Յովհաննէս, որ ետես ա-չօք զխաւարաբեր ժամանակն, և գրեաց 'ի յիշատակ ապագայից դարուց. և տօն սուրբ թագաւորին Սմբա-տայ։ Իսկ Աշոտ պսակեալ 'ի Լևոնէ դառնայ 'ի Հայս յերեքհարիւր եօթանասուն թուին. և գտանէ թա-գաւորեալ զհօմանունն իւր Աշոտ որդի հօրեղբօր իւ-րոյ. զոր հնազանդեաց 'ի ներքոյ իւր. որպէս և զԳա-գիկ թագաւոր տանն Արծրունեաց, և զՄովսէս [2] բռնացեալն յԱղուանս, զորոյ խաւարեցոյց զաչսն. և մեծազօր գտեալ քան զնոսա, և քան զթագաւորն Սրոց Ներսեհ, կոչեցաւ 'ի վերայ նոցա Շահնշահ, զամս ութ. կատարի, և առնու զթագն Աբաս եղբայր նորա։ Որ զկնի մահուան հօրն գնացեալ 'ի Սիրս, և փեսայացեալ նոցին՝ դառնայ այսրէն և տիրէ ամենայն

1. Ոչ պատշաճին Լուսաւորչի այդպիսի հնարք։

2. Մովսէս իշխան էր մասին միոյ Ուտիոյ, որ յԱղուանից տի-րապետելոյ կոչեցաւ Աղուանք։

հայրենեաց իւրոց ամս քսան և ինն, յերեքհարիւր եօթանասուն և մի թուին։ Ի սորա աւուրս յոյժ բազմութիւնք կրօնաւորաց հալածեալք 'ի Հոռոմոց աշխարհէն սակս ուղղափառութեան (!), եկեալ յաշխարհս մեր շինեցին յոլով վանորայս[1]։ Նախ զԿամրրջաձոր, և ապա զՀոռոմոսին կոչեցեալ վանք, որպէս թէ 'ի Հոռոմոց կողմանցն եկին, և զԴպրավանքն. 'ի նոյնանէ ասեն շինեալ զՍանահնին սուրբ Աստուածածինն։ Շինեաց և թագաւորն Աբաս ըղկաթուղիկէն 'ի Կարս գեղեցիկ յօրինուածով։ Յորում աւուրս եւ իշխանն Սարմատացւոց, որ յայնկոյս Կովկասայ, Բեր անուն[2], բազում զօրօք առ Կուր գետով. և լուեալ եթէ թագաւորն Հայոց պարապով շինէ եկեղեցի, յղեաց առ նա և ասէ. Կրտեա դու կանխագոյն, զի եկեալ եմ յօրհնել զեկեղեցիդ ըստ իմում օրինացս՝ Բաղկեդոնի ժողովոյն սահմանադրութեամբ. իսկ նորա ընդդէմ նորա ելեալ Հայաստանեայցս զօրօք, որոց ճարակ տայ առ հասարակ զզօրսն, և զԲերն 'ի բուռն ածեալ բերէ զնա կենդանի 'ի Կարս, և միանգամ տայ տեսանել զեկեղեցին, և ապա բրեալ զտեսանելիսն, վաճառէ զնա ազգին իւրում, գիր երդման առեալ, զի յաւիտեան այլ ոչ ևս ելցեն 'ի Հայս։

ԽԷ. Իսկ զկնի կայսերն Յունաց Լևոնի առնու ըղթագն Աղեքսանդր ամ մի. և յետ նորա Ռոմանոս՝ ամս քսան և ինն։ ՅԱբասայ և 'ի սորա աւուրս առաւ Մելտենի 'ի Տաճկաց[3] յերեքհարիւր ութսուն և երեք թուին, և յերեքհարիւր ութսուն և ութ՝ Համդուն[4] 'ի Կոզմնիա եմուտ զօրօք և անդրէն դարձաւ։ Նաև ապա թագաւորեաց Կոստանդին[5] որդի Լևոնի յերեք-

1. Վասն վանորայիցդ շինութեան տես 'ի Պատմ. Հայ. Բ. 823։

2. Բեր՝ Ափխազաց թագաւոր է ըստ այլոց պատմչաց և ոչ Սարմատացւոց. սուղ ինչ զկնի Թեոդաս կոչէ զնա հեղինակդ ըստ այլոց պատմչի. և արդարև յիշատակի Թեոդաս (Թէոդոս) Կոյր կոչեցեալ թագաւոր Ափխազաց, թէ և փոքր մի կրսեր ժամանակաւ։

3. Յոյնք առին զՄելտենի 'ի Տաճկաց, և կործանեցին, վասն յապստամբութեն մտաբերելոյ քաղաքացեաց։

4. Համտուն կամ Համտանեան տոհմ արաբացի, յելս Թ դարու ձեռն արկ 'ի վերայ Միջագետաց, և հաստատեաց տիրագլուխ աթոռս 'ի Մօսլ, 'ի Մերտին, 'ի Նփրկերտ, 'ի Բերիա։

5. Կոստանդին Պորփիւռոժէն է թագաւորելոյդ երկրորդ անգամ յետ մահուան Ռոմանոսի։

հարիւր իննսուն և երկու թուին, ամս վեշտասան. որ և 'ի վեցերորդ ամին էառ զՄարաշ 'ի Տաճկաց, յերեքհարիւր իննսուն և ութ թուին։ Օսմանէ առեն 'ի միումաւուր հինգ առիւծ սպանեալ։ Սա ետ արկանել 'ի յԱկլիս գետ յոլով բեռինս Թուրքաց, և փախոյց զզօրսն Խամշելի, և կոչեցաւ Թուրքաժողով։

Իսկ 'ի սուրբ աթոռն զկնի տէր Յովհաննիսի եկաց տէր Ստեփաննոս ամ մի։ Տէր Թէոդորոս ամս մետասան. և յետ նորա տէր Եղիսէ եղբայր նորին՝ ամս հինգ. և զկնի նորա տէր Անանիա Մոկացի՝ ամս քըսան և երկու։ Սա բազում աշխատութեամբ հնազանդեաց զՍիւնիք, որ Աղուանիւք Թեակոնէին[1], և ձեռնադրեաց արքեպիսկոպոս զկնի Յակոբայ ապստամբի[2], (զտէր Վահան 'ի Բաղաց, որդի Ջուանշերի իշխանին, որ չինեաց զամենապայծառ ուխտն Յովհաննու վանս, առ ստորոտս անմատոյց դղեկին Բաղաց). այլ և զԱղուանս ածեալ 'ի հաւան չձեռնադրել իւրեանց կաթուղիկոս առանց աթոռոյ սրբոյն Գրիգորի։ Զկնի սորա էառ զաթոռն Վահան 'ի Բաղաց, ամ մի. որ և ապա կարծիս առեալ, եթէ դաշնագիր է Վրաց, և պատկերս ետ ածել[3], վասն որոյ փոխեն զնա, և դնեն յաթոռն զտէր Ստեփաննոս ազգական սրբոյն Մաշտոցի, որ 'ի Սեւան, ամս երկու։

ԽԲ. Իսկ 'ի չորեքհարիւր թուին փոխի սուրբ Թագաւորն Աբաս. և առնու զթագն Աշոտ որդի նորա, Ողորմածն կոչեցեալ. որ բազում ուրկանոցս շինեաց, և առատ ռոճկօք դարմանէր զնոսա, յոլով անգամ և անձամբ սպասաւորելով նոցա, և զթարախածոր մնացորդս բաժակին ախորժանօք ըմպէր, կոչելով անուանս գոդեացն իշխանս և կիւրապաղատս, ըստ Յակոբայ՝ եթէ մեծատունք են հաւատովք։ Սա զփոքր պարիսպ քաղաքին Անւոյ[4] շինեաց. և զամենայն բրգունսն եկեղեցիս յօրինեաց, 'ի չորեքհարիւր երեքտասան թը-

1. Մետրապօլիտք Սիւնեաց հատուածեալ առ վայր մի 'ի կաթողիկոսաց Հայոց յԱղուանից առնուին զձեռնադրութիւն։

2. Փակագծեալ հատուածդ չըկայ 'ի Բ. Օ։

3. Ոչ առ պատկերան բերի հակառակութիւնդ, այլ առ 'ի Վրաց անուն բերումն։

4. Փոքր պարիսպն Անւոյ յայտ է թէ ներքինն է բարձրագոյն և մեծակառոյց, յորոյ աշտարակս թըւի մատրունս գործեալ, և այսպէս աճէ թիւ եկեղեցեաց Անւոյ։

ւին. և բարեպարիշտ կողն իւր [1], Խոսրովանոյշ, շինէ զփառազարդ սուրբ ուխտսն զՍանահին և զՀաղբատ։ Հանգեաւ 'ի Քրիստոս 'ի չորեքհարիւր քսան և հինգ թուին, թողլով երիս որդիս, զՍմբատ, զԳագիկ և զԳուրգէն. որ և 'ի նմին աւուր առնու զթագն երէց որդին Սմբատ, որ Տիեզերակալ կոչեցաւ. սա զՄեծանիստ պարիսպն Անւոյ շինեաց, և զկաթուղիկէն հիմնարկէ. և կրտսեր եղբայրն ժառանգէ զՏաշիր Սևորդւոյքն Ձորոյգետոյն. և զԿայեն և զԿայծոն, զԽորխոռունիք` որ 'ի Խոռայ շինեցաւ, որ է Խոշոռնի և Խոռակերտ, և զՌաղունիք` որ է Ռաղկերտ 'ի գաւառն Տաշրայ. և այլ [2] բերդք անուանիք եհաս Գուրգենայ, զոր Վիրք Սոմխեթ կոչեն։ Նա 'ի նմանէ սերեցան թագաւորքն Դաւիթ, Աբաս և Կիւրիկէ. յորոց կանայքն կրօնաւորք` Մարիամ, և Ռուզուքան։ Նա Գագիկ սակաւ ինչ կեցեալ ընդ եղբօրն, հալածական լինի վասն կարծեաց ինչ դրժանաց։ Իսկ Սմբատ հասեալ 'ի չորեքհարիւր քսան և ութ թիւն` կատարի. և նոյնժամայն կոչեն զհալածեալն Գագիկ, և տան նմա զթագն և ածեն նմա 'ի կնութիւն զԿատրամիտէ, դուստր Սահակայ Սիւնեաց թագաւորի, որ վճարեաց աւարտմամբ զկաթուղիկէն, 'ի հրեշտակէ Աստուծոյ յորդորեալ, որ խոստանայր նմա կալ 'ի ձեռնտուութիւն գործոյն, և մնալ 'ի նմին տաճարի, մինչև զՔրիստոս եկեալ տեսցեն արարածք։

Իսկ զսուրբ աթոռն յաջորդէ տէր Խաչիկ ազգային տեառն Աննանիայի, ամս իննևտասն. և զնա փոխէ տէր Սարգիս` ամս քսան և չորս։ Սա շինեաց զվեկայարան սրբոց Հռիփսիմեանցն, առընթեր կաթուղիկէին Անւոյ, և անդ փոխեաց զնշխարս նոցա բերեալ մեծաւ հանդիսիւ, և կարգեաց զօրն տօն մեծ։

ԽԹ. Ա.ՅԼ զկնի Կոստանդեայ կայսեր [3], առնու զթա-

1. Իմա կողակիցն։

2. Այս ամենայն աւանք և վիճակք 'ի հարաւային արևելեան մասին Գուգարաց աշխարհի են, զոր Վիրք Սոմխեթ կոչեն, որպէս և զՀայս Սօմխս, իբրու հարաւայինս։ — Խոռակերտն կամ Խորխոռունիք, և Ռաղկերտ կամ Ռաղունիք` յայտ առնեն որդւոյ և թոռին Հայկայ յետ շինութեանցն 'ի Տուրուբերան աշխարհի` եկեալ և հաստատեալ այսր զբնակութիւն իւրեանց։

3. Զկարգ կայսերացդ սկսանի 'ի Դ Կոստանդեայ, որ է Կոպրոնիմոս, թագաւորեալ յամն 741-

դին Լեւոն, և ապա Կոստանդին և Իռինեա մայր իւր, որ խաւարեցոյց զորդին, և ինքն տիրեաց ամս հինգ մեծի աթոռոյն։ Յորում աւուրս կատարեցան 'ի Քրիստոս Սահակ և Յովսէփ, տաճիկք ազգաւ, յա-րացի հնգետասան։ Եւ զկնի Միքայէլն, և ապա Լե-ւոն, և յետ նորա Միքայէլ, ապա Թէոփիլոս. և ըզ-կնի Միքայէլ, ապա Վասիլ, և զկնի Լեւոն, ապա Ա-լէքս. և զկնի Ռոմանոս, որ հալածեաց զուղղափառ (!) վանորայսն յարեւելից աշխարհս. կամեցաւ ձեռնարկել և 'ի վանորեայս Սեւ լերինն, յերթալն իւրում ծանր զօրու 'ի կողմանս Հալպայ, որ և 'ի բարկութենէն Տեառն հետիոտս փախեաւ միայն մազապուր։ Յետ նորա Կոստանդին որդի Լեւոնի. ապա Ռոմանոս, և ա-պա Նիկիփոռ, ապա Կիւռ-Ջան, և ապա Վասիլն, ամս յիսուն և երկու։

Ծ. Իսկ յաղագս Վրաց թագաւորացն սկզբանց, որ կայ 'ի գիրս նոցա, եթէ Թորգոմ ութ որդւովք եկն յԱյրարատ գաւառ զկնի ջրոյն մեծի. և երեք յոր-դւոց նորա նախագահք եղեն՝ Հայոս և Քարթլոս և Կովկասոսն, և տիրեցին աշխարհաց, և իւրեանց ա-նուամբն կոչեցին Հայս և Քարթլ և Կովկաս. և տիրեցին 'ի ծովէն Պոնտոսի մինչև ցծովն Կասպից՝ մինչև ցՄիհրան, և ցՓարեակ թոռն իւր, որ էառ կին 'ի Պարթևաց՝ Սահակդուխտ անուն 'ի Պարտաւայ. որ և ամուլ գոլով հաւատաց 'ի Քրիստոս, և ետ նմա զաւակ՝ զՎախտանգ, որ և Գուրգասարն կոչեցաւ, որ է Գայլագլուխ 'ի Պարսից բառն [1]. զի ունէր 'ի վե-րայ սաղաւարտին պատկեր գայլոյ յառաջի կոյսն, և յե-տի կոյսն՝ առիւծու։ Սա էառ իւր 'ի կնութիւն զդուստր Լեւոնի կայսեր. և 'ի սմանէ սերեցան թագաւորք մին-չև ցԹէոդոս, զոր կուրացոյց Աբաս. յետ որոյ թա-

775, և հաստուցանէ ցՎասիլ Բ որ թագաւորեաց ցամն 1028. բայց մոռանայ յետ Իռինեայ զՆիկե-փոռ, և յետ Աղեքսի զԿոստանդին Պորփիւրոժէն։

1. Վախտանգ հռչակագոյն 'ի թագաւորս Վրաց և դիւցազն նո-ցին, զորմէ բազում ինչ առասպե-լախառն պատմեն. իսկ ժամանա-կակից նորին մերս Ղազար պատ-միչ արդարակորով նշաւակէ իբրև նենգաւոր և դրժող ուխտին ընդ Վահանայ Մամիկոնենոյ։ Կոչի և 'ի Վրաց Գուրգասալան կամ լաւ ես Գուրգասալան, որ ըստ Պարսից և Թուրքաց Գայլագլուխ նշանակէ. իսկ Գուրգասար արդարև գայլա-գլուխ է։

գաւորեաց Բագարատ[1], որդի Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ Ողորմածին, 'ի վերայ Ափխազաց. այս ըստ Մխիթարայ երիցու ասին[2]:

ԾԱ. Իսկ Վասպուրականի թագաւորքն՝ յազգէն Սենեքերիմայ, Գագիկ որդի Դերենկանն, սա շինեաց զԱխթամար. ապա Դերենիկ որդի նորա, և զկնի եղբայր նորա Աբուսահլ, և յետ նորա Շահ՛նշահ՝ որդի նորա, և զկնի եղբայր իւր Գուրգէն. և ապա եղբայր իւր Սենեքերիմ, որ նեղեալ 'ի Պարսից՝ ետ զերկիր իւր 'ի Վասիլն, և չոգաւ առ նա չորս որդւովք, որոց անուանքն՝ Դաւիթ և Աբուսահլ, Ատոմ և Կոստանդին, և եղբօրորդիքն՝ Դերենիկ, Գագիկ և Աշոտ. և առնու փոխան զՍեւաստ և զԼառիս[3], և յոլով պռաստինս[4]: Որ զկնի սպան Դաւիթ զՓոկաս ապըստամբ, և առ զրով զԽուատանէան[5]:

ԾԲ. Ի չորեքհարիւր քառասուն և չորս թուին մեռաւ Գագիկ, տուեալ զթագաւորութիւնն երից որդւոց իւրոց, Յովհաննիսի, Աբասայ և Աշոտոյ: Օ թագն տայ Յովհաննիսի, և զԱնի և զՇիրակ, զուրբ Գրիգոր Զորոփն Աշոցաց, զԱնբերդ և զգաշտն Այրարատեան, զԿայեան և զԿայծոն և զՏաւուշ գաւառն Սեւորդեաց. և զայլ մնացեալսն՝ Աշոտի և Աբասայ բաժանէ: Եւ 'ի վիճել նոցա զկնի այնորիկ, գայ թագաւորն Ափխազաց Գորգի, որդի Բագարատայ, որդւոյ Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ Ողորմածին, և առնէ իրաւունս 'ի մէջ նոցա և գնայ: Եւ զի ոմանք յիշխանացն անհնազանդ լինէին, գնայ կրտսերն Աշոտ առ կայսրն Վասիլ, և առեալ 'ի նմանէ զօր, գայ և հնազանդէ զամենեսեան, և նստի թագաւոր Դրուց աշխարհին[6]. և Աբաս 'ի Կարս:

1. Բ. Օ. Աբաս:

2. Մխիթար Երէցդ՝ Անեցին է, պատմիչ ԺԲ դարու, որոյ գրուած ընդ կորուսեալսն համարի արդ:

3. Լարիս, զոր յիշէն և Բիւզանդացիք, 'ի կողմանս Սեբաստիոյ Ճանաչի, այլ ընիկ տեղին անյայտ:

4. Պռաստինս՝ զոր այլուր գեօղ թարգմանէ հեղինակս, է յունականն Բրոաստին προάστειον, որ և նշանակէ արուարձան կամ սահմանավայրք քաղաքի:

5. Խուատանէք՝ ըստ Չամչեան հօր ամրոց է 'ի հարաւոյ արեւմտից Սեբաստիոյ:

6. Դրուց աշխարհ, բաժինն Աշոտոյ, թուի որ արտաքոյ Շիրակայ և սահմանացն Անւոյ տեղեք:

Յայսմ ժամանակի վախճանեցաւ կիւրապաղատն Դաւիթ[1], անժառանգ գոլով. և տայ անդարձագրով զհայրենիսն իւր 'ի Վասիլն, զՈւխթիսն և զԼամ-րուան, և զքաղաքն Ապահունեաց՝ զՄանծկերտ, և զամենայն ինչս։ Օր լուեալ Վասլի կայսեր, գայ բանակի 'ի դաշտն Կարնոյ. զայս իմացեալ Յովաննիսի երկեաւ, և առաքէ առ նա զՊետրոս պատրիարգն պատարագօք, զոր տէր Սարգիս 'ի կենդանութեանն իւրում օծեալ էր իւրով ձեռօք 'ի յԱնի, մեծ հանդիսիւ։ Այլ և նեղէր զՅովաննէս՝ արքայն Վրաց. վասն որոյ պատրիարգին պատուիրէ տալ ձեռագրով զԱնի զկնի մահուան իւրոյ 'ի Հոռոմս, որպէս և կիւրապաղատն, եթէ պահէ զնա 'ի նեղչաց իւրոց. զոր խնդութեամբ լուաւ Վասիլն։ Եւ կոչէ առ ինքն զԳէորգի Թագաւորն Վըրաց, և ոչ եկն 'ի կոչ նորա. վասն որոյ երթայ զայրացմամբ, և աւերէ զնորա գաւառս երկոտասան, և գառնայ յերկիրն Խաղտեաց, անդ անցուցեալ զձմեռն։ Կոչէ առ ինքն զտէր Պետրոս օրհնել ընդ նմա ջուր 'ի տօնի Աստուածայայտնութեանն. որ եղև հրաշալի նըշան, լոյս փայլատակեալ 'ի յաջոյ հայրապետին և յօծմանէ սուրբ իւղոյն 'ի հիացումն տեսողացն. և յոյժ փովեցաւ հաւատն[2] Հայոց։ Եւ դառնայ Վասիլն 'ի Կոստանդնուպոլիս և վախճանի 'ի չորեքհարիւր եօթանասուն և երեք թուին. և առնու զԹագն Կոստանդին ամս երեք. և զկնի Ռոմանոս փեսայ նորին, ամս հինգ. զոր հրամանաւ կնոջն խեղդեցին 'ի բաղանիսն, և եդին զՄիքայէլ ամս եօթն։

ԾԴ. Իսկ որ զԱմիրալամումինեացն կարգն բերեալ հասուցաք 'ի Ջափր և Թողաք. քանզի սկսաւ իշխանութիւն նոցա 'ի վաթսուն թուին, և դադարեալ շփոթեցան յերեքհարիւր յիսուն թուին. և աստ և անդ բռնակալեալ տկարացան 'ի զօրութենէ, և զօրացան ազգն Թուրքաց այսպիսի պատճառաւ։ Էր 'ի Խորասան ոմն յԻսմայելացւոցն Մահմուտ անուն, որ անցեալ ընդ Ջահան գետ յերկիրն Թետալացւոց[3], ա-

1. Դաւիթ ունէր զկողմանս Տայոց և Սեւխաց և մասն 'ի միջին աշխարհէն Հայոց։

2. Նոր Օր. հայրապետն։

3. Տես յէջ 30 Ծան. 1։

Ծէ բաղում գերիս 'ի Խորասան՝ որ աւի արեւելք[1], ընկեցուցանէ առանձինն, և աճեալ նոցա և բազմացեալ՝ գնեն զամն ամիրա, և ապա տան նմա Թագ՝ 'ի մեռանելն Մահմուտին. նա յաջողակ եղեալ տիրեաց Պարսից և նստաւ սուլտան, որում անուն էր Դօղլա-բաք[2]. Եւ ըստ Վահրամայ, որդւոյ Տիգրանայ[3], վիպագրի. իսկ պատուական երէցն Մխիթար Անեցին, որոյ յիշատակն 'ի գիրն կենաց, այսպէս ասէ. Յոլով աշխատ եղէ գտանել զորպէսն սուլտանացն՝ որ 'ի Թուրքաց, և գտի շնորհօքն Աստուծոյ այսպէս. Մահմուտն՝ զոր ասացաք, Սեբէթանայ[4] որդի, յանհշանից մեծացեալ՝ որպէս Եբրայեցին Յասանեան, և եբարձ զիշխանութիւնն Մահմետի ազգին 'ի Մահմատ Մուհթադէ, երեսներորդ երրորդ 'ի Մահմետայ, յերկերիւր քառասուն և վեցերորդ[5] ամի իշխանութեան նոցա. և զօրացաւ նա 'ի Բահլ քաղաքի 'ի յերկրին Քուշանաց, և ել համբաւ զնմանէ ուժգին, մինչև խալիֆայն երկուցեալ՝ առաքէ նմա ընծայս և ալամ, և լաղապ՝ Եմինադլ[6], և սուլտան կոչէ զնա: Նա առեալ նորա զպատիւն ևս մեծանայ. և ելանէ 'ի Հնդիկս՝ 'ի համբաւ կռոցն Սաւթանայ[7], զոր կործանէ, և առեալ աւար դառնայ, զՄահմատ որդի իւր Թողլով անդէն, և գայ 'ի Գուրգան[8]. և առնու 'ի տեառնէն Գուրգանայ չորեքհարիւր հազար դահեկան, և ոսկեհս տամբ միով, 'ի չորեքհարիւր և քսան Թուին իւրեանց. և անցանէ գայ յ'Ռաէ[9]. և տէրն Ռէյոյ Մաջա-դաւլա Ռստոմ,

1. Քանզի Խօր արեգակն լսի 'ի պարսիկ լեզու:

2. Դօղլաբաք, այսինքն Տօղրալ-բէկ, որ է Տուղրիլ ըստ այլոց:

3. Անծանօթ պատմիչ, զոր Մխիթար Այրիվանեցի՝ ոչ որդի Տիգրանայ՝ այլ Տիգրանակերտցի կոչէ:

4. Սէպէքթէկին կամ Սապըգէտին:

5. Երկերիւր քառասուն և վեց ամ իշխանութեան Արաբացւոց է 860 ամ փրկչին, բայց Մահմուտ իբրև դարու և կիսով յետոյ հաստատեաց զիշխանութիւնն, յամի 997:

6. Ալամ, Ալէմ علم, վառ, դրօշ իշխանութեան: Լաղապ, Լէգապ لقاب, կոչումն պատուոյ.— Էմին-ադիլ امين عادل, ստոյգ արդարութեան, կամ արդար և հաւատարիմ:

7. Սաւթան կուռք Հնդկաց անծանօթ է մեզ, թէ չիցէ Սաղալի չաստուած փորիչ կառաց Խնորայ:

8. Գուրգան կամ Ճուրճան, ըստ մեզ Վրկան, արեւելեան հարաւակողմն Կասպից ծովու:

9. Ռէ կամ Հրէ, այժմ Ռայ, է հինն Ռագաւ Մարաց, մերձ 'ի Դեհրան:

երեք աւուրբ յառաջ առեալ զԴեւլմիկան՝[1] եւ ընդ առաջ նորա, և գայ 'ի Սրաւ[2] անհնարին ուժով, և ընդ նմա երկերիւր և յիսուն փիղ: Եւ տեսեալ զնա, ասէ. Ո՛ ահ, նամազ կարդացեալ ես. և նա ասէ. Այո. և դարձեալ ասաց. Ճատրկուց խաղացեալ ես.— Այո: Ապա ասէ. Թագաւոր 'ի Թագաւորի տուն մտեալ թէ ոչ. և նա լռեաց: Եւ առժամայն կապեալ զնա յղարկէ 'ի Խորասան, և զամենայն ինչս նորա առեալ՝ տիրեալ Սնէոյ, և գայ 'ի Տապարաստան[3] և 'ի Տառաբի[4], և 'ի Սարի[5]. տայ 'ի ձեռս Մասխուտի որդւոյ իւրոյ զՍնէ, և զՂազուին[6] և զՔուհաստան[7] բովանդակ. Թողլով զնա յՍնէ, գայ 'ի Սրաւ և առնու հարիւր հազար դենարի, և անցանէ 'ի Նաշաւուրն[8] 'ի չորեքհարիւր քսան և մի թուին իւրեանց: Իսկ Մասխուտն առնու զՀամիան և զՍպահան, և դառնայ յՍնէ. և իսկոյն լսէ թէ սպանին զշահնայսն[9] քո յՍպահան: Եւ դարձեալ անդրէն սատակէ չորս հազար այր և դառնայ յՍնէ. և նոյնժամայն բերեն նմա զգոյժ մահու հօրն, և թէ սուլտանացաւ Մահմատ եղբայր քո. և յարուցեալ գնայ, և կալեալ զեղբայրն կուրացուցանէ, և առնու զիշխանութիւնն և զաթոռն: Եւ քանզի հայր նորա 'ի գնալն յօգնականութիւն ազգին՝ որոց գլխաւորն կոչիւր Խտրղան-Պօղրղան, 'ի Ճանապարհին պատահէ բանակաց ինչ բազմութեան Թուրքաց, և 'ի դառնալն նոյն Ճանապարհաւ՝ մեծաւ յաղթութեամբ առեալ զամիրայն նոցա զՄփաղու բերէ 'ի Խորասան և դնէ 'ի կապանս. և ազգ նորա եկեալ խնդրեցին 'ի

1. Դեւլմիկք, ժողովուրդ Տիլէմ նահանգի կամ Դելմաստանի, 'ի հարաւոյ Կազբից ծովու, 'ի սահմանս բարձու Տեմավէնտ լերին:

2. Սրաւ, Սէրա կամ Սէր-Աղ, քաղաք Ատրպատականի:

3. Տապարիստան, Դեպէրիստան, լեռնավայր նահանգ 'ի հարաւային եզերս Կասպից ծովու:

4. Տառաբի, Թուի Տարապ կամ Տարապկերտ, վիճակ և քաղաք Ֆարսիստանայ:

5. Սարի գլխաւոր քաղաք և վիճակ Դեպէրիստանայ:

6. Ղազուին կամ Խազուին, Գազպին, երևելի քաղաք 'ի սահմանագլուխս Պարսից աշխարհի:

7. Քուհիստան, որ է Լեռնաստան, մի 'ի մեծամեծ նահանգաց տէրութեանն Պարսից, ընդ մէջ Իրաքայ և Խորասանայ:

8. Այս է Նիւշապուհ կամ Նիշափուր, քաղաք Խորասանի մերձ յԻրաք:

9. Շահնէ ըստ պարսիկ լեզուի վերակացու կամ հրամանատար:

հօրէն, և ապա յորդւոյն, և ոչ ետուն ։ Իսկ նոցա բարկացեալ անցին ընդ Ջահան ամենայն բանակօքն իւրեանց, և զանձինս 'ի մահ եդեալ կռուեցան, և յաղթեցին և առին զԱլջաւուրն և կոտորեցին զզօրս սուլտանին 'ի Դաստանդանն [1] մօտ 'ի Մրին [2]. և փախստական եղեալ սուլտանն՝ գնայ 'ի Պալխն և անտի 'ի Հնդիկս ։ Եւ 'ի ճանապարհին սպանաւ սուլտանն, և զկոյր եղբայր նորա թագաւորեցուցին 'ի Պալուխն, որոյ յերկարեալ 'ի նմին ծնանի որդիս. և մի 'ի միջէ առեալ ունին զՊալուխն մինչև ցայսօր ։

Իսկ յառաջագէմ 'ի Թուրքայն՝ որում անուն էր Մուսեափաղլ Սարչուքեայ [3] որդի, ունէր հինգ եղբօրորդիս. որոց անուանքն՝ Աբուսալիմ, Դաւութ, Չաղրբէկ, Աբուտալիփ, Տօղրիլ-Բէկն, որ էառ զիշխանութիւն սուլտանութեանն, և հնդետասան ամ ընդարձակեալ զաշխարհն՝ բաժանեաց զամենայն երկիրն Խորասանայ. և եկեալ յՍմէ գտանէ երկուս շտեմարանս գանձուց լի ոսկւով. և առնու ընդ ձեռամբ, և յղէ առ խալիփայն և խնդրէ օրհնութիւն. և նա մեծարէ զնա արամբք պատուականօք [4], և տայ նմա ալամ և ընծայք, և կարդայ զանուն նորա 'ի մամբարն [5], և դնէ նմա մականուն Ռուքնադօվլա [6]. և յայնմ օրէ քարոզեցաւ աշխարհակալ ։ Եւ փոխէ զնա Արփասլան հօրեղբօրորդի Տուղրիլին, որ էլից զամենայն աշխարհ արեամբ. և ունէր որդիս ութ, որ և հասանէր յաթոռ թագաւորութեանն Մէլիք շահն, բարի և խաղաղարար. և զկնի Մահմուտ սուլտանն ։ Եւ յետ նորա

1. Դաստանդանն ըստ Պարսից Փինտ-Տառուն-խան ։

2. Մրին է Մերվ կամ Մրու, նշանաւոր և մեծ քաղաք Պարսից, 'ի սահմանս Խորասանի և Թուրքաստանի ։

3. Սարչուք, Սէլչիւկ կամ Սէլճուկ, ըստ աւանդութեան Պարսից սերեալ յԷֆրէսիապայ դիւցազնէ. որոյ էին որդիք Միքայէլ, Իսրայէլ, Եունուզ կամ Պիկու, և յիշեալն 'ի հեղինակէդ՝ Մուսա. Դողրուլ և Չաղր որ է Ճեաֆար՝ Միքայէլի որդիք են ։ Զորս գաւազանք իշխանութեան շառաւիղեցան 'ի Սէլջուկեանց. ա Պարսիցն, որ պայազատեաց զՂազնեւեանցն. բ, Խորազմեանց Թուրքաց. գ, Հալէպայ և Դամասկոսի. դ, Իկոնիոնի որ է Գօնեա և Փոքուն Ասիոյ՝ որ Րում կոչեցաւ յանուն Հռոմայ ։

4. Բ. Օ. Մեծարէ զնա առ ինքն ։

5. Մամբար է Մինպէր منبر բեմն աղօթից, յորում զանուն խալիփային կարդային ։

6. Ռուքն-էտ-տէվլէթ ركن الدولت Սիւն կամ հաստատութիւն բաղդի ։

ւսադ եղբայրն Բաքարուխն՝[1] որ կոտորեաց զնա, և առ զաթոռն ամս հինգ։ Եւ յառնէ ՚ի վերայ նորա Գուդուզն որդի Ալփասլանին, զոր վկանդեալ Բախիարուխն եհար զզօրս նորա, և սպան զԳուդուզն։ Եւ Մահմուտ սուլտանն Մահմուդի որդին եհար ըզ Բախիարուխն տղայ հասակաւ, և առ զսուլտանութիւնն ամս երեքտասան, և զկնի նորա Մահմուդն որդի նորին. ընդ որ պատերազմեալ Սանջար սուլտանն կոտորէ զնա, և առնու զԱրաղայ[2] իշխանութիւնն, և դնէ զնա ՚ի Բարաղայ. և զկնի նորա Դաւութ որդի նորա եկաց սուլտան՝ զոր սպանին Մլհեդքն[3]։ Եւ ապա եկաց Տօղրիլն, և զկնի Մասուտն, և ապա որդին՝ Ասլան, և զկնի ուժովն Տուղրիլ[4], որ կայր մինչ ՚ի պատմագիրս. որում պատիւ ՚ի տեառնէ Աստուծոյ։

ԾԴ. Նոյն այր ասէ և յաղագս Թագաւորին Յովանիսի, եթէ եղբայր նորա Աշոտ՝ ՚ի յոտս Թալնայ՝[5] կեղծաւորեալ որպէս հիւանդ մերձ ՚ի մահ, կոչէ զԹագաւորն առ ինքն, փորելով ՚ի մնարիցն կուսէ որոգայթս. և այնու ըմբռնեալ՝ տայ ՚ի ձեռս մեծ իշխանին Ապլիրատն[6] կոչեցելոյ սպանանել զնա. և նա յօժար կամօք յինքն առեալ տանի դնէ յաթոռ իւր յԱնի, ասելով. Ոչ խորդ ձգեցից զձեռս իմ յօծեալ Տեառն, և խելագար մի եղից ՚ի տեղւոջ սորա։ Ոսմանէ ասեն յաննշանից մեծացեալ, և վասն խելացի և առատ ձեռացն՝ մինչ լինել տէր երկոտասան հազար հեծելոյ. որ և շինեաց զսուրբ ուխտն Կեչառուս, որպէս Վահրամ իշխանն զՄարմաշէն[7]։

1. Պարքի-արուք, որ իշխեաց իբրև երկոտասան ամ։

2. Արաղ, Իրաք. Նշանաւոր աշխարհ Պարսից, ՚ի հնումն սահման Մարաց։

3. Մլհեդք, Մէլահիտէ ملاحده ըստ Արաբացւոց, որ է հերձուածք կամ մոլորեալք, ըստ Ասորւոց և Պարսից՝ Հաշիշի և Ասասինք ըստ Եւրոպացւոց, որ է աւազակք. հետևողք են Հասան–Սեպահայ մոլեռանդն բռնաւորի, որոյ ամրոց և կաղաղ էր Ալամուդ բերդ, զոր էառն Հուլաղու ղան։ Յաճախ ևս կոչին Իսմայելացիք։

4. Ուժովդ Դողրուլ Բ., յետին սուլտան տոհմին, տիրեաց յամին 1177-1187։ Նորա ժամանակակից է պատմիչ Երեցն Մխիթար։

5. Թալին ՚ի հին Արագածոտն գաւառի. այժմ կրկին աւանք են՝ Հին և Նոր Թալին ՚ի համանուն վիճակի։

6. Ի Պահլաւունեաց տոհմէ և ՚ի զարմից Լուսաւորչին ասին գոլ Ապլիրատն և Վահրամ, որ է եղբայր Վասակայ հօր հռչակելոյն Գրիգորի Մագիստրոսի։

7. Հ. Օ. յաւելու. Զի մի յանցաւորիս ձայն իջէն ձանիս, այլ և յան-

Ի չորեքհարիւր եօթանասուն թուին եւ Տուղրիլ Բէկն և պատահեացնամ 'ի Նախճաւանի Լիպարիտն[1] հինգ հազար հեծելօք, և փախեաւ յահագին բազմութենէն, և 'ի գալ Թուրքին 'ի Գուռին և սփռել ասպատակս, եւ ընդդէմ նոցա քաջն Սասակ, և ցուցեալ մեծ քաջութիւն դառնայ 'ի Սերկեւլի[2], և 'ի հանգչելն անդ սակաւ մի քնով քարիւ հարեալ զգլուխն այր մի յանդգնոս, մեռանի։

Յայսու ժամանակաւ պատրիարգն Պետրոս քինով ինչ Յովաննու թագաւորի գնայ 'ի Վասպուրական, և աղաչանօք ոչ դարձաւ. ապա 'ի ձեռն տուկի[3] կողմանցն ածաւ բռնութեամբ, և արգելաւ 'ի Բջնի։ Յոր լուեալ տէր Յովսէփ կաթողիկոսն Աղուանից, գայ և հանէ զնա 'ի բանտէն, և տանի զնէ յաթոռն իւր, հանելով զԽոսրովս առաջնորդ սուրբ ուխտին Սանահնին՝ զոր եդեալ էին կաթուղիկոս փոխանակ Պետրոսի ամ մի. և նա դարձաւ 'ի վանս իւր, այր սուրբ և առաքինի։

Յայնմ ժամանակի փոխէ զԳէորգ Մրաց թագաւոր որդի իւր Բագարատ, և իշխանն Մրաց Լիպարիտ ապստամբեալ փախուցանէ զնա 'ի խորին Աբխազք, և չէն ունի ինքն զաշխարհն իմաստութեամբ, ձեռն տուեալ 'ի Միքայէլ կայսրն։ Որ 'ի մեռանելն իւրում տայ զթագն Կալափատայ որդւոյ քեռ իւրոյ, որ զկնի սակաւ աւուրց կուրացաւ հրամանաւ Զոյի թագուհւոյն կնոջն Միքայէլի. յորում տեղւոջ երևեցաւ քար մի ունելով գիր, թէ աստ թագաւոր խաւարի։ Զոյի առնու այր իւր զՄոնոմախն և դնէ նմա թագ։ ԾԵ. Ի սա գնայ տէր Պետրոս և դառնայ 'ի Սեբաստ, և որդիքն Սենեքերիմայ տան նմա զվանքն, զոր յանուն Մարագայ սուրբ նշանին շինեալ էին, ընդ ինքեանս ունելով զխաչն, թէպէտ զկնի անդրէն դարձուցին։ Եւ երեք պատուէնս Մոնոմախն ետ պա-

մանիցն գաւառ. սոր յանն իւր զարմեալ իւրեանց 'ի տանէնի, ան ունելով վէր-նոյն։

1. Լիպարիտ իշխան վրացի, յՕրբելեան տոհմէ։

2. Սերկեւիլ գեօղ, բլուր և լեռնակ 'ի Թալին գեհ Արագածոտան։

3. Դուքս յոյն 'ի դրանէ կայսեր կողմնակալ կարգեցաւ նախ վիճակաց Դուէնի կլարջալագաւի զոր եթողն 'ի Յոյնս, և ապա Վասպուրական մարզից, զոր թագաւորք աշխարհին փոխանակեցին ընդ Սեբաստիոյ։

տրխարգին, որ և կեցեալ 'ի տեղւոջն ամ մի, կատարի։ Եւ առնու զքողն Խաչիկ քորորդին իւր, զոր ձեռնադրեալ էր 'ի կեանս իւր 'ի յԱնի, և կեցեալ ամս երկու վճարի, և մնաց աթոռն թափուր զամս հինգ։

Քանզի 'ի չորեքհարիւր իննսուն և երեք թուին մեռան Յովհաննէս և Աշոտ, և ետուն զթագն 'ի Գագիկ որդին Աշոտոյ. և յիշեցին Յոյնք զկտակն կորստեան վասն Անւոյ. զի անդարձ է ասէն, և հաստատուն է զկնի մահու կտակ։ Եւ կոչեցին երդմամբ զԳագիկ 'ի Կոստանդնուպօլիս, որպէս թէ անդրէն դարձուցանեն պարգևօք. և կատապան[1] եդին իւրեանք քաղաքին. և վերացուցին 'ի նմանէ զերկոսեան սպասս, զգահ հայրապետութեան և զթագաւորութեան, յակամայս ածեալ զերկոսեան առ իւրեանս, և անդրէն ոչ դարձուցեալ։ Վասն որոյ անյոյս եղեալ Գագկայ՝ առնու փոխան զԿալօնպաղատն և զՊիզու[2], և կայր պանդխտութեամբ 'ի մէջ ատեցողացն ազգիս։

Զայսու ժամանակաւ Գրիգոր որդի քաջին Վասակայ տայ զԲջնի 'ի Մոնոմախն, և զԿայեան և զԿայծոն, զոր ընդ ձեռամբ իւր ունէր, և առնու զդքսութիւնն Միջագետաց. որ և առնու ընդ իւր զԱպլիրատն զիշխանն Վրաց, և այլ ևս երկու Մաժիստրոսս, և երթայ ընդդէմ Իբրահիմայ զօրագլխի Տուղրիլ-Բեգ սուլտանին. ուր ըմբռնեցաւ Լիպարիտն և ածաւ առ սուլտանն. և առաքեաց առ նա դաւանել զհաւատ նորա։ Եւ պատասխանեալ եթէ իբրև տեսից զերեսս քո՝ առնեմ զոր հրամայես։ Եւ իբրև ետես ասէ. Յորժամ եղէ արժանի տեսանել զքեզ՝ ոչ արարից զկամս քո և ոչ երկեայց 'ի մահուանէ. և ասէ սուլտանն. Զինչ կամիս. և նա ասէ. Եթէ վաճառական ես, ծախեա՛ զիս, և եթէ դահիճ՝ սպա՛ն զիս. իսկ եթէ թագաւոր ես, պարգևօք ազատեա՛ զիս։ Եւ ասէ սուլտանն. Ոչ գնոյ քո վաճառական, և ոչ արեան քո դահիճ կամիմ լինել, այլ թագաւոր եմ, երթ ուր և կամիս. և արձակեաց զնա պարգևօք։ Եւ զի կայսրն

1 Կատապան, թուի յոյն բա-բան καθάπαν, իբր ամենապետ կամ համակար իշխան։

2. Կալոնպաղատ կամ Կալոնպէղատ ըստ Մատթէի Ուռհայեցւոյ, և Պիզու, երկոքին ևս 'ի Կապպադովկիա, այլ գիւղքն անյայտք։

խնդրէր զնա, չոգաւ առ նա. և առեալ 'ի նմանէ զօրս, եկն 'ի Վիրս և կալեալ զԹագաւորն Բագրատ՝ յղեաց զնա առ կայսր, և ինքն կալաւ զերկիրն ամենայն:

ԾԶ. Ի սոյն աւուրս կին մի Սամ անուն գայ 'ի Պարսից երեք որդւովք 'ի գաւառն Փառիսոսոյ[1] առ Գրիգոր փառաւոր իշխանն: Եւ տան որդիքն պատանդ զմայրն, և առնուն զՇօթս և զԲերդն Շամիրամայ[2]. և անտի ընտանացեալ ընդ Խլաղիզն[3] ամիրայն Գանձակայ սպանին զնա, և առին զԳանձակ և տիրեցին: Երեց որդին Պարզուան մեռաւ կարճ. և իշխանացաւ Լէշքարի միւս եղբայրն, և առնու զՊարտաւ[4] և զՇամքոր[5] 'ի Սալարէն: Եւ եղբայր նորա կրտսեր որ Փատլուն[6] կոչիւր՝ սպանեալ զնա յորսի, առնու զիշխանութիւնն: Եւ գնացեալ առ նա Փիլիպէ՝ որդին Գրիգորոյ՝ սիրոյ աղագաւ, ըմբռնէ զնա 'ի կալանս զկնի մահուան հօրն. և առնու 'ի նմանէ զՇաշուաղ և զՇօթս[7]: Եւ կոչեցեալ առ ինքն զԳագիկ որդի Համամայ զտէրն Տանձեաց[8] սպանանէ, և առնու զերկիր նորա: Եւ այսպէս զօրացեալ տիրէ Խաչենոյ և Գորոզոյ[9] և Սևորդեացն, և գոռ դնէ ընդ Գագկայ Թագաւորին Ձորոյգետոյ, և ընդ Կիւրիկէի Թագաւորին Աղուանից, և ընդ Բագարատոյ Թագաւորին Վրաց, և

1. Փառիսոս մասն է Արցախոյ յարևելս կոյս, սահմանակից Ուտիոյ. և Թուի Քուստի փառնէս հին գաւառ:

2. Շամիրամաբերդ 'ի Փառիսոս:

3. Հին Օ. Ալաղիզ:

4. Պարտաւ, քաղաք Առանձնակն Ուտիոյ, յետոյ մայրաքաղաք Աղուանից և աթոռ կաթուղիկոսաց նոցին:

5. Շամքոր քաղաք 'ի Շամքորաձոր վիճակի, 'ի սահմանս Գանձակայ. այժմ աւերակ:

6. Փատլուն (Ֆադլ) Ա ամիրայ Գունայ, Շէտտադայ որդի, յառաջնում քառորդի ԺԱ դարու եհաս իշխանութեան, յորում ժամանակի պայազատէին Փիլիպպէ որդի Գրիգորոյ Թագաւոր Աղուանից Արցախոյ՝ Առան-Սիւնիք կոչեցելոց. Գագիկ որդի Համամայ, Կորիկէ կամ Գուրգէն որդի Դաւթի Անհողնի՝ 'ի կողմանս Տաշրաց, Բագարատ Գ և Դ Թագաւորք Վրաց: Իսկ Գագիկդ Թագաւոր Ձորոյգետոյ կամ Բագրատունին է Ա, և կամ Կախեթու Թագաւորն որդի Անհողնի:

7. Շաշուաղ կամ Շաղուաղ և Շօթք՝ 'ի Խաչէն նահանգի, որ այժմ Կիւլիստան և Ջլբերդ կոչի:

8. Տանձեաց վիճակն Թուի 'ի հիւսիսակողմանս Արցախոյ և Ուտիոյ:

9. Գորոզի որ և Գորոզու գրի, անուանի լեառն, բերդ և վիճակ, 'ի սահմանս Արցախոյ և Ուտիոյ, յայժմեանս Խաչխարա կամ Խաչքար գաւառի:

նեղէր զնոսա ։ Տիրեաց և Գուռնայ, և եդ հարկս 'ի վերայ Հայոց երեքհարիւր հազար դրամ։

Այնպիսի օրինակաւ արք ոմանք քաղդեացիք եղեալք յաշխարհէն իւրեանց գան 'ի Գարդման, և ասեն ցիշխանն Գարդմանայ. Տուր մեզ զմասն խաչին զոր ետ քեզ Հերակլ, և լինիմք քրիստոնեայք և քո ծառայք. և կատարեցան իղձն ։ Եւ լուեալ ամիրայն Բաղդատայ սպառնայ յոյժ. յորմէ երկուցեալ գնացին յատն Կովկասու. և աջողեալք 'ի Քրիստոսէ յոր հաւատացին՝ տիրեցին ամենայն գաւառացն. մինչ զի և ոմն 'ի նոցանէ թագաւորեաց Գուրիթ անուն, որ խնամացաւ ընդ արքային Ջորոյգետոյ ։ Եւ կոչեցին զգաւառն Ծանարք[1], զի անդ ծանեան զտեղի բնակութեան իւրեանց. և իշխանն Գարդմանայ կոչեաց զնոսա Քորեպիսկոպոս ըստ լեզուին Վրաց ։

Ծէ. Իսկ զկնի բառնալոյ թագաւորացն Հայոց 'ի յԱնւոյ, ել 'ի Հայս հօրեղբօրորդին Տուղրիլին Ալփասան, և աւերեաց քսան և չորս գաւառս. զի էր զօրագլուխ սուլտանին, որ և զկնի մահուան նորա սուլտանացաւ. եկն դարձեալ հարիւր հազարաւ, և առ զԼոռ քաղաք, զոր Վիրք Ախալ-քալաք ասեն, և զՍամշուլդէ. և առնու կին զդուստր Կիւրիկէի թագաւորին[2], և զդուստր քեռ թագաւորին Վրաց Բագրատայ ։ Առնու և զԱնի, և հազար այր զենու 'ի փոս մի, և լոգանայ յարիւն, զոհ մեռելոց իւրոց արարեալ[3]։

Եւ ապա գայ 'ի խալիֆայէն դեսպան և արկանէ օղ ոսկի 'ի պարանոց նորա, և երկոտասան վարոց 'ի մի կա-

1. Ծանարացք անուան ծագումն ծաղրական է, քանզի հնագոյն պատմիչք և աշխարհագիրք Թոլեմէոս Արծրունի ԺԹ դարու, Խորենացի 'ի Եում և Պաղոմէոս ԺԲում յիշեն զԾանարս. ապա հեղինակիդ յիշածն գաղթական է և կեալ առ Ծանարս փախստեամբ յամիրապետէն ։ Արաբացի պատմիչք 'ի Նէգարայ ումեմնէ յԾոմէնայ ասեն զնոսա ծագեալս, և զերկիր նոցին ընդ մէջ Տփխեաց և Դրանն Ալանաց, և զթագաւորս նոցա Ⴑⴄⴌⴄⴕⴄⴐⴈⴀ կոչեն. զոր մերս քորեպիսկոպոս ասէ, որպէս և Յովհ. կաթողիկոս՝ [illegible] ⴕⴍⴐⴄⴎⴈⴑⴉⴍⴎⴍⴑ կոչէ, և զերկիր նորա՝ մասն Գուգարաց մերձ 'ի դրունս Ալանաց. զնոյն և Արաբացիք կոչեն ⴕⴍⴐⴈⴉⴍⴆⴈⴑ, ⴕⴍⴐⴈⴉⴍⴆⴍⴁⴀ, ⴕⴄⴐⴕⴄⴑⴍⴁⴀ։ Թուի զերկոսեան միանգամայն վարեալ նոցա զիշխանութիւնս, զհոգևոր և զմարմնաւոր ։

2. Կորիկէ Ա որդի Դաւթի Անհողնի ։

3. Հին Օ. յաւելու, ասէն ոճանք ։

պեալ հարկանել զնա խածեալթ[1] արարեալ, որպէս թէ այնչափ հնազանդ է իւրում առաջնորդին:

Գործեցաւ այս զկնի մահուանն Յովհաննիսի Թագաւորին՝ քսան և երեք ամաւ, 'ի հինգ հարիւր երեքտասան թուին:

Ր.յլ զկնի Մոնամախին Կիռ Թոստոյն կալաւ ըզթագն. և ապա Տուկիծն, և զկնի Դիէուժանն[2], որ եկն 'ի վերայ սուլտանին, սպառնալով Հայոց՝ հոռոմ առնել զընաւս. ըստ որում 'ի Կարս եկեալ այրէր զփայտակերտ եկեղեցին Հայոց: Նա չոգաւ 'ի Մանծկերտ և առ զնա, և դարձաւ սուլտանն 'ի վերայ նորա և եհար զնա յոյժ, մինչ ըմբռնեցաւ 'ի նմանէ. որ զի թէպէտ և արձակեաց ողորմութեամբ, այլ ոչ եղև ընկալեալ յազգէն իւրմէ, այլ ետուն զթագն 'ի Միխայէլն որդի Տուկիծին, որ և կալեալ կուրացոյց զԴիէօժանն, և մեռաւ 'ի ցաւոցն 'ի հինգհարիւր քսան և մի թուին:

ԾԸ. Իսկ Թագաւորն Կարուց Գագիկ որդի Աբասայ նեղեալ յերկիւղէ Թուրքացն՝ տայ զհայրենիս իւր 'ի Յոյնս, և առնու զԾամընդաւ[3], և զԼառիա և զԱմասիա և զԿոմանա[4], և զպաստինս հարիւր, որ է գեօղեան: Նա գնացեալ առ կայսր՝ խնդրէ հրամանս ձեռնադրել Հայոց պատրիարգ զՎահրամ որդի Գրիգորի Մաժիստրոսի և տուկի. որ կոչեցաւ 'ի ձեռնադրելն՝ Գրիգորիս. և ամ մի կալեալ զաթոռն 'ի Ծամընդաւ՝ թողու 'ի Գէորգ վարդապետն իւր Լոռեցի: Նա ինքն անցեալ գնայ 'ի Կոստանդնուպօլիս 'ի թարգմանութիւն, և առեալ զգրեանն կամեցաւ գընալ յԵրուսաղէմ. և նաւին առեալ զնա տանի 'ի Մսր. որ և մեծարեցաւ յոյժ 'ի սուլտանէն. և շինեաց վանս Հայոց, և ձեռնադրեալ զեղբօրորդի իւր Գրիգորէս եպիսկոպոս, և ինքն գայ կատարի 'ի Կար-

1. Թուի խածնալթ արարեալ, ծանակեալ, կամ խածիկէք ըստ Արարաց:

2. Կարգ կայսերացդ պակասաւոր է. պարտի լինել Մոնոմախոս, Թէոդորա, Միքայէլ Զ., Իսահակ Կոմնենոս, Կոստանդին Դուկիծ:

3. Ծամնդաւ, անշուշտ առ Զամանդի գետով որ թափի 'ի Սարոս (Ճիհուն). բերդաքաղաք յարևելից հարաւոյ Կեսարիոյ. այժմ անծանօթ:

4. Կոմանա, այժմ Կիւմէնէք մերձ յԵւդոկիա, 'ի հիւսիսոյ կուսէ:

միր վանքն [1] 'ի սահմանս Եփրատ գետոյ առ Տօրոս լերամբն , մերձ տեառն Բարսղի պատրիարգի որ զկնի Գէորգեայ ։

Իսկ 'ի հինգհարիւր քսան և մի թուին այրեցաւ սուրբ Պետրոս 'ի յԱնտաք . և եղև շարժ , և պատառեալ երկիրն եկուլ զպատրիարգն հռոմ և տասն հազար այր ընդ նմա , վասն այրելոյ նոցա զաւետարանն Ասորւոց ուղղափառաց , որ չորս անգամ ելանէր 'ի հրրոյն ամբողջ , մինչև զհինգերորդ կատաղութիւն նոցա յանձրն առնոյր , որպէս Տէրն զխաչն 'ի Հրէից (!) ։

ԾԹ. Ի հինգհարիւր քառասուն և երեք թուին առաքեաց Փատլուն ամիրայն Գանձակայ զԱսակ Պահլաւ՝ որդի Գրիգորոյ Մագիստրոսի , ամենայն զօրօքն Առանայ , յանկարծակի յամուրսն Բաղաց և կապանին , որ և խաբէութեամբ հնարեալ մտին անդր . և սպանեալ զՍենեքերիմ արքայն Հայկազնի , զի թագաւորքն որ անդ՝ հայկականք էին . և ոչ բարձաւ մինչև 'ի յետին աւուրս եղելոց երկուց եղբարց անզաւակաց , Սմբատայ և Գրիգորոյ [2], որ առեալ զմնունկն Սենեքերիմ հայազարմ՝ եղին թագաւոր ժառանգորդ իւրեանց . զոր և սպանեալ հրամանաւ Փատլնոյ՝ շիջաւ ճրագն որ անդ , և տիրեցին Պարսք ։

Այս Փատլուն առնու զԱնի յԱլփասլանայ [3], տալով նմա ոսկիակուռ նկարս ծաղկոցի . և առաքէ տէր աւեր քաղաքին զՄանուչէ թոռն իւր յոյժ տղայ , որ իբրև զարգացաւ՝ յաւելոյր 'ի պարիսպն Անւոյ և յամրութիւնս նորա . ևած 'ի քաղաքն զամենայն մնացեալ իշխանսն. որպէս և մեծաւ հանդիսիւ ընդ առաջ ելեալ մուծանէր 'ի ներքս զԳրիգոր զորդին Վասակայ , զթոռն Ա-

1. Կարմիր վանք 'ի սահմանս Մարաշոյ ։

2. Սմբատ և Գրիգոր թագաւորք՝ որդիք են Աշոտոյ իշխանաց իշխանի Սիւնեաց , քեռան Վասակայ Բ Սիւնեաց թագաւորի . Գրիգոր անզաւակ գոլով որդեգրեաց զՍենեքերիմ զեղբայր Շահանդրխտոյ կնոջ իւրոյ , 'ի զարմից իշխանացն Խաչենոյ . բայց ոչ Սենեքերիմաւ բարձաւ Սիւնեացն հարըստութիւն . քանզի յետ նորա տիրեաց որդի իւր Գրիգոր ցամն 1166, և յետ նորա դուստր իւր Կատակին Հասանայ Խաչենեցւոյ , ամս երիս . և ապա լռեաց թագաւորութիւն Սիւնեաց ։

3. Առումն Անւոյ յառաջ է քան զՍիւնեացն թագաւորութեան արկածս . զի Ալփասլան սպանաւ յամի 1072 , Սենեքերիմ յամի 1094 ։

պիրատին. զոր տեսեն ունել 'ի գլուխ ազատաց կանանցն հինգհարիւր թագս երևելիս. զի տէր էր մեծ զօրաց, և բազում ազատաց: Նա էր եղբայր տէր Բարսղի, որ զկնի Գէորգեայ ձեռնադրեցաւ 'ի Հաղբատ կաթողիկոս հրամանաւ և կամօք Մանուչէի և ամենայն Հայոց: Նա շինեցաւ քաղաքն Անի ոչ ինչ պակաս քան զառաջինն:

Իսկ Ալփասլանն գնացեալ 'ի Ալամուգն[1] պաշարեաց զբերդ մի ամուր. և տէր բերդին արար մեծ խնդութիւն 'ի տան իւրում և զկնի սուգ մեծ. և ապա իջեալ առ սուլտանն որպէս թէ 'ի հնազանդութիւն, և 'ի համբուրելն զոտս նորա՝ փողոտեաց զգազանն արբեալ արեամբ անմեղաց, և բարձաւ չարն 'ի միջոյ: Նա առ զպատիւ նորա Մելիք-Շահն որդի նորա, այր ողորմած և բարեմիտ, առաւել ազգիս մեր. մինչ զի ըզպատրիարգն Բարսեղ վերացեալ խաչիւ առաջի իւր մուծանէր, և պատուէր պարգևօք, և տուղրայիւ գըրոյ[2]. որով համարձակեալ առնու զգաւազանն և զանուննն 'ի Հոնեցոյն[3], որ անձամբ առեալ էր արտաքոյ կարգաց զկաթուղիկոսութիւնն:

Կ. Ի հինգհարիւր քսան և հինգ թուին սպանին Հոռոմք զՄասակ իշխանն զեղբայր կաթուղիկոսին Վահրամայ, որ էր տուկ Անտիոքու, 'ի նմին քաղաքի, նենգութեամբ. և զօրք նորա ամրացեալ 'ի կլայն, ետուն զքաղաքն 'ի Փիլարտոսն, որ բռնացեալ էր յայնժամ 'ի վերայ բազում գաւառաց՝ հայ ազգաւ. որոյ առեալ զքաղաքն խնդրեաց զվրէժ արեան նորա: Նոյն Փիլարտոս ձեռնադրել ետ զՍարգիս քորորդի տեառն Պետրոսի կաթողիկոսի 'ի Միջագետս, այր սուրբ և պարկեշտ, մինչ կենդանի էր Վահրամ և Գէորգ. զոր աքսորեցին տէր Վահրամ և տէր Բարսեղ՝ որ յարևելս, զոր 'ի Հաղբատ ձեռնադրեցին տէր Ստեփաննոս կաթողիկոս Աղուանից և Թագաւորն Կիւրիկէ: Յորում աւուրս և զՍարգիս աւագերէցն արքունի գը-

1. Ալամուգ հզօր բերդաւան Մլհեզացն Դիլմկաց. տես 'ի Ծան. 3. յէջ 97:

2. Տուղրա, Նաւշըր ըստ Պարսից, կնիք արքունի:

3. Այսինքն 'ի Թէոդորոսէ՝ որ յաջորդեացն զՍարգիս հակաթոռ 'ի Հոնի, յերկրին Մարաշոյ:

րանն արհեպիսկոպոս ձեռնադրեցին երկոքեան կաթուղիկոսքն սուրբ ուխտին Հաղբատայ, տալով վիճակս յերկուց կողմանցն։ Այլ և զկնի մահուանն տեառն Սարգսի կաթուղիկոսի ետ ձեռնադրել 'ի տեղին Փիլարտոսն զԹէոդորոս ոմն։

Ի սոյն աւուրս սպանաւ Բէխտն[1] իշխանն Շիրակունի, որ վասն յոյժ լաւութեանն նեղեալ սիրով 'ի կայսերէ՝ եղև[2] հոռոմ. և տուաւ հայր խոստովանութեան նորա աբեղայ մի հոռոմ. և զի ոչ պահէր զօրէնս Հոռոմոց, խեղդեաց զնա պիղծ կրօնաւորն 'ի քուն գտեալ զնա միայն՝ 'ի բերդն իւր յԱնդրիոնն, զոր իմացեալ զօրաց նորա՝ գահավէժ առնեն զվերադն անօրէն։ Իսկ զկայսրն Միքայէլ՝ փոխէ Վոտանիատն ամ մի. և զկնի Մեսէլիանոսն՝[3] ամիս վեց. և ապա Ալէքս՝ պիտանի այր և խելացի։

Յորում աւուրս եղև նշան սոսկալի 'ի վանքն Պիզու, զոր շինեաց Գագիկ արքայ։ Արք երկու անապատաւորք եղեալ 'ի տեսլեան՝ եկին 'ի վանքն, և նախքան զհարցն ասացին զոր տեսինն. մինն ասաց թէ տեսանէի, զի կանթեղ եկեղեցւոյ գմբեթին անկաւ յատակ եկեղեցւոյս, և ոչ շիջաւ լոյս նորա. և միւսն ասաց թէ տեսանէի զի անկաւ յերկնից աստղ մի, և լոյսն առաւել փայլէր յեկեղեցիս։ Եւ հայր վանիցն ասաց, տեսէք զի անկեալ է 'ի սուրբ խորհրդոյն. և վառեալ մոմեղէն և գնացեալ գտին մասն անկեալ 'ի սուրբ խորհրդոյն 'ի բեմն 'ի սուրբ պենտեկոստէին, յանզգոյշ առնէ. որ և զկնի երեք աւուր գտաւ 'ի սուրբ պենտեկոստէին. և զայն երեք օրն չէր անկեալ ոչ յաւելն և ոչ յոտս[4], և գոհացան զԱստուծոյ։

Իսկ զտէրն Անւոյ զԳագիկ՝ որ չոգաւ 'ի Կոստանդնուպօլիս, շատ աղերսեալ Թէոդորին[5] քեռն Զոյի, զի լիցի հոռոմ և այր նմա և թագաւորէ Յունաց, և

1. Բէխտ թուի ձէօփ (a veste ըստ Լատինաց, պաշտօնեայ ըզգեստուորիչ), իշխան Շիրակունի, ծանօթ է առ Բիւզանդացիս, և բնիկ անուամբ Խաչատուր. այլ բերդն իւր Անդրիոնն անծանօթ, խնդրելի 'ի կողմանս Անտիոքու։

2. Հին Օ. Նեղեալ։

3. Նիկեփոռ Վոտանիատ և Նիկեփոռ Բրիէն են յիշեալ կայսերքդ։

4. Հինն յաւելու 'ի փառս անձառ խորհրդոյն։

5. Թէոդորոս, այն որ նստաւ 'ի գահ ինքնակալութեան յամսն 1054-1056։

ոչ հաւանեցաւ. բայց զորդին իւր զկրտսեր տայ 'ի փեսայութիւն Ապլղարբի որդւոյ Խաչկայ, յիշխանացն Վասպուրականի, որ ընդ ձեռամբ ունէր զՄուխս և զՀաւանա, զՊարառօնն և զԼամբրօնն, զոր ատեաց և ետ 'ի բանդի. և լուեալ հօրն՝ գնաց հանել զնա. և 'ի դառնալն յիջևանս, խեղդեցին զնա ծառայք։ Եւ պիղծն Ապլխարիպ սպան դեղով զփեսայն։ Իսկ երեց որդին Յովհաննէս փեսայացաւ տուկին Անւոյ հասամի՝ յաւուր ինչ, և ելին յԱնի, և չգտեալ հանգիստ չոգաւ 'ի Վիրս. և դարձաւ 'ի Կոստանդնուպօլիս, միով որդայիւ Աշոտ կոչեցելով, զոր խնդրեաց կայսրն փեսայ և ոչ կամեցաւ տալ։ Եւ սա չոգաւ առ սուլտանն հրամանաւ կայսեր, և ետ նմա զԱնի. և ներքինի ոմն ազգական Սանուչէի դեղով սպան զնա, և մարմինն բերաւ 'ի Կոստանդնուպօլիս։ Եւ նախ քան զգալն մեռեալ որդւոյն՝ մեռաւ հայրն, և բարձան թագաւորքն Անւոյ այսու օրինակաւ։

ԿԱ. Ի հինգհարիւր երեսուն և եօթն թուին Պուզան[1] ամիրայն հրամանաւ Մէլիք-շահին առ զՊանձակ 'ի Փառնեացն որ Ռատատիկքն կոչէին։ Իսկ Վրաց թագաւորն Բագարատ դարձեալ 'ի կայսերէ՝ առնու զհայրենիսն իւր. և զկնի նորա առնու Գէորգի որդի իւր. որ և գնացեալ զկնի Կիւրիկէի 'ի Խորասան առ Մէլիք-շահն, դարձան պատուով։ Եւ այս Կիւրիկէ որդի էր Դաւթի, որդւոյ Գուրգենայ, որդւոյ Աշոտոյ Ողորմածի. սմա հայրն Դաւիթ շինեաց զԼօռէ, և այլ ևս երկոտասան բերդ, որ կայ թաղեալ 'ի Սանահին։ Որոց թոռունքն Աբաս և Դաւիթ նեղեալ 'ի Վրաց՝ չոգան առ տէարսն Սևանայ, և առին մէն մի բերդս, և կային տառապանօք[2]։ Եւ այլ սուլտան Մէլիք-շահն խաղաղասէր և քրիստոնեայսէր բարուք, տիրեաց 'ի Կաղբից ծովէն մինչև ցծովն Պոնտոսի երկոտասան թագաւորութեանց. և բարձեալ աւազ յովկիանու՝ տարաւ 'ի Պարսս, և էարկ 'ի վերայ գերեզմանի հօր իւրոյ, և ասաց. Ահա հայր աւետիս քեզ, զի որդի քո զոր թո-

1. Պուզան ամիրայ զօրավար Մէլիք-շահ սուլտանի, որ յետոյ ապստամբեալ սպանաւ 'ի Տուտու-շայ։

2. Բերդքդ են Նորբերդ և Մածնաբերդ յՈւտի կամ 'ի հայկական Աղուանս։

զեր տղայ՝ տիրեաց մինչև 'ի ծագս երկրի ։ Նա և առ սա չոգաւ Փիլարտոսն և ակարացաւ 'ի հաւատն ։ Նա Պուզանն մեծ ամիրայն՝ հրամանաւ սուլտանին եառ զՍուհա, և սպան արս ազնիւս 'ի փառաւոր իշխանացն Հայոց 'ի մատնութենէ քսու արանց ։

Ի սոյն աւուրս Թագաւորն Պեծենեկաց[1] եկն վեց հարիւր հազարաւ 'ի Կոստանդնուպօլիս 'ի վերայ Աղէքսին. և քրիստոնէիցն աղօթեալ զաւուրս ութ, ջնջեցին զնոսա բովանդակ, արկանելով հուր 'ի սայլս նոցա որովք եկեալն էին ։

Ի նմին աւուրս յայտնեցաւ չարութիւն հոռոմ աբեղայի մի, որ պաշտէր զշունն. և մոլորեցոյց արս իբրև բիւր մի, և զմայր Աղէքսին, մինչ դնել մասն 'ի սուրբ խաչափայտէն Տեառն ծածուկ 'ի կօշկի որդւոյ իւրոյ 'ի ներքանս կոխել միշտ. զոր իմացեալ Աղէքսին կորոյս զամենեսեան, և զմայրն եհան 'ի տիկնութենէ (!)։

ԿԲ. Ի հինգհարիւր քառասուն թուին մեռաւ Պօղոս կաթողիկոսն որ 'ի Վարագ, զոր եդեալ էր Փիլարտոսն. և սուրբ և մեծ գիտնականն Գէորգ վարդապետն Հայոց, և թաղեցաւ 'ի Կամրջաձոր[2] առ Սամուէլի վարդապետի ։ Նա եղև միահեծան սուրբ աթոռն պատրիարգութեան. քանզի տէր Բարսեղ 'ի նմին ժամու ընկեց զկաթուղիկոսն Թէոդորոս յաթոռոյն, և առ 'ի նմանէ զքօղն և զգաւազանն և զսուրբ նշանն տեառն Պետրոսի. և շրջեալ 'ի Կեսարիա եկն յԱնտիոք, և անտի 'ի յՈւռհա. և լինէր ամենայն ուրեք խնդութիւն մեծ ։

Ապա խաղաղասէր սուլտանն դեղակուր եղեալ 'ի կնոջէն իւրմէ, վճարէր զկեանս իւր, 'ի հինգհարիւր քառասուն և մի թուին ։ Նա լուեալ Պուզան ամիրայն որ էր 'ի Նիկիա, դառնայ յՈւռհա. և տէր Բարսեղ

1. Պծենակք կամ Բեչենեկք, թուրքք հալածեալք 'ի Խազրաց վտարեցան յայս կոյս Վոլկայ, և արշաւանօք կալան մինչև 'ի Դրանսիլուանիա և 'ի Մոլտաւիա, ստէպ պատերազմելով ընդ Ռուսք և ընդ Յոյնս ։

2. Կամրջաձոր վանք յԵրասխաձոր կամ յԱրշարունեաց գաւառի, ուր ծաղկէր Սամուէլ վարդապետ հեղինակ եկեղեցական գրուածոց և թղթոյն պատասխանւոյ առ Թէոդորոս մետրապօլիտ Մելիտինոյ, զոր գրեաց հրամանաւ Խաչկայ կաթուղիկոսի ։— Իսկ Գէորգ մեծ գիտնական ոչ է Մեղրիկն, այլ Լոռեցին. սակայն գործք նորա չեն մեզ ծանօթք ։

երթայ յԱնի ։ Եւ թաղեցաւ Մէլիք-շահն ՚ի Մարանդ առ հօր իւրում Ալփասլանայ. որոյ էին երկու որդիք Բակիարուխ և Սափան կոչեցեալք. և Դուդուշն[1] եղբայր Մէլիք-շահին սուլտանացաւ ՚ի կողմանս Յունաց. և Բէկիարուխն ՚ի վերայ Պարսից և Հայոց։ Որ և զքեռին իւր զԻսմայինն արարեալ հէջուբ[2], կարի քաղցր և բարեմիտ առ Հայս. վասն որոյ խնամածեալ ազգիս՝ շինեցաւ աշխարհս. ազատեալ զվանորայս, և զամենայն եկեղեցականս։ Իսկ Դուդուշն տիրեալ Միջագետաց՝ հարկաներ զթագաւորն Արաբկաց զԻբրեհիմն[3], և առեալ զամենայն բանակս նոցա հարստանայր. և գայր առ նա գիր ՚ի կնոջէն Բէկիարուխին, զի գնասցէ ՚ի Պարսս և լիցի նմա այր, և առցէ զամենայն աշխարհ ինքեան։ Եւ նորա խնդացեալ ընդ լուրն խաղայ անթիւ բանակօք, և երթայ ՚ի դաշտն Սպահանայ, և յղէ առ նա Բէկիարուխն աղաչանս, զի տացէ նմա զՍպահան, և այլ ամենայն տիեզերք նմա լիցին։ Եւ ոչ կալեալ նորա յանձին, յարձակին ՚ի միմեանս, և մեռանի Դուդուշն, և փախչի Ռատուան որդի նորա յՈւռհա, և նստի և նա սուլտան՝ ՚ի Հալպ և ՚ի սահմանս նորա. և այլ ոմն յազգէ նորա Ալփիրակ կոչեցեալ՝ ՚ի կողմն Յունաց սուլտանացաւ, և եկեալ յՈւռհա տիրել ջանայր նմա։ Եւ Թորոս կիւրապաղատն սպան զնա դեղով զկնի աւուրց երեմնից։

Ի նմին ամի մեռաւ սուրբ կաթուղիկոսն Թէոդորոս ՚ի Հռմնին, լին ամենայն առաքինութեամբ, և թաղեցաւ մօտ ՚ի տէր Սարգիս։

ԽԳ. Յայնմ ժամանակի եղև ՚ի պատճառս մարախոյ և երաշտոյ սով սաստիկ, և ՚ի յԱնի կարի լինի նեղութիւն մեծ. ուստի զմեռեալսն թաղել ոչ կարէին ՚ի սովոյն և ոչ օրինացն հաղորդել. որ և այր մի ասէն քաջութիւն ցուցեալ և սէր առ Աստուած՝ թաղեաց վեց հազար անձինս, որում անուն էր Բէխ։ Այսպիսի աղէտս լուեալ այր մի մեծատուն ՚ի Պարսս, և

1. Դուդուշ նահապետ է Սուլտանաց Հալպոյ և Դամասկոսի։

2. Հէճուպ, հաճիպ حاجب ըստ Արաբացւոց, դռնապան կամ սենեկապետ։

3. Իբրահիմ թագաւոր Արաբկաց թուի ոմն յիշխողաց անապատին Միջագետաց, թէ ոչ Եթովպացւոց։

երամակ մի ուղտուց բարձեալ ցորենով՝ գայր 'ի յԱնի, և աւէր, ոչ այլ ումեք տալ բայց տղայոց։ Զոր լուեալ բերէին զևազուած յորդառատ արտասուօք, և նա յագեցուցանէր և կերակրէր զնոսա. և 'ի սպառել ցորենոյն ձայն արարեալ ծնողաց մանկանցն զի եկեսցեն համբուրեսցեն զուստերս և զդստերս իւրեանց։ Եւ իբրև կական բարձեալ մորմոքէին զրկախառնեալք, և ահա բարբառ քաղցր և բարի այրն բարբառեալ ասաց. Առէք զտղայսդ ձեր, և գնացէք 'ի տունս ձեր փառաւորելով զտուողն բարեաց զԱստուած 'ի մեծութեանն իւրում, զոր և արարինն իսկ։

Զկնի անցանելոյ սովոյն, ազգ մի սկիւթական, որ 'ի վաղեայ ժամանակաց ղօղեալ կեայր առ Արկանօք, անուն զլխաւորին Եղխազի[1] կոչեցեալ, որ եկն եօթն հազարաւ ընդ միջոցս աշխարհի մինչև յԱնի քաղաք պատերազմաւ. և մեռանի անդ եղբայր նորա, որ նման էր Գողիաթու հսկայի, 'ի Գրիգորոյ որդւոյ Վասակայ Թոռին Ապիրատին. որ զկնի աւուրց նահատակեցաւ 'ի Կաղզուանն, զերծուցեալ 'ի մահուանէ զամիրայն Անւոյ զՄանուչէ. և տարեալ թաղեցին զնա 'ի Կեչառուս. եղբայր տէր Բարսղի կաթողիկոսի. և Մանուչէ և ամենայն զօր բանակին Հայոց զկնի դիոյն։ Իսկ Եղխազի երթեալ ընդ Միջագետս առնու զԵրուսաղէմ 'ի Փռանգաց, հարկանելով նետ մի 'ի ձեռն Յարութեանն, որ կայ մինչև ցայժմ 'ի նշան գործոյն։

Ի հնգհարիւր քառասուն և չորս թուին Սուքման որդի Արդուխին, և ամիրայն Սամուսատայ Պալտուխն՝ որդին Ամիր-ղազէ՝ գան 'ի վերայ Ուռհայոյ. և դարձան լի ամօթով, զի կիւրապաղատն Թէոդորոս իմաստութեամբ և քաջութեամբ պահէր զքաղաքն. մինչև ոչ սուլտանն Խատուան կարաց հնազանդել զնա։ Դարձեալ 'ի հնգհարիւր քառասուն և եօթն

1. Եղխազի, է Օրդոք Եղղազի ամիրայ, յորմէ անուանի Թուրք տոհմն Որդոքեան, զոր մերքս Արդուխ կոչեն, որք տիրեցին Խլաթայ և բազում այլոց քաղաքաց հարաւային Հայոց, Միջագետաց և Երուսաղէմի իսկ. բայց յառաջ քան զգալն խաչակրաց, և ոչ որպէս հեղինակս ասէ 'ի ձեռաց Փռանկաց առին զԵրուսաղէմ, այլ Փռանկք 'ի սոցանէ, մանաւանդ թէ 'ի յաջորդաց նոցին 'ի զօրավարաց խալիֆային Եգիպտոսի։

Թուրն Կլըճ Ասլան [1] սուլտանն արևմտից՝ Թոռն Դանշմնոյ՝ գնայ 'ի վերայ Մելտենոյ. և իշխան քաղաքին Գաւրիլն [2] աներ կիւրապաղատին Ռուհայոյ՝ դարձոյց զնա անարգանօք։

ԿԴ. Յայսմ ժամանակի լնու բան մարգարէութեան սուրբ հայրապետին Ներսիսի՝ որ վասն ելից փռանգայն. քանզի մինչ տիրէին Ակիւթացիքն Երուսաղեմի, և առնուին վարձս 'ի մտելոցն 'ի սուրբ գերեզմանն, դիպեցաւ կոմս մի փռանգ ազգաւ 'ի խռանն հարամիլ և զայրանալ, և վասն այնր դանիլ, մինչև հանին զակն նորա զմի 'ի կապճացն և ընկեցաւ 'ի վայր. զոր առեալ եդ 'ի գրպանն, և տարեալ 'ի Հռոմ ցուցանէր. և նախանձու վառէր զբազումս։ Նա ելանէին արք փառաւորք գլուխք զօրաց բազմաց, որոց անուանք էին այս [3]. Կոնդոփր, և Պաղտոյն՝ եղբայր նորա՝ յազգէ թագաւորաց. զոր առեն ունել զԹագն Մեսիանու՝ որ աւերեաց զԵրուսաղէմ. և մեծ կոմսն Պայմունդ, և Տանկրի քեռորդի իւր, և կոմսն Զնջիլ. և Ռոպերտն՝ Որմնայ կոմսն. և միւս Պաղտոյնն, և Ջօսլին կոմսն. արք յաղթողք և բազմազօրք։ Յուղի անկեալք գան 'ի Բիւզանդիա. և սիրով անցեալք 'ի Նիկիա՝ հարին զԿլըճ Ասլանն միանգամ և երկիցս, և առին զՆիկիա, և ետուն յԱլէքսն. և ինքեանք գնացեալ ընդ Կիլիկէ՝ առին զԱնտիոք, և զամենայն ծով-

1. Գըլըճ Ասլան որդի Սիւլէյմանայ, որդւոյ Գութլումուշայ, սուլտան Իկոնիոնի։

2. Գաւրիլ, է Գաբրիէլ իշխան հայ ըստ ոմանց, ըստ այլոց յոյն կամ յունահայ, աներ Պաղտւենայ Թագաւորի Երուսաղեմի։

3. Աշխարհածանօթ առաջնորդք են առաջին խաչակրաց, Կոտոֆրէ (Կոտըֆրուա տը Պույոն, Godefroy de Bouillon), և Պաղտին (Պոտուէն, Baudouin) եղբայր նորա, 'ի հանւոյ իւրեանց սերունդք առին Մեծին Կարոլոսի ինքնակալի. իսկ Թագ և Թուր Վեսպիանու՝ ըստ կարծեաց Մատթ. Ուռհայեցւոյ, յորմէ առնու հեղինակս։ — Պեմունդ (Boémond) որ դուքս եղև Անտիոքայ՝ որդի է հռչակելոյն Ռոպերտայ Կիշարայ։ — Տանկրի, (Դանգրետ, Tancrède) ոչ քեռորդի այլ հօրաքեռորդի Պեմոնդայ կարծի։ — Զնջիլ է կոմսն Ռայմոնտ Սէն-Ժիլ (Raymond de Saint-Gille)։ — Ռոպերտ կոմս Որմնայ (Ալամանայ) է կոմսն Նորմանդիոյ։ — Միւս Պաղտինն է Պոտուէն տը Պուրկ (Baudouin de Bourg) արեանառու առաջնոյն։ — Ջօսլին է Ժօսլէն տը Գուրդընէ (Josselin de Courtenay) որ յաջորդեաց զմիւս Պաղտին։

եղերսն և զԵրուսաղէմ. և եդին Թագաւոր, որպէս ծանուցանեն յոլովից պատմուԹիւնք :

Առ այսու ժամանակօք եմուտ սուրբ խաչն Լունեայ 'ի յԱնի. այն որ 'ի յուրացմանն Սազգենի Սբայ առաջնորդի գաղԹեցաւ 'ի խորշս լերինն Պարխարու, 'ի ձեռն սուրբ վանականին Անդրէասայ յաշակերտաց սրբոյն Սահակայ : Եւ կացեալ անդ զեօԹն ամ, և ապա ազգ արարեալ մամիկոնեանն Գրիգորոյ որդւոյ Համայեկի՝ տարաւ 'ի Կապոյտն կոչեցեալ բերդ[1] և անդի փոխեցաւ 'ի Սանանդ, և կոչեցաւ Սանանդայ խաչ. և 'ի բառնալ տանն Մամիկոնէից յանօրէնն Սուքմանայ՝ բերաւ յԱնի, 'ի հայրապետուԹեանն տեառն Բարսղի. և կարգեցաւ նմա տօն կիւրակէն՝ որ զկնի ուԹօրէից Խաչավերացն տօնի :

Այլ 'ի հինգհարիւր քառասուն և եօԹն Թուին Պաղտոյն կոմն[2] էառ զԹլպաշար և զՍուռհա : Եւ 'ի միւս ամին սպասալարն Բէկլիարուքն եկեալ յԱնտիոք 'ի վերայ Փռանգին, և հարաւ 'ի նոցունց իբրև բիւրս ուԹ. քանզի գտին 'ի ձախակողմն սրբոյն Պետրոսի զգեղարդն՝ որով Հրեայքն խոցեցին ընդ կատականս զպատկերն փրկչական, ուստի ել արիւն և ջուր, որպէս 'ի կողէն Տեառն. և պատուեցաւ զէնն որպէս աստուածամուխն այն՝ զոր Հայք ունին. որով զօրացեալ Փռանգքն՝ հարին զԹշնամիս իւրեանց, և ապա առաքեցին զնա Աղեքսին :

ԿՆ. Ի հինգհարիւր քառասուն և ուԹ Թուին մեռաւ Կոստանդին մեծ իշխանն Հայոց՝ որդին Ռուբինայ, որ էր յազատաց[3] Գագկայ արքայի, ուր ամնյայտնի ցուցաւ նշան մահու նորա : Զի 'ի նմին աւուր անկեալ շանԹ 'ի յերկնից՝ հարկանէր զարծաԹի սկըտեղն՝ որ կայր առաջի նորա 'ի բերդն Վահկա[4] կոչեցեալ. և մեռաւ այր մի առ ժամայն. յետոյ ապա և ինքն իսկ, որ բռնացեալ ունէր զլեառն Սեաւ[5]: Եւ Թողու երկու որդի, զԹորոս և զԼեւոն :

1. Կապոյտ բերդ յԱրշարունիս :

2. Եղբայրն Կոտըֆրուայ է առօղ Թլպաշարայ. սա նշանակէ և կոչի Թիլ Աւեսաւոյ, և է բերդաքաղաք յարևմտից հարաւոյ Հռոմկլայ և Պիրէճիկայ, յաջմէ Եփրատայ :

3. Հին Օ. հօրաղբ :

4. Վահկայ բերդ ոչ հեռի 'ի Սսոյ :

5. Սեաւ Լեառն 'ի Կիլիկիա,

Ի հինգհարիւր քառասուն և ինն թուին Դանըշմանն[1] տէրն Սեբաստիոյ, զորմէ ասեն յազգէն Հայոց, եկեալ 'ի վերայ Մելտենոյ, և Պեմունդն և Ռաջարդն՝[2] որ կային յՈւռհա, ելին ընդդէմ նորա, և ըմբռնեցան 'ի նմանէ և եդան 'ի բանտի :

Ի հինգհարիւր և յիսուն թուին յաւուր շաբաթու ոչ վառեցաւ լոյսն յԵրուսաղէմ, այլ յօր կիւրակէին 'ի յինն ժամուն, և զարմացաւ ամենայն երկիրն. այլ պատճառն էր անուղղայ գործք Փռանգին, զի կանանց ետուն զսպասաւորութիւն աստուածընկալ գերեզմանին :

Եւ 'ի նոյն ամի գայր կոմսն մեծ Պետեւանն[3] կոչեցեալ երեսուն բիւրօք 'ի Կոստանդնուպօլիս, և հըպարտ բանիւք եպարքոս կոչելով նախատէր զԱլէքսն, և առնոյր զօրս 'ի նմանէ յուղարկաւորս ընդ երկիրն Թուրքաց : Եւ նոցա նենգ գործեալ հրամանաւ իւրեանց Թագաւորին, տարան ընդ անջրդի անապատ, և սպառացուցեալ զնոսա՝ մատնեցին Դանշմանայ և զօրացն Խլիճ Ասլանայ, մինչ զի երեսուն արամբ միայն զերծեալ Պետեւանն՝ անկաւ յԱնտիոք. և յԵրուսաղէմ հասեալ և ուխտեալ՝ դարձաւ անդրէն 'ի Հռոմ:
Ի հինգհարիւր յիսուն և մի թուին՝ տասն ազգ քրիստոնէից Թիւր զատիկ արարին 'ի ծառզարդարն, բայց 'ի Հայոց և յԱսորւոց. 'ի չար սերմանց Իռիոնի[4] :

Ի հինգհարիւր յիսուն և երկու թուին՝ իշխանն Հայոց Գողն կոչեցեալ Վասիլ[5] գնեաց զՊեմունդն օգնելով 'ի գինս տասն հազար դահեկան, որ գնեցաւ հարիւր հազարաւ : Ի նոյն ամի կոմսն Ուռհայոյ Պաղ-

չար Ամանոս լերանց, ընդ մէջ Ասորւոց և ծովուն :

1. Դանըշման է Տէնիշմէնտ, دانشمند, որ նշանակէ գիտուն, ընթերցող. զի որդի էր գիտնոյ ուրումն Թուրքի բնակելոյ 'ի կողմանս Սեբաստիոյ, իբրու յամի 1084. և սերունդ նորա տևեաց դարս բովանդակ : Ոչ յազգէն Հայոց, այլ թուի ծնեալ յերկրին Հայոց :

2. Ռաջարդ է Ռիշար (Richard du Principat) ազգական Պեմունդայ :

3. Պետեւանդ մեծ կոմս է Գուլիելմոս Թ կոմս Բուադիէի (Guillaume IX comte de Poitiers).

4. Ի տոմարագիտութեան գրոցն խնդրողք զպատճառս Թիւր և ուղիղ զատկաց, և արդարանան դատափետեալքն 'ի հեղինակէդ :

5. Գող Վասիլ ժամանակակից Ռուբինի Ա, տիրէր 'ի կողմանս Մարաշոյ. վասն յանկարծօրէն 'ի վերայ թշնամեացն հասանելոյ՝ Գող կոչեցաւ, զոր Լատին պատմիչք ժամանակին ծէքանօք կոչեցին Covasilius կամ Corouassilius.

տոյնն գնայ 'ի վերայ Թուրքին 'ի սահմանս Մերտնայ. և կալաւ զՈւլուսալար[1] ամիրայն, և ած 'ի յՈւռհա յոլով գերութեամբ, և հազարս հազարաց ոչխարս : Յորում աւուրս գայր պատրիարգն Բարսեղ 'ի յԱնւոյ, և յոյժ պատուեալ լինէր 'ի կոմսէն գեօղօք և գանձիւք :

Ի հինգհարիւր յիսուն և երեք Թուին մեռաւ Գանըշմանն, թողլով երկոտասան որդիս. և առ զիշխանութիւնն աւագն Գազի : Եւ 'ի նմին ամի մեռաւ Բէգիարուխ սուլտանն, և առ զտեղի նորա եղբայր իւր Տափար[2] : Եւ 'ի սոյն աւուրս առ զՄարաշ Ճօսլինն. և իշխանն Յունաց որ կայր անդ՝ Թաթուլն՝ ծախեաց զպատկեր Տիրամօրն՝ Թորոսոյ որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբէնի յոլով ոսկւոյ և արծաթոյ :

Ի հինգհարիւր յիսուն և չորս Թուին 'ի շփոթել իշխանութեանն Պարսից, յարեաւ ամիրա մի Գազիլ անուն սկիւթացի, եառ զաւանն Լօռէ, և գնայ մտանէ 'ի Գուին բռնութեամբ ուժոյ, սպանեալ զԱբունասր զեղբայրն Մանուչէի : Եւ գնացեալ Մանուչէի առնու զօր 'ի դրանէ արքային Պարսից, և գայ սպանանէ զԳազին 'ի վերայ գերեզմանի եղբօր իւրոյ, և զԳուին տայ 'ի ձեռս Պարսից :

ԿԶ. Յայնմ ժամանակի պատրիարգն Բարսեղ նեղեալ յազգի ազգի շփոթմանէն գնաց յաթոռն իւր յԱնի. և խոկոյն հասանէ նմա խնդիր 'ի տէր Գրիգորիսէ Պահլաւէ, որ և Վահրամն, Վկայասէր կոչեցեալ, եթէ հասեալ է ժամանակ իմ, եկ յուղարկեա զիս առ Տէր : Եւ նա ոչ յապաղեալ յուսով վերջին օրհնութեանն, և պատահէ նմա փորձութիւն ինչ սակաւ 'ի Ճանապարհին 'ի բերդն Մենծկերտոյ[3] մօտ 'ի Բալու, 'ի յունականացն որ անդ՝ որք կամեցան կողոպտել զնոսա. բայց նա քաջասրտաբար արիացեալ ոչ ետ ըստ կամաց իւրեանց առնուլ, այլ զոր ինքն թողացոյց.

1. Ուլու Սալար կամ Սալըր Թուրք զօրավար կամ իշխան, 'ի ձեռանէ Որդոքեանն Իլղազեայ տեառն Մերտինու :

2. Տաֆար Մուհամմէտ սուլտան Պարսից :

3. Մենծկերտ 'ի գաւառին Ծոփայ Հաշէնեաց, յայժմեանս Չարսանճագ : — Ծովակն Թուխ ոչ Ծովք լիճ (Կեօլճիւկ), այլ ըճակ մի փոքրիկ մերձ 'ի Բալու, որ ոչ նշանակի յաշխարհացոյցս :

բայց զխաչն երկաթի ձեռագործ առաքելոյն Թադէոսի, որ տանէին առաջի, ընկէց բարձողն 'ի ծովակն, որ յետոյ գտեալ եղև 'ի քրիստոնէից 'ի ճաճանչ նշուլից գուշակեալ, և տարեալ եդին 'ի սուրբ Գրիգորոյ լեառն [1], ուր կայ գերեզման նորա. և կայ անդէն առնելով պէսպէս սքանչելիս: Իսկ նորա գնացեալ զերկայնաձիգ ճանապարհն, և հասեալ 'ի Կարմիր վանքն կոչեցեալ, ուր կայր այրն Աստուծոյ, առ իշխանն մեծ Վասիլն, և օրհնեալ 'ի նմանէ և յանձնեալ 'ի նա ըզտղայսն ձեռասուն, որք էին նորա քորորդւոյ որդիք, Գրիգորիս՝ որ և լինէր [2] կաթողիկոս, և Ներսէս եղբայր նորա, և էին որդիք Ապիրատին: Նա ինքն նընջեաց 'ի տրէ ամիս յաւուր շաբաթու, 'ի յիսնական ամարան, 'ի տօնի Երեմիայի մարգարէին, և թաղեցաւ 'ի տեղւոջն: Նա արարին կոծ մեծ 'ի վերայ նորա Վասիլն և ամենայն ազատագունդն Հայոց:

Ի նմին ամի կատարեցաւ սուրբ ճգնաւորն և մարգարէն Մարկոս 'ի Կոկաց գաւառին, 'ի լեառն Կոնկըռնաթ [3] մերձ 'ի Մարաշ, որ վաթսուն և հինգ ամ ոչ եկեր հաց, և ոչ որ ինչ նման է հացի, բայց միայն խոտ. որ և ասաց իսկ՝ եթէ յաճախեն չարիք մարդկան, և աւերի աշխարհ յայլազգեաց, և փակին դրունք եկեղեցեաց, և զԵրուսաղէմ դարձեալ առնուն Թուրքք: Սա յերկու տեղիս ջուր եհան 'ի նոյն անապատի և ամփոփեցաւ 'ի վանքն Կաստաղօն [4]. յետ տօնի Աստուածածնին հինգշաբաթ օրն տօն է սմա:

Ի հինգհարիւր յիսուն և եօթն թուին առաւ Տրապօլիս, զամս մետասան տուեալ խսար 'ի վերայ նորա Թագաւորն Երուսաղեմի, և կոմսն Պերդրան [5]. այլ սակայն տուաւ քաղաքն 'ի Տանկրի 'ի տէրն Անտիոքու: Վասն որոյ բարկացեալ 'ի վերայ նորա Թա-

1. Ս. Գրիգոր լեառն զոր յիշէ հեղինակդ և զկնի (123) 'ի սահմանս Ջահանայ և Կիւլիկեոյ Թըւի և ոչ Սեպուհն Դարանաղեաց:

2. Հին Օ. զոր և անուանէր:

3. Կոնկըռնաթ կամ Կոնգանակ լեառն և Կոկաց գաւառ 'ի սահմանս Մարաշու, յիշին միայն 'ի Մատ. Ուռհայեցւոյ՝ յորմէ մերս առնու. ոմանք Մոկաց գաւառ ընթեռնուն:

4. Կաստաղօն վանք մերձ 'ի Վահկա ըստ Մատ. Ուռհ. և ոչ առ Տիվրիկաւ, ուր յիշէ մերս Ինճիճեան զՔէսաստղուն գալէսի:

5. Պերդրան որդի Ռայմոնդի կոմսի Սէն-Ժիլայ:

գաւորն և Պերդըրան, առին վերստին զքաղաքն և մաշեցին սրով և կողոպտեցին. և Պերդըրան ժառանգեաց զտեղին։

Ի հինգհարիւր յիսուն և ինն թուին Սամուտն[1] սպասալարն Պարսից՝ աւերեաց զամենայն երկիրն Ուռհայոյ կոտորածով և գերութեամբ, և 'ի սուր նստոյց զամենայն քրիստոնեայսն։

Ի նմին ամի 'ի ժամանակս ձմերանի 'ի մթին գիշերի՝ անկաւ հուր 'ի բարձանց 'ի ծովն[2] Վասպուրական. և գոչեցեալ ծովուն անկաւ զցամաքաւն. և դարձաւ ծովն 'ի գոյն արեան, և մեռան ձկունքն. և 'ի լուսանալ առաւօտուն կուտեալ կային առ ցամաքաւն իբրև զփայտակոյտս անտառաց։

Իսկ 'ի հինգհարիւր վաթսուն թուին մեծ իշխանն Հայոց, կորովի իմաստութեամբ իւրով էառ զբերդն Կինտռօսկաւիս[3], ուր սպանին զՊագիկ Ռահնշահ։ Եւ զի կենդանի էին սպանողք թագաւորին՝ որդիքն Սանդալէոնի՝ երեք եղբարք, եսպան զնոսա չարչարանօք. և էառ զթուրն և զհանդերձս թագաւորին, և զգանձն ամենայն գաւառին՝ որ կայր անդ 'ի պահեստի վասն անառ ամրութեան դղեկին. և խաչ և պատկեր ոսկի՝ բազում յոյժ. և տարեալ զբովանդակն 'ի Վահկայն՝ գոհանայր զԱստուծոյ, և կացոյց յիւրոցն պահապան բերդին։

1. Սամուտն է Մանտուտ որդի Ալթուն-Թէքինայ, զօրավար Տափար սուլտանի։

2. Մատթ. Ուռհայեցի ասէ և երկրին հերձուեալ յեզերս ծովուն, և Թուեցուցանէ ստորջրեայ հրաբղխի ժայթքումն, քան մեծի օդաքարի անկումն։

3. Կինտռօսկաւիս բերդ ոչ յիշի առ աշխարհագիրս. և զի այլ պատմիչք 'ի Կիզիստռա ասեն ըզԳագկայ սպանումն, երկոքին մի են, կամ առաջինն է բուն բերդին անուն և միւսն աւանին. որ յոմանց համարի նոյն ընդ Կիւպիստռայ՝ ընդ մէջ Կիւլիկեան գրանց և Տիանեայ, յայժմեանս Գարամանի. և յայլոց որիշ և մերձ 'ի Մաժակ։ Հեթում պատմիչ 'ի Լիւկանդոն գաւառի ասէ զբերդն. իսկ գաւառդ այդ ստէպ յիշատակեալ 'ի մերոցս և 'ի Բիւզանդացւոց՝ է Լականիտ գաւառ հին, յարևելեան հիւսիսային ծայր Կիւլիկիոյ, սահմանակից Կապպադովկիոյ և Կոմագենիոյ, այսինքն Եփրատացւոց։ Արդ թուի Կիւզիստռա որիշ 'ի Կիւպիստռայ, և զոյգ առաջնոյն կամ մերձաւոր նմին բերդն եզերական 'ի լեռնասահմանին Տաւրոսի, որ բաժանէ ընդ Կապպադովկիա և ընդ Կիւլիկիա, և հայի 'ի դաշտն Արգէոսի. զի և այլ պատմիչ 'ի սահմանս Արծխաս դաշտի ասէ զբերդն, և մերձ 'ի Ձկընջուր երկիր. իսկ արդ ծանօթ է հովիտ Պալըգասու գետոյ 'ի սահմանս Կիւրինի։

Իսկ պատրիարգն Նարսեղ այլ ոչ դարձաւ 'ի Անի, այլ անդէն կեցեալ ժամանակս ինչ՝ ապա եդ 'ի մտի երթալ յԵրուսաղէմ։ Նա հրաւիրեալ զեպիսկոպոսունս և զվանորէայս երկրին և զիշխանսն գալ 'ի տօն վարդավառին, ձեռնադրել զԳրիգորիս յաստիճան առաքելական. զի ինքն աներկբայ զառաջի եդեալ ճանապարհն վճարեսցէ։ Նա պատահեալ նմա որոգայթ ինչ 'ի վանքն՝ որ Շուղրն[1] կոչի, շինելով տուն, որ և 'ի վեր տանելն զհեծանն, զերծեալ 'ի ձեռացն անկաւ 'ի վերայ, և հրաւիրեաց մահու։ Սակայն կեցեալ զկնի զաւուրս հինգ, տայ Գրիգորի զաստիճանն, և ինքն վճարի, ուր և թաղեցաւ անդէն 'ի հինգհարիւր վաթսուն և երկու թուին։ Իբրև լուաւ զայս Դաւիթ[2] ոմն որդի Թոռնկայ 'ի կղզւոջն Աղթամարայ, արարեալ ժողով եպիսկոպոսաց հնգից ձեռնադրեցաւ կաթուղիկոս, պատճառելով եթէ Սահանիկ կաթուղիկոս եկն առ Աբուսահլ որդի Գագկայ 'ի Զորոյվանս՝[3] և անդ վախճանեցաւ. և կայր անդ սեղան պատարագի սրբոյն Գրիգորի, և գաւազանն և գօտին մաշկեղէն, և հողաթափ սրբոյ Հռիփսիմեայ և պերեզոտն ներկեալ արեամբ, և շղարշն՝ որ է գաստառակ, մնացեալ անդ 'ի ժառանգաւորաց. և 'ի ժամանակս հալածանացն ամբարձաւ 'ի կղզին Աղթամարայ։ Նա զի ասէն աթոռ է սա Թագաւորացն Արծրունեաց և վայել է լինել և պատրիարգ։ Սակայն ոչ եղև ընկալեալ, թէ և շատիցս եղև աշխատ ընծայիւք և աղաչանօք, մանաւանդ 'ի Անւոյ գլխաւորացն. որոց գրէ մեծ շնորհակալութիւն օրհնութեամբ պատրիարգն Գրիգորիս ամենայն վանորէիւք Սեաւ լերինն, և շրջակայ եպիսկոպոսացն ձեռագրով։

1. Շուղր անապատ յարեմտից հարաւոյ Մարաշու խնդրելի է։

2. Դաւիթ՝ որ առաջնորդ համարի կաթուղիկոսաց Աղթամարայ՝ սերունդ է զարմի Թագաւորաց Վասպուրականի. յորոց և յիշեալ Աբուսահլ որդի Աշոտոյ երիցու եղբօր Գագկայ՝ և ոչ սորա։ Իսկ կաթողիկոսութիւն Աղթամարայ երկու ևս դարուք երիցագոյն է քան զկարծեցեալն 'ի հասարակաց, հաստատեալ 'ի Գագկայ Թագաւորէ յամի 921. և յառաջնոյ կաթողիկոսէն, որ է Տէր Եղիշէ եղբօրորդի նորին Գագկայ, մինչև ցայժմ անընդհատ կարգին շարք կաթուղիկոսացն 'ի դիւանս Աղթամարայ։

3. Զորովանք որ և Սաղնապատ, 'ի սահմանս Վանայ քաղաքի։

Բայց մինչ կենդանին էր տէր Բարսեղ, մեռաւ պարոն Վասիլն մեծ իշխանաց իշխանն, որ Աստուծոյ յաջողելովն տիրեալ էր բազում բերդից և գաւառաց. և հոգաց զտունն նորա պատրիարգն Բարսեղ, և ետ զիշխանութիւնն 'ի տղայ Վասիլն, ձեռնասուն մեծ Վասլին՝ յազգէ կամսարական։ Զի տուն Վասլին էր յայնժամ հաւաքարան Թագաւորազանց և ազատաց Հայոց, և աթոռ հայրապետաց։

Ի նմին ամի մեռանէր մեծ կոմսն Անտիոքու Տանկրի քրիստոսասէրն և իրաւադատն. և առ զիշխանութիւնն Ռոճէր քորորդին իւր։

ԿԷ. Ի հինգհարիւր յիսուն և երեք թուին 'ի մարերի երկոտասանն՝ դողաց երկիր[1] հանդերձ աղիողորմ ձայնիւ որ գայր 'ի լերանց և 'ի գալարափուլ վիմաց, և օրն էր կիւրակէ և ձայնն վառ. վասն որոյ և կարծեցաւ թէ օրն է կատարած աշխարհիս. և փլան յոլով քաղաքք և մեռան քառասուն հազար անձինք, զոր թուել կարացին։

Ի նմին ամի մեռաւ Գէորգ վարդապետն մականուն Մեղրիկ. կոչեցեալ սակս քաղցրուսոյց վարդապետութեանն, նորոգօղ սուրբ ուխտին Դրազարկուն[2], որ էր 'ի Վասպուրական գաւառէ 'ի յԱնալիւր կոչեցեալ գեղջէ, սուրբ և սքանչելի և մեծ ճգնաւոր։ Եւ 'ի գալ միւս ամին, անկաւ հուր յերկնից 'ի Ճէմիայն Ամթայ, որ է մեհրայն հաւաքման մոլիմանաց, և այրեաց զքարաշէն յարկն և եղանէր բոցն մինչև յերկինս։

Ի հինգհարիւր յիսուն և հինգ[3] թուին Թորոս եղբայր Լեւոնի որդի Կոստանդեայ՝ կալեալ զտղայ Վասիլն ետ 'ի Պաղտոյնն 'ի կոմսն Ուռհայոյ, և նա չարչարեալ զնա եառ զամենայն երկիր նորա, և եղաւ աշխարհն 'ի Հայոց։ Եւ Վասիլն գնաց 'ի Կիլիկէ առ աներն իւր Լեւոն, և անտի 'ի Կոստանդինուպօլիս. և պատուեցաւ 'ի կայսերէ ազատովքն իւրովք։ Եւ 'ի միւս այլ ամին գնայ Պաղտոյն 'ի Եգէպն[4] 'ի վերայ Ա-

1. Սաստկութիւնս մեծ եղև 'ի կողմանս Եփրատացւոց և Մարաշոյ, որպէս պատմէ Մատ. Ուռհայեցի։

2. Դրազարկ անուանի մենաստան Կիլիկիոյ և քնարան Թագաւորաց Ռուբինեանց, յարևմտակողմն Սսայ խնդրելի է և հետաքննելի։

3. Հին. Օ. հինգ հարիւր յիսուն և եօթն։

4. Եգէպ, Եխիպ, ասան ամսր

պըլղարխալին՝ Հայոց իշխանին, որդւոյ Վասակայ[1], եղբօր Լիկոսին, որ էին տեարք հազար զօրականի. որ յառաջ ունէին զԹլպաշարն և զՊիրն, առեալ 'ի Թուրքաց մեծաւ քաջութեամբ. զոր 'ի խսար արկեալ ամ մի, էառ 'ի նմանէ զբովանդակն. և նա գնաց առ Թորոսն: Նոյնպէս քակեաց զմիւս իշխանն որ բնակեալ էր յԱրևընդան՝[2] զՌադարատ, և զԿոստընդին տէրն Կառկառայ[3], զոր մեռոյց 'ի կապանս 'ի բերդին Սամուսատ:

Ի հինգհարիւր վաթսուն և եօթն թուին մեռաւ թագաւորն Երուսաղեմի Պաղտոյնն, և առ զթագն միւս Պաղտոյնն կոմսն Ուռհայոյ: Ի նմին ամի մեռաւ Տափարն սուլտանն Պարսից, որ և մերձ 'ի մահ եղեալ՝ ետ սպանանել զաւագ կինն իւր զԳոհար խաթունն, որ ունէր ասեն առաջի իւր ութսուն[4] կուսանս 'ի սպասու իւրեանց թագ 'ի գլուխ, և էր տէր զօրաց բազմաց, յորոց գաղտ զէնուլ ետ. զի մի, ասէ, արասցէ այր զեղբայրն իմ, որ ունէր զխորին աշխարհն Պարսից. զՕղկան[5] քաղաք, և զՂզնէ, որ յիննսուն աւուրբ ճանապարհաւ անդր է քան զՍպահան. և զաթոռն տայր յաւագ որդին 'ի Մահմուտն, և զկրտսերն՝ զՄէլիքն՝[6] դնէր տէր Գանձակայ Հայոց: Նա 'ի գալ տարւոյն՝ մեռաւ Ալեքսն, և առ զթագն որդին իւր Փեռփեռօժէն, որ եղև բարեմիտ առ Հայս. և մեղադրէր հօր իւրում, որ մոլեալ 'ի սուտ առաջնորդաց, կրկին մկըրտելով խաչէր կրկին զՏէրն:

ԿԸ. Յայնմ ժամանակի զօրանայր Դաւիթ թագաւորն Վրաց որդի Գէորգեայ, որդւոյ Բագարատայ. և առ զՏփխիս 'ի Պարսից. և եհար զՄէլիք զսուլ-

յաջմէ Եփրատայ, ընդ մէջ Հառմկլայ, Պիրայ, Թլպաշարայ և Այնթապայ:

1. Վասակ Պահլաւունի է հօրեղբայր Ս. Ներսեսի Շնորհալւոյ:

2. Արեւընդան թուի յաջմէ Եփրատայ, յարևմտից Այնթապայ և Քիլիսայ, մերձ 'ի Կուրիս (Խորոս) քաղաք, ըստ Չամչեան հօր:

3. Հին օր. Ն, որ է Ըրէքհարբէր:

4. Կարկառ նովին անուամբ ճանաչի ցարդ, բերդաւան ամուր յեզր Եփրատայ յաջմէն, 'ի հիւսիսոյ վերոյնշանակեալ տեղեաց, ուր և հուն է գետոյն:

5. Օղկան է Օղքէնտ քաղաք առ Սիհուն գետով, 'ի հիւսիսոյ Սմրղանդայ:

6. Մէլիք Տօղրուլ, որ հակառակութեամբ կալաւ զաթոռ սուլտանութեան Պարսից, առ կենդանեաւ եղբօրն:

տանն Գանձակայ 'ի հարուածս սաստիկս. և հինգհարիւր արս սրահանգս բարձրացոյց 'ի փայտ մահու 'ի Տփխիս քաղաքի: Ընդ աւուրսն ընդ այնոսիկ, զի մեռեալ էր Մանուչէ՝ ամիրայն Անւոյ, և Ապլուար որդի նորա տիրէր նմա, այր անարի և կնամարդի, որ կամեցաւ վաճառել զԱնի վաթսուն հազար դենարի 'ի վերայ Կարուց ամիրային. և ետ բերել նալ[1] ծանրագին և բարձրահասակ 'ի Խլաթայ, և դնել 'ի վերայ գըմբեթի կաթուղիկէին, փոխելով զեղեալն յառաջնոցն. վասն որոյ սրտառեալ քրիստոնէիցն՝ կոչեն զԴաւիթ, և տան 'ի ձեռս նորա զքաղաքն Անի. և ընկեցեալ ըզզէնն ատելի 'ի պատուական գլխոյ կաթուղիկէին, զոր ունէր վաթսուն ամ վասն մեղաց մերոց համբերելով՝ եդին զպսակն զարդու, և զթագն Յիսուսի՝ զպարծանքն Պօղոսի, զփրկութեան մերոյ արեգակն, զխաչն աստուածընկալ. և հարեալ զժամահարն առ խաչին՝ դաւանեցին Աստուած զխաչեալն 'ի փրկութիւն հաւատացելոց: Իսկ Թագաւորն զԱբուլէթ[2], և զորդին իւր զԻւանէ թողեալ 'ի յԱնի՝ դառնայ յերկիր իւր, ընդ իւր տանելով զԱպլուար որդւովք իւրովք, որք անդէն մեռան և ոչ ևս դարձան: Նա ընդարձակեալ Դաւիթ զսահմանս Վրաց, առեալ զՈւխթիս[3] և զսահմանս իւր, և զԴադ, և զՏէրունականն, և զՏայուշ և ըզԿայեան և զԿայծոն, և զԼօռէ և զՏաշիր, և զՄահկանաբերդ, և զբոլոր իշխանութիւնն Հայոց Կիւրիկէի և Աբասայ, հնազանդէր և զլեառն Կովկասու, և ըզթագաւորութիւնն Սոնաց[4], զԱրաձուլք, և զՃքէթ, և զԳուալէթ, զՀերէթ, և մինչև ցծովն Կազբից և ցՀաղբանդ[5], և ցՇապուրան[6] քաղաք: Խնամածեալ

1. Նալ, نعل ըստ Թուրքաց, պայտ. զի լուսնաձև է՝ իբրև նշան մահմետականութեան համարէր:

2. Աբուլէթ յՈւռպելեան տոհմէ:

3. Ուխթիք, այժմ Օլթի, 'ի Տայս: Այլք 'ի տեղեացդ են 'ի սահմանակցութեան Գուգարաց և Ուտիոյ, և 'ի հիւսիսոյ Սիւնեաց և Արցախոյ:

4. Սոնաց թագաւորութիւն է Սուանք, Սուանէթ, 'ի հիւսիսոյ արևելից Եգերացւոց: — ԱՐԷՃՈՒԼՔ մասն են Ռաճայ, յելից հարաւոյ Սուանաց: — ՃԷՔԷԹ կամ ՃԷԿՔ են Չէրքէզք, յարևմտից հիւսիսոյ Ափխազաց, յեզեր Սեաւ ծովու: — ԳՈՒԱԼԷԹ, ԳՈՒԱԼՔ, յարևելից Ռաճայ: — ՀԷՐԷԹ կամ ՀԷՐ, յանուն եղբօր Հայկայ, մասն Կախեթու, Սղնախ կոչեցեալ այժմ, ընդ մէջ Վրաց, Աղուանից և Հայոց:

5. Նոյն ինքն Դարբանդ:

6. Ցայժմեանս Տաղստան:

և անիմաստ ազգին Վրաց, ընտրեալ մանկունս քառասուն առաքեաց 'ի Յոյնս ուսանել լեզու, և առնել թարգմանութիւնս և բերել. զոր և արարին իսկ. երեք 'ի նոցանէ լաւագոյն գտան և մտաւոր, զարդարեցին զազգն անզարդ։ Եւ ոչ էր նա երկմիտ յեկեղեցւոյ և յաղօթից մերոց. վասն որոյ բազում անգամ դնէր զգլուխ իւր 'ի ներքոյ ձեռաց մերոցն՝[1] խնդրելով օրհնութիւն։ Սա թագաւորեաց երեսուն և երեք ամ, և մեռաւ 'ի Տփխիս. և թաղեցաւ 'ի Գելաթ[2] 'ի գերեզմանս հարց իւրոց։ Եւ առ զթագն Դեմետրէ որդի իւր, որ պահեաց նոյնպէս զիշխանութիւն հօրն. և յաւել ևս զԴմանիս[3], և զԽունան[4] քաղաք առեալ 'ի Պարսից։

ԿԹ. Ի ժամանակին յայնմիկ որդի մի Ապլուարայ, որ կայր 'ի Խորասան, իբրև լուաւ զանցս հօրն և զեղբարցն և զմահն Դաւթի, գայ 'ի խնդիր հայրենի քաղաքին Անւոյ, և աղերսանօք խնդրէ յԱպուլէթէ և յաւագաց քաղաքին. և զի կայր քաղաքն 'ի մեծի վտանգի 'ի Թուրքաց, ետ 'ի նա Ապուլէթ խնայելով 'ի քրիստոնեայսն, ևս առաւել յորդին իւր Իւանէ, զի մի կորիցէ 'ի յաճախ մարտիցն. և ինքն անցեալ գնայ 'ի տուն իւր։ Իսկ Փադլուն որդին Ապլուարայ բարիոք խնամարկեալ քաղաքին և ամենայն սահմանացն՝ արիաբար ջանացեալ, արար խաղաղութիւն. առ և զԴուին և զԳանձակ և եղև անուանի։ Եւ զի կամեցաւ ձեռնարկել 'ի սուրբ կաթուղիկէն, զկնի երից ամաց եղև 'ի վերայ նորա արհաւիրք 'ի խոցոտմանէ հրակերպ արանց, որք ելանէին 'ի բանալեաց եկեղեցւոյն, զոր առեալ էր 'ի սուրբ սպասաւորէն Գրիգորոյ։ Եւ 'ի վաղւն կամէր կողոպտել զեկեղեցին 'ի զարդուէն՝ զոր նոր զգեցեալ էր առագաստն երկնաւոր զկնի վաթսնամեայ

1. Ակնարկէ 'ի խոնարհել թագաւորին ընդ ձեռամբ Յովհ. Սարկաւագայ վարդապետի։

2. Գելաթի մեծահռչակ մենաստան Վրաց յԻմերէթ, կառուցեալ 'ի նոյն ինքն 'ի Դաւթայ Բ, ուր և կայ ցարդ տապան նորին և պատկեր նկարեալ յորմն եկեղեցւոյն։

3. Դմանիք քաղաք և վիճակ Սոմխէթու։

4. Խունան է Հունարակերտ ըստ Հայոց, 'ի սպառեալ Գուգարաց, առ մեծահռչակ Կարմիր կամրջաւն Վրաց՝ 'ի վերայ Կուր գետոյ, 'ի սահմանակցութեան Վրաց, Աղուանից և Հայոց։

սգոյն. յորմէ տեսլենէ հիւանդացեալ և ահաբեկեալ, խնդրեաց աղօթս 'ի Գրիգորոյ՝ հանելով զնա 'ի բանտէ կապանացն յորում կայր. յաղագս զի 'ի կարճ աւուրսն գնացեալ էր 'ի Սիրապն. և 'ի դառնալն նորա 'ի Գրւլին՝ տեսեալ զահագին ժողովն Թուրքաց յոգնախուռն բանակին, աղաղակեաց 'ի ձայն մեծ և ասաց՝ Օրհնեալ է Քրիստոս Աստուած, որդին Աստուծոյ, զոր սովորն էր առնել օր ըստ օրէ յԱնի. քանզի աղօթակից ընկերն ասաց ընդ կատակ յականջս նորա, եթէ ահա տեղիս օրհնելոյ զՔրիստոս. վասն որոյ կապեալ զնա և տարեալ 'ի Փատրոն՝ եդին 'ի զնդան, և կամեցեալ անդ սպանանել 'ի նմին գիշերի յորում կալան. բայց Տէր պահեաց զնա այսպէս:

Հ. Նոյն և վարդապետք յայնմ ժամանակի. Յովհաննէս, որ և Սարկաւագ, 'ի գաւառէն Փառիսոյ 'ի քահանայական ազգէ, որոյ յիշատակք ճառագայթիցն փայլեն մինչև ցարդ 'ի բանս իւր, և 'ի նմանէ աշակերտեալսն. — Երեմիա որ և Անձրևիկ, որ զամս երեսուն չորակեր եղև, այնչափ հլու եղեալ վարդապետին իւրոյ, որ և 'ի սաստէն երբեմն թէ լուռ լեր՝ զամս երիս ոչ խօսեցաւ ընդ մարդ, բայց եթէ ընդ վարժիչն իւր 'ի կարիս. — և Սամուէլ երեց աշխարհի՝ [1] որ զգաւազանան յօրինեաց քրոնիկոնին՝ Անեցին: Նա նախ քան զսոսա Անանիա, որ զառաքելոյն համառօտեաց հրամանաւ կաթուղիկոսին Պետրոսի, Սանահնեցին [2]: Իսկ Սարկաւագ վարդապետն կեցեալ 'ի ժիր մշակութեան զաւուրս իւր, հանգեաւ 'ի հինգհարիւր ութսուն և ութ թուին [3]: Նա զկնի ամի միոյ լծակիցն իւր Ալաւկայ որդին Դաւիթ [4], որ կանոնք գրեաց դիւրահաս: Նա Թոքակերայ որդին [5] կոչեցեալ աշակերտ նորին, և

1. Սամուէլ անուանի ժամանակագիրն, որ ըստ Եւսեբեայ շարակարգէ զդէպս պատմութեան, և այլք ըստ նմանէ:

2. Անանիայ Սանահնեցւոյ ծանօթագոյն գրուած է մեկնութիւն թղթոց Պօղոսի. յիշի նորա և մեկնութիւնն Մատթէի, և Դիմադրութիւն առ Յոյնս:

3. Հին Օ. ՇԿԸ., որ է հինգհարիւր վաթսուն և ութ: Այլ ժամանակագիրք ՇՀԸ. ասեն, հինգհարիւր եօթանասուն և ութ, որ ուղղագոյն թուի:

4. Դաւթի Գանձակեցւոյ Ալաւկայ որդւոյ գտանին կանոնքն խրատականք գրեալ առ Արքայութիւն ում համբակ քահանայ:

5. Թոքակերի որդւոյն, Խոնթկայ որդւոյն Պետրոսի և Աքանչելատեսին Յակոբայ արդիւնք և գրուածք անծանօթք են մեզ:

այլ արք ձգնաւորք 'ի Մշղուանս, որպէս Պետրոս Խանթկայ որդին, և Յակոբ սքանչելին, որ յաւուր միում տեսանէր զսատանայ հեծեալ յուս կրօնաւորի միում՝ որ գայր առ նա 'ի խոստովանութիւն, և 'ի մօտիլն մտրակեալ զնա և խոթեալ[1], անդրէն դարձոյց որպէս փախստական : Եւ նա հրամայեաց սպասաւորին ընթանալ զկնի և բերել առ նա բռնութեամբ. և հարցեալ զնա ասաց. Եկի առ քեզ զղջացեալ 'ի յապաշխարութիւն, և յիշեալ զսովորական գործն իմ դարձայ 'ի քէն : Եւ սուրբն պատմեաց նմա զտեսիլն. և նորա լուեալ անկաւ յոտս նորա և խոստովանեալ էառ զլուծն ապաշխարութեան : Նոյն և կանայք Թագաւորազունք կրօնաւորեալք կուսութեամբ 'ի Քոբայրն[2], Սորաստ և Մարիամ, առ որս գրէր սուրբ վարդապետն Մարկաւագն զգուշական խրատս :

ՀԱ. Ի հինգհարիւր եօթանասուն և ինն թուին Սուրթի[3], որդի Սկզին՝ գայ 'ի Դուին և տիրէ, վերաւորեալ 'ի պատերազմին զՓատլուն, զոր նենգիչք ոմանք գաղտ խեղդեցին պատճառելով զվէրն, որ չէր մահու : Եւ առ զամիրայութիւնն կրտսեր եղբայրն Փատլունոյ Սուչէրն. և զկնի սակաւու աւուրն Մահմուտ. և անկաւ դարձեալ 'ի թշուառութիւն երկիրն Անւոյ :

Ի նոյն ժամանակաց ոչ հեռագոյնս ինչ՝ որդին Ապուլեթի Իւանէ կամեցաւ սպանանել զԴեմետրէ և զեղբայրն իւր զԴորդի. և հայր նորա Ապուլէթ ձողելով[4] զաչսն իւր առաջի որդւոյն՝ արգել զնա : Եւ էին երկոքեանն արգելեալք 'ի բերդն Դմանիս պատճառանօք ինչ խաբէութեան 'ի մէջ եղբարցն. զոր ապա իմացեալ Դեմետրէ, ասաց ցԻւանէ. Կալար զիս, մամ : Եւ նա զղջացեալ ասաց. Ոչ, արքայ, այլ ետու զեղբայր քո 'ի ձեռս քո, որ խնդրէ առնուլ զթագաւորութիւնդ : Եւ նա ըմբռնեալ՝ խաւարեցուցանէ, և թողու :

1. Յօր. ճարտկէն, խոնէլ: Հին. Օ. խոնձոնէլ:

2. Քոբայր կուսաստան 'ի Զորափոր գաւառի Գուգարաց. իսկ Թագաւորազունքդ են 'ի զարմից Կորիկեան կամ Հայ-Աղուան Թագաւորաց :

3. Սուրթ էմիր 'ի Գօղ կամ Ուղ տոհմէ Թրքաց, որք ընդ Սելչուկեանց խաղացին յարևմուտս :

4. Հին Օ. ճեպելով:

Յորում ժամանակի լցաւ դաշտն Գագայ[1] անթիւ և անհամար հեծելօք յամենայն ազգաց անօրինաց հաւաքեալ, որ կամեցան այրել զսուրբ խաչն՝ որ յանուն զօրավարին Սարգսի։ Եւ 'ի բարկութենէ Տեառն խելացնորեալք կոտորեցին զմիմեանս. զոր լուեալ Դեմետրէ երթեալ ժառանգէր անաշխատ զկարասի նոցա։ Ի սոյն աւուրս պատահի մի յեղբարցն Փատլոյ լուեալ եթէ հան նորա Կատայն 'ի տանէ Բագրատունի՝ քրիստոնեայ էր յազգէ Թագաւորաց, խաղայր հոգի իւր 'ի սէրն Քրիստոսի, և երթեալ 'ի լեառն սրբոյն Գրիգորի՝ մկրտեալ կրօնաւորեցաւ անդ՝ զամս հնգետասան մեծ ճգնութեամբ[2], մինչ զի տեսանէին լոյս անճառելի բոլորօքեալ ընդ երդս խցկանն. և զկնի գնաց 'ի Գորազարկն և անդ փոխեցաւ 'ի Քրիստոս։

Ի հինգհարիւր ութսուն թուին, Իւանէ որդի Աբուլեթին ապստամբեաց 'ի Գանձու՝ և հարան զօրք նորա 'ի Խուրթէ, զորոց կտրեալ զգլուխսն եփեաց թանով, և զգանկսն դնէր 'ի բարձրութեան մինարային 'ի շարս քարորմոյն։ Եւ 'ի գալ միւս ամին սպանաւ Իւանէ 'ի Դեմետրէ նենգիւ. և որդին նորա Թփլքաշն գնաց առ ամիրապետն Շահի Արմէնն, և առեալ 'ի նմանէ զԱշարունիս՝ աւերէր զտունն Վրաց մեծաւ քաջութեամբ։

Ի հինգհարիւր ութսուն և ութ թուին կործանեցաւ Գանձակ 'ի շարժմանէ[3]։

ՀԲ. Եօթն ամօք նախ քան զայս Շահի Արմէնն տիրեաց երկրին Խլաթայ և այլ բազում քաղաքաց, որ էր թոռն Սուքմանայ. և սպան զհանիկն իւր, որոյ ըսպանեալ էր զորդիսն և կալաւ զիշխանութիւնն։ Եւ իբրև զարգացաւ սա, կամեցան և զսա հեղձուցանել,

1. Գագ դաշտ և բլուր 'ի Կողբոփոր գաւառի Գուգարաց աշխարհի, 'ի սահմանակցութեան Ուտիոյ, յորոյ կատար շինեալ էր տաճար Ս. Սարգսի, և ատամն մի նորին սրբոյ եդեալ անդ 'ի ձեռն Ս. Մեսրոպայ. յայս ակնարկէ շարականն. “Առաւել պայծառ 'ի գլուխս Գագայ, 'ի գագաթան տեղւոջն, օրհնեալ սրբոյն Մեսրոպայ”։ Իսկ գումարտակդ այդ էր Թուրքաց ժողով, զորս եհար Դեմետրէ։

2. Հինն յաւելու. [illegible]։

3. Մեծ շարժն Գանձակայ եղև յամին 1139 յ30 սեպտեմբերի, զորոյ արկածս մանրագոյն յիշէն Կիրակոս պատմիչ և նորին վարդապետն Մխիթար Գոշ։

որ և զերծեալ Աստուծոյ յաջողելովն և տիրեալ երկոտասան քաղաքաց, կոչեցաւ Թագաւոր Հայոց. որ է Ռահի Արմէն՝ ըստ իւրեանց լեզուին, Որ և փեսայացոյց ինքեան զՍալտուխն [1] և խորհեցաւ նուաճել բարի առնել աշխարհի: Յորում ժամանակի էր և Ելտկուզ Աթաբակն [2] նոյնն բարի կամօք, յԱստուծոյ եղեալ երեքեան սոքա քրիստոնէասէր և աշխարհաշէն: Այս Ռահի Արմէն գնացեալ 'ի Սասունս՝ յօրանայր 'ի գեօղն միում. և լուեալ Միգենայ տեառն երկրին՝ երթեալ 'ի գիշերի միում պատէր զտունն յորում կայր, և յասելն ումեմն 'ի կատակս. Այ Միգէն, ո՞ւր ես. ետ պատասխանի ընդ երդն և ասէ. Կամ աւասիկ շնորհօքն Աստուծոյ: Եւ կալեալ տանի զնա յամուրս իւր. և զկնի աւուրց արձակէ ուխտիւ և երդմամբ սիրոյ:

Յորում աւուրս ել 'ի վերայ նորա զօրավարն Պարսից Ելտկուզն, և հարեալ գնաց ամօթով: Նա էառ զԱմուկ 'ի Խետէնկայ [3], և զՍասունս 'ի Միգենայ ամենայն վանորէիւքն. և պահէր 'ի խոր խաղաղութեան, զամս վաթսուն:

Յաւուրս սորա եղև սով սաստիկ 'ի Միջագետս, և քահանայ մի Աւետ անուն հայ ազգաւ՝ բարձեալ ցորեան իշոց՝ տանէր աղալ 'ի ջրաղացն, և 'ի տեսլենէ տառապելոցն աղէխարշեալ բաշխէր զամենայն աղքատաց. և զէշսն վաճառեալ նոյնպէս արար, և այլ ոչ դարձաւ 'ի տուն իւր, այլ զգեցեալ այծեայս շրջէր քարոզութեամբ ընդ քաղաքս և ընդ գեօղս քրիստոսաբար. զի ունէր բանս հանճարեղս, և ետ նմա Տէր շնորհս նշանաց. և զղջացեալ 'ի բանս նորա՝ դառնային բազումք 'ի չարեաց. և խնամ ածէր որբոց և այրեաց, լնլով զկարիս նոցա իւրով միջնորդութեամբ 'ի կարողացն: Եւ ել համբաւ զնմանէ. և գային յամենայն 'ի նա յոլովութիւնք ժողովոց, և եկն մինչև 'ի Մանծկերտ, և ել ընդ առաջ նորա Ռահի Արմէնն մեծաւ

1. Սալտուխ ամիրայ Կարնոյ:

2. Ելտէկիզ տիրող կողմանց Նախճաւանայ, աթաբէկ կոչեցեալ վասն խնամակալ և հայրադիր կալոյ սուլտանին Պարսից:

3. Խետէնէկ 'ի զարմից Թագաւորաց Արծրունեաց, որք յետ վաճառման աշխարհին իւրեանց 'ի Յոյնս՝ տիրէին մասին միոյ, մինչև 'ի ԺԵ դար:

հանդիսիւ և խնդրեաց 'ի նմանէ աղօթս և եմուտ պատուով 'ի քաղաքն : Նաև զի յանդիմանէր զպոռնիկ քահանայսն՝ քսեցին զնա առ շահն , թէ լուտեալ է Հոռոմ Թագաւորին , և ետուն զնա քարկոծել . յորոյ վերայ տեսին լոյս երկնային զերիս տիւս և զերիս գիշերս : Զոր տեսեալ շահն՝ աւաղեաց զմահ սրբոյն , և ետ հրաման պատուել զոսկերս նորա :

ՀԳ. Ի հինգհարիւր իննսուն թուին եկն Փերփերօժանն և առ զԿիլիկիա , և տարաւ տամբ և որդւովք զԼևոն եղբայր Թորոսի , և զպատկեր Տիրամօրն 'ի Կոստանդնուպօլիս . և անդ մեռաւ Լևոն , որդին Կոստանդեայ : Նաև զկնի երկուց ամաց մեռաւ Փերօժն , և առ զԹագն Կիռ Մանիլ որդի նորա : Նաև 'ի նոյն ամի մեռաւ Թագաւորն Երուսաղեմի . երկոքին սոքա [1] 'ի յորսի որոգայթեցան , վասն խոզի՝ Թագաւորն Յունաց , և վասն նապաստակի՝ Թագաւորն Երուսաղեմի :

Ի հինգհարիւր իննսուն և չորս թուին Զանգի ամիրայն [2] էառ զՌուհա . և զկնի երկուց ամաց էառ զնա Ջօսլինն , որ էր տէր նորա . և զկնի եօթանասուն աւուր սպանաւ 'ի Թուրքաց , որք եկին վերստին առին զքաղաքն , և մեռաւ քաջն և յոյժ հայասէրն . որում արար ողբս Գրիգոր վարդապետն , որ հայրն էր խոստովանութեան նորա :

Իսկ 'ի հասանել թուիս մերոյ 'ի վեցհարիւր ամն , եկին որդիքն Լևոնի՝ Թորոս և Ստեփանէ , և մեծաւ իմաստութեամբ և քաջութեամբ տիրեցին հայրենեաց իւրեանց Կիլիկիոյ , հարեալ զԱնդրոնիկոս զօրագլուխն Յունաց , որ կայր անդ երկոտասան հազարաւ . զոր լուեալ Մանիլն 'ի վարձու կալաւ միանգամ և երկիցս զՄասուդ [3] սուլտանն , առնուլ զքէն վրիժուց նորա . որ և 'ի յերկրորդ մուտն սուլտանին անկաւ ահ Տեառն 'ի վերայ նոցա , և փախեան առհասարակ , զմիմեանս սատակելով , անդէն թողեալ զընաւ արարս իւրեանց . քանզի Րղուպն զօրագլուխ նոցա կամեցաւ գնալ երեք

1. Փերփերօժանդ կամ Փերօժդ է Յովհ. Կոմնենոս կայսր . և Թագաւորն Երուսաղէմի՝ Ֆուլք , որք մեռան յամի 1142 :

2. Էմատէտտին Զանկի Ա , սուլտան Դամասկոսի , հռչակեալ առմամբն Եդեսիոյ , զոր ողբերգեաց Ներսէս Շնորհալի :

3. Մասուտ սուլտան Իկոնիոնի , որ տիրէր յամին 1117-1155 :

հազարաւ յԱնաւարզու 'ի կողմանս Անտաքու, յորոյ վերայ անկեալ Ստեփանէ եղբայր Թորոսի՝ սատակեաց զամենեսին. և 'ի լսել զձայնն զուժին 'ի բուն բանակին՝ դողացին առհասարակ, և ոչ մնաց շունչ զօրութեան 'ի նոսա։ Նա և հազիւ զերծեալ սուլտանն՝ անկեալ 'ի յորջս իւր սատակի, տալով զպատիւն Խլիճ Ասլանայ որդւոյ իւրոյ, 'ի թուին վեցհարիւր և չորս։

Ի նմին ժամանակի առին փռանգք զԱսկաղոն քաղաք։ Ի սոյն ժամանակս եկն Մանուէլն 'ի Կիլիկիա, և սիրով նուաճեաց զԹորոս. և առեալ զնա և զզօրսն փռանգաց, գնաց 'ի վերայ Հալպայ. և լուեալ համբաւ յաղթողին՝ դարձաւ 'ի տուն. և ծայրաքաղ արար 'ի նոցանէ Թուրքն երկոտասան հազար 'ի ճանապարհին։

ՃԴ. Իսկ Թագաւորն Վրաց Դեմետրէ կալեալ ըզթագաւորութիւնն ամս երեսուն և երկու, վախճանի. և առնու զթագն՝ Դաւիթ որդին իւր, կորովամիտ և բարեսէր, և հանեալ 'ի բանտէ զԹիրքաշն, զհօրն կապեալն, դնէ զօրագլուխ, և զկնի ամսոյ միոյ մեռանի. (ոմանք ասեն 'ի դաւելոյ Օրբելեանց 'ի Սմբատայ և յԻւանէէ, վասն 'ի տեղի նոցա դնելոյ զԹիրքաշն, բանս եդեալ ընդ Գէորգայ եղբօր Դաւթի՝ զնոսա դնել զօրավար[1]). և առ զթագն Գէորգի, 'ի թուին վեցհարիւր և հինգ։

Յաւուրս յայսոսիկ յայտնեցան 'ի Շահապիվանս՝ մարմինք սպանողացն Գնելոյ՝ անփուտ հանդերձիւք, և արիւնաշաղախ մարմնով՝ որպէս և սպանանն, ըստ անիծից սրբոյն Ներսիսի[2]։

Ի վեցհարիւր և տասն թուին էառ Գէորգի Վրաց Թագաւորն զԱնի 'ի փատլուն ամիրայէն. որ փոխեաց զՇատատն եղբայր իւր. և զկնի յիսուն աւուր եկն Շահի Արմէնն բազում հրոսակօք 'ի վերայ հարուածեալ և ախտացեալ քաղաքին 'ի Սոնացն։ Զոր լուեալ Գէորգի անդրէն դարձաւ, և եհար զնոսա կոտորմամբ սրոյ, զորոց զթիւն ոչ ոք կարաց գիտել.

1. Փակագծեալ հատուածդ չէք 'ի Բ. Օ։

2. Գնել ինք սպանաւ 'ի Շահապիվան, իսկ սպանիչք նորա ոմն 'ի Բասէն և այլք այլուր. այլ եթէ ոմանք 'ի դաւաճանացն անդէն առօրին սպանան, ոչ գիտեմք 'ի հընաւանդ պատմութեանց։

բայց ձերբակալքն էին քսան հազար. և թողոյր 'ի յԱնի զՍադուն[1] իշխանն, յորոյ վերայ կարծիք ապըստամբութեան եղեն՝ վասն խնամով[2] ամիրացուցանելն զպարիսպ քաղաքին, զոր իմացեալ Թագաւորն ընկենու զնա 'ի պատուոյ։ Եւ նա սրտառեալ գնաց հատուած առ Ելտկուզն. զոր խաբէութեամբ կալեալ Երիսթաւն[3] Շաքէոյ[4], բերէ անդրէն առ արքայ և մեռանի. և զիշխանն Զաքարեան զՍարգիս՝ դնեն 'ի տեղի նորա 'ի յԱնի։ Իսկ Ելտկուզն զայրացեալ չէր ինչ ձեռնհաս առնել, զի չորեք հազար Պարսիկ կորեաւ ընդ Սադունին։

Իսկ Թագաւորն Վրաց կուտէ առ ինքն զկովկասային զօրսն, և գայ առնու զԴունին՝ խստագոյն խայտառակեալ զնոսա 'ի սուր և 'ի հուր, բաց 'ի քրիստոնէիցն որ անդ. և զգագաթունսն Թանեփեացս առեալ 'ի մնիրայէն՝ զարդարէ ոսկեթել հանդերձիւք. և եդեալ 'ի գագաթս՝ բառնայ 'ի յուսս մուկրեաց, և բոկոտիւք տայ տանել մինչև ցՏփխիս, նախագահ քաղաքն իւր, 'ի վեցհարիւր երկոտասան թուին։ Զոր լուեալ Ելտկուզն գայ յայրեցեալն և 'ի քանդեալն Դունին, և խոցոտեալ սրտիւ և մրմռեալ իբր զգազան կատաղի՝ գայ 'ի Մրեն և այրէ անդ զամիոցն, ուր ողջակիզեցան վասն Քրիստոսի ոգիք իբրև չորեք հազար. և դառնայ 'ի դաշտն Դադայ, և ասաց այրել զխաչն հռչակաւոր. վասն որոյ 'ի բարկութենէն Տեառն պատժեալ լինէին 'ի տուէ և 'ի գիշերի 'ի թունաբեր օձից։ Եւ զկնի 'ի Թագաւորէն Վրաց ահաբեկեալ փախչի, թողլով զկարասին և զգերիսն անդէն. սակայն գրգռէ զՕռվիզ սուլտանն, զորդին Մահմուդի զԱսլան[5] և առնէ յԱնի, և զամս չորս պահէ 'ի տառապանս անվար և անհանգիստ. մինչև Թագաւորն Վրաց Գէորգի ողորմելով քաղաքին՝ կոչէ առ ինքն զսուլտանն և տայ 'ի նա զԱնի. զի չէր ձեռնհաս պահել 'ի բազմութենէ անօրինացն։

ՀԵ. Յայնմ ժամանակի աթոռն Հայոց շրջեալ 'ի

1. Սադուն յԱրծրունեաց ազգէ իշխան հուժկու։
2. Հինն. 'ի սրփայառուրնեամբ։
3. Երիսթաւ՝ նախարար կամ իշխան մեծ նշանակէ առ Վիրս։
4. Շաքի անուանի քաղաք և գաւառ Աղուանից. զարգիս մի 'ի կուսակալութեանց Տաղստանի։
5. Ասլան Սելջուկեան սուլտան Պարսից։

բազում վայրս՝ 'ի Կարմիր վանքն, և 'ի Շուղրն, և 'ի Օձովքն, գնացեալ դադարէ 'ի Հռոմկլայն՝ կոչեցեալ դղեակն, վասն Հռոմ աբեղայի անդ բնակելոյ. յորմէ առին Տաճիկք, և 'ի նոցանէ Վասիլ իշխանն Հայոց, և 'ի նմանէ առին Փռանգք. և 'ի յորսի պատահեալ իշխանին որոգայթիւ մատնիլ 'ի ձեռս Տաճկաց, զոր տարեալ 'ի Հալպ, մեռաւ անդէն. և կին նորա՝ որ 'ի Հռոմկլայն, առաքէ 'ի Օձովքն, և բերեալ զպատրիարգն՝ տայ 'ի ձեռս նորա ասելով, եթէ Կայ իմ որդի յայնկոյս ծովուն առ ծնողսն իմ. և երթամ, եթէ լինի կենդանի՝ առաքեցից առ քեզ, և տուր 'ի նա՝ որպէս ձըռմարխտ աւանդապահ. և թէ ոչ՝ լաւ քեզ քան օտարաց: Նա գնացեալ առաքէ զորդին, որում տուեալ ինչս յոլով՝ դարձուցին անդրէն. զի և ինքն ոչ վստահանայր միայն բնակիլ 'ի մէջ այլազգեաց. քանզի տիրեալ էր Թուրքն բոլոր շրջակայ գաւառացն. և սեփհականեցաւ աթոռ Հայոց. զոր բարեպաշտ կին Ջօշլին իշխանին շարժեալ 'ի հոգւոյ ետ յերկոսեան հարազատսն 'ի Տէր Գրիգոր և 'ի Ներսէս:

Որ և 'ի վեցհարիւր հնգետասան թուին կատարեալ Տէր Գրիգոր՝ յաջորդէ զաթոռն Տէր Ներսէս: Րա սոսա առաքեաց Մանիլն վասն հաւատոյ դաւանութեան. և ետուն գրով, յոյժ կորովի և հանճարի ըննաւից դաւանութիւնս, զոր ունիմք. և կամեցան միաբանութիւն առնել ազգացս, և մնաց գործն անկատար, որպէս ցուցանեն ընդարձակ մատենագիրք:

Ի նմին ամի ահագին շարժ եղև և կործանեցաւ Եզնկայն [2]:

Ի սոյն ժամանակի առան և մնացեալ դղեակք Կապանին [3] յայլազգեաց, Գրհամ և Գեղի և Կաքաւաբերդ, վասն սաստկացեալ մեղաց մերոց:

Յորում ժամանակի և 'ի մխիթարութիւն քրիստոնէից՝ գեղեցիկ պտուղն հառուն և քաղցրաճաշակ պատանին Յովսէփ՝ [4] վկայեաց չարչարանօք յամենանն

1. Հռոմկլայ, Ուռում-գալէ, յեզր Եփրատայ, յաջմէն, 'ի հիւսիսոյ Պիրիճիկայ: Աստանօր ընակութեամբն Կլայեցի կոչեցաւ Շնորհալին Ներսէս:

2. Հինն յաւելու, 'ի գաւառին Եկեղեաց:

3. Կապանն՝ Թագաւորութեն Բաղաց է, որ է Սիւնեաց, և յիշատակեալքդ են ամուր բերդք տէրութեանն այնորիկ:

4. Յովսէփդ Նոր վկայ կոչի,

յաՀեկի 'ի քսանն[1], և Թաղեցաւ 'ի Հաւութառ[2]. որ էր պարսիկ ազգաւ , 'ի սահմանացն Գռունայ , 'ի գեղջէն որ Նորաշէնք կոչի ։

Ի սոյն աւուրս և Գէորգ Մեչկայ[3] 'ի գնալն իւր 'ի Հռոմ՝ յարոյց 'ի մեռելոց զառաջնորդն իւր զԳրիգոր , զոր սպանին յելուզակք 'ի գաւառին Ունկռաց . որ և մեղադրէր նմա , եթէ ընդէ՞ր յանձառելի բարութեանցն յորում կայր՝ դարձուցեր վերստին 'ի Թշուառութիւն կենցաղոյս ։

Այլ և նշան և 'ի Հռոմայրն 'ի հռչակաւոր սուրբ Նորշանէն , ածեալ մանուկ մի կոյր 'ի ծնէ և եդեալ 'ի վերայ աչացն տեղւոյ զգէնն աստուածամուխ՝ նոյնժամայն պատառեալ տեղւոյ աչացն և հոսեալ արիւն բազում՝ կազմեցան աչքն անարատ ամենևին 'ի փառս խաչելոյն Աստուծոյ ։ Այս էր 'ի յՈւձնայ , (և հօր վանիցն Պետրոս էր անունն 'ի լինել գործոյն[4]) ։

Ի վեցհարիւր քսան և մի Թուին կատարեաց պատրիարգն Ներսէս զվարս իւր . եօթն ամ պաշտեալ զպատիւն , և եօթն եպիսկոպոս ձեռնադրեալ ձրի , արք անուանիք և ընտիրք , որ վարդապետ և որ փիլիսոփայ ։ Այս առնու զքօղն Գրիգոր եղբօրորդի իւր ձեռնտուութեամբ Նորաշնին[5] ։ Այս միւս եղբօրորդին Գրիգորէս , որ և Ապիրատ կոչէր , չոգաւ 'ի Լամբրոնն , և խնամէր զՏարսոնի վիճակն ։

ՀԶ. Ի վեցհարիւր քսան և երեք Թուին էառ Գէորգ զԱնի երկրորդ անգամ , 'ի սադրելոյ Իւանէի ամիր սպասալարի , զի ինքն նստցի 'ի նմա , և արասցէ գերադարձ քրիստոնէից . և զՇահնշահ[6] ամիրայն տա-

զորոյ զվարս գրեաց Շնորհալին՝ երբեմն ասպնջական նորին և խրախուսիչ ։

1. Հինն երկարաբանէ · [illegible]

2. Կամ Հայոց-Թառ · հռչակաւոր մենաստան մերձ 'ի Գառնի , յարևմտից Գեղամայ ծովուն ։

3. Ի Յայսմաւուրս , աՀկի իէ , մանր պատմին դէպք աչիկայիս , այսինքն կուրին Գէորգայ Արճիչեցւոյ , որ յուխտ երԹալով 'ի Հռոմ՝ սրախողխող եղև յերկրին Ունկարաց , և բժշկեալ՝ յետ կատարման ուխտին դարձ արարեալ բնակէր առ դրամբք եկեղեցեաց Անւոյ ։

4. Փակագծեալքս չէք 'ի Բ. Օ ։

5. Նուրէտտին Մահմուտ , որդի և յաջորդ Զէնկեայ ։

6. Շահնշահս այս Թուի որդի Փատլուն ամիրայի Անւոյ , 'ի Շէտտաեան տոհմէ ։

րաւ ընդ իւր արքայն, և այլ ոչ ևս դարձաւ անդրէն ։ Եւ լուեալ զայս ամենայն Թուրքաստանայ՝ հաւաքեցան 'ի մի, զԱլփասլանն [1] կոչեցեալ սուլտան՝ ընդ իւքեանս առեալ գան 'ի յԱնի, և աւերեն զտունն Շիրակայ ։ Իսկ Իւանէ կամեցաւ տալ զքաղաքն 'ի Թուրքն, և ոչ աջողեցաւ գործն. զի իմացաւ քաղաքն և զգուշացան, և գնաց սուլտանն և աթաբակն իւր սրտախոցեալ, և մեռան երկոքեան 'ի միում ամի ։

Ի նմին ժամանակի ել 'ի բանտէն Կարուց մեծ իշխանն Ապիրատն և եկն 'ի յԱնի. սա էր եղբայր եպիսկոպոսի քաղաքին տեառն Բարսղի, որ աղաչեաց զԹագաւորն Վրաց, և ետ փոխան նմա ամիրայ, և առ զնա և եօթնևտասն հազար դահեկան ։ Յայնմ ժամանակի յայտնեաց Իւանէ զչարութիւնն իւր, զեղբօրորդի Թագաւորին իւրեանց զԴեմնէն և զյոլովս յազատացն յինքն յանկուցեալ՝ խորհեցաւ սպանանել զԹագաւորն, մինչ կայր 'ի Սախատա [2] յանհոգս. զոր իմացեալ յառնէ միջէ՝ փախեաւ 'ի Տփխիս, զի սակաւամարդ էր. և անդ հաւաքեցան առ նա բազումք՝ Թողլով զչար խորհուրդն ։ Եւ յորժամ զօրացաւ կողմն Թագաւորին, և կամէր գնալ 'ի վերայ ապստամբացն՝ որք 'ի Սախատէ, փախեան յամուրս իւրեանց, և ապա մտին 'ի Լօռէ, բաց 'ի Լիպարտէն՝ որ չոգաւ 'ի Պարսից կողմն երկու որդւովք. և էառ Թագաւորն զամենայն գանձ Օրբէլեանց, և ամենեքեան անկան յոտս Թագաւորին, եղբօրորդին և ընդ նմա այլքն, մինչև ինքն իսկ Իւանէ. զորս զաչսն կուրացոյց, և զկրտսեր որդի նորա զԲաւլթար և զԴնէն, զորդի Լիպարտին սպան, և յոչինչ եղեն չար խորհուրդքն ամենայն, 'ի վեցհարիւր քսան և վեց Թուին ։

Այլ զԱրփասլան սուլտանն փոխեաց Տուղրիլն, և զԵլտկուզն՝ Փահլաւանն [3], որ տիրեաց խորին աշխարհին, և Ղզլասլան՝ վերին աշխարհիս [4], որք էին որդիք

1. Ալփ Արսլանդ է Ասլան շահ Սելջուկեան Պարսից ։

2. Զսախատա յիշէ և Ստեփաննոս Ուռպելեան, երկարագոյն պատմելով զանցս իրացս, և զտեղին կոչէ ևս Դարպաս-Ագարակ. և է այն գեօղ 'ի Ծորոփոր գաւառի Գուգարաց, յայժմեանս Ճուլավէր կամ Պօռչալու, վիճակ Սոմխէթու ։

3. Փահլաւան և Գըզըլ Արսլան որդիք Ելտկուզի աթաբէկի ։

4. Խորին աշխարհ իմանայ ըղկողմանս Պարսից, Վերին՝ զՄարս ։

նորա։ Ի նոյն աւուրս առաւ Ծառաքար[1] 'ի գողոց Հրամանաւ Պարաչայ ամիրային Կեչրորոյ, որ վաճառեաց զնա Խզլասլանայ ընդ բազում ոսկւոյ. և նա բնակեցոյց անդ արս փնասակարս որք ոչ դադարէին յարենհեղութենէ 'ի տուէ և 'ի գիշերի. մինչև զքրիստոնեայս 'ի խաւարային անդունդս ընկղմեալ սովով և գարշ հոտով առաջնոց մեռելոցն՝ սպանանէին. որ և հինգ կրօնաւորս անուանիս դառնակսկիծ վիրօք ընդ կատակս խաչանիշ հարմամբ դանակացն փողոտէին։

ՇԿ. Ի վեցհարիւր քսան և ութ թուին թագաւորն Երուսաղեմի երեքհարիւր ձիաւորով եհար զՍալահադինն[2] 'ի դրանն Երուսաղեմի զօրութեամբ սուրբ խաչին, որ եկեալ էր հարիւր քառասուն հազարաւ յառնուլ զԵրուսաղէմ, բարձեալ ջուր վաթսուն հազար ուղտով, (որք միշտ կրէին 'ի գետոց և յաղբիւրաց[3])։ Յառաջ Յուսուֆ էր անուն նորա, որդի Այուբին, առն տառապելոյ Դունացւոյ, որ և 'ի մեծանալն կոչեցաւ Սալահադին՝ որ է խաղաղութիւն հաւատոց[4]։

Ի վեցհարիւր քսան և ինն թուին Գէորգի եբարձ զգող և զաւազակ յերկրէ. զի ամենայն զօրացն 'ի միասին եղելոյ՝ օրինադրեաց կախել զփայտէ վասն փոքու և մեծի իրաց՝ անողորմ զամենայն մարդ, և յոլովք 'ի պատուաւորաց կախեցան. և զգտեալ ինչսն տանէին կախէին զփայտիցն պատուհասից, և կախեցին մինչև ցանասուն և ցշուն և ցմուկն, և ահ անկաւ 'ի վերայ ամենեցուն, և եղև խաղաղութիւն մեծ։

Յայնմ ժամանակի մեռանէր Սանիլն. և կին նորա՝ զի դուստր էր Ռընձին Ռնտաքայ, կամեցաւ Փըռռանգ այր առնուլ և սպանանել զորդին իւր զՌչէքսն՝ որում տուին զթագն։ Եւ փոխեաւ տղայն յեկեղեցին և ազգ առնէն Ռնդրօնիկայ ազգականին Սանիլին. և գայ սպանանէ զսեաստոսն՝ որ կամէր առնուլ զթագուհին. և զաղջն Փռանգաց՝ որ էին 'ի քաղաքին՝ կոտո-

1. Ծառաքար վանք և Կեչրոր քաղաքաւան յԱրեղեան գաւառի Այրարատոյ, 'ի կողմանս Բասենոյ մերձ յԵրասխաձոր։

2. Սելահէտտին կամ Սալատին յ' Էյիւպեան Քիւրդ տոհմէ, անուանի աշխարհակալութեամբ, նուաճեաց զԴամասկոս, զՀալէպ, և զԵրուսաղէմ յամի 1187։ Հօր նորա Դունեցի կոչելոյ ոչ գիտեմ զոք երաշխաւոր։

3. ( ) Հին Օ։

4. Բ. Օ. Խաղաղութեան հաւատոց։

րէ, և որք 'ի նաւ մտեալ փախչէին, նֆատ ձգեալ 'ի նաւսն՝ այրեաց երեսուն հազար արանց. սպան և զոր-զայն, և առ զթագն։ Նա և առաքեաց կոչել զայր մի թագաւորազն Փխիկ անուն, զի և զնա սպանցէ. և նորա զօրացեալ սպան զկոչողն. և մեծաձայն գոչմամբ երթայր 'ի սուրբն Սոփի. և շարժեցաւ քաղաքն, և չարամահ սատակեցին զԱնդրոնիկոս, և զերկու որդիս նորա անմեղ մանկունս՝ ծովամոյն արարին։

Ի վեցհարիւր երեսուն և մի թուին Խսարաչայն որ էառ զՕռաւաքար, և խորտակեաց կռանաւ զխաչն Գորոզյ կոչեցեալ, անկեալ 'ի սիրտ նորա արհաւիրք երկիւղի՝ թողու յանկարծակի զտուն իւր զԱեչրոր և զՍուլթիան և զամենայն ձորն Ներասխայ, և երթայ կնաւ և որդւովք 'ի Գուլին. և տեսանէ այր մի ահաւոր՝ որ ասէր ցնա, Նա եմ խաչն Գորոզյ՝ զոր կոտորեցեր. և ահա սպանանեմ զքեզ ձեռօք սիրելւոյն քո Ռահի-արմէնին։ Նա պատմեաց զտեսիլն, և 'ի վաղիւն գնաց բռնութեամբ զերծեալ, թէպէտ արգելուին զնա վասն երկիւղի տեսլեանն, մինչև փակեցին ըզդրունսն. այլ նա ընդ պարիսպն իջեալ, և երկու ջնիբայով[1] չոգաւ 'ի Մանծկերտ, և եկաց առաջի Ռահին, որ և նոյնժամայն յարուցեալ եհար զգլանակն ընդ սիրտն և սատակեաց զնա։

Ի նոյն ամի Սարգիս ոմն խաչենեցի[2] կայր 'ի Գանձակ և առնոյր խարաճ[3], և ոմն պարսիկ 'ի յաւագ ուրբաթուն խաչեաց զնա ընդ պարիսպն, ասելով. Խաչակից լեր Քրիստոսին քում. զոր լուեալ իշխանք նորա՝ տարան առ ինքեանս զպարսիկն և չարամահ սպանին։

Ի սոյն աւուրս և Յորդանան ոմն 'ի Տաճիկ տոհմէ վկայեաց մեծ հանդիսիւ 'ի Կարնոյ քաղաք[4]. և եդան նշխարք նորա ընդ Յովսեփայ և ընդ Սահակայ ազգականին իւրոյ[5]։

ՃԸ. Ի վեցհարիւր երեսուն և երեք թուին մեռաւ Գէորգի Վրաց թագաւորն և ոչ գոյր նորա որդի, և

1. ջնիբա, ճէնիպէ, ճէնայիպ جنايب, جنيبة ըստ Արաբացւոց. որ է նժոյգ 'ի ձեռանէ։

2. Հարկահան ամիրային Գանձակայ։

3. Հարկ, մարդահարկ, ըստ արաբ լեզուի։

4. Բ. Օ. Ի Կարին քաղաք։

5. Այսինքն՝ ազգակցացն, որպէս և առի յերես 91։

Գեմնայն յաչաց և յերանաց յապաւած էր, որդին Դաւթի: Նա առնու զթագն դուստր նորա Խա-մարն, բերեալ նմա այր զորդին Արղոց թագաւորին ըղ-Ասլան, որ առ զԱնուլին քաղաք: Նա 'ի գալ միւսոյ ա-մին մեռաւ Շահի-արմէնն անորդի, և աւեր և սուր և գերութիւն բազմացաւ 'ի վերայ աշխարհի նորա 'ի շըր-ջակայ ազգացն: Նա զի Թոռն Վիգենայ՝ Շահնշահ քեռորդի տեառն Գրիգորի կաթողիկոսի առընթեր կայր մահուան շահին, առեալ զխորմն անկանի 'ի Սա-սունս. և անդ անկաւ 'ի ձեռս նորա Բեկգամուրն՝ որ էր իշխան ամենայն տան շահին. առնու 'ի նմանէ զբերդն որ Թառաձեան [1] կոչի, և ուխտիւ արձակեաց զնա, որ և ստեաց ուխտին 'ի տիրելն իւրում աթոռոյ շահին. և զայն ևս և զամենայն Սասունք՝ եհան 'ի նմանէ, և արկ ընդ հարկաւ զեկեղեցիս և զուխտս:

Ի վեցհարիւր երեսուն և չորս թուին ըմբռնեցաւ Ռուբէն 'ի բընձէն, և թափեաց զնա Լևոն եղբայրն իւր, որդին Ստեփանեայ, որդւոյ Լևոնի, որդւոյ Կոստանդեայ, որդւոյ Ռուբենայ, որ տիրեաց եօթանասուն և երկու բերդից և զօրացաւ 'ի վերայ Յունաց և Պար-սից, և արար ընդ հարկաւ զԿլըճասլան սուլտանն մէ-ջերկրեայ [2]:

Ի վեցհարիւր երեսուն և հինգ թուին առին Նսե-ցիք զՕտառաքար զհայրենիս տեառն Բարսղի, յան-խնայ կոտորելով զօրս անդ, բաց 'ի կանանց և 'ի ման-կանց: Զոր լուեալ Մլեհերն ամիրայն Գունայ ձողէր զմօրուսն, և սեաւ զգենոյր 'ի վերայ կնոջն և որդեացն որ անդ, և 'ի վերայ զօրացն կոտորման. և 'ի քրիստո-նէից փառաւորիւր սուրբ Երրորդութիւնն:

հթ. Իսկ 'ի վերայ Յունաց թագաւորեաց Փլիւկն որ և Սահակ, և յարոյց հալածանս և չարչարանս հայ-ազգեան ազգաց, զի դարձցին յաղանդ նոցա. վասն որոյ գրէ առ նա աղերսանս պատրիարգն Գրիգոր խա-ղաղանալ ընդ ժողովրդեանն Աստուծոյ. և ոչ լուաւ նմա, այլ զյոլովս դարձոյց 'ի կրօնս իւր, և զայլս հա-լածականս արար. ուր կային երեք եպիսկոպոսի ա-

1. Թառաձեան կամ Հոլեանս յիշատակի 'ի Տարօն, որ 'ի ժամա-նակի պատմութեանս ընդ Սասնոյ համամերձակ էր ըստ վարչութեան:

2. Կըլըճ-ասլան, սուլտան Ի-կոնիոնի:

թուք և հազար և վեցհարիւր քահանայք. զորս 'ի մի հաւաքեալ բռնադատէր, յորոց սակաւք զերծան ամբողջ հաւատով։ Եւ զայսպիսի աղէտս գրեաց յարևելս տէր Գրիգոր. և խոշորեալ[1] սրտիւ ոչ ինչ կարացին առնել։ Եւ առաքէր և նոյն պատրիարք եպիսկոպոս մի Գրիգոր անուն 'ի Պապն Հռոմայ վասն վտանգին, որ 'ի Յունաց կրէին Հայք, և զի խնդրեսցեն աղօթս և օրհնութիւնս, որպէս և առաջինքն, զոր կարի մեծարեաց Պապն, և ետ պատարագ առնել և հաղորդեցաւ (!), և զգեցոյց նմա զիւր քահանայապետական հանդերձն։ Եւ հաւաքեաց առ ինքն զամենայն պատուաւորս, զկայսրն Ալամանաց, և զթագաւորն Անկլիզաց, և զթագաւորն Փռանցիսաց, իւրեանցայովքն. և զպատրիարգն Ալամանաց՝ որ ունի քսան և հինգ հազար ձիաւոր. և զարհի եպիսկոպոսն Սպանիոյ, որ ունի քսան հազար ձիաւոր, և զարքեպիսկոպոսն սուրբ Յակոբայ՝ որ տիրէ հինգ հազար ձիաւորաց. և զմեծ արքեպիսկոպոսն մեծի քաղաքին Մելանայ, որ տիրէ երեսուն և վեց հազար ձիաւորաց. և յայսմ կողմանէ զպատրիարգն Երուսաղեմի։ Եւ 'ի խորհուրդ մտեալ նոքօք՝ գրեաց գիր հրամանաւ սուրբ առաքելոցն 'ի նոցա երեսաց, եթէ Հայոց պատրիարգն յայնկոյս ծովու իշխանութիւն կալցի 'ի վերայ Հայոց և Յունաց և ամենայն ազգաց, որպէս մեք յայսմ կողմանէ երկնաւոր և երկրաւոր բանալեօք։ Եւ վասն զի երկայն ճանապարհ է 'ի մէջ իմ և եղբօրն իմոյ, Հայոց պատրիարգին, առաքեցի նմա զիմ վակասն և զպսակն և զկօշիկն, զի զայն զգեցեալ պատարագեսցէ մատանեաւ հանդերձ։ Եւ ասէ ցեպիսկոպոսն Գրիգոր. Տար և զգեցո պատրիարգին. և յայնմ հետէ նմա լիցի իշխանութիւն յաւիտեանս յաւիտենից[2]։

2. Եւ 'ի վեցհարիւր երեսուն և վեց թուին եղև զի վաճառականք Սալահադինին անցանէին ընդ Պաղեստինէ չորեքհարիւր ուղտուց բարձեալ ազնիւ կարասի, զոր կոմն Տրապօլեաց իմացոյց թագաւորին Երուսաղեմի, և էառ հրաման յաւարի առնուլ։ Զոր լուեալ

1. Այսպէս ամենայն օրինակք։

2. Մեծարանութիւնք նմանաձայն Դաշանց Թղթոյ. բայց սոյգ միայն է Թղթակցութիւնն և առաքումն ընծայից առ մերս հայրապետ։

Սալահադինն յղեաց և խնդրեաց միանգամ և երկիցս, գոնեայ զծառայսն միայն, յիշեցուցանելով զուխտ երդմանն՝ որ 'ի մէջ իւրեանց, և ոչ լուաւ. վասն որոյ զայրացեալ գայ 'ի վերայ նորա։ Նա և ընդդէմ նորա Թագաւորն Երուսաղեմի երեսուն և վեց հազարաւ 'ի դաշտն Հերմոնի, և նենգութեամբ կոմսին Տրապօլեայ զտեղի առեալ յոստ մի անջրդի՝ փակեցաւ 'ի Թուրքաց, և ըմբռնեցաւ սաստիկ հարուածովք, և առան ամենայն քաղաքք ծովեզերեայք, և ապա Երուսաղէմ. զորոյ զընակիչս ոչ հրամայեաց կոտորել, այլ վաճառել զկեանս նոցա, կտրելով գին արուի՝ տասն դահեկան, և իգին հինգ. և զայլ ամենայն ինչս իւրեանց առեալ գնասցեն յո՛ և կամեսցին, և արարին այնպէս։ Իսկ անօրէն կոմսն՝ որ միաբանեալ էր ընդ Սալահադինին 'ի ծածուկ, հարեալ 'ի Տեառնէ սատակէր. և երթեալ Սալահադինին 'ի վերայ բերդի նորա՝ խնդրէր զկինն և զբերդն. և նա խնդրեաց պատանդս յերևելի արանցն՝ զի գնասցէ առ նա, և լիցի նմա կին. և առեալ 'ի ներքս եհատ զգլուխս նոցա և ընկէց արտաքս, ընդ որ զարհուրեալ 'ի բաց գնացին։ Քանզի լուան զհամբաւ գալըստեան մեծի Թագաւորին Ալամանաց, որ գայր 'ի գոյժ սգոյ սուրբ գերեզմանին և ամենայն քրիստոնէից, հարիւր յիսուն հազար հեծեալ առաքելով ընդ ծով. որք եկեալ պաշարէին զԱքայ. և ինքն գայր ընդ ցամաք անհուն բանակօք ընդ աշխարհն Յունաց, առնլով 'ի նոցանէ զՍեռխու քաղաք և զՓիլիպուպօլիս[1] և զԱնդրիանուպօլիս և այլ յոլով բերդս և աւանս. և առաքէր զորդի իւր յառաջագոյն 'ի վերայ Կոստանդնուպօլսի, և խառնէին հալածեալքն 'ի կիռ Սահակայ մերքն՝ 'ի նոսա, և բազում առնէին աւերս 'ի նոցանէ վառեալ նախանձու։

Իսկ Կոստանդինուպօլսացիք խնդրեցին ողորմութիւն, և ետուն հարիւր կենդինար ոսկւոյ և երկու հարիւր արծաթոյ, և ձրի անցուցին զամենայն բազմութիւնն, զոր առեալ էին 'ի Բլախաց[2] և 'ի Բուլղա-

1. Վէրիա և Փիլիպպուպօլիս քաղաքք Թրակիոյ (Րումէլի), այժմ կոչին Գարավերիա և Ֆիլիփփէ։

2. Բլախք՝ Վլահք կամ Ուլահք։

րաց, յոլովութեամբ գանձուց 'ի յանցանելն ընդ աշխարհս նոցա։ Իսկ որդիքն Իսլիճ-ասլանայ ոչ լսելով հօրն իւրեանց՝ Սուճին Թուրքօմն արարին ընդ նոսա պատերազմ, երեսուն և երեք օր ոչ մեկնելով 'ի նոցանէ՝ մինչև հարան և կորեան 'ի նոցանէ, և այնքան սովեցան՝ մինչ զի ութևտասն օր անսուաղ կացին 'ի բերդ հողոյ. և մինչ 'ի Կոնն կերան վաթսուն հազար ձի. և առեալ զԿոնն կոտորեաց, և նստաւ անդ։ Եւ երիցս անգամ դեսպան յղեաց առ Լևոն, և ոչ հասաւ առ նա. և իբրև ել 'ի Կոնն՝[1] եհաս գիր 'ի պատրիարգէն Գրիգորոյ, եթէ Եկաք մեք մինչև 'ի Սիս քաղաք, և հնամք քեզ աստ։ Եւ Թագաւորն ժողովեալ զամենայն մեծամեծս իւր՝ ետ կարդալ, և 'ի խնդութենէն լացին. և գրեաց պատասխանի՝ եթէ Եստի 'ի հինգ ամ քո հրամանաւ կամիմ բանալ անդաստան Հայոց, և ապա գնամ յերկիրն իմ. և ահա ունիմ Թագ և զգեստ, զի օծցես Թագաւոր Հայոց՝ զոմ ընտրես։ Եւ ասէր 'ի լսելիս ամենեցուն, եթէ Մինչ տեսանեմ զՊարոնն իմ, և զսուրբ Պետրոս՝ զպատրիարգն Գրիգոր, ոչ ասեմ զոր ինչ կայ 'ի սրտի իմում։ Եւ եկեալ 'ի Սելևկիա[2], գտեալ հուն՝ անցին ընդ գետն ամենայն զօրն. և Թագաւորն ոչ անց ընդ հունն, այլ աստ ննջեալ յայնկոյս գետոյն սակաւ մի։ Եւ յորժամ խաղաղեցան մեծամեծք նորա, յարեաւ ինքն և երկու արամբք եմուտ 'ի գետն, և զմինն 'ի նոցանէ խլեաց գետն և տանէր. և Թագաւորն օգնելով նմա չպահեաց և ինքն, կորոյս զքրիստոնեայք, և հեղձաւ 'ի գետն, և զմարմինն առեալ տարան 'ի Սիս։ Եւ 'ի զօրացն բազումք նաւեցին 'ի յերկիրն իւրեանց. քանզի էր և որդի մի կրտսեր Թագաւորին, և այն ևս մեռաւ երթեալ 'ի յԱքայ։ Բայց քանզի Թագաւորն Անկլիզաց և միւս ևս այլ ընդ նմա զայնու աւուրբք եկին առին զԿիպրոս, և լուեալ վասն անգլուխ մնացեալ զօրացն՝ որ զԱքայ էին պաշարեալ՝ հասին նոցա 'ի Թիկունս, և առեալ զքաղաքն՝ սատակեցին տասն հազար ընտիր այր 'ի զօրացն Սալահադնին, և զինքն իսկ գլխովին՝ որ եկն յայցելու-

1. Կոն է Իկոնիոն, Գոնիա։

2. Այս Սելևկիա 'ի հուսկ յարևմտեան սահմանս Կիլիկիոյ է, յայժմեանս Իչէլի. և գետն յիշեալ է Կալիկադնոս, այժմ Կէօքսու։

թիւն խրոցն, առաջի եդեալ տարան կոտորելով մինչև յԱսխալան [1], և յոլովս յամիրայն ձեռնակալեալ տարան յայնկոյս ծովուն. և վերստին առին զամենայն առեալն 'ի Թուրքաց՝ բաց յԵրուսաղեմէ, որ առէին մինչև եկեսցէ օր այցելութեան նորա։

ՁԱ. Ի սոյն ժամանակս ոմն 'ի գլխաւորաց Սալահադինին գայ 'ի վերայ Մանծկերտոյ, և պաշարեալ զնա՝ ոչինչ կարաց առնել, զի նորանշան ձիւն եկն 'ի վերայ նոցա 'ի մէջ ամարան. և դարձաւ և սատակեցաւ 'ի ճանապարհին, և Ինգդեմուրն շնորհ կալեալ քրիստոնէիցն՝ սկսաւ պատուել և սիրել յայնմհետէ զքրիստոնեայսն։

Յայնու ժամանակս թարգմանեաց Մխիթար պատուեալ քահանայն կաթողիկեցի [2] զպատճառս խաւարման արեգական և լուսնի, 'ի պարսկէ միջէ Սմբէ անուն, զոր ասէր թարգմանեալ 'ի յունաց 'ի պարսս, և թէ Յոյնք 'ի յԵնովքայ մարգարէութենէն ունէին. որ ասէր թէ արեգակն բնութեամբ ոչ երբէք խաւարի՝ այլ 'ի լուսնէն լինի պատճառն. յորժամ 'ի միում կենդանակերպի դիպին արեգակն և լուսին, և ժամ իցէ ծննդեան լուսնի, և անդ դիպին թանձր ամպքն կոչեցեալ ռաստ, և կամ զանապն [3]. զոր թէ սոքա մերձ ոչ լինին՝ ոչ է ժամ խաւարման. թէպէտ ժամ իցէ ծննդեան լուսնի, և իցեն 'ի միում կենդանակերպի. ապա թէ իցեն մերձ՝ խաւարի արեգակն. թէ բոլորն հանդէպ է միմեանց՝ բոլորն խաւարի, և թէ մասամբ ինչ առ 'ի շեղ մասն նսեմանայ. և որ մեզ երևի՝ պատեան լուսնին է և ոչ արեգականն աման, որպէս որ եղև 'ի վեցհարիւր քսան և հինգ թուին մեծ խաւարումն։ Իսկ լուսնին խաւարումն լինի՝ յորժամ վեց կենդանակերպօք հեռի լինի յարեգակնէն, և զանապն և ռաստն 'ի նոյն կենդանակերպի, մութ ամպք չտան առնուլ լոյս յարեգակնէն, և ստուեր թանձրութեան երկրի անկանի ընդ լուսնաւն, խաւարի լուսինն. եթէ զոյգ և կշիռ միմեանց կայցեն՝ բոլորն խաւարի, իսկ եթէ առ 'ի շեղ լինի՝

1. Ասկալա՝ Ասկալոն քաղաք յեզերս Պաղեստինեայ։

2. Մխիթարդ՝ պատմիչն է նախայիշեալ. տես յերես 92։

3. Զանապն ذنب և Ռաստն راس նշանակեն զհանգոյցս լուսնի 'ի վերայ խաւարման ծրին, և զկէտն յորում գլխի ասողն։

ապրեալ մասն լուսաւորի յարեգականէ : Զայս աշխատեալ ծրաբոլորին փոխեաց 'ի մերս :

ԶԲ. Յաւուրս ժամանակաց այսոցիկ էին փառաւոր իշխանքն Զաքարէ և Իւանէ որդիք Սարգսի, որդւոյ Վահրամայ, որդւոյ Զաքարի յորդւոց Սարգսի, 'ի Քրդաց ազգէ, հաստատեալ եղեալ առ Թագաւորսն Ձորոգետոյ, որ 'ի Բագրատունեաց ազգէ, հաւատացին 'ի Քրիստոս, և պատուեցան. և տուաւ նոցա տուն բնակութեան Խոշորնի. և զի արիագոյնք էին, յառաջեցին օր ըստ օրէ 'ի բարձ և 'ի պատիւ : Եւ յաւուրս Թամարին առաւել փառաւորեցան, և ետ նոցա զԼօռէ. և ինքեանք քաջութեամբ իւրեանց թափեցին 'ի Թուրքաց յոլով բերդս և գաւառս 'ի սուղ ժամանակի. քանզի 'ի վեցհարիւր քառասուն թուին առին զերկիրն Շիրակայ. և 'ի վեցհարիւր քառասուն և հինգ, առին զԱնբերդ[1]. և 'ի վեցհարիւր քառասուն և ութ թուին առին զԱնի. և 'ի վեցհարիւր յիսուն թուին առին զԲջնի. և 'ի վեցհարիւր յիսուն և երկու թուին առին զԴուին. և 'ի վեցհարիւր յիսուն և հինգ թուին առին զԿարս՝ Թագաւորին[2]. և ապա զԳետաբակս և զՉարեքն[3]. և ել անուն նոցա ընդ ամենայն երկիր : Բայց Իւանէ խաբեալ 'ի Թագուհւոյն Թամարայ՝ տկարացաւ 'ի հաւատոյն[4], և անյաջողեալ նմա ըմբռնեցաւ գերի 'ի Խլաթ. և եղբօրն արիական անուամբ՝ ազատեցաւ դարձեալ, զդուստր իւր տալով 'ի կնութիւն Մելիք Աշրաֆին տեառն Խլաթայ : Իսկ Զաքարէ եղբայրն Իւանէի մնաց 'ի սեփհական հաւատոն. սակայն կամեցաւ զտօն Տիրամօրն և զխաչին 'ի պատկեր աւուրն տօնել, և զՃրագալուցն չլուծանել, և կրօնաւորաց միս չուտել, և կենդանոյն[5] պատարագ մատուցանել. և վրանով պատարագել 'ի բացեայ՝ դպրօք և սարկաւագօք. վասն որոյ առաքեաց առ Լևոն որ այն ինչ օծեալ էր Թագաւոր 'ի Փռանգաց և

1. Անբերդ վիճակ՝ մասն Արագածոտան :

2. Այսպէս յՕՕ. թուի Բռ-գատրանիստ լինել:

3. Գետաբակք և Չարեք բերդք 'ի հիւսիսակողմանս և յարևելս Արցախոյ :

4. Իւանէ միաբանեաց ընդ Վիրս և ընդ Յոյնս 'ի դաւանութեան :

5. Որպէս վասն յիշատակի ննջեցելոց, նոյնպէս և վասն հոգևոր օգտի բարեպաշտից կենդանեաց :

Յունաց, առաքելով նմա Թագս 'ի վեցհարիւր քառասուն և վեց Թուին. և էր Ձոխ և յաղԹազգեաց և հարկադիր և ըծատամջ ամենայն շրջակայ ազգացն: Իսկ նոքա յամեցուցին զպատասխանին, վասն զի յետ տեառն Գրիգորի առ Տէր փոխելոյն՝ էառ զաԹոռն Գրիգորիս, Տղայն[1] կոչեցեալ. զոր կալեալ Լեւոնի եդ 'ի բանտի զկնի ամի միոյ, որ և կամեցաւ ելանել 'ի բանդէն բերդին, պարանաւ իջմամբ, և մեռաւ, կտրելով պարանին: Եւ զաԹոռն էառ Ապիրատն, ամս, հինգ: Եւ ապա տէր Յովհաննէս, որ կայր ապստամբ 'ի Լեւոնէ, յորմէ վշտացեալ Թագաւորին Լեւոնի՝ դնէ կաԹողիկոս զտէր Դաւիթ յԱրքակաղնին[2]: Եւ յերկպառակուԹենէն անտի հազիւ եկեալ 'ի մի կամս՝ ամենեքեան հաւանուԹեամբ արարին պատասխանի, առնել Զաքարի՝ զոր խնդրէ. զի չէ, ասէն, արտաքոյ գրոց, և մեր է սահմանդ հայրենի, և յաւերմանէ եկեղեցւոյ է խանգարեալ: Նոյն 'ի յարևելս միանգամ և երկիցս արար ժողով կատարեալ արանց՝ 'ի Լոռէ և յԱնի, և ոչ եղև ընկալեալ. գուցէ, ասէն, և ամենայն իրօք հարկեալ լինիմք գնալ զկնի աղանդոյն Յունաց և Վրաց:

Իսկ 'ի յաւուրս ժամանակաց Թամարայ Թագաւորին Վրաց, զօրացան քրիստոնեայք. Թէպէտ ընկեց զայրն Ռուս, և էառ զՕսն Սօսլան, որ ելից զՎիրս գերուԹեամբ և աւարաւ 'ի Թուրքաց. յորմէ ծնաւ միամօր որդի, և կոչեաց զնա Լաշա, և ինքն կալեալ զԹագն ամս քսան և երեք՝ վախճանի: Եւ Նստի յաԹոռն Լաշայն, որ 'ի զօրացն կոչեցաւ Գէորգի, 'ի Թուին վեցհարիւր յիսուն և եօԹն[3]:

ՁԳ. Ի վեցհարիւր յիսուն և ինն Թուին մորեխն աւերեաց զբաղում գաւառս, յորում ժամանակի մեծն Զաքարէ աւերէր զտունն Պարսից մինչև յԱրտաւիլ քաղաք, առնլով 'ի նոցանէ զվրէժ արեան քրիստոնէից,

1. Ոչ Գրիգոր Տղայն մականուանեալ Դ., այլ Ե Գրիգոր, արդարև տղայ տիօք և մտօք, որ և Քարավէժն կոչեցաւ:

2. Արքակաղնի վանք՝ շինեալ 'ի Լեւոնէ Ա Թագաւորէ, հեռաքննելի 'ի սահմանս Սսոյ:

3. Ամ մահուն Թամարայ Թագուհւոյ՝ զոր Թագաւոր գրէ մերս, ոչ նշանակի ստուգիւ 'ի պատմուԹեան Վրաց:

ըստ որում և զաղօթատուն նոցա լցեալ արամբ՝ այրել հրամայէր, զոհ լինել իշխանացն՝ որք 'ի Նախջուանու եկեղեցիսն, և կուսայքն և մուղրիքն՝ սուրբ քահանայիցն, որ 'ի Քագուան զենեցան, և արեամբ նոցա ներկաւ պարիսպ եկեղեցւոյն: Նա դարձեալ յայնր կոտորուածէ՝ կատարի 'ի տէր ուղղափառ և ամբիծ հաւատով, և թաղի 'ի սուրբ ուխտն Սանահնին, 'ի վեցհարիւր վաթսուն և մի թուին, թողլով տղայ մի հնգամեայ Շահնշահ անուն, ('ի պատիւ տէրութեանն Անւոյ կոչեցեալ[1]), զոր դարձոյց յաղանդն (!) Քաղկեդոնի Խոշաքն զուգակիցն Իւանէի:

Նա զկնի միոյ ամի կատարեցաւ սուրբ և սքանչելի վարդապետն Մխիթար, մականուն Գոշ Գանձակեցին, և թաղեցաւ յիւրում ձեռակերտին 'ի Գետիկ, զոր շինեաց հրամանաւ Իւանէի քեռորդւոյն մեծի իշխանին Քրդին, որոյ հրամանաւ եկեալ իսկ էր յերկիրն Կայենոյ, 'ի Հինն կոչեցեալ[2] Գետիկ. զի յայնմ ժամանակի նա ունէր զԿայեան հայրենեօք 'ի Հասանայ Կայենեցւոյ շինողէ բերդին:

Ի վեցհարիւր վաթսուն և երեք[3] թուին զՀաթերք յԻւանէ տուին տեարք նորա, զի մեռաւ Վաղթանգ բուն տէր նորա և որդիք իւր տարաժամ. և միւս Վաղթանգ Սակռեանց, փեսայն Իւանէի, տէր Ներքին Խաչենոյ, թողլով երկու տղայս, զՀասան՝ որ 'ի գըգուանաց Ջալալդօլա, և զՕսքարէ՝ որ և Նասրադօլա. զորս խնամարկէր Իւանէ մարբն իւրեանց Խորիշահիւ: Որ և ապա յԵրուսաղէմ երթեալ և յամեալ, մեծաւ ճգնութեամբ կատարի յոլով գրուատիւք 'ի տէր: Նա մեծն Իւանէ անուանի եղեալ քաջարութեամբ՝ առնու զՉարեքն և զամենայն շրջակայս նորա. և ապա ձեռն տուեալ ազգայնոյն իւրոյ՝ Վահրամայ որդւոյ Զաքարիայ, առնուն զՇամքոր. և 'ի վեցհարիւր վաթսուն և ութ թուին առնու զՈրոտն[4], և զմերձա-

1. ( ) Ըստ հին Օ:

2. Հինն Գետիկ 'ի Մխափոր գաւառի որ յելից կուսէ ծովուն Սեւանայ, երկրասասան կործանմամբ աւերեալ. Մխիթար շինեաց ըզնորն ոչ հեռի 'ի հնոյն:

3. Հաթերք կամ Հայթերք բերդաւան յԱրցախ աշխարհի, 'ի Սիւնեաց կողման, որ է յարեմուտս կոյս:

4. Որոտն հռչակաւոր բերդ և աւան Ծղուկ գաւառի Սիւնեաց:

կայ դղեակն, Թէպէտ ոչ զբոլանդակ. քանզի երբ ունէին զնա Հայկազունքն[1], քառասուն և երեք բերդք էին նշանաւորք, և հազար չորեքհարիւր գեղք, և քառասուն և ութ վանորեայք. որոց սկիզբն աւերման եղև 'ի հինգ հարիւր յիսուն և երկու Թուին, 'ի պատճառէ երիտասարդի միոյ մատռուակի Մելիք-շահ սուլտանին, որ 'ի զնալն հայկազնի Թագակալին[2] 'ի հնազանդուԹիւն սուլտանին, նեղէր զնա գինով խիստ[3], մինչ խոստանալ նմա զդուստր իւր կնուԹեան, և նորա հանդուցեալ[4] զգօտին՝ ցուցանէր սուլտանին ըստ իւրեանց սովորուԹեանն: Նա զկնի անցեալ աւուրց՝ խնդրէր զխոստացեալն, և 'ի հարկանելն զնա նախատանօք՝ լինի նախանձաբեկ. և առեալ յոլովուԹիւն զօրաց աւերէր զաշխարհ, մինչև ամենևին քանդեալ ապականեցաւ. որում յետոյ տիրեալ հզօրն Իւանէ:

ԶԴ. Ի սոյն Թուականի փոխի առ Քրիստոս պսակաւորն մեր Լեւոն, և առնու զԹագն դուստր նորա միամօր, Եղիսաբէթ անուն, որ ըստ Փռանգաց լեզուին Զապէլ կոչի, ածեալ նմա այր զՖիլիպն զորդի տեառն Անտաքու, զամս երկու. և զի ատելի էր նմա ազգս Հայոց, և զիւրսն մանաւանդ պատուէր զՓռանգսն, երդմնազանց եղեալ 'ի յեդեալ ուխտէն հայադաւան և հայասէր լինել, վասն որոյ և զպատուական Թագն և զպաղատն[5] առաքէր 'ի տուն հօր իւրոյ: Որում ոչ կարացեալ տանել իշխանացն, զնեն զնա յարգելանի՝ մինչև մեռաւ անդէն. և տան զաղջիկն՝ Հեթմոյ, որդւոյ Կոստանդեայ, մեծահօրի և հանճարեղ պատանեկի, որ էր անձնեայ և Թիկնեղ և գեղեցկադիտակ երիտասարդ, պսակելով զնոսա պատրիարգին Կոստանդեայ, որ ժառանգեաց զաԹոռն սուրբ՝ զկնի մահուան տեառն Յովհաննիսի 'ի վեցհարիւր վաԹսուն և ինն Թուին. ոչ յարենէ և կամ 'ի պատուոյ, կամ 'ի մամոնայէ, այլ

1. Հայկազունքդ են ազնուագոյն իշխանք Սիւնեաց սերեալք 'ի զարմից Հայկայ:

2. Ստեփաննոս Որբելեան (գլ. կա.) ծանուցանէ զի Սենեքերիմ Թագաւորն էր երկԹեալն առ Մէլիքշահ. մատռուակն էր Չորթման ոմն. և զսկիզբն աւերածին Սիւնեաց դնէ յամի 1103:

3. Հ. խոտափոյն:

4. Այսինքն հանդոյց գործեալ 'ի գօտւոյն:

5. Խմն զսպաս և զգանձս արքունի պալատանն:

'ի շնորհաց Հոգւոյն կոչեցեալ, և յամենայն լեզուաց վկայեալ։

Նախ քան զձեռնադրելն նորա միով ամաւ՝ եղև շարժ ահագին, և փլաւ պաճուճազարդ եկեղեցին, որ 'ի Մշակավանս[1] 'ի մետասանն յունուարի 'ի ժամ ճաշու, և չորս պատարագօղ ընդ մեծ զենմանն նուիրեցան։ Իսկ 'ի յերկինս տեսեալ լինէր 'ի բոլորից աստղ նիզակաձև զամենայն գիշեր. որք երկոքեան ցոյցքն նըշանակէին զշարժումն խաղաղութեան աշխարհի 'ի խռովութիւն նիզակաւոր թշնամեաց. որպէս և եղեն իսկ 'ի գալ Թուականին 'ի վեցհարիւր վաթսուն և ինն։ Որ ինչ օտարադէմ և այլալեզու շարժեալ 'ի Չին և 'ի Մաչին[2] աշխարհէն, Մուղալ և Թաթար անուն կոչեցեալ՝ եկին մինչև յերկիրն Գուգարացւոց առ դաշտավայրօքն, 'ի կողմանցն Սգուանից, իբրև թէ քան հազար. և կոտորէին զամենայն կենդանի՝ զորս գտանէին, և փութով դառնային։ Որոց զհետ մտեալ ամենայն ուժով Լաշն՝ հասանէ առ գետովն Կոտմանայ. և պարտեալ 'ի նմանէ՝ ապրի փախստեամբ հանդերձ Իւանէիւ, զորոյ երիվարին ածէր զձին իշխանումն՝ զրկեալ 'ի նմանէ. բայց Վահրամ տէր երկրին՝ մեծաւ քաջութեամբ գնայ հանդէպ երեսացն սաստիկ կոտորմամբ՝ մինչև ցԳարդման, չգիտելով զայլոցն փախուստն։

Եւ 'ի վեցհարիւր եօթանասուն և մի թուին կամեցան այսրէն դառնալ նոյնք. այլ զի գտին դեսպանք նոցա կազմ և հաւաք զՀայս և զՎիրս, և տարեալ զհամբաւն՝ ոչ համարձակեցան գալ, այլ անդրէն դարձեալ գնացին, յո՛ և գնացին։ Եւ 'ի նոյն ամի զօր բազում հատուածեալ 'ի Հոնաց, զոր Խուչաղն[3] կոչէն, եկեալ 'ի Գանձակ միաբանեցան ընդ նոսա. և 'ի գըտանել մերոցս վստահութեամբ և անզգուշաբար 'ի վերայ նոցա, հատուածեալքն դարձան փախստեամբ, զբազում

1. Մշակավանք 'ի Կողբոփոր գաւառի Գուգարաց։

2. Ոչ 'ի բնիկ Չինաց այլ և ոչ կարի հեռի 'ի նոցանէ էին բնակեալք Մօնկոլ կամ Մուղալ ազգի, որ խառնեալ ընդ Թաթարաց՝ երկոքեան անխտիր միով անուամբ կոչէին։

3. Խուչաղ, Ղփչաղ, կամ Խըփչաղ կամ Քափչաք, տոհմ է խառնաց-Թուրքաց 'ի Փիննեան ցեղէ։

սրոյ ձարակ տուեալ, և զոմանս կենդանի կալեալ 'ի փառաւոր ազատացն՝ եգին 'ի բանտի. ընդ որս և զԳրիգոր [1] իշխանն զկոչեցեալն որդի Խաղբակայ, և զեղբօրորդին իւր զարիական և զքաջ նահատակն զՊապաքն անուանեալ. զորոց զվրէժն առին 'ի գալ ամին զօրքս մեր ջնջելով զաւելի մասն Խուչաղին, 'ի գալն նոցա յերկիրն Վարդանաշատոյ [2]:

ԶԵ. Իսկ 'ի վերանալ Թուխս մերոյ 'ի համարն վեցհարիւր եօթանասուն և չորս, երկոքին որդիքն Խորազմ շահին [3] պարտեալ և նեղեալ 'ի Թաթարացն [4], գան երկերիւր հազարաւ, որպէս ասեն, ընդ Ագլպարական երկիր 'ի յՈստանն Հայոց, առնուն զնա, և լնուն զդաշտն լայնատարած վրանօք. յորոց վերայ երթեալ մերքս՝ յաղթահարեալ կորնչին ոչ սակաւք, առ գեղաքաղաքին Գառնոյ, աւելի մասն՝ վիժմամբ ընդ խրամս խորխորատին, յաստուածասաստ բարկութենէն՝ 'ի վերայ Իւանէի. յաղագս նոր և օտար չարեացն, զոր գործեաց կին նորա. Կանզլի Պարկեշտ անուն երեց մի մեռեալ, հանել ետ 'ի գերեզմանէն և այրել, և շուն զենուլ 'ի տեղւոյն, վասն յաձախ ուխտականացն երթեւեկաց [5], զոր պատուեաց Աստուած իջմամբ լուսոյ 'ի վերայ նորա. ակներև բերդաքաղաքին Բջնոյ, ուր և հիմն արկին եկեղեցւոյ [6], ելեալ 'ի բանս բանսարկու առն միոյ, զոր շանթակեզ արար Տէր 'ի նմին գիշերի, յորում 'ի տուընջեանն զայնպիսի անցս կրեցին:

Իսկ սուլտանն յաղթազգեաց պերձանօք յանհոգս եղեալ, կոխէ բազում տեղիս, և ընդ կրունկն դարձեալ 'ի Դաւրէժ, զկնի ամի միոյ գայ ընդ կողմն դաշտավայրացն Գագայ 'ի Տփխիս. և բազում ոձիրս գոր-

1. Գրիգորդ՝ իշխան է Խաչենոյ, իսկ եղբայր իւր՝ հայրն Պապաքայ՝ կոչի Վասակ:

2. Վարդանաշատոյ երկիրն է միջանկիւն խառնրդոց Կուր և Երասխ գետոց:

3. Խորազմ շահն է Մուհամմէտ և որդի իւր Մուհամմէտ Ճէլալ-իւտտին, որ եկն ընդ Ատրպատական (Ագլպարական) յԱյրարատ և եառ զԴուին (Ոստանն Հայոց). խաղաց 'ի վերայ նորա Իւանէ զօրօք Վրաց և Հայոց. այլ զխրախուսական ձայն գիտին իւրեանց՝ խուձապական կարծեցեալ 'ի փախուստ փութացան, և ընդ վախս Գառնւոյ գահավիժեալք կորեան շատք 'ի զօրուէն 'ի խորխորատս ձորոյն:

4. Հ. յաւելու. տրտմելոց զօրացն հեռաւորայնոց:

5. Հ. 'ի նշխարս ոսկերաց նորա:

6. Հ. յաւելու. զոր չկարաց տանել զդատիւ հայ քահանայքն:

ծեալ դառնայ 'ի վերայ Խլաթայ. և առեալ զնա և հարստացեալ՝ երթայ 'ի Հոռոմք 'ի վերայ Ալաւտին սուլտանին և Մելիք Աշրաֆին. և մեծապէս խորտակումն կրեալ 'ի զօրն, փախչի սակաւուք 'ի Մուղան՝ 'ի դաշտն ամենունակ զամենայն պէտս մարդոյ և անասնոյ. յորոյ վերայ հասանէ վաղվաղակի Տաթարն, որ հանեալ էր զնա յիւրմէ աշխարհէն յառաջագոյն, և անտի դարձուցանէ զնա 'ի փախուստ դէպ 'ի յԱմիթ. և յանդէտս մեռանի 'ի փախչելն, թէ սրով Թաթարին, և թէ որպէս ասեն՝ յիւրայոցն ումն մի՝ զորոյ մերձաւոր սպանեալ էր 'ի կարճոյ, և սրտառեալ կայր վասն այնորիկ, և յաղագս անհանգիստ շրջեցուցանելոյն զնոսա. և այնպէս խնդրեցաւ վրէժ արեան անձանց անմեղաց: Իսկ Թաթարն կոչեցեալ որ եկեալ էր յառաջագոյն սակաւուք 'ի վեցհարիւր վաթսուն և ինն թուին, և կամեցաւ դառնալ 'ի վեցհարիւր եօթանասուն և մին՝ և ոչ վստահացաւ, յաւելեալ յինքն անհուն բազմութիւն առաջնորդ ունելով զՉարմաղանն կոչեցեալ զօրապետ, գայ 'ի Գանձակ շահաստանի 'ի վեցհարիւր եօթանասուն և չորս թուին. պաշարէ զնա աւուրս ինչ և առնու. և կոտորէ անողորմաբար, բաց 'ի մատաղ տղայոց և 'ի կանանց՝ յորս հաճէին: Նա յայսմանէ ոյժ առեալ մտանեն 'ի Թագաւորութիւնն Վրաց, և բաժանեն զանուանի տեղիս գաւառաց, և զբերդս ամուրս մեծամեծ իշխանացն՝ զորս Նոյինս [1] կոչէին. որք երթեալք յիւրաքանչիւր վիճակեալ գղեակս գաւառացն՝ վաղվաղակի մատնեալ լինէին 'ի ձեռս նոցա, 'ի պատուհաս մեղացն մերոց: Չաղատա նոյինն էառ զԼօռէ քաղաք, և որք յայնր կողմանէ գաւառք. Գոլադա նոյինն՝ զԿայեն բերդ, ուստի հանին զԱւագն [2] տէր երկրին. և մեծն Չարմաղանն՝ զԱնի և զԿարս, և զմերձակայսն. Ղատաղա նոյինն՝ զկողմանս Չարեքին, զԳետաբակաց և ըզՎարդանաշատու: Իսկ Մոլար նոյինն 'ի բաժնի առեալ զբերդս գաւառաց մեծ իշխանի Վահրամայ [3], և

1. Նոյին լաւ ևս Նոյան, ըստ Մողոլաց նշանակէ բիւրապետ:

2. Աւագ որդի Իւանէի եղբօր մեծին Զաքարիայ:

3. Վահրամ որդի Զաքարիայ տեառն Գագայ և Տաւուշոյ, խնամի իշխանաց Խաչենոյ և ժառանգ Կիւրիկեան Թագաւորաց Աղուա-

նախ առնու զՇամքոր հնարիւք. և Մահրամ որդւոյն Շղլուղայիւ փախչի տեղւոջէ 'ի տեղի՛, մինչև գիտաց եթէ խնայեն 'ի հնազանդեալս՝ որք կամօք խոնարհին 'ի ձեռս նոցա: Եւ ապա եկեալ առնոյր զառեալն 'ի նոցանէ զգղեակս և զգաւառն՝ որ սեփական լեալ էր նոցա 'ի հայրենեաց. որ և զամենայնն առեալ էին, զՏաւուշ[1], զԿածարէթ[2], զՏէրունականն[3], զԵրգեանքն[4], զՄածնաբերդ՝[5] որ էր Կիւրիկեանց Նչխարթանայ. զՆոր բերդ՝[6] որ էր Մասակայ Թագաւորազնին, և ըղՔաւազինն[7] անմարմնչելի ամրոց, և զԳագ անուանի բերդ, և գաւառ 'ի Գագկայ[8] Թագաւորէ շինեալ, ուր կայ հաշակաւոր և սուրբ ուխտն խաչ և եկեղեցի յանուն սրբոյն Սարգսի զօրավարին, օրհնեալ 'ի սըրբոյն Մեսրովբայ վարդապետէն և Թարգմանչէն Հայոց, որ կայ 'ի գլուխս Գագայ, և հայի 'ի դաշտն լայնանիստ և երկայնատարած. և զայլ ամրոցս[9] և զգեօղս և զագարակս. ամենեքեան տուեալ լինէին 'ի ձեռս նոցա 'ի սուղ ժամանակս, անվաստակ և առանց աշխատութեան. զի գիտացուք եթէ ձեռն Տեառն է որ ետ զաշխարհս մեր առաջի աչաց մերոց կերակուր օտարաց[10]:

ՁՁ. Եւ սկիզբն 'ի սրբութեանց իւրոց և 'ի սրբոց արարեալ, առեալ լինէր նեղեալ 'ի կարօտութենէ պիտոյից, և աւելի 'ի ջրոյ, քարայրն վտանականին համ-

նից, որոց կալուածք էին յիշեալքդ 'ի սորին:

1. Տաւուշ, Տայուշ, կամ Տաւուշ, 'ի հիւսիսակողմն Ուտիոյ աշխարհի, Տուչքատակ գաւառ հին:

2. Կածարէթ 'ի նմին Տաւուշ գաւառի, այլ իսկական տեղին անյայտ:

3. Տէրունական բերդ 'ի դաշտին Կոտմանայ մերձ յԱղստև գաւառ Ուտիոյ, 'ի վիճակի՝ այժմն յանուն գետակին՝ Հասանայ-ձոր կոչեցելոյ:

4. Երգեւանք կամ Երգեվանք բերդ 'ի Տայուշ գաւառի:

5. Մածնաբերդ, 'ի Տայուշ, աթոռ Կիւրիկեան արքայազարմից յ'ԺԲ դարու:

6. Նորբերդ, միւս աթոռ արքայազանց, 'ի կողմանս Հասանձորոյ:

7. Քաւազին կամ Գաւազին, Կէլէրլին բաղը 'ի Թուրքաց կոչեցեալ. քարաբլուր միապաղաղ և բերդ 'ի գագաթանն:

8. Գագիկս այս հնագոյն թուի քան զամենայն ծանօթ թագաւորս Բագրատունիս և Կորիկեանս:

9. Հինն. Եւ զայլ ամրոցս, Եւ զայրն Հիմաթօր՝ որ կային 'ի ձայրիս Եւ ծործորս Եւ 'ի յօրանիս գաւառաց, գեղից Եւ ագարակաց, որք Եւ ամենեքեան, և այլն:

10. Հինն յաւելու. Ըստ որս Եւ զաղետաւորն զայն Եւ զգայթակղեցուցիչ փխարագաւնից, նախ քան զառաջեալդ. ակիզբն. և այլն:

բուառենչ և արդիւնական վարդապետին Վանականն[1] կոչեցեալ. յորում ինքն իւրայովքն ամփոփեալ էր աշակերտօք և այլովք գաղթականօք յոլովիւք՝ 'ի նա ապաւինելօք. որոց տուեալ զանձն փոխանակ քրիստոսաբար՝ գնայ գերի, ազատելով զնոսա, և ժամանակս ինչ շրջեալ ընդ բանակս խուժական ազգին վաճառի քրիստոնէից՝ որք 'ի բերդն Գագայ. որք գնեցին ոչ հրէաբար 'ի մահ նախատանաց, այլ տիրանման յազատութիւն փառաց (յիսուն դահեկանաւ, աւելի քան զՏերն: Այնքան ժլատ էր վաճառողն Տեառն, և դիւրագին և թեթև ունէր, որում ինքն էր արժանաւոր[2]): Յետ որոյ կեցեալ ամ հնգետասան 'ի փառս Աստուծոյ և յօգուտ բազմաց, հանգչի 'ի Քրիստոս 'ի բազմավաստակ ճգնութեանցն 'ի խորանս լուսաւորչացն աշխարհի, յեօթն հարիւր թուականին, 'ի յութևտասն մարտի և 'ի տան յարեգի հին զուգին, 'ի յաղուհացն յաւուր շաբաթի, 'ի յիշատակի Ովրենդի և եղբարցն իւր 'ի կարգի. և ըստ մեզ՝ Կիւրղի Երուսաղեմի հայրապետի, առնելով տօն վերին Երուսաղեմի, որ աստէն տօնիչ և գգուիչ էր զաւակացն նորա, որդւոցն լուսոյ 'ի փառս փեսայի նորա, անմահ Թագաւորին Յիսուսի և Հօր իւրում և Հոգւոյն սրբոյ. զհարիւրապատիկն աստէն թողեալ զանուն քաջութեան յաշակերտս իւր, և 'ի գիրս գանձուց եկեղեցւոյ, զոր ամբարեաց 'ի շնորհացն Աստուծոյ և 'ի յստակ մտաց ծննդականաց:

Ձէ. Արդ 'ի վեցհարիւր ութսուն և հինգ թուականէն Հայոց մինչև յեօթն հարիւր չորեքտասան, յորում եմքս մեք, զոր ինչ արարին ազգն նետողաց, ընդ աշխարհս և ընդ իշխանութիւնս, որ յայսմ կողմանէ ծովուն մեծի, ընդ Պարսս և ընդ Աղուանս, ընդ Հայս և ընդ Վիրս, և ընդ աշխարհն Հոռոմոց կոչեցեալ. ուր էին բնակեալ Հայք և Ասորիք, Յոյնք, և Տաճիկք և Թուրքմանք, գրեալ են մանրամասնաբար փառաւորեալ հայրն մեր Վանական վարդապետն, և հարա-

1. Վանական վարդապետ Յովհաննէս, հռչակաւոր 'ի հեղինակս ԺԳ դարու առաքինակրօն վարուք և գիտութեամբ. վարժապետ հեղինակիս և Կիւրակոսի պատմչի:

2. ( ) Ըստ հին Օ:

վասն մեր Կիրակոս վարդապետն հօրն համանման. զոր մեք ոչ համարձակեցաք երեքկնել կամ բազմապատնել, այլ համառօտ բերել միայն զթիւ ժամանակին նըշանաւոր իրաց և գործոց յիշատակօք 'ի լրումն մերոյ գործառնութեանս՝ յոլով ժամանակօք սխեալ և թերի թողեալ պատկառելով 'ի գրողացն պատուոյ՝ զոր վերագոյն յիշեցաք. թէպէտ և չկարէ բան և նիւթ պեղել և 'ի յիշումն աճել զյորդութիւն բազմութեան մեղաց և յանցանաց և անզգամութեան մերոյ, ըստ որում և ոչ զհատուցումն վրիժուց արդար դատաստանին Աստուծոյ: Մանաւանդ եթէ գոյ հնար թուել զհատուցմունս, և զհամար չարեացն մեր ոչ ընաւ. որում յաղթեաց և միշտ յաղթէ խորոյն խորք և անդնդոցն անդունդք, գթութեանցն Աստուծոյ անբաւութիւնք։ Որում շնորհ և զօրութիւն, փառք և պատիւ, օրհնութիւն և գոհութիւն, անթուական և անոլորտ յաւիտենիւն, 'ի բոլորից և 'ի մասանց արարածոց իւրոց, յիմանալեաց և 'ի զգալեաց, յորոց և ամէնն ասասցի անսպառ և անեզր էիւն անվախճանիւն[1]:

ՉԸ. Արդ 'ի վեցհարիւր իննսուն և մի թուին Հայոց Բաչու Նուինն[2] փոխեաց զիշխանութիւնն Չարմաղանին և էառ զԿարնոյ քաղաք, հանեալ անտի զայրն երեւելի մեծատուն և երկիւղած 'ի Տեառնէ զՍումեկն[3], և զազգականս նորա զորդիսն պարոն Յոհաննու, զՍտեփաննոս և զեղբարսն իւր հինգ. — և 'ի վեցհարիւր իննըսուն և երկու թուին զամենայն աշխարհն Հոռոմոց՝ կոչեցեալ, և զանուանի քաղաքսն, զԿեսարիա նախ, ապա զՍեւաստ, յորս խնայեցին 'ի կոտորելոյ, զի վաղ եկին 'ի հնազանդութիւն, ապա զԿոնիկա, զորս յանխնայ կոտորեցին և գերեցին. քանզի ընդդէմ դարձան: Եւ զայլ աշխարհս և զգաւառս, ուր մանաւանդ ազգ Հայոց վշտատեսաց բնակեալ էին. զի համարագիր թուականին ՈՂԲ (վեցհարիւր իննսուն և երկու) էր, և ըստ այն

1. Այստանօր դադարէ պատմութիւնն 'ի բնագրի մերում յընտիրն օրինակի. հետևեալդ՝ 'ի հնագիր օրինակէն է:

2. Պայճու Նոյան, ըստ Թաթարաց, ազգաւ Մանկոլ:

3. Ումեկայ սերունդք յիշին յարձանս վանօրէից Զորագետոյ. որդի նորա կոչի Ճար Մանազկերտեցի ճոխ վաճառական 'ի Կարին:

գործեցան արդիւնքն արժանաւոր ողբոց և արտասուաց, ոչ միայն բանականաց, այլ և անբանից, լերանց և դաշտաց, որք ոռոգեցան արեամբ և արտասուօք: Որ և սոյն ողբ կրկնեցաւ 'ի վեցհարիւր իննսուն և ութ թուին. քանզի կործիս առին Բաչուն և այլ աւագանին ամբարտաւանութեան և ապստամբութեան թագաւորին և իշխանաց Վրաց. և ընդ ձեռամբ ածեալ զԹագաւորն Դաւիթ, և զայլ մեծամեծն՝ կապեցին և հատին վճիռ մահու, այլ 'ի խնամոց վերնոյն արձակեցին 'ի մահուանէ: Սակայն անթիւս կոտորեցին և գերեցին գեօղս և ագարակս և գործեցին խայտառականս 'ի կանայս՝ 'ի Հայս, և աւելի յաշխարհն Վրաց:

Ի վեցհարիւր իննսուն և ինն թուին մեռաւ Աւագն որդին Իւանէի և թաղեցաւ 'ի Պղնձահանքն[1] ընդ հօր իւրում, այր անագահ և պատերազմասէր և աղօթական:

ՉԹ. Յեօթն հարիւր թուին շարժեցաւ խնդիր 'ի մեծ Պապէն Հռոմայ, և գրեաց յաղագս ամենայն քրիստոնէից, եթէ պարտ է զամենասուրբ Հոգին Աստուած՝ խոստովանել 'ի Հօրէ և յՈրդւոյ բղխեալ. և ոչ եղև հաճոյ Ասորւոց և Յունաց և Վրաց, բայց 'ի Հայոց. որք քննեցին զդաւանութիւն առաջնոցն սրբոց 'ի ձեռն աստուածամերձ վարդապետին Վանականին, և գտին համախոհ երևելի արանց փառաւորաց Աթանասի, Գրիգորի Աստուածաբանի, Գրիգորի Նիւսացւոյ, Գրիգորի Լուսաւորչին և այլոց սրբոց:

Դ. Յեօթն հարիւր և մի թուին մարախ եկն 'ի վերին աշխարհս Հայոց, և արար վնաս յոլովից գաւառաց:

Յեօթն հարիւր և երեք թուին Մանկու ղանն հրաման ետ համարել զհնազանդեալ աշխարհս ընդ իւրով իշխանութեամբ 'ի ձեռն առն երևելւոյ Արղօն կոչեցելոյ, և գնել հարկս ըստ գլխոց արանց, բաց 'ի կանանց և 'ի բուն ծերոց և 'ի մատաղ տղայոց:

Յեօթն հարիւր և երեք թուին քրիստոսասէր արքայն

1. Պղնձահանքդ են 'ի Լեռնվար լերինս Սոմխէթու, ընդ մէջ Տաշրայ և Շորոփորոյ, ուր եկեղեցի և վանս կանգնեալ էր յաւուրս իշխանութեան Զաքարիայ և Իւանէի:

Հայոց Հեթում չոգաւ 'ի Բաթու[1] մեծ թագաւորն հիւսիսոյ, համազգի Չանգզ ղանին, և անտի առ Մանկու ղանն. և ըստ արժանւոյն մեծարեցաւ, և դարձաւ յետ տարւոյ խաղաղութեամբ յաթոռ իւր :

Յեօթն հարիւր և չորս թուին եկն Հուլաւուն եղբայր Մանկու ղանին անթիւ զօրօք, և մեծասաստ իշխանութեամբ 'ի վերայ Պարսից, Ասորեստանեաց, Հայոց, Վրաց և Աղուանից, և հրաման ետ նախ եկեալ զօրուն՝ ամենայն ախիւն իւրեանց գնալ յաշխարհն Հոռոմոց : Յորմէ ահէ թողին զվերին աշխարհս[2], և գնացին 'ի հարկէ, և կալան զամենայն միջերկրեայս մինչև 'ի ծովն, տիրելով աշխարհացն՝ որ ընդ իշխանութեամբ սուլտանացն Հոռոմոց կոչեցեալ :

Իսկ մեծն Հուլաւու 'ի նոյն ամի գալստեանն իւրոյ 'ի թուին եօթն հարիւր և չորք, չոգաւ յերկիրն Մըլհեդաց յԱլամուդն կոչեցեալ, և առ զնա, հանեալ զգլխաւորն, զի յառաջ քան զգալն նորա՝ պաշարեալ և 'ի նեղ արկեալ էին զօրք նոցա, որոց գլխաւոր էր Խաւուր նուինն կոչեցեալ : Եւ 'ի դառնալն անտի կոչեաց առ ինքն զԴաւիթ թագաւորն Վրաց և զմեծամեծս աշխարհին, և սիրով և պատուով տեսեալ զամենեսեան, մանաւանդ զքրիստոնեայսն. զի աւագ կին նորա Տօղուզ խաթունն[3] կոչեցեալ քրիստոնեայ էր ըստ Ասորւոց ուսմանն՝ որ Նեստորքն կոչին. սակայն չէր տեղեակ նոցա աղանդոյն, այլ անխարդախ սիրով մեծարէր զամենայն ազգ քրիստոնեայ և խնդրէր աղօթս. որպէս և ինքն իսկ Իլղանն[4] կոչեցեալ Հուլաւուն. խորան կտաւեայ 'ի ձև եկեղեցւոյ շրջեցուցանէին ընդ նմա, 'ի ձայն ժամահարի և աղօթից կարգաւորութեան և պատարագաց պաշտէին հանապազորդ քահանայք և սարկաւագունք. և գոյր դպրոց և ուսումն մանկանց համարձակութեամբ : Եւ անդ հանգչէին ե-

1. Պադու-խան որդի Ճուչեայ անդրանկանն Ճէնկիզխանի, իշխող կողմանց Հոնաց :

2. Այսինքն զՄեծ Հայս :

3. Ըստ Րէշիտ-էլտինայ Տօն-ղուզ Խաթուն էր 'ի Քէրայիդ տոհմէ Թաթարաց, դուստր Ի-քուայ որդւոյ Օնկ խանայ :

4. Իլ-խան նշանակէ ըստ Թաթարաց՝ թագաւոր գաւառի կամ աշխարհի ուրեք, հպատակ մեծի խանին Թաթարաց՝ զոր Խաքանն կոչէին. և սեփական եղև տանն Հուլաղուի անուանս Իլ-խանեան :

կեղեցականք որ յամենայն կողմանց և 'ի լեզուաց քրիստոնէից գնային խնդրել զխաղաղութիւն և գտանէին ևս, և գտանային խնդութեամբ և պարգևօք ։

Յեօթն հարիւր և հինգ թուին մեռաւ Բաթաւ մեծ կողմնակալն հիւսիսի ։ Եւ 'ի նոյն տարւոջն որդի նորա Սարդախն դեղակուր եղև յիւրոյն եղբարց վասն նախանձու . զի նմա յանձնեցաւ իշխանութիւնն 'ի հօրէն և 'ի Մանկու ղանէն յաւելուածով . և սուգ մեծ եղև մահ՞ն նորա քրիստոնէից . զի կատարեալ քրիստոնեայ էր և լինէր պատճառ փրկութեան բազմաց, ածելով 'ի հաւատս յիւրոյն և յօտարաց ։

Դ.Ա. Յեօթն հարիւր և եօթն թուին քաջն Հուլաւու էառ զԲաղտատ, զկնի հինգհարիւր և եօթնևտասան[1] ամի շինութեան նորա 'ի Ջաֆրէ Խամայելացւոյ՝ 'ի հարիւր իննսուն և չորս թուին Հայոց, 'ի վերայ Տիգրիս գետոյ, որպէս ասեն, հեռի 'ի հին Բաբելոնէ եօթն աւուր ճանապարհ, սպան և զխալիփայն իւրով իսկ ձեռօքն Հուլաղու, որում անուն էր Մուսթասր, և ապրեցան քրիստոնեայք որ կային անդ կամօք և բարեխօսութեամբ Տողուզ մեծի թագուհւոյն ։

Եւ զի Խալիփայն՝ յետամնաց ասի ազգին Մահմետի՝ որ 'ի վաթսուն թուականին Հայոց երևեցաւ, և տևեաց յետնորդն մինչև 'ի յեօթն հարիւր և եօթն թիւս ։ Ի գտանալն Եղլան Հուլաւուին յաւերմանէն Բաղդատայ՝ 'ի նոյն թուին պաշարեցաւ Մուփարկինն քաղաքն Մարտիրոսաց զամն երկու, զի անուանեալ սուլտանն որ անդ՝ ընդդէմ դարձաւ որդւոյ Հուլաւուին Խամուզին[2], և փակեաց զքաղաքն և մարտեաւ ընդ նմա ևս, որ էր յազգէն Եդլեաց, որ եղև նիւթ բարկութեանն Բստուծոյ . զի 'ի սղարն[3] կերան զսուրբ և զանսուրբ անասունս, և ապա զաղքատսն, ապա զծնունդս իւրեանց և զմիմեանս զոր կարէին ։ Մինչ զի

1 . ԶԲաղտատ շինեաց Ճեաֆար-էլ-Մանսուր, յամի Տեառն 762, որով 496 ամք լինին ցաւուրս նորին 'ի Հուլաղու խանէ, յամի 1258 . վերջին խալիփայն է Մօսթազիմ, որ խեղդամահ եղև հրամանաւ և ոչ ձեռամբ խանին ։

2 . Զխամուզ ըստ Կիրակոսի պատմչի, Իշմուզ ըստ Մողոլաց ։

3 . Հէսար ըստ Արարաց, պաշարումն քաղաքի ։

ուադ և գլուխ երիցանցն որ անդ՝ հարկեալ 'ի կատաղի բոցոյ որկորին և գաղանացեալ՝ եկեր յիւրոցն, և գրեաց խոստովանութիւնս 'ի քարտիսի, և յուսացաւ տեսանել մեզ զգիրն, և ողորմութիւն գտանել յողորմածէ բնութեանս ստեղծողէն։ Եւ ինքն տուեալ զինքն կողկողման և լալեաց՝ վայիւք և հառաչմամբ անդադար ափսոսանօք, մինչև քաղեցաւ շունչն։ Զորոյ զգիր խոստովանութեանն ըստ յուսոյն իւրոյ տեսաք մեք, և ակն ունիմք նմա ողորմութիւն գտանել 'ի գիտողէն և ստեղծողէն բնութեանս, որ մահուամբ եւս կարակցեաց մեզ. գթածն հայր և ողորմութեան խոլքն, և սիրոյն անդունդքն. նովիմբ կամօք և կարողութեամբ ողորմեսցի նմա, և քաւեսցէ խորհրդով սուրբ եկեղեցւոյ. և ամենեցուն իսկ՝ որ զզջմամբ ապաւինեցան և ապաւինեսցին յողորմութիւնն Քրիստոսի Աստուծոյ մերոյ. և պատահեալքդ սրտի մտօք հայցեցէք զամէնն ասելով։

ԴԲ. Յեօթն հարիւր և ութ թուին չոգաւ Հուլաւուն յաշխարհն Միջագետաց, և առ զքաղաքսն և զգաւառսն զայնոսիկ, որպէս և գրեցին մանրապատում գրողքն։ Այն առ նա պատրիարգն Հայոց, կաթուղիկոսն, օրհնեաց զնա և սիրեցաւ 'ի նմանէ. ընդ նմա էր 'ի յառնուլն զամենայն աշխարհն Շամայ՝ և մեր պսակաւորն Հեթում, ազատելով 'ի մահուանէ զքրիստոնեայսն զեկեղեցականս և զաշխարհականս, յամենայն տեղիս լինելով։ Որում հատուսցէ Տէր հազարաւոր թողութեամբ մեղաց, և յերկարութեամբ կենաց ըստ իւրոց կամաց, յորդւոց յորդիս։

Դարձաւ Հուլաւուն յիջևանս 'ի ձմերոցս 'ի դաշտն Մուղանայ[1], և 'ի կայս ամարան 'ի Դառին գաւառ կոչեցեալն, կամ ըստ այլոց 'ի Դարան-դաշտ[2]. զի այլք և դերբուկք քարանց կան անդ շուրջանակի առ լերամբքն, զոր սիրեաց, և շինեաց անդ շինուածս ըստ սրտի իւրում. և խորհեցաւ շինել քաղաք, յորմէ պատճառէ տառապեցաւ երկիր, մարդ և անասուն, փայտս ծանունս 'ի հեռաստանէ բերելով։

1. Մուղան կամ Մուկան դաշտ, յանուն Մովականայ եղբօր Հայկայ, խոպան կամ անապատ ընդարձակ յերկրին ափունս վերջին գնացից Երասխայ։

2. Ի հարաւակողմն աշխարհին Այրարատայ և 'ի հիւսիսի Վասպուրականի։

Յեօթն հարիւր և ինն թուին առաւ Մարտիրոսաց քաղաքն, զկնի յոլով աղէտից և վտանգաց՝ ոչ միայն պաշարեալ քաղաքին, այլ և պաշարողացն զօրացն Տաթարուն, և քրիստոնէիցն որ ընդ նոսա. կռուելով ընդ միմեանս 'ի ներքուստ և արտաքուստ. ուր սպանաւ գեղեցիկ երիտասարդն Սևադա Խաչենեցի, որդի մեծ իշխանին Գրիգորի, քաջապէս մարտուցեալ և յայնոսիկ պսակեալ, հաւատ և երկիւղ պահելով զԱստուծոյն և զԻշխանին. որում մասն հասցէ արեամբ նահատակացն Քրիստոսի՝ պահողացն զհաւատ և զերկիւղ նորա. ամէն:

Ի նոյն թուին կոտորեցան զօրքն զոր թողեալ էր Եղան Հուլաւուն կողմնապահ երկրին Շամայ իբրև քսան հազար, ընդ մեծ զօրագլխին Քիթբուղա կոչեցեալ, քրիստոնեայ հաւատով, ընդ որս մարտեաւ սուլտանն Մսրայ առ ստորոտով Թաբօրական լերինն անթիւ բազմութեամբ, և զի սակաւք էին բուղայեանքն՝ կոտորեցան և գերեցան, և էին որք ցրուեցան թաքեան և ապրեալ եկին առ թագաւորն Հայոց. և 'ի նմանէ յոլով գտեալ մարդասիրութիւն, հանդերձ և երիվարս և ռոճիկս, եկին գոհութեամբ առ տէրն իւրեանց, Տաթարք և քրիստոնեայք: Եւ յայնմանէ յոլով փառաւորեցաւ անունն Քրիստոսի յարքայն Հեթում, յօտարաց և յընտանեաց:

ԴԳ. Ի յեօթն հարիւր թուին իշխանաց իշխանն արքայաշուքն Ջալալն[1] դառն չարչարանօք կցորդեցաւ մահուն Քրիստոսի և վկայից նորա 'ի զրախոս Տաճկաց, զոր պարտաւորեալ և մատնեալ Արղունին. տարեալ 'ի Տաճկաստան 'ի Խաղուբնն, և անդ գիշերի յօդակոտոր արարեալ սպանին, միայն զքրիստոսասիրութիւնն ունելով պատճառս, պահօք և աղօթիւք և ողորմածութեամբ և զմիաշաբաթօն յանկացութեամբ անցուցեալ զժամանակս իւր մինչև 'ի ծերութիւն. վասն որոյ և լուսով 'ի բարձանց պատուեաց զնա Աստուած՝ իջանելով 'ի վերայ յօշեալ անդամոցն նորա, պըսակելով և վկայելով զանպարտաւոր մահ նորա զմարտիրոսական: Զոր տեսեալ սպանողացն սոսկացեալ

1. Տէրն Խաչենոյ:

ընկեցին 'ի ջրհոր մի ցամաք, մինչեւ եկին իւրքն եւ տարեալ թաղեցին յիւր սեփհական վանքն Գանձասար[1] կոչեցեալ, հայրենեօք տուն գերեզմանի իւրեանց. ընդ նոյն ձառագայթս լուսոյ տեսանելով բերողացն։ Ի նոյնքանիս թուականին Հայոց յեօթն հարիւր սպանին 'ի դուռն Ղանին Հուլաւին զսպարապետն Վրաց զԶաքարէ՝ զորդի Շահնշահի, 'ի տիս երիտասարդութեան 'ի գեղ ծաղկի՝ եւ յառաջադէմ յաջողման ժամանակի, յերեւանի եւ ծանօթ ամենեցուն, բարուրս ինչ եդեալ 'ի վերայ. եւ զայն եւս՝ թէ խափանեալ եղեւ կարգեալ հարկն յիւրում ժամու երթալոյ յարքունիս։ Զորոյ մահն ողորմագին աշխարանօք սգացին ամենայն տունն Վրաց, Հայաստանօք մերձաւորօք նոցա. քանի՛ առաւել՝ որք ծնանն զնա ծնողքն դառնակսկիծ եւ մորմոքատանջ ողբովք։ Վասն որոյ 'ի նոյն աւուրս եւ 'ի նոյն սեւս սգին սրտակտուր լեալ մեռաւ հայրն Շահնշահ կոչեցեալ, իբր տէր մայրաքաղաքին Անւոյ, որ երբեմն նստոց էր արքայի, որ աւագն էր թագաւորացն Բագրատունեաց, այլ եւ այլ աշխարհացն, զանուն տեառն Անւոյ Շահնշահ կոչելով, իբր թագաւորաց թագաւոր։

ՂԴ. Թիւքս խորհրդաւորք, Չ, (եօթն հարիւր) որ է կատարեալ հանգիստ, եւ Ժ՛ (տասն) սուրբ, իբրեւ զսուրբս Աստուծոյ հանգուսցէն 'ի շաբաթն Աստուծոյ՝ որ առաջի կայ, զասացեալ նշանաւոր ուրեարուդ յայսմ թուաբերութեան, կատարեալ յաղօթս ամենայն սրբոց։

ՂԵ. Յեօթն հարիւր եւ մետասան թուականին վախճանեցաւ տէր Ներսէս կաթուղիկոսն Աղուանից դառնացաւով ջրգողութեամբ, չգտեալ 'ի բժշկաց դեղ, բայց միայն զմինն Յիսուս Աստուած, եւ դեղ կենաց անմահութեան. առ որ փոխեցաւ մեծ յուսով խոստովանութեամբ եւ անդարձիւ ըստ արժանւոյն, կեցեալ ընդժամանակս իւր հեզութեամբ եւ ողորմածութեամբ։

Յեօթն հարիւր եւ երկոտասան թուին հանգեաւ 'ի

1. Գանձասար անուանի մենաստան է աթոռ առաջին եւ վերջին կաթողիկոսաց Աղուանից, 'ի Մեծիրանից գաւառի Արցախոյ։

Քրիստոս անուանի ճգնաւորն և արժանաւորն պատուելի աստիճանաց և կոչմանց, ուր կոչեաց շնորհն Աստուծոյ 'ի քահանայութիւն, 'ի վարդապետութիւն և յարհեպիսկոպոսութիւն տանն Գարդմանայ և այլոց բերդից և գաւառաց, այրն անուանի և յերևանի աշխարհի՝ տէրն Յովհաննէս Տուեցին անուանեալ, որ զերիս յիսնակսն անհաց և անջուր կատարէր, և զուրբաթ և զչորեքշաբաթ, և յԵրուսաղէմ գնացեալ բոկոտիք, և զաւուրս աղուհացիցն յոտն կալով և անհաց 'ի սուրբ Յարութեանն. և զարմացոյց զազգն Փռանգաց՝ որք անդ էին. զի ոչ միայն յոտն և անկերակուր, այլ և լռութեամբ կեայր, և խնդրէր յԱստուծոյ յայտնի հաւատ համբաւոյն՝ որ գայր յազգս. թէ յիջանել լուսոյն՝ Հայոց կանթեղն է 'ի վառիլ, որպէս և ինքն պատմեաց, եթէ որ զկուբայ[1] սուրբ գերեզմանին պահէր՝ սիրէր զմեզ և փարէր զմեօք, և մեք խնդրեցաք 'ի նմանէ ըզհաւաստիս իրացն. և նա ասաց դու գնէ կանթեղս, և բեր կախէ քոյին ձեռօքդ. և արարի այնպէս, գնեցի երեք կանթեղ, և կախեցի 'ի վերայ սուրբ գերեզմանին. յաջմէ յանուն Փռանգաց և 'ի ձախմէ Յունացն և 'ի միջին զՀայոցն, որպէս ինքեանք սովոր էին. Թերևս փակեցաք զդուռն և մատանեցաք: Եւ ետ ցիս պահապանն զմատանին և զբանալին յաւուրն մեծի ուրբաթուն. և յաւուրն մեծի շաբաթուն՝ յինն ժամուն մինչ կայաք յաղօթս՝ առհասարակ ամենայն քաղաքն և ազօթականքն եկեալ 'ի հեռաստանէ, ասէ ցիս պահապանն գուբային, Տէր հրամմէ, և բաց, զի իջաւ լոյսն, և չոգայ բացի, 'ի վեր առեալ զմատանին. և ճշմարտապէս առանց կարծեաց միջին կանթեղն վառեալ բորբոքէր անպատմելի գեղով: Եւ այսու սքանչելեօք[2] փառաւորեցաւ համբաւեցաւ այրն այն տէր Յովհաննէս: Ասաց ինքնին և զայս բան եթէ, չոգայ 'ի սուրբ Բեթղեհէմ, և տեսի անդ զսուրբ առաքելոցն պատկերսն նկարեալ 'ի պարիսպ եկեղեցւոյն, և Տաճիկք 'ի պատճառս անարգութեան փորեալ էին զաչսն. տրտմե-

1. Կուբայ, գուպպէ قبة, կամար, կամ մատուռն կամարակապ:
2. Ըստ հաւատոյ հեղինակիս այս և որ զկնի սքանչելիքն Յովհաննու յԵրուսաղէմ:

ցայ ընդ իւրն , և աղօթեցի առ սուրբ առաքեալսն ա-ղաչելով յայտնել ինձ՝ եթէ հաճո՞յ է նոցա ամենայն ուրեք նկարել զնոսա ։ Եւ յորժամ դարձայ յԵրու-սաղէմ՝ յայնմ գիշերի տեսի 'ի տեսլեան երկու արս փառաւորս , զի գային առ իս , և ելի ես ընդ առաջ նոցա և ասացի , թէ Ո՞վ էք սուրբքդ Աստուծոյ . և նոքա ասեն , Պետրոս և Յոհաննէս , որ աղաչէցեր ցուցանել քեզ վասն ձեւակերպելոյն զմեզ քրիստոնէից՝ որ բնաւ չէ մեզ հաճոյ և ձանձրացեալ եմք . և յայտնեմք ուրեք ուրեք և չլսեն մեզ[1] ։ Ընկեր և աբեղայն իւր ուղեկից յԵրուսաղէմ . եթէ բուն երեկ մինչ 'ի տեղն . և ապա յաւուր միում կոչեաց զիս , և ասաց . Տես զատս իմ զի ցաւէ և նեղէ զիս . և 'ի տեսանելն իմ և 'ի յորո-նել զուռիցն ասղամբ՝ սրագոյն և ստուար կտորս փշոյ գտի՝ որ ելանէր թարախով ոչ սակաւ . և զարմանք կա-լաւ զմեզ , զի չյայտնեաց մինչև 'ի տեղին , առ սէրն Աստուծոյ և սուրբ տեղեացն առ ոչինչ համարեալ զկըս-կիծն ։ Ա յապախի զառ 'ի վեր և նեղ ճանապարհաւ կա-ցեալ մինչ 'ի խորին ծերութիւնն՝ հանգեաւ 'ի Քրիս-տոս , 'ի հռչակաւոր վանսն Նոր-բերդին անապատ կո-չեցեալ . թաղեցաւ 'ի դուռն եկեղեցւոյն , զոր իւր իսկ էր շինեալ . և այլ բազում շինուած և արդիւնս վաս-տակեալ հրամանաւ , կամօք և ձեռնտուութեամբ Սա-սակայ Թագաւորազին Բագրատունւոյ . որոյ յիշատակն օրհնութեամբ 'ի կաթուղիկէ եկեղեցւոջ կայցէ առա-ջի Աստուծոյ անջնջանելի 'ի հոտ անուշից յաւիտեանս ։

ՂԶ . Ի յեօթն հարիւր երեքտասան թուին կոչեաց զմեզ մեծն Հուլաւու Ղանն 'ի ձեռն Շնորհաւոր[2] կոչեցեալ փառաւորելոյ առն յայնմ ժամանակի՝ յամե-նեցունց , և աւելի յաշխարհակալացն , 'ի Բաթու կու-սակալէն հիւսիսոյ , ուր չոգաւն և պատուեցաւ նախ , ապա 'ի Հուլաւու Ղանէն՝ որ տարաւ իւրով ծախիւք

1 . Պատկերք առաքելոցդ գտա-նէին և յեկեղեցիս Հայոց՝ ուր ա-ղօթէին հեղինակդ և տեսանողդ , այլ թերևս ոչ շատք մինչև 'ի ձան-ձրութիւն նոցին ։

2 . Շնորհաւորդ է անշուշտ վա-ճառականն որ ընդ Ումեկայ գտաւ 'ի Կարնոյ քաղաքի , յառման նո-րին 'ի Թաթարաց ։ Այլ ոմն ժա-մանակագիր ասէ . " Սարվանին որդին Շահպատինն՝ զՎարդան վարդապետն տարաւ 'ի մօտ Հու-լաւունն , և մեծաւ սիրով պա-տուեաց զնա խանն . և բազում բանս իմաստութեան հարցաւ ընդ սուրբ վարդապետին,, ։ Տ . յէջ 159 ։

և գրաստիւք զմեզ և որք ընդ մեզ էին վարդապետք եղբարք մեր Սարգիս և Գրիգոր, և աւագ երէցն Տփխեաց տէրտէրն։ Եւ տեսաք զմեծն զայն 'ի մեծի աւուրն ամառնային և տարեմտի իւրեանց, 'ի յամսեանն յուլիս ըստ Հռոմայեցւոց, և ըստ մեզ յարաց[1]։ Եւ էր նոցա աւուրք ուրախութեան իբր լուսին մի. և կոչէին զաւուրսն զայնոսիկ խուռուլթայ[2], իբր խորհրդատօնս, յորս խորհէին այլազանքն ազգայինքն Ճանկըզզանին՝ առ մեծն եկեալ, զոր ինչ պատշաճն տեսանէին, հանդերձ ամենայն աւագանոքն իւրեանց, ամենեքեան նոր զգեցեալ՝ յամէն աւուր որիշ գունով փոփոխս։ Ընդ լինէին և ամենայն հնազանդեալքն իւրեանց շատ և երևելի նուիրօք՝ թագաւորք և սուլտանք. որպէս և 'ի մեր տեսն թագաւորն Հայոց Հեթում, և թագաւորն Սրաց Դաւիթ և Բրինձն[3] Անտաքու, և սուլտանք 'ի Պարսից կողմանց յոլովք։ Եւ 'ի տեսանելն զմեզ ծունր ոչ ետուն կրկնել և ոչ չոքել[4] ըստ իւրեանց սովորութեանն. իբր թէ արքաւունքն՝[5] Աստուծոյ միայն երկրպագեն. զինի ետուն օրհնել, և 'ի մեր ձեռաց առնուլ։ Եւ խօսք զոր ինչ հրամայեաց՝ առաջին այս. Կոչել եմ զքեզ որ տեսանես զիս և ճանաչես, և 'ի սրտաց աղօթես վասն իմ։ Եւ աւելորդ է թերևս զամենայնն գրել, շատ խօսեցաւ։ Եւ մեք տուաք պատասխանի և նստուցին զմեզ, և զինի ետուն. և շարական պաշտեցին եղբարքն որ ընդ մեզ. և Սրացիք զիւրեանց պաշտօնն, և Ասորիք և Հոռոմք զիւրեանցն։ Զի յայնմ աւուր տեսին զեկեալսն յամենայն կողմանց, մինչ ասել Ալղանին, թէ ես զքեզ միայն եմ կոչեալ, ինչ է այս նշանս, որ ոչ յառաջ և ոչ յետև՝ մի աւուրբ յամենայն կողմանց եկին ընդ քեզ, տեսանել և օրհնել զիս։ Եւ յառաջեաց հրամայեաց ինքն, թուի եթէ նշան է, որ Աստուծոյ սիրան լաւ է ինձ։

1. Ըստ շարժական տոմարի Հայոց, որոյ նաւասարդ յայնմ ամի, ՉԺԳ 1264, սկսանէր 'ի 14 յունուարի, ապա և տարեմուտն թաթարաց 'ի սկիզբն էր յուլիսի։

2. Գուրիլթայ կոչէին թաթարք զհամաշխարհական ժողովս և տօնս իւրեանց յընտրութիւն նորոց խաքանաց և յայլ կարևոր դէպս։

3. Prince, այսինքն Փռանկ իշխանն Անտիոքայ։

4. Չէօքմէք ըստ թուրքաց, 'ի գուճս անկանել։

5. Այսպէս կոչէին թաթարք զքրիստոնեայս։

Ասացաք. Օ՜ մեզ այլ կալու զարմանք, և պատճառ՝ զոր դուք հրամայեցիք։ Նա հրամայեաց, թէ Ծա-ծուկ բան ունիմ առ քեզ։ Եւ յաւուր միում արար անապատ յոյժ, և հեռի կացուցեալ զամենայն բանակն, և երկու արամբ միայն խօսեցաւ ընդ մեզ յերկար. յիւր ծննդենէ հետէ և 'ի մօրէ՝ որ քրիստոնեայ էր, ասէ. և թէպէտ դայեակ սնուցանէ զտղայն, երբ 'ի հասակ գայ՝ զիւր մայրն սիրէ. չէնք օտարք 'ի սիրոյ քրիստոնէից, զոր ինչ ունիս ասելոյ ասա։ Եւ բըռնեալ էր զիմ ձեռքս, և մեք ասացաք զինչ Աստուած երետ ասել բան. թէ Որչափ 'ի վեր ես դու քան զայլ մարդիկ, մօտ ես յԱստուած. Աստուծոյ աթոռն արդար դատաստանաւ է հաստատ։ Ամէն ազգի տուեալ է Աստուած տէրութիւն աշխարհի. մինչ 'ի ձեզ՝ աշխարհաւէր են լեալ, և աղքատաց անողորմ ծանր շալակ են դրել. նոքա[1] յոգոց են հանել, և լացեալ առաջի Աստուծոյ. Աստուած առեալ է զիշխանութիւնն և յայլ ազգ տուեալ. թէ դուք աշխարհաշէն լինիք և աղքատաց ողորմած, 'ի ձեզանէ չառնու Աստուած, զոր տուեալ է՝ թողու առ ձեզ, և զոր տալ կամի՝ զայն այլ տայ։ Ի քո դրանս հէնց[2] մարդ կացո՝ որ յԱստուծոյ երկնչի և զձեզ սիրէ. որ զլալով եկած տառապեալն՝ որ աղերս չունի և կաշառք՝ ուրախ 'ի տուն աղարկէ[3], քեզ յիշեցնէ. և զաշխարհս տեսանել տուր հէնց մարդոյ՝ որ յստակ տեսանէ, կուրանայ ո՛չ կաշառօք, և քեզ ասէ զիրաւն։

Եւ յայս կարգիս շատ խօսեցաք։ Հրամայեաց թէ 'ի սրտումս դրի զքո խօսքդ։ Ո՞նց է[4] որ զամէն զայն ասացեր որ յիմ սիրտս կայր՝ որ ինձ դիւր թուեաց. Աստուած խօսեցեալ է քեզ, երևեալ է քեզ։ Ասացաք, թէ Ոչ. մեք մեղաւոր մարդ ենք, ապա[5] զաստուածախօս մարդկանց գիրքն կարդացել ենք, և սիրտ թագաւորաց 'ի ձեռին Աստուծոյ են, Աստուած յայտնեալ է քեզ առանց գրոց։ Նա ասացաք, թէ Առաջի աստուծոյ խօսք մի եմ յասել, որ Աստուած լսէ և ապա դու՝ որ սուտ

1. Եւ նոքա։
2. Այնպիսի։
3. Ցուղարկէ։
4. Ուստի՞ է այս, զի....։
5. Սակայն։

չկայ 'ի ներս ։ Հրամայեաց, թէ ասա ։ Ասացի, թէ զինչ քրիստոնեայ կայ և արքաուն ընդ ծով և ընդ ցամաք, ամինայ սիրտ հետ քեզ լաւ է և քեզ աղօթք են առնում։ Հրամայեաց, թէ Հաւատալ եմ որ հէնց է. ապա յԱստուծոյ ճանապարհն չեն արքաունքն, ինձ ինչ աղօթք առնեն, և թէ առնեն՝ Աստուած երբ լսէ. մէշում[1] արքաունն զԱստուած յերկնից յերկիրս բերէ, չբերէ ։ Ասցէք որ յԱստուծոյ ճանապարհն կենան և աղօթք առնեն. մեր եղբարքն[2] հետ մեզ վասն այն են 'ի կռուխլ, որ մեք քրիստոնասէր ենք և քրիստոնէութիւն կայ 'ի մեր տանս. նաքա տաճկասէր են և տաճկութիւն կայ 'ի նացա տանն ։

Ապա ասէ ցմեզ. Աչխարհնի էր ես զգեցեալ և ոչ ոսկի. և իմացեալ թէ մեք մեծ մարդ և ատիճանի տէր չենք, լուր[3] աբեղայ մի եմք. և հրամայեաց թէ Մեծացանեմ զքեզ ոսկի զգեստիւ, և շատ ոսկի տամ։ Եւ մեք ասեմք. Ոսկին մեզ և հողն մի է. մեք այլ մեծ ուզենք, որ վայել է քո մեծութեանդ, ողորմութիւն 'ի վերայ աշխարհի։ Եւ հրամայեաց, թէ մէշում քթեթ[4] կարեմ խիստ գեշ. և խիստ փոքր լրք[5], լուր այնչափ որ խունկ գնես եկեղեցւոյն, թէ չէ երկիր ինչ ասեն թէ Ալղանն զնա ոնց տեսաւ ։ Եւ զայդ զոր ասացեր՝ առնեմ, և մարդիկ յղարկեմ՝ որ տեսանեն զաշխարհ ։

Իսկ երբ հրաման ուզեցաք գնալոյ, այլ կոչեաց զմեզ և խօսեցաւ. և ունէր 'ի ձեռքն բալիշ[6] մի, և երկու հանդերձ էր տուել կարել։ Յիշեցուցաք, թէ Ալղան, այդ գրամդ հատանի և հանդերձդ մաշի, մեք անհատանելի և անմաշելի խնդրեցաք պարգևք ։ Եւ հրամայեաց թէ առաջի օրն զքո խօսքդ լմնեցի[7], առլեխ[8] եմ տուել գրել. կարդալ տուր և զինչ քո սըրտիդ պիտի ուելի՝ զայն այլ գրել տուր ։ Եւ 'ի Սախալ-

1 · Մէշում արաբերէն مشوم Թշուառ լսի ։

2 · Ակնարկէ 'ի պատերազմն Պէրքայի, զոր յետոյ յիշէ և հեղինակս ։

3 · Սակ ։

4 · Քթանեայ զգեստիկ գծուծ ։

5 · Խմն, և յայժ սակաւ ինչ գրամ տայ ։

6 · Պալիշ, ոսկի կամ արծաթի գրամ ախտաձև կորեալ. ոսկին արժէր երբեմն 2000 դենար արաբացի, արծաթեայն 200 ։

7 · Կատարեցի լմնելն ։

8 · Եարլըղ, հրովարտակ հրամանի ։

թու և 'ի Շահաքաստինն եմ յանձնել զերկիրդ և ըղ-քեզ, որ զինչ ասես առնեն ։ Եւ մեք շնորհ կալաք և ելաք ։ Թերևս աւելորդ թուիմք գրելով զայս, այլ վասն բարեսէր և քաղցրաբարոյ մեծի Հուլաւունին յիշատակի գրեցաք յօգուտ, կամ յօրինակ այլոց՝ որ գալոց են յետ մեր, ո՛ գիտէ ։

ՂԷ. Քանզի 'ի մտանել թուականութեանն Հայոց յեօթն հարիւր չորեքտասան, եհաս մեծին այնորիկ մեծագոյն հրաւիրակ, և եհար գաւազանն զօրեղ զքաջն զայն յաղթազգեաց Հուլաւուն, և ժամանեաց նմա վըճիռ նախահօրն. քանզի որդի էր և նա Ադամայ, որ եարբ 'ի բաժակէն յորմէ ամենեքեան ճաշակեցին և ճաշակեն. թէ և դառն էր նմա, եարբ զլեղին մահու՝ ոչ ուրախութեամբ որպէս Տէրն և յուսացեալք 'ի նա. զի խաբէին զնա աստեղագէտք և քուրմք պատկերաց ոմանց Շակմոնիայ[1] կոչեցեալ, որ է ասեն՝ Աստուած երեք հազար և քառասուն ամաց. կալոց է դեռ այլ ևս երեսուն և հինգ տումանս, որ է տումանն տասն հազար[2] ։ Եւ ապա հանէ զնա ասեն միւս ևս Մադրին[3] անուն. Տոյինք[4] կոչէին զքուրմն զայնոսիկ, որոց հաւատայր և հրամանաւ նոցա ելանէր 'ի պատերազմ, կամ չելանէր. որք ասէին եթէ յերկար մնալոց ես 'ի մարմինդ յայդ. և յորժամ յերկար ծերանաս՝ այլ նոր մարմին զգենուս. շինել ետուն նմա մեհեան պատկերացն այնոցիկ. և երթայր անդ յաղօթս, և դիւթէին նմա զոր ինչ կամէին ։

Եւ մինչդեռ սպասէաք մեք այլ ժամանակի, և երկրորդ տեսութեան և ծանօթութեան աւելագունի, ասել ինչ նմա զարժանն, այլ և մնայաք 'ի բարեսէր բարուցն և 'ի քրիստոնէասէր ցուցանել նմա յԱստուծոյ նշան ինչ ձեռնտու քրիստոնէից, ասել ինչ նմա վստահութեամբ. քանզի վարժեալ էր 'ի նոցա բանսն

1. Շաքեա-մունի ըստ Հնդկաց, անուն մի Պուտհայ դից մարմնացելոյ 'ի թագաւորէ Շաքեան տոհմի. Մունի նշանակէ առ նոսա ապաշխարող սրբազան ։

2. Ըստ պարսիկ լեզուի ։

3. Ըստ Կիրակոսի և Ստեփանոսի Ուռպէլեան՝ Մադրին, իսկ ըստ Հնդկաց Մաիդրիյա. այսպէս կոչէին զՊուտհա մինչև մարմնացեալ և եկեալ յաշխարհ 'ի փըրկութիւն մարդկան ։

4. Թոյին ըստ Թաթարաց ։

և հիւանդացեալ։ Քանզի թաղեայ պատկերաց խօսել տայրն և ձիոց, և յոլով էր 'ի նոսա արուեստ խաբէութեան և հմայութեան. և էին պարկեշտ 'ի կերակուր և 'ի հանդերձ և 'ի կուսութիւն, և 'ի չափաւոր ամուսնութիւն և 'ի խառնակութիւն. քան ամաց կին առեալ, ասեն, մինչ յերեսուն ամն՝ 'ի շաբաթն երեք հետ խառնէին. և անդի մինչ 'ի քառասուն ամն՝ ամսեանն երեք, և անդի մինչ 'ի յիսունն՝ տարեանն երեք. և ընդանցեալ՝ բնաւ ասեն ոչ մերձենալ, ուստի մանաւանդ կարէին խաբել։ Եւ յայսոսիկ գայր հասանէր օրհասն, և կոխեր զբարձրն զայն բլուր լայն ոտամբն մահն. և փլուցանէր հաւատարէր իւրոյն նախնեաց. քանզի լեառն որ փլանելոյն է՝ փլցի, ասէ գիր։ Եւ լինէր հաւատարիմ բան մարգարէին. Ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ. այլ հաւատարիմ է Տէր և արդար հատուցանել նմա զմասն բարւոյն, զոր օրինօք բնութեանն ստացեալ ունէր, և զխուրեանցն հայրենիս[1] պահելով. զի ասախն[2], որպէս ասէին իւրեանք կոչելով զեդեալ սահմանն 'ի Չանկըզղանէն, սուտ չասել, չգողանալ, յայլոյ կին չխառնակել, սիրել զիրեարս հաւասար անձին, յիշոցք չունել և չփոխել բնաւ, զկամաւ հնազանդեալսն ապրեցուցանել՝ զերկիր և զքաղաք. և զանուանեալ տունս Աստուծոյ, և զկոչեցեալ նորա ծառայսն՝ զիարդ և իցենն՝ ազատ թողուլ 'ի հարկաց, և դնել պատիւ։ Զոր և նա հրամայէր պահել և պահէր։ Այլ և յիշենք զոր ասացն, թէ մեք որ պատուիրեմք աղօթել վասն մեր, ոչ թէ 'ի մահուանէ զերծանել, զայն չգիտենք, այլ խնդրեք յԱստուծոյ որ 'ի մեր թշնամեացն ձեռացն չմեռանիմք։ Թէ կատարեցաւ՝ այն Աստուած գիտէ. զի համբաւեցին նախ, թէ դեղով և հնարիւք սպանին, և յետոյ ծածկեցին զզրոյցն։ Սակայն մեծ թագուհին Տողուզ խաթունն կոչեցեալ՝ նախ քան զհամբաւել մահուն առաքեաց առ մեզ գաղտ, թէ Աստուած սիրեաց զԱպղանն և տարաւ աստի, և զինչ որ աստ սիրէր և զայս աշխարհս նմա էր տուեալ, նոյնպէս և արդ

1. Զխուրեանց հայրենի օրէնսն պահելով։

2. Եասագ یصاق, արգելհրամանի։

զայն աշխարհն երեւ նմա . պատարագ լինի՞ թէ ոչ ։ Եւ ասացաք, թէ չէ պարտ պատարագ առնել, այլ ողորմութիւն եւ հարկաց թեթեւութիւն առնէք . զի Ասորիքն ասացեալ էին՝ թէ պատեհ է ։ Հարցեալ էր եւ վասն Ապաղային, որ աւագ որդին էր Հուլաւին, թէ պա՞րտ է զնա դնել, զի անդարձ նմա արար ։ Եւ մեք պատուիրեցաք՝ որ 'ի գրոյ է զաւագն դնել, եւ անդարձն անկրկնելի կոչի ստուգաբանութեամբ ։ Որպէս եւ եղեն իսկ . եւ իւրեանց ազգայինն՝ որ եւ նա կոչէր Այլղան Տակուդար՝ երթեալ նստուցանէր զԱպաղէն կոչեցեալ 'ի տախտն եւ 'ի գահոյս հօրն, եւ հաւանեցան զօրքն ամենայն եւ հնազանդեցան ։ Այլ սակայն զի մեղքն մեր անչափ էին, չեղեւ սուգն չափով . զի յետ երից ամաց 'ի նոյն թուին՝ փոխեցաւ 'ի Քրիստոս քրիստոսասէր թագուհին Տողուզ խաթունն, եւ սրտակտուր միջաբեկ եղեն ազգք քրիստոնէից բազմապատիկ սգով եւ տրտմութեամբ . զի նմա կենօքն վաղվաղակի ողջանալ սկսաւ խոյն Այլղանին, ակն ունելով առաւել պայծառանալ քրիստոնէութեանն . զի որքան եւ էր պատճառն՝ նա իսկ էր ըստ մեր կարծելոյն ։ Այլ քանզի Աստուած իսկ է ամենայն բարեաց պատճառ, զայսմ չէ պարտ հատանել մեզ . քանզի կացոյց նա 'ի տեղի իւր միւս եւս հաւատացեալ ազգական իւր, կին բարեպաշտօն՝ կոչեցեալ Խուխթանի ։ Եւ բերեալ եղեւ 'ի Յունաց կին Ապաղային Դեսպինայ [1] անուն, դուստր թագաւորին զոր Վատածն ասէին, եւ պատուէր՝ թէ կնքուի Ապաղայն, եւ ՝ապա առնու ։ Եւ ել համբաւն նոյնպէս եթէ մկրտեցաւ եւ առ զնա, 'ի փառս Քրիստոսի ։

Յաւուրս յայս 'ի մեղաց իմոց անկաւ գրքունկս 'ի ձեռս հարամեաց [2], տղայօք մեր, եւ յողորմութենէն Յիսուսի ապրեցան տղայքն առ ժամն . եւ յետ ամի եւ կիսոյ գիրքս 'ի Տփխիս 'ի վաճառ բերեալ եւ գնեալ 'ի տանէ եղբօր մերոյ միոյ Մելքր կոչեցելոյ ։ Վասն որոյ ողորմութեան Տեառն փառք 'ի սուրբս ամենայն եւ յարարածս, եւ գնողին զամ՝ գթութիւն 'ի Քրիստոսէ ։

1 . Դեսպինա՝ տիկին կամ տիրուհի ըստ Յունաց լեզուի Δέσποινα, էր Մարիամ դուստր ոչ օրինաւոր կայսեր Միքայէլի Բալէոլոգի . 'ի Տիեզեոլտագոյի տոհմէ ։

2 . Հարամի حرامي, ըստ Արաբացւոց . աւազակք կամ մեկնակողէնք թաթարաց ։

ՂԸ. Իսկ 'ի մտանել Թուականին յեօթն հարիւր և հնգետասան՝ կողմնակալն հիւսիսի կոչեցեալն Բարքա [1], որ ունէր զտեղի Բաթուին և զՄարդախին և հաւանեալ էր օրինացն Տաճկաց, լուեալ զմահուանէ մեծի Հուլաւուին՝ գայ բազմութեամբ առ Կուր գետով, և ցուցանէ զինքն յայսմ կողմանէ կացեալ զօրացն Աբաղային, և եղբօր իւրոյ՝ Իսմուղին, եթէ թէ կենդանի է յետ մահու հօր նոցա։ Նա գայ կոխէ զնոսա, և անհոգութեամբ մինչև 'ի Հէճն [2], աղօթել անդ յուրախութիւն ամենայն Տաճկաց. յորմէ զարհուրեալ յայսմ կողմանէ կացելոյն՝ ցանկէին զերկայնութիւն գետոյն աստի՝ զոր Չիբարն [3] կոչէին, և զգուշացան ամենայն պատրաստութեամբ զաւուրս ձմերայնոյն։ Իսկ Բարքայն վրիպեալ 'ի յուսոյն՝ դառնայր 'ի տեղի իւր. և յաւուրս ամարայնոյն վճարէր զկեանս. զոր ասեն լինել բարուք ոչ խառվարար, և ատեցող արեանհեղութեան։

ՂԹ. Ի նոյն թուին մերձ յաշնան յեղանակն՝ բացաւ մեզ աման դառն քացախուն, և մրուր բարկութեանն Աստուծոյ հայկազարմ ազգիս։ Քանզի սուլտանն Մսրայ Փնտխտար [4] անուն խնդրէր զբերդն՝ զոր Տաթարին ուժովն առեալ էր Հայոց թագաւորն Հեթում։ Նա 'ի չտալն, աւելի վասն երկեղի Տաթարին, բարկանայր յոյժ, և զօրս գումարէ բազում յոյժ, և առաքէ 'ի ձեռն զօրագլխի որում Սմմօթ [5] անուն յերկիրն Կիլիկեցւոց. որ և յանպատրաստից մտեալ յաշխարհն՝ առնու զՍիս մայր քաղաքաց՝ զարքայանիստն, այրէ զնա եկեղեցեօքն որ 'ի նմա, և գտանէ զտունն գետնափոր գանձուցն, և առնու յոյժ բազում, զոր 'ի միում ամանի լինել ասէին վեց հարիւր հազար կարմիր [6]։ Նա գնայ աւերմամբ մինչև յԱտանա, և ա-

1. Պերքէ կամ Պերքայի խան, եղբայր Բաթու խանի։

2. Հէճն թուի Լէհիճ գաւառ Շրուան նահանգի, զի աստ մղեցաւ պատերազմն։

3. Չիբար թուի Ագսու գետ օժանդակ Կրի 'ի Շրուան նահանգի. այլ պատմիչք ոչ յիշեն զգետակդ, բայց յափունս Կուր գետոյ ասեն բանակեալ զԹշնամիսն աստի և անտի։

4. Պիյպարս Ալի Պունտուգտար։

5. Սիմ-էլ-մուգ։

6. Կարմիր նշանակէ զոսկի դրամն կամ զդահեկանն. Թիւն նշանակեալ է յՕՕ. ԿՃՌ, որ ընթերցեալ լինի վաթսուն հարիւր

պա լսէ համբաւ երկիւղի և դառնայ աւարաւ և գերութեամբ քառասուն հազարաւ, բայց 'ի կոտորելոցն. որ գլուխ և խոյ անողջանալի կոտորելոցն՝ Թէոդոս արքայորդին, գեղեցիկ ծաղիկ 'ի մատաղ հասակի մերձ 'ի փթիթս մուրուաց, վկայեալ յամենայն բերանոյ, անպակաս 'ի բովանդակ բարւոյ, և կուսութեամբ շտեմարանեալ 'ի ծրարս շնորհացն Աստուծոյ: Որ յօժարութեամբ ևս զինեալ 'ի պատկն արեան. քանզի հարցեալ զոմն ոչ ետ զանուն հօրն. զի կենօքն գերեալ՝ մի լիցի աւելի բեռն հօրն և աշխարհին՝ ընդ անդրանիկ եղբօրն Լեւոնի, պսակելոյ և հրաւիրելոյ յաթոռ թագաւորութեանն առ կենօք հօրն: Քանզի նա եղև գլուխ գերելոցն մեր, և հուր աղէկեզ լերդաչարչար և սրտակտուր աշխարհիս մեր և ազգիս, որ կամք շնչարգել և յերերման: Հասանէ ձեռն վերին, որ եհարն ցասմամբ՝ նոյն բժշկէ ողորմութեամբ, ածելով զմեծաբաց խոցն, առնելով գերեդարձ՝ զոր տարան ընդ այլսն. հնգետասան օր յամելով յաշխարհն և ճնլով աղետիւք, զնոսա՝ իրօք, և զմեզ՝ խոցոտիչ համբաւօքն:

Ճ. Իսկ 'ի վերանալ թուոյն մերոյ յեօթն հարիւր և վեշտասան 'ի կատարման քառասներորդաց աղուհացիցն, 'ի լնուլ վեցերորդ շաբաթուն 'ի յարութեան աւուր Ղազարու, սահմի ամսեան 'ի քսան և վեց, փոխի յաշխարհէս զգալւոյ յիմանալին՝ տէրն Կոստանդին պատրիարգն Հայոց, ծերացեալ և լի աւուրբք ըստ մարմնոյ, և առաւել ևս ըստ հոգւոյ և ըստ կամացն Աստուծոյ, յորովայնէ ընտրեալ, և ընդ ամենայն աստիճանս յառաջանալով անցեալ, ամենեքումբ հաճոյացեալ, յամենայն ազգաց և 'ի լեզուաց վկայեալ. կուսութեամբ անփուտ մնացեալ յիմանալի և 'ի զգալի մարդն և 'ի զգայութիւնս և 'ի զգայարանս, և 'ի բոլոր անդամս մարմնոյ. կրակից և վշտակից և օգակից ազգիս եղեալ 'ի մեղսաբեր և 'ի ցասմնահար դարուս. և 'ի ժամանակս ցաւալից և 'ի կսկծահար՝ զբոլորն յինքն տարեալ և ըստ կարի թեթևացուցեալ, սիրտ և բան և գանձ ծախելով առատաբար և անխնայ: Ման

հազար, 6,000,000, և համարիմ սխալեալ փոխանակ գրելոյ ԶՃՌ:

որոյ և յարմարի նմա ասել տեառն իւրոյ . Անցաք մեք ընդ հուր և ընդ ջուր զանազան փորձանաց, այլև և խեղդիչ որոգայթից . որ և ճաշակեաց իսկ և 'ի թանձրացեալ և զմռսեալ վերջնոյ լեզւոյս , մերձ 'ի կատար կենացն տեառնաքար , զդղրդումն թագաւորութեան մերոյ , զտուր և զգերութիւն իւրական ծննդեան սննդեան աշխարհին . մտեալ 'ի փորձ հնոցի գեհենահոտ հրոյն բորբոքման , ձեռասուն արքայորդեացն կորստեան . որք մանաւանդ մերձ բերին զօրհաս նորա և արարին տագնապել ստիպեան[1] շնչոյն , բորբոքելով զծարաւ լուծման յոգնաթախիծ կենցաղոյս : Զոր տեսեալ Յիսուսին իւրոյ և Աստուծոյ՝ ընդ Ղազարու հանէ արտաքոյ այսքան դժնդակ կրիցս՝ յանպատումն :

1. Այսպէս յՕՕ. Թուի լինել տագնապել ստիպման շնչոյն :

# ՑԱՆԿ ԱՆՈՒԱՆՑ*


Աբաս թգ · բագրատ · 87· 91·
Աբաս թգ · կիւրիկեան 106· 119·
Աբաս թգ · Սօմխէթ 90·
Աբաս թգ · Վանանդայ 92·
Աբգամանոս 23·
Աբգար 33· 34· 35·
Աբդիշոյ 58·
Աբդլա ոստիկան 71·
Աբդլմելիք 71·
Աբեգդար 22·
Աբել 5·
Աբելուհի 5·
Աբիա 24·
Աբիադար 22·
Աբիմելէք 16· 21·
Աբիուդէն 14·
Աբլհերթ 80·
Աբուլէթ 119· 120· 122·
Աբունասր 113·
Աբուսալիմ 96·
Աբուսահակ 79·
Աբուսահլ թգ· Արծրուն· 92· 116·
Աբուսահլ Բ · 92·
Աբուսէթ 80·
Աբուտալիփ 96·
Աբրահամ թարգմանիչ 51·
Աբրահամ կաթողիկոս 60·
Աբրահամ մետրապօլիտ 54·
Աբրահամ Նահապետ 13· 16· 17· 19· 29·
Աբրահամ սարկաւագ 54·
Ագաթանգեղոս 31·
Ագաթոն 84·
Ադամ 5· 6·
Ադդով, Աշարիա 24·
Ադլպարական (Ատրպատական) · 143·
Ադրիանոս 38·
Ադրիանուպօլիս 45· 133·
Աշարիա , Ադդով 24·
Աթանագինէս 39· 46·
Աթանաս Ա · 148·
Աթենացիք 21·
Աթէնք 20· 44·
Աթուր Ք · 17·
Աթուրիա 16· 17·
Աժդահակ 15· 26· 36·
Ալամանք 134·
Ալամուդ 104· 149·
Ալան 12·
Ալատին (Ալայ-Էտտին) · 144·
Ալաւիկ 12·
Ալէքս կայսր 91· 105· 107· 118· 131·
Ալինէ 44·
Ալիշէր ամիրայ 133·
Ալիս 42· 89·
Ալիօն 14·
Ալփասլան Ա · 96· 101.
Ալփասլան Բ · (Արսլան-շահ) 130·
Ալփիրակ 108·
Ալ-քայուբա 64·
Ախալ-քաղաք 101·
Ախուրան , Ախուրեան 33·
Ակայեցի (Ակէ) · 31·
Ակիւղաս 38·
Ակոռի 70·


* Համառօտք նշանակեն , բ· բերդ· գ· գիւղ· լ· լեառն· թգ· թագաւոր· կթ· կաթուղիկոս· ծ· ծանօթութիւն· ս· սուրբ· ք· քաղաք· գւ· գաւառ ։

Ահերման 6·
Ահմատան 60·
Աղբակ Մեծ · 35·
Աղբուղայ որդի Վահրամայ 145·
Աղեքսանդր մակեդոնացի 15· 28· 29· 88·
Աղեքսանդր հայրապ · Աղեքս · 82·
Աղեքսանդր հայրապ · Կոստանդնուպոլսոյ 82·
Աղեքսանդրիա ք · 47·
Աղեքսանդրիա Թագուհի 28·
Աղեքսանդրոս Մամեան 39·
Աղեքսանդրոս Պարիս 21· 24·
Աղթամար, Ախթամար 69· 92· 116·
Աղթամարայ կաթուղիկոսք 116·
Աղիովիտ 32· 77·
Աղձնիք 15·
Աղորոս 7·
Աղու 125·
Աղուանք 30· 40·
Աղցք, Աղցից գեօղ 61·
Ամաղոնք 13·
Ամաղէկ 20·
Ամասիա Հայկազն 14·
Ամասիա Թգ · Հրէից 24· 25·
Ամասիա ք · 102·
Ամարաս 43·
Ամիդ, Ամիթ 34· 117· 144·
Ամիրալմումնիք 93·
Ամիր-Ղազէ 109·
Ամմոնացիք 42·
Ամոն 26·
Ամովս 25·
Ամուկ 124·
Ամուրիա ք · 80·
Ամր 68·
Ամրամ 18·
Ամրի 24· 26·
Այրարատ 45· 91·
Այրարատեան դաշտ 92·
Անալիւր գ · 117·
Անանեանք 26·
Անակ 36· 37·
Անանէ 34·
Անանիա մարգարէ 24·
Անանիա մոկացի կթ · 89·
Անանիա շիրակունի 70·
Անանիա սանահնեցի 121·
Անաստաս կթ · 70· 83·
Անատոլիկեայք գւ · 42·
Անատոլիա 48·
Անաւարզա 126·
Անբերդ 92· 138·
Անգղիա · ծ · 9·
Անգեայք (Անգեղեայք) 31·
Անդրէաս Թարգմանիչ 110·
Աներիս 15·
Անի 39· 89· 93· 101· 108· 119· 126· 130· 138·
Անկլիդք 136·
Անձևացի 31·
Անձիտ 31·
Անձրևիկ Տ · Երեմիա
Անյուշ գղեակ 48·
Անուշաւան 15·
Անտաք Տ · Անտիոք
Անտէոս 21·
Անտիոք 33· 44· 46· 110·
Անտիոքայ Բրինձք (իշխանք) 156·
Անտիոքոս Եպիփանէս 28·
Անտիոքոս Եւպատոր 28·
Անտիոքոս զօրագլուխ 43·
Անտիոքոս Կերաունոս 29· 42·
Անտոն անապատական 55·
Անտոն ընկեր Կրօնիգեայ 41·
Անտոնիոս Եռապետ 32· 34· 38·
Անտոնիոս կայսր 39·
Աշարունիք Տ · Արշարունիք
Աշխարհաբերդ · ծ · 14·
Աշոտ Արծրունի 80·
Աշոտ բագրատ · (առ Մօրկաւ) 60·
Աշոտ բագրատ · շինող Անւոյ 76· 78· 79·
Աշոտ բագրատ · պատրիկ 74· 75·
Աշոտ Բիւրատեան սպարապետ · 70· 71·
Աշոտ իշխան Տարօնոյ 80·
Աշոտ կիւրապաղատ Վրաց · 77· 79· 82·
Աշոտ Մսակեր · 79· 82·
Աշոտ Ա · Թգ · բագրատ · 81· 82·
Աշոտ Բ · Երկաթ · 87·
Աշոտ Գ · Ողորմած · 89· 92· 106·
Աշոտ Դ · Եղբայր Յովհաննու 92· 99·
Աշոտ Թգ · Կարուց 87·
Աշոտ Թոռն Գագկայ Բ · 106·
Աշոտ Սխական 81·
Աշոցք 86·
Աշոցայ ձոր 92·
Աշունք գ · 85·
Աշուշայ 56·

Աշտիշատ 39· 46· 52·
Ապահունեաց քաղաք 93·
Ապահունիք 46· 48· 93·
Ապաղա-Ղան 161·
Ապար աշխարհ 54·
Ապիկուռ 78·
Ապիս 17·
Ապիրատ եղբայր Բարսղի կթ. 130·
Ապիրատ Պահլ. 97· 114·
Ապիրատ վրացի 99·
Ապլղարիպ իշխան 106· 117·
Ապլսուար 119· 120·
Ապողինոս իմաստասէր 20
Ապտիմարոս կայսր 84
Առան 17· 30· 105· 106·
Առանիս 30
Առաւան 15·
Առաւեղեանք 15·
Առբերանի 32·
Առեստ աւան 59·
Առիգէս 37·
Առնակ 15·
Ասա 24·
Ասափինի ծ. 97·
Ասափ 22·
Ասիա 9· 10· 30·
Ասլան Սուլտան 97· 127·
Ասխալա Տ. Ասկալոն
Ասխարթան 145·
Ասկալոն 34· 126· 137·
Ասողիկ 54·
Ասորեստան 15· 30· 35·
Ասորի 12·
Ասորիք 10· 26· 38·
Ասպահան 15· 95· 118·
Ասպուրակէս 49·
Աստղիկ 9· 10·
Աքանաղ 14·
Ատալանդ 19·
Ատանա 106· 162·
Ատամ արծ. 92·
Ատամ վկայ 80
Ատիկէ 18·
Ատիկոս պատրիարք 52·
Ատրներսեհ 77·
Ատրներսեհ իշ. Խաչենոյ 81·
Ատրպատական 48· 145·
Արաբիա 64·
Արաբիա Երջանիկ 10·
Արաբին 55·
Արաբիան 55·
Արագած լ. 14·
Արաղ աշխարհ 97·
Արամ 14·
Արամ Հիթացի 16·
Արամազդ 19·
Արամանեակ 14·
Արամենակք 42·
Արամօնից գեօղ 74·
Արայ 15·
Արբակ 15
Արբակ Թգ. Վրաց 91·
Արբէլ 15·
Արբուն 15·
Արգիացիք 20·
Արգուխ 109·
Արեւբանոս ք. 35·
Արիոս 44· 63·
Արիստաբուղոս 28·
Արիստակէս 41· 82·
Արիստոտէլ 4·
Արծխաս դաշտ 115·
Արծուղ 46·
Արծրունիք 30· 51·
Արկադէոս կայսր 49·
Արձան Թարգմանիչ 51· 53·
Արղուն 148· 152·
Արմայիս 14·
Արմանեկ 14·
Արմաւիր 14· 35·
Արմէն 14·
Արմ̃նիք 59·
Արմոգ 15·
Արշակ Ա. Պարթև 29·
Արշակ Բ. Մեծն 31· 32·
Արշակ Ա. Թգ. Հայոց 31· 32·
Արշակ Բ. 46· 48·
Արշակ Գ. 49·
Արշական 32·
Արշակունիք 32·
Արշամ 32· 33·
Արշան, Արտաշէս Պարթև 29·
Արշարունիք 41· 123·
Արշաւիր Մարաց Թգ. 29·
Արշաւիր Պարսից Թգ. 33· 34·
Արշէն քահանայ 54·
Արուճ 70·
Արտազ 34·
Արտաշատ 35· 45·
Արտաշէս Երկայնաբազուկ 27·
Արտաշէս Ռ.քոս. 27·
Արտաշէս Ա. Թգ. Հայոց 31· 32·

Արտաշէս Բ · 35·
Արտաշէս Գ · (Արտաշիր) 32·
Արտաշէս Պարթեւաց թգ · (Արշան ) 34·
Արտաշիր Տ · Արտաշէս Գ ·
Արտաշիր Ա · Սասանեան 36· 37·
Արտաշիր Բ · 49·
Արտաշիր Գ · 62·
Արտաւազդ Ա · 32·
Արտաւազդ Բ · 35·
Արտաւազդ Մանդակունի 37·
Արտաւան (Արտեւան) 36·
Արտաւիլ 139·
Արտեմիս 84·
Արտեւան Տ · Արտաւան ·
Արցախ 30·
Արփաքսադ 10·
Արփիազատ 16·
Արքակաղնի 139·
Արքեղայոս 43·
Աւագ , որդի Իւանէի 144· 148·
Աւան գ · 60·
Աւղկան (Օղկան) 118·
Աւետ երէց 124·
Աւոդ 21·
Աւրելիոս Մարկոս · 39·
Ափաղու 95·
Ափրիկանոս 20· 22·
Ափրիկէ 3· 44·
Ափխազք 92· 99·
Ափշին 79·
Աքառ 26·
Աքաղ 25·
Աքայ քղ · 136·
Աքիա 23·
Աքիաս 23·

Բաաս , Բայաս 24· 25·
Բաբ 15· 79·
Բաբգէն 54· 80·
Բաբելոն 11· 15· 16· 23· 29·
Բագարան 35· 87·
Բագարատ նահապետ Բագրատ 30·
Բագարատ որդի Աշոտոյ կիւրապաղատի 78· 79· 80·
Բագարատ Ափխազաց թգ · 92·
Բագարատ Վրաց թգ · 98·
Բագարատ թգ · միւս 118·
Բագուան 56· 140·
Բագրատունիք 15· 30·
Բագրեւանդ 48· 32· 76· 81·
Բազկերտ 90·
Բազունիք 90·
Բաթու-Ղան 149· 150· 155· 162·
Բալու 50· 113·
Բակխարուխ 97· 108· 113·
Բակուր Աղձնեաց բդեշխ · 43·
Բահլ քղ · 29· 94·
Բաղդատ քղ · 150·
Բաղտասար թգ · 26· 27· 33·
Բաղք 89· 103·
Բաչաւ-Նոյին (Բաչու) 147·
Բառաբա 70·
Բասեն 31· 36· 59·
Բասիլք 40·
Բարակ 21·
Բարդիսու Ասորի եպիսկոպոս 84·
Բարդողիմէ 34· 46·
Բարզափրան 32·
Բարմ , Բարմա 35·
Բարսեղ Ա · 68
Բարսեղ կթ · 103·
Բարքա-Ղան 162·
Բաքարուխ Տ · Բակխարուխ ·
Բաքր (Պէքր) · 75·
Բեթղեհեմ 10·
Բեթոգաբրա ծ · 34·
Բեխ 108·
Բեխդ իշխան 103·
Բենիամին 23· 51·
Բեր թգ · Սարմատ · 88·
Բէգխարուխ Տ · Բակխարուխ ·
Բէլ 13· 15·
Բէկգամուր 133· 137·
Բիւթանիա 74·
Բիւրական 87·
Բիւրատ 76·
Բիւրիտոնացիք 9·
Բլախք (Վլահք) · 135·
Բլուր գ · 52·
Բոր 62·
Բուբաքր 68·
Բուլղարք 36· 135·
Բուղա 81·
Բունդար 36·
Բուրեա վարդապետ · 78·
Բջնի 99· 138· 143·
Բրեհիմ (Աբրեհիմ) · 99·
Բրեհիմ Արաբկաց թգ · 108·
Բրիտանիա ծ · 9·
Բրուտոն ծ · 9·
Բրքիշու 52·

Գարեզեանք 30. 84.
Գագ բերդ 119. 143. 145. 146.
Գագայ դաշտ 122. 127. 143. 145.
Գագիկ Արծրունի 87. 92.
Գագիկ Թգ. Բագրատ. Ա. 92.
Գագիկ Բ. 99. 105. 115.
Գագիկ Թգ. Կարուց 102.
Գագիկ շինող Գագայ 145.
Գագիկ տէր Տանձեաց 100.
Գագ մարգարէ 22.
Գաղանածակք 81.
Գալլոս 39.
Գաղատացիք 14.
Գաղոս 44.
Գամիր 13. 14.
Գամիրք 14.
Գայերիգագ 6.
Գայոս 38.
Գայլ գետ. 58.
Գանձակ 100. 123. 142.
Գանձակ Շահաստան, Տ. Դա-
մլէժ 144.
Գանձասար 133.
Գանչէնք, Յուրտաւ. 58.
Գառնի 76. 123. 143.
Գասպար 33.
Գարգարացիք 30. 40.
Գարգման գաւառ 62. 81. 101.
142. 154.
Գարգմանացիք 30.
Գեդէոն 21
Գելաթ վանք. 120.
Գեղամ 14.
Գեղարքունի 14. 79.
Գեղի 128.
Գետաբակք 139. 144.
Գետիկ վանք, Հին և Նոր 140.
Գէորգ Ա. կթ. 76.
Գէորգ Բ. 85. 86.
Գէորգ Աչիկայ 129.
Գէորգ Թգ. Վրաց. 106.
Գէորգ Լոռեցի 102. 104.
Գէորգ խոստովանահայր Ճօլնի
125.
Գէորգ Մեղրիկ 117.
Գէորգ Ուրձեցի 107.
Գէորգիոս վկայ 47.
Գխանէ 39.
Գիւտ կթ. 53. 54. 59.
Գլխոյ վանք 68.
Գնէլ 48. 126.
Գնունիք 30. 77.
Գոգովիա 24.
Գոթոնիէլ 20.
Գոհար խաթուն 118.
Գողգոթա 10.
Գողիաթ 22.
Գող Վասիլ. 114. 122. 128.
Գորամ 82.
Գորգի եղ. Դեմետրի 122.
Գորգի Թգ. Ափղազաց 92.
Գորգիանոս 39.
Գորողդ խաչ 132.
Գուգարաց երկիր 142.
Գուգարացիք 30.
Գուգ 12.
Գութք 37.
Գուշարացիք 30.
Գուրգան (վրկանք) 94.
Գուրգասար, (Վախտանգ) 91.
Գուրգասլան. Ծ. 91.
Գուրգէն Գնունի 87.
Գուրգէն և Դաւիթ վկայք 87.
Գուրգէն Թգ. Սոմխէթայ 90.
Գուրգէն Թգ. Վասպուրականի 92.
Գռակ 15.
Գրիգոր Լուսաւորիչ 36. 39. 40.
41. 61. 67. 148.
Գրիգոր Աստուածաբան 148.
Գրիգոր (Ս.) Եկեղեցի 43. 60.
Գրիգոր Ընկեր Գէորգայ Աչիկայ
129.
Գրիգոր Թգ. Սիւնեաց 103.
Գրիգոր իշխան Փառխոսոյ 100.
Գրիգոր Խաղբակայ որդի 143.
Գրիգոր Խաչէնեցի 152.
Գրիգոր Մագիստրոս 99.
Գրիգոր Մամիկոն 68. 70. 111.
Գրիգոր միւս 75.
Գրիգոր միւս 81.
Գրիգոր Մխանձն 156.
Գրիգոր Նիւսացի 148.
Գրիգոր Նուիրակ 'ի Հռոմ 134.
Գրիգոր որդի Վասակայ պահլ.
104. 109.
Գրիգոր սպասաւոր կաթողիկէին
Դունոյ. 120.
Գրիգոր Վկայասէր 102. 114. 116.
Գրիգոր Տղայ 129.
Գրիգորէս Ապիրատ 129. 139.
Գրիգորէս եպիսկոպոս Եգիպտո-
սի 102.

Գրիգորիս կթ · 114·
Գրիգորիս Տղայ (·Քարավէժ) 139·
Գրհամ 128·

Դագան 19·
Դագանղան 96·
Դաղխմոն 42·
Դաղմատիոս 44 ·
Դամասկոս 16· 25· 74·
Դամասոս (պապ) 82·
Դանաւոս 20·
Դանիէլ Ասորի 49·
Դանիէլ մրգրէ 26· 27· 28· 81·
Դանիէլ քորեպիսկոպոս 45·
Դանչման 112· 113·
Դաւին գւ · 151·
Դավրէժ 143· 144·
Դարանդաշտ 151·
Դարբանդ 57·
Դարեհ Արշամայ 27· 28·
Դարեհ Հարճորդի 27·
Դարեհ Մար (Աժդահակ) 26· 27·
Դարեհ Պարթև 35·
Դարեհ Վշտասպեայ 26–28· 42·
Դարօնից բերդ · 71·
Դարօնք 68·
Դաւիթ մարգարէ 15· 23· 42· 43· 55· 90·
Դաւիթ Ալաւկայ որդի 121·
Դաւիթ Անէր Լուսաւորչի 37·
Դաւիթ Անյաղթ 51· 54· 55·
Դաւիթ Աշոտոյ որդի 80·
Դաւիթ Դւնեցի 67· 71·
Դաւիթ և Գուրգէն վկայք 87·
Դաւիթ Թգ · Արծրունի 92·
Դաւիթ Թգ · Ծանարայ 101·
Դաւիթ Թգ · Կիւրիկեան 90· 106·
Դաւիթ Թգ · Վրաց 118· 119·
Դաւիթ Թգ · Վրաց միւս 126· 147· 149· 156·
Դաւիթ կթ · Ա · 74·
Դաւիթ կթ · Բ · 80·
Դաւիթ կթ · Գ · 139·
Դաւիթ կթ · Աղթամարայ 116·
Դաւիթ կիւրապաղատ 93·
Դաւիթ որդի Դեմետրի 126·
Դաւիթ Սահառունի 62· 67·
Դաւութ սուլտան · 97·
Դեբորա 21·
Դեգաղոս 21·
Դելմիկ 95·
Դեկոս 39· 69·
Դեմետր կուռք 39·
Դեմետրէ Թգ · Վրաց 122· 126·
Դենշապուհ 61·
Գեսբինա 161·
Դերենիկ Արծրունի իշխան 92·
Դերենիկ Թգ · Արծրունի 92·
Դերենիկ որդի Սենեքերիմայ 92·
Դեւկալիոն 19·
Դեմնէ 130· 133·
Դէուժան , (Դիոժէն) 102·
Դիա , (Դիոս) 22·
Դիոկղետիանոս 37· 39·
Դիոնեսիոս կրսեր · Ծ · 20·
Դիոսկորոս 83·
Դիոսկորոս կթ · 98·
Դմանիք 120· 122·
Դոլադայ–Նոյին · 144·
Դոմետիանոս 38·
Դուգուլմուշ , ( Գուլթուլմուշ ) սուլտ · Իկոն · 110·
Դուգուշմուշ, սուլտան Սելչուկ 97 · 108·
Դուին 43· 53· 58· 67· 77· 78· 101· 127· 132· 133· 138·
Դունիք , ( Որդունիք ) 31·
Դպրավանք 69· 88·
Դրազարկ վանք 117· 123·
Դրուց աշխարհ 92·
Դւալէթ 119·
Դօղլաբակ 94·

Եբեր 10· 12·
Եբրայեցիք 19· 22·
Եգեր 72·
Եգիպտացիք 18· 19· 20· 23· 24·
Եգիպտոս 9· 17· 18· 19· 20· 28· 32· 33· 34· 36· 38·
Եգղոմ 21·
Եգեսիա 34· 62·
Եգվեանք 130·
Եգոմ 25·
Եզաբէլ, (Յեզաբէլ ) 24· 26·
Եզեկիա 25· 26·
Եզեկիէլ 27·
Եզնիկ 51·
Եզնկա 128· 147·
Եզովբոս · Ծ · 21·
Եզր կթ · 61· 62· 67·
Եզրաս 27·
Եզրաս Անգեղացի 57·

Եթէովպիա 9· 19·
Եթովպացիք 15· 18·
Ելաս 24· 26·
Ելենացիք 12·
Ելենէ 21·
Ելեւթերապօլիս 34·
Ելեւսիննեա 18·
Ելխազի 109·
Ելոն 21·
Ելոկուզ աթաբէկ 124· 127·
Եկեղեաց 35· 48·
Եկեղեցաձոր 42·
Եկսան 29·
Եղիա 24· 48·
Եղիա կթ · 72·
Եղիազար 23·
Եղիակիմ 26·
Եղիշէ վարդ · 12· 51·
Եղիպատրուշ 75·
Եղիսէ 24·
Եղիսէ կթ · 89·
Եղիվարդ 70·
Եմագոր 22·
Եմաւոն լեառն 9·
Եմրա 65·
Եմրան 29·
Ենանոս 35·
Ենովս 6· 7· 9·
Ենովք 6· 7· 137·
Եպիկուռա , (Ապիկուռ) 78·
Եպիփան 24·
Եռիննեա 91·
Եսայի կթ · 75·
Եսայի մարգարէ 25· 65·
Եսաւ 16·
Եսրոկ 29·
Եսեբոն 21·
Երազգաւոր · Տ · Շիրակաւան ·
Երակլիա 83·
Երան կթ · Պարսիկ 59·
Երասխ 35·
Երասխաձոր 132·
Երգեվանք 145·
Երեմիա Անձրեւիկ 121·
Երեմիա մարգարէ · 27·
Երջանիկ Արաբիա 10·
Երուազ 35·
Երուանդ 15· 35· 36·
Երուանդաշատ } 35·
Երուանդաքար }
Երուսաղէմ 15· 17· 23· 25· 26· 27· 32· 34· 38· 39· 61· 109· 131· 134·
Եւա 5·
Եւթաղի 37·
Եւիլա 10· 13· 63·
Եւիլատ 13·
Եւսեբիոս կեսարացի 20·
Եւստաթէոս պատր · 82·
Եւտիքէս 83·
Եւրոպիա 9· 30· 40·
Եփեսոս 39· 47· 53·
Եփրատ 68·
Եփրեմ 7· 24·

Զամբրի 24· 26·
Զամրիկ 62·
Զանգի ամիրայ · 125·
Զապել դշխոյ · 141·
Զառնաւուխտ 57·
Զարեհ 15· 16·
Զարմայր 15·
Զաւան 15·
Զաւէն 49·
Զաքարէ հաւ մեծին Զաքարիայ · 138·
Զաքարէ մեծն (Սպասալար) 138·
Զաքարէ որդի Շահնշահի 153·
Զաքարէ Տ · Նասրադոլա 140·
Զաքարիա Թգ · 25· 26·
Զաքարիա կթ · 81· 85·
Զաքարիա մարգարէ · 24·
Զաքարիա պատր · Երուս · 61·
Զգօն · Տ · Յակոբ Մծբնայ ·
Զենոն · կթ · 41· 83·
Զեւս 22·
Զմրութ 16·
Զնջիլ (Սէն-ժիլ) 110·
Զոյի 98·
Զոյիոս 44·
Զուտախմայ գ · 58·
Զրեակ գ · 76·
Զօրաբաբել 27· 28·

Էուպ 131·

Ընծաքիսար 59·
Ընձակ 15·
Ըռաստուան · Տ · Ռաստուան 109·
Ըռէ · Տ · Ռէ ·

Թադէոս առաքեալ 34· 39· 41· 46·
Թադէոսի խաչ 114·

Թամթարք 142-144 և այլն.
Թամթիկ եպիսկոպոս 54·
Թաթուլ Ա. 56·
Թաթուլ զօրավար 113·
Թալին 97·
Թակղաթփաղաստար 25·
Թամար 23·
Թամար Թագուհի. 133·
Թառաձեան գ. 133·
Թարա 13· 16· 17·
Թարշիշ 14·
Թափօրական լեառն 152·
Թեբայցիք 20·
Թեման 63·
Թեսաղիա 19·
Թեսբաս 18·
Թետաղացիք 31· 93·
Թետալիա 30·
Թետալք 14·
Թերմոդոն ծ. 13·
Թերմոթիա 18·
Թիւլախունէք 42·
Թեւտաս Թգ. Վրաց 91·
Թէոդոս Ա. կայսր 47· 48· 49·
Թէոդոս Բ. 51· 52· 53·
Թէոդոս Գ. 84·
Թէոդոս եղբայր Հերակլի, Թէոդորոս 61· 63·
Թէոդոս ռշտունի, Թէոդորոս 67· 68· 85· 96·
Թէոդորոս կթ. Ա. 89·
Թէոդորոս կթ. Հոնի 105·
Թէոդուպօլիս 48· 59·
Թէոփիլոս պատր. 41
Թէոփիլոս կայսր 84·
Թիլին աւան 48·
Թիրաս 13· 14·
Թիրոս 15·
Թլլքաշ 123· 126·
Թլպաշար 111· 118·
Թոնիկ 116·
Թովբէլ 6· 14·
Թովգա 21·
Թորգոմ 13· 14· 15· 91·
Թորգան 41· 43· 45· 68·
Թորոս Ա. 111· 117·
Թորոս Բ. 125·
Թորոս ալքայորդի 163·
Թորոս, Թէոդորոս կիւրապաղատ. 108· 109·
Թուլիս 49·
Թուխարք 71·
Թուխտանի խաթուն. 161·
Թուրքաստան 60· 130· ծ. 30·
Թուրքք 93· 103· 130·
Թոքակերայ որդի. 121·
Թօդոր ( Թէոդորա կայսրուհի ) 102· 105·

Իբերիա ծ. 31·
Իգնատիոս Ա. 38·
Իդումա (Եդովմ). 63·
Իզիտ (Եէզիտ). 74· 75·
Իլիական 13·
Իլիոն ծ. 14· 21·
Իլմարովզակ 26· 27·
Իկոնիոն 136·
Ինէ 130·
Իուդ 24·
Իսթեր (Եսթեր) 27·
Իսմայէլ 64·
Իսմայիլ հէջուբ 108·
Իսմուդ 130· 162·
Իսրայելացիք 20·
Իսրայէլ 18· 19· 21· 22· 24· 25· 26· 70·
Իսրայէլ եպիսկոպոս 68·
Իտալիա 19· 40· 44·
Իրադ-Արէպի ծ. 11·
Իւանէ մեծն 138·
Իւանէ Օրպելեան 119· 122· 129·
Իւանէ քեռորդի Գրդին 140·
Իքթիլ Թգ. Սիգոնի 24·

Լաբան 18·
Լաբդան 22·
Լամբրոն 106· 129·
Լաշա 139· 142·
Լատիա 102
Լատիս 92·
Լատինացիք 14·
Լեոն Ա. կայսր 83· 91·
Լեոն Բ. 83·
Լեոն Գ. 73· 84·
Լեոն Դ. 91·
Լեոն Ե. Հայ 77· 84·
Լեոն Զ. 86· 87· 91·
Լեոն Ա. Ռուբինեան 111· 117· 125·
Լեոն Բ. 50· 133· 136·
Լեոն Գ. 163.
Լէշքարի 100·
Լիա 18·
Լիբէացիք 31·

Լիբիա 9։ 30։ Ծ. 31։
Լիգա (Լիւգիա) 32։
Լիկկիանէս 37։
Լիկկիանոս 41։ 42։
Լիկոս 118։
Լինդոս 20։
Լիպառոն Արգլա 77։
Լիպարիտ 98։ 99։
Լիպարիտ Օրպէլեան 130։
Լիրիկեցիք 31։
Լիւրիկիա 14։
Լուլուայ ամրոց 79։
Լուկիանոս փռանկ 33։
Լուսաւորիչ Տ. Գրիգոր Լուս.
Լփինք 37։
Լօռէ 106։ 113։ 119։ 130։ 138։ 144։

Խադ եպիսկոպոս 48։
Խաղամախ գաշտ 57։
Խազիրք 36։ 70։
Խալաֆ Ամիրա. 78։
Խախ գեօղ. 48։
Խաղբակ իշխան 143։
Խաղտիք 93։
Խաչէն գաւառ 81։
Խաչէն ՝Ներքին 140։
Խաչէնք աշխարհ 81։ 100։
Խաչիկ իշխան Վասպուրականի
106։
Խաչիկ կթ. Ա. 90։
Խաչիկ Բ. 99։
Խառան 17։ 18։ 71։
Խարաչայ (Ղարաչա) 132։
Խարսանէք 42։
Խաւսատանէք 92։
Խեգէնէկ արծրունի 124։
Խըղըլ-Ասլան որդի Էլտկուզի 130։
Խըզնէ (Ղազնէ) 118։
Խլազիզ ամիրա 100։
Խլաթ 123։ 138։ 144։
Խլիճ-ասլան. Տ. Ղլիճ-Ասլան.
Խոնթիկ 122։
Խոշաք 140։
Խոշորնի 90։ 138։
Խոռ 90։
Խոռակերտ 90։
Խոռեմ 61։ 62։
Խոսրով Ա. Թագաւոր Հայոց 36։
37։ 39։ 43։
Խոսրով Բ. 43։ 45։
Խոսրով Գ. 51։

Խոսրով Ա. Թագաւոր Պարսից 57։
Խոսրով Բ. 57։ 59։
Խոսրով Թարգմանիչ 51։
Խոսրովանոյշ 90։
Խոսրովիդուխտ քոյր Տրդատայ 39։
Խոսրովուհի քոյր Անակայ 37։
Խորազմ շահ 143։
Խորասան 30։ 94։ 95։
Խորասու կուսան 122։
Խորիշահ 140։
Խորխոռունիք 30։ 90։
Խուժաստան 52։
Խուշշէր ամիրա 122։
Խուրթ 122։ 123։
Խտրղան-Պօղրղան 95։
Խրամ աւան 72։
Խուչախք (Ղփչաղ) 142։

Ծամնդաւ 102։
Ծանարք 101։
Ծառաքար 131։ 132։ 133։
Ծաւդէ. Տ. Ծօդացիք
Ծմակային կողմն (Կոմկաս) 45։
Ծովք 128։
Ծոփաց գաւառ 15։ 43։ 45։
Ծովիզ. Տ. Ասլան-Սուլտան.
Ծօդացիք 30։

Կադմոս Թեբացի 20։
Կալափա Միքայէլ կայսր 98։
Կալօնպաղատ բերդ 99։
Կածարէթ 145։
Կահաթ 18։
Կաղարջք (Կղարջք) 78։
Կամախ 45։ 76։ 77։
Կամբիւս 27։
Կամրջաձոր վ. 88։ 107։
Կայեան աշխարհ 140։
Կայեան, Կայէն Բերդ 90։ 92։ 99։
119։ 144։
Կայէն 5։ 6։ 7։ 12։
Կայնակ 15։
Կայծոն բերդ 90։ 92։ 99։ 119։
Կայնան 7։
Կայնան կուռք 16։
Կայնան որդի Արփաքսադայ 10։
Կայպակ 15։
Կանգարք դւ. 30։
Կապադովկացիք 14։
Կապան Սիւնեաց 128։
Կապոյտ բերդ 111։

Կապուտակէք } Կապպադովկիա 41. 59.
Կապոտկիա }
Կարբք 9.
Կասմ ոստիկան 72.
Կաստաղոն բ. 114.
Կատա 125.
Կատրամիտէ 90.
Կար 15.
Կարէն 34.
Կարկառ բ. 118.
Կարմիր ծով 10. 19.
Կարմիր Վանք 102. 114. 128.
Կարնոյ աշխարհ 59.
Կարնոյ դաշտ 93.
Կարնոյ քաղաք 48. ծ. 60. 61. 132. 147.
Կարոս 39.
Կարս քաղաք 88. 102. 119. 138.
Կարքեդոն 23.
Կաւատ 57. 61. 62.
Կաքաւաբերդ 128.
Կեգար 65.
Կեգմա 63.
Կեղեստիանոս պապ 83.
Կեղտք 14.
Կենատուր 17. 19. 29.
Կեչառուս վ. 97. 109.
Կեչրոր քաղաք 131. 132.
Կեսարիա (Մաժաք) 14. 36. 37. 39. 41. 46. 59. 147.
Կերինթոս 65.
Կիզիկոն 83.
Կիզիստրա 115.
Կիկրոփս (Կեկրոպս) 20.
Կինտաոս-Կաւխս 115.
Կիռ Թոտոր 102.
Կիս 58.
Կիախմ 14.
Կիրակոս պատմիչ 146.
Կիր-Մանիլ 125.
Կիւլիկիա 44. 50. 125.
Կիւռ-ժան 91.
Կիւրակոսք երկու վկայք 87.
Կիւրիկեանք 145.
Կիւրիկէ Ա. 106.
Կիւրիկէ Բ. 100. 104.
Կիւրիկէ Գ. 90.
Կիւրիոն 58. 60.
Կիւրղոս (Կիւրեղ) Աղեքսանդրացի 83.
Կիւրոս 26. 27.
Կղէոպատրա 32.
Կղօդէոս կայսր 39.
Կոկաց գաւառ 114.
Կոկասոս 91.
Կողբ 62.
Կողոնիա 58. 88.
Կոմիդաս 39.
Կոն Տ. Իկոնիոն
Կոնդոփրէ 110.
Կոնկռնատ լեառն 114.
Կոշմ 54.
Կոստանդ կայսր 44.
Կոստանդիանոս 40. 41. 42. 43. 44. 47.
Կոստանդին Բ. 43. 44. 45.
Կոստանդին Գ. 84.
Կոստանդին Դ. 90.
Կոստանդին Ե. 94.
Կոստանդին Զ. 88. 91.
Կոստանդին Է. 94.
Կոստանդին Ը. 93.
Կոստանդին Հերակլ կայսր 84.
Կոստանդին Ռուբինեան Ա. 111
Կոստանդին արծրունի 92.
Կոստանդին արքայահայր 141.
Կոստանդին կթ. 141. 162.
Կոստանդին տէր Կարկառայ 118.
Կոստանդնուպօլիս 34. 44. 47. 66.
Կոստաս 44.
Կովկաս 9. 14. 30. 36. 91.
Կովկասայինք 85.
Կոտման գետ 141.
Կորդուացիք 51.
Կորէշ 65.
Կորիւն 51. 53.
Կուզն (Գօղ) 122.
Կուկր (Բոկքովլիս) 29.
Կոմիտաս կթ. 61.
Կուր գետ 30. 36. 68.
Կորիճ 81.
Կրասոս 32.
Կրեատէ 21. 22.
Կրիսոս 15.
Կրօնիդէս 41.

Հաբել երէց 60.
Հագարացիք 68.
Հաթերք 140.
Հաղբանդ 119.
Հաղբատ 90. 104.
Համազասպ Մամիկոնեան 51.
Համազասպեան 53.

Համամ վարդապետ 86․
Համամ Տանձեաց տէր 100․
Համբակ (Ամբակ) 15․
Համդուն 88․
Համիան 95․
Հայկ 13․ 14․ 15․ 30․ 31․
Հայկազունք (Սիւնիք) 141․
Հայկակ 15․ 91․
Հայք 14․ 15․ 29․ 30․ 31․ 35․ 39․ 43․ 45․ 47․ 48․
Հայք խորին 59․
Հայք ներքին 59․
Հայոս․ Տ․ Հայկ․
Հաշիշի 97․
Հաշտեանք 32․
Հաջաջ 73․
Հասան 75․
Հասան Խաչենեցի․ Տ․ Ջալալ-դօլա․
Հասան Կայենեցի 140․
Հարմա 14․
Հարիրի 73․
Հացեաց դրախտ 46․
Հացիւնք 59․
Հաւան 15․
Հաւլ (Հօլ) 80․
Հաւութառ 129․
Հաւունիք 30․
Հեթում Ա․ 141․ 149․ 151․ 156․ 162․
Հեղի 22․
Հերակլ կայսր 84․ 61․ 62․ 101․
Հերակլակ 67․
Հերակլէս 21․
Հերէթ 119․
Հերմոն դաշտ 135․
Հերովդէս 28․ 33․ 34․
Հեփթաղք 37․ 56․
Հէճ 162․
Հէշմ․ 74․
Հիւրկանոս 28․
Հիւրկանոս Յովհաննէս 28․ 32․
Հմայեակ 53․ 56․ 111․
Հնդիկք } 9․ 13․ 36․
Հնդկաստան }
Հնդիկք խորին 3․
Հոկտաւիոս 38․
Հողոցիմ 52․
Հոմերոս 23․
Հոյն 15․
Հոն 12․
Հոնք 142․
Հոռոմայր 129․
Հոռոմոսի վանք 88․
Հոռոմոց աշխարհ․ 147
Հուան (Հաւան) 15․
Հուլաղու 149-160․
Հռասոն 25․
Հռիփսիմէ 61․
Հռիփսիմեանց վկայարան յԱնի 90․
Հռոմ 26․ 33․ 44․ 46․ 47․
Հռոմէլոս 26․
Հռովմայեցիք 11․ 14․ 22․ 33․
Հռութ 22․
Հռաչէ 15․ 37․ 38․
Հրեայք 9․ 26․ 27․ 28․ 33․ 40․

Ձագ 70․ 81․
Ձիւնականք 30․
Ձկնջուր 115․
Ձորագետ 138․
Ձորովանք 116․
Ձորոփոր 70․

Ղազար Փարպեցի 51․
Ղազի 113․
Ղազուին 96․
Ղամէք 6․ 7․ 9․
Ղավրիլ (Գաբրիէլ) 110․
Ղատաղայ-Նոյին 144․
Ղարաչայ (Խարաչա) 131․
Ղևի 18․
Ղևոնդ եպ․ Կեսարիոյ 39․
Ղևոնդ երէց 51․ 53․ 54․
Ղևոնդ կէթ․ 57․
Ղևտացիք 22․
Ղզիլ ավրայ 113․
Ղլիճ-Ասլան Ա․ Սուլտան Իկոն․ 110․ 112․ 133․
Ղլիճ-Ասլան Բ․ 126․ 133․ 136․
Ղուկաս աւետ․ 47․

Ճենք 37․
Ճոն Բարսեղ 69․
Ճօշլին 113․ 125․ 128․
Ճքէթ 119․

Մագնիտոխս 44․
Մագոգ 14․
Մագան 29․
Մաղխամ 19․
Մաղխամացիք 21․
Մաղխիման 29․

Մագլինա 62·
Մաղթան կուռք 94·
Մաթուսաղա 6· 7· 8· 9·
Մաժակ 32·
Մալքադոս 16·
Մածնաբերդ 145·
Մակեդոն 48·
Մակեդոնացիք 29· 42·
Մահամթ (Մահմէտ) 63·
Մահկանաբերդ 119·
Մահմատ Մուհթադէ 94·
Մահմատ որդի Մահմուտի 94·
Մահմէտ ոստիկան 71·
Մահմուտ Ա · Սուլտ · Խորազմ · 93·
Մահմուտ Ա · Սուլտ · Սէլճուկ 96·
Մահմուտ Բ · 97·
Մահմուտ Գ · 97·
Մահմուտ Տափարայ որդի 118·
Մահմուտ Փառլնայ որդի 122·
Մաղաղիէլ 7·
Մամ 100·
Մամբրէ 51· 54·
Մամգուն 40·
Մամլուզ 24·
Մամուն 77·
Մամուտ 115·
Մամքան 96·
Մայաէլ 6·
Ման կղզի · Ծ · 9·
Մանազկերտ 72· 93· 102· 124· 132· 137·
Մանաճիհր Ուշտունի 43· 44·
Մանասեմ (Մանայէմ) 25· 26·
Մանասէ 26·
Մանեայ պըք 41·
Մանիտոն 9·
Մանծկերտ · Տ · Մանազկերտ ·
Մանկու Ղան 148·
Մանուէլ · Տ · Կիռ-Մանուէլ ·
Մանուէլ Մամիկոնեան 77· 79·
Մանուչէ 103· 113·
Մաջա-Դաւլա Ռուստամ 95·
Մառի 18·
Մառինոս-Սարինոս · Ծ · 34·
Մասեաց ոտն 62·
Մասէ 63·
Մասիս 14·
Մասուտ Սուլտան Խորազմ · 95·
Մասուտ Սուլտ · Սէլճուկ 97·
Մասմն ազգապետ Արար · 63·
Մասուդ Սուլտան Իկոն · 125·
Մատթէոս աւետ · 47·
Մարաշ 89· 107· 113·
Մարանդ 108·
Մարաց-Մարդ 35·
Մարխահա (Մար-Իհար) 34·
Մարիամ կին Լուսաւորչին 37· 39·
Մարիամ Կիւրիկեան 122·
Մար-Իբաս 14·
Մարկիանոս 83·
Մարկոս աւետ · 47·
Մարկոս Ճգն · 114·
Մարմաշէն վանք 97·
Մարս · Տ · Մարք ·
Մարսամ 63·
Մարտին 67·
Մարտինոս Պապ · 84·
Մարտիրոսաց ք · տ · Մուփարղին ·
Մար-Փիլիկս 30·
Մարք 14· 26· 29·
Մաւի 68· 70·
Մաքենոցաց Վանք 76·
Մաքսիմիանոս } 39· 41·
Մաքսիմոս }
Մաքսինտէս 41·
Մէքասթեն · Ծ · 31·
Մեգա 14·
Մեթոտիոս 9·
Մեժէժ գնունի (Մժէժ) 58· 61· 62·
Մելան (Միլան) 134·
Մելեսիտ 42·
Մելեր 161·
Մելիտոս մետրապ · 55·
Մելտենի 15· 47· 59· 88· 110· 112·
Մելքիսեդեկ 17·
Մելքոն 33·
Մեծամոր 35·
Մեհրուժան Արծրունի 48· 76·
Մեղքոմ 42·
Մեմփիս 18· 20·
Մենանդրոս 16·
Մենափթիս 18·
Մենծկերտ 113·
Մենծկերտ · Տ · Մանազկերտ ·
Մեսոփիմ 13·
Մեսեղինոս 105·
Մեսրոպ 49· 51· 52· 53·
Մերտին 113·
Մերվ · Տ · Մրու ·
Մէլիք-Աշրաֆ 138· 144·
Մէլիք-Շահ 96· 104· 108·
Մէլիք Սուլտան Գանձակայ 118·

Մէջերկրայք 30· 33· 40·
Մթին լեառն 30·
Միհրան զօրավար Պարսից 56·
Միհրան Թգ · Վրաց 91·
Մինով . Ծ . 21·
Միրդատ 32·
Միքայէլ (Ասորի պատմիչ) Ծ · 7·
Միքայէլ Ա . կայսր 84· 91·
Միքայէլ Բ . 77· 91·
Միքայէլ Գ . 94·
Միքայէլ Դ . 93·
Միքայէլ Զ . 102·
Մլհետք 149·
Մխիթար Անեցի 137·
Մխիթար Գօշ 94· 140·
Մծբին 31· 32· 34· 35· 43·
Մշակաւանք 42·
Մշկան 35·
Մոգք 27· 31· 34· 37·
Մոլար-նոյին 144·
Մոկացիք 31·
Մոնոմախ 98·
Մոնդրին (գէք) 139·
Մոսոք 14·
Մովաբ 21·
Մովսէս Խորենացի 31· 32· 34· 35·
Մովսէս կթ · 37·
Մովսէս մարգարէ 1· 18· 19· 20· 23·
Մովսէս (իշխան Ռուսիոյ) 87·
Մութասր Խալիֆա 150·
Մուղալ Թաթար 142·
Մուղան դաշտ 144· 151·
Մուշեղ Մամիկոնեան 75·
Մուշեղ որդի Սմբատայ · Ա · 87·
Մուշեղ (Քաջակորով) 49
Մուշէ 51· 54·
Մուշէ կթ · 57·
Մուսեափաղոյ 96·
Մուրացան 30·
Մուփարղին (Նփրկերտ) 15· 47· 150· 152·
Մսիս Ք · 106·
Մսլիմ 74·
Մսր 102·
Մրաձուլք 119·
Մրեն 62· 127·
Մրմ } Մրու } (Մերմ) 96·
Մրուան 71· 74· 75·
Մօրիկ կայսր · 59· 60· 84·
Յաբեթ 9· 13· 14·
Յազդ 56·
Յազկերտ Ա · 51· 52·
Յազկերտ Բ · 52· 54· 56·
Յազկերտ Գ · 62·
Յակոբ 12· 17· 18· 19·
Յակոբ Զգօն 37· 43· 44·
Յակոբ (Ս ·) Սպանիոյ 134·
Յակոբ Աքանչելի վարդ · 122·
Յամբրէս 18· 19·
Յայիր 21·
Յաննէս 18· 19·
Յաննէոս 28·
Յարեդ 7· 9·
Յաւան 14·
Յեկսան 19·
Յեկտան 13·
Յեսու 15· 20· 22· 23·
Յեսուր տրաբացի 63·
Յեփթայի 21·
Յեքոնիա 26· 27·
Յէու 24· 26·
Յիզաբուզիտ 37· 67·
Յիսէ 83·
Յոբ 16· 18· 86·
Յոբ կթ · 76·
Յոբնաղ պատրիարք · Տ · Յուբնաղ·
Յոյնք 14· 20· 21· 34· 37· 51· 58· 61· 67· 83· 86· 87· 99· 103· 120· 154·
Յոնակ 15·
Յովաբ 42·
Յովակիմ 27·
Յովան (Զաքարիա մարգ ·) 24·
Յովաս 24· 26·
Յովաքազ 24· 26·
Յովէլ 24·
Յովիդիա 24·
Յովհաննէս Աւետ · 38· 39· 47· 155·
Յովհաննէս Թգ · բագրատուն · 92· 93· 99· 102·
Յովհաննէս Թարգմանիչ 51·
Յովհաննէս կթ · Ա · (Մանդակունի) 35· 37· 83·
Յովհաննէս կթ · Բ · 57·
Յովհաննէս կթ · Գ · 60·
Յովհաննէս կթ · Դ · Օձնեցի 72-74·
Յովհաննէս կթ · Ե · 80·
Յովհաննէս կթ · Զ · Պատմիչ 22· 87· 89·
Յովհաննէս կթ · Է · Մեծաբարոյ 139· 141·

Յովհաննէս Կարապետ 39.
Յովհաննէս Մայրագոմեցի 62.
Յովհաննէս Մայրովանեցի 85.
Յովհաննէս մետրապօլիտ 82.
Յովհաննէս որդի Բ. Գագկայ 106.
Յովհաննէս պատր. Անտիոքու 82. 83.
Յովհաննէս Պարոն 147.
Յովհաննէս Տուեցի 154.
Յոն 21.
Յոնաթան 22. 25.
Յոնաթան մակաբայեցի 28.
Յովսափատ 24.
Յովսէփ կթ. Ա. 51-54.
Յովսէփ կթ. Բ. 80.
Յովսէփ կթ. Աղուանից 98.
Յովսէփ Նահապետ 18.
Յովսէփ ՙՆոր վկայ. 128.
Յովսէփ և Սահակ 91.
Յովրամ 24. 26.
Յորդանան գետ. 13.
Յորդանան վկայ 132.
Յուբաղ 6.
Յուբիանոս 44.
Յուբնաղ 55. 83.
Յուդա ցեղ 23-27. 30.
Յուդա Մակաբէ 28.
Յուլիանոս աղեկսանդացի 85.
Յուլիանոս Ուրացող 44. 45.
Յուլիոս Կեսար 33. 38.
Յունան 25.
Յունաց աշխարհ. Տ. Յոյնք.
Յուսակ 15
Յուսիկ 45. 46.
Յուսիփ ռոսիկան 87.
Յուսուֆ (Սալահէտտին) 131.
Յուստինիանոս Ա. կայսր 58. 83. 85.
Յուստինիանոս Բ. 84.
Յուստինիանոս (Յուստինոս Ա.) 83.
Յուստինիանոս (Յուստինոս Բ.) 83.
Յուստինիանունիստ. Տ. ՙՆփրկերտ.

Նաբաւ 24. 25.
ՙՆաբէովթ 63.
ՙՆաբէս 63.
ՙՆաբուգոդոնոսոր 13. 15. 26. 27. 31.
ՙՆաբուկ 84.
ՙՆաբուպալասար 26.
ՙՆաթան 22.
ՙՆախճաւան 72. 98.
ՙՆախիջեւան 140.
ՙՆամա 23.
ՙՆամրուան 93.
ՙՆանա սարկաւագ 78. 82.
ՙՆաշաւուր. (ՙՆիւշապուհ) 95. 96.
ՙՆասրադոլա 140.
ՙՆաքովր 13. 16.
ՙՆեբրովթ 11. 15.
ՙՆեստոր 53.
ՙՆեստորաց ազգ. (Թաթարք) 146.
ՙՆերշապուհ 58.
ՙՆերոն 38.
ՙՆերուաս 38.
ՙՆերսէհ թգ. Վրաց 87.
ՙՆերսէհ իշխան Վրաց 70.
ՙՆերսէհ հայկազն 15.
ՙՆերսէհ (Միհր-ՙՆերսէհ) 54.
ՙՆերսէս կթ. Աղուանից 133.
ՙՆերսէս կթ. Ա. Մեծն. 43-48. 82. 110.
ՙՆերսէս կթ. Բ. 57. 84.
ՙՆերսէս կթ. Գ. Շինող 67-70. 85.
ՙՆերսէս կթ. Դ. Շնորհալի 114. 128. 129.
ՙՆերսէս-Բակուր 72.
ՙՆեքտառիոս պատր. Կոստանդ. 82.
ՙՆզէպ 117.
ՙՆիկիա 41. 107.
ՙՆիկիո Ներքինի 85.
ՙՆիկիփոր Ա. կայսր 54. 84.
ՙՆիկիփոր Բ. (Փոկաս) 91.
ՙՆիկոմաք 37.
ՙՆիկոպոլիս գիւղ. 58.
ՙՆինոս 13. 17.
ՙՆինուէ 13-17.
ՙՆոյ 7-10. 13.
ՙՆոյեմակ գիրք 62.
ՙՆոյեմի 27.
ՙՆոյինք (իշխանք Մողոլաց) 144.
ՙՆոյոմի 6.
ՙՆորայր 13.
ՙՆորաշէնք 129.
ՙՆոր-բերդ 143. 155.
ՙՆոր-քաղաք (Ախալ-քալաք) 101
ՙՆոր-քաղաք. Տ. Վաղարշապատ.
ՙՆունեայ խաչ 111.
ՙՆփրկերտ 59. 78.

Շակմոնիիայ 159.
Շահաբատին 159.
Շահակ կթ. 48. 49.
Շահապիվանք 53. 126.

Շահի-Արմէն 123· 124· 126· 132· 133·
Շահնշահ Թոռն Վիգէնայ 133·
Շահնշահ որդի Աբուսահլի 92
Շահնշահ որդի Զաքարեի մեծի 140· 153·
Շահնշահ (տեարք Անւոյ) 129· 153·
Շամ աշխարհ 151·
Շամբատ 15·
Շամիրամ 15·
Շամիրամայ-բերդ 100·
Շամշադրամ 34·
Շամքոր 100· 140· 145·
Շաշուաղ 100·
Շապուհ Բ․ արքայ Պարսից 40· 42· 48· 49· 51·
Շապուհ որդի Ա․ Յազկերտի 52·
Շապուհ որդի Սմբատայ բագրատ․ 76· 78·
Շապուրան 119·
Շատատ 126·
Շատատիկք 106·
Շարայ 30·
Շարշան (Շարաշան) 31·
Շաւասպ Արծրունի 55·
Շաւուղ 23·
Շաքէ 127·
Շեխի հայր Ցխաէի 85·
Շերոյ 55·
Շիբար գետ․ 162·
Շիրակ 76· 130· 138·
Շիրակաւան 82· 86·
Շմաւոն մակաբայեցի 28·
Շմուէլ կթ․ 52·
Շմուէլ մարգ․ 23·
Շնորհաւոր 155·
Շուղր անապատ 116· 128·
Շօթք 100·
Շօշ 15·

Ոգոհի 37·
Ոզիա 25·
Ոծիէ 137·
Ոսկեան 82·
Ոստան Հայոց 143·
Ովցեգիա 18·
Ովսէէ 25· 26·
Ովսիա 26· 27·
Ովրենդ (Ս․) 146·
Ովրեստէս 17·
Որմիզդ արքայ Պարսից 43· 45·
Որմիզդ որդի Պերոզի 59·
Որմիզդ դէք 55·
Որմիզդ Թոռն Խոսրովու 62·
Որմնիք (Արամանիք) 110·
Որոտն 140·
Ուլի Սալար (Ուլու Սալար) 115·
Ուխթանէս Պատմիչ 42·
Ուխթիք 93· 119· 132·
Ուձուն 129·
Ուղկան ք․ 40·
Ուճ 136·
Ումար (Խալիփայ) 72· 75·
Ումէկ 147·
Ունկարք 129·
Ուռհա 34· 62· 107· 108· 109· 111· 112· 115· 125·
Ուտէացիք 30·
Ուտի 81
Ուփիր 15·
Ոքոզիա 24· 26·

Ջաղագա-նոյին 144·
Չաղրբէկ 96·
Չանգզ-Ղան 149·
Չարէք 138· 140· 144·
Չարմաղան 144· 147·
Չին և Մաչին 142·
Չոր (Ճոր) 36·
Չունակ 48·

Պագոս, Բոյ․ Ծ․ 19
Պալաուխ 109·
Պահլաւք 29· 34·
Պաղեստին 10· 13· 17· 30· 33·
Պաղտատ 79·
Պաղտոյն (Պոտուէն) 110· 111· 118·
Պաղտոյն միւս 110· 117·
Պաճոյճ 15·
Պամփիլագոնիա (Պափլագոնիա) 9·
Պայգամ 15·
Պայմունդ․ Տ․ (Պեմունդ)․
Պապ Թգ․ 46· 47· 48·
Պապ Հռովմայ 134· 148·
Պապառոն ք․ 106·
Պապաք 143·
Պառնասացիք 19·
Պատմա կղզի 38· 39·
Պարզուան 100·
Պարէտ 15·
Պարթեւք 10· 29· 31·
Պարկեշտ երէց 143·
Պարոյր 15·

Պարսիկք 26· 27· 29· 33· 34· 35· 36· 37· 43· 46·
Պարսկահայք 35·
Պարտաւ 91· 100·
Պելասգոս 20·
Պեծեննեկք (Բեչեննեկք) 107·
Պեմունդ 110 112·
Պետեւան 112
Պետրոս առաքեալ 46·
Պետրոս եպիսկոպոս 58·
Պետրոս Խոնթկայ որդի 122·
Պետրոս կթ · 93· 98·
Պետրոսվանահայր Հռոմայրի 129·
Պերգէ 32·
Պերգրան կոմս 114· 115·
Պերոզ 35· 36· 39·
Պերճ 15·
Պերսինոպս 39·
Պիզու 99· 105·
Պիր 118·
Պղատոն 19·
Պղնձահանք 148·
Պոլքեր 55·
Պոնտացիք 32·
Պոնտոս 13· 14· 30· 31· 32· 36·
Պորփիւրոս պուէտ 25·
Պուղան ամիրայ 106· 107·
Պռոբոս 39·
Պռոկոպոս 67·
Պռոտոն Արմենիա (Ա· Հայք) 14·
Պտղոմէոս Ա · Լագոսեան 28·
Պտղոմէոս Բ · Փիլադելփոս 28·
Պտղոմէոս Գ · Փիլոպատոր 28·
Պտղոմէոս Դ · Եպիփանես 28·
Պտղոմէոս Ե · Փիլոպատոր (Փիլոմետոր) 28·
Պտղոմէոս Զ · Եւերգետես 28·

Ջալալ իշխան 152·
Ջահան գեա 30· 93· 96·
Ջահապ 76· 77· 78· 79· 81·
Ջաղել 31·
Ջաւախք 30· 38·
Ջափր 81· 93· 130·
Ջոպին (Ճոպէն) 125· 128·
Ջուանշիր արքայ Հեփթաղաց 37· 67· 89·

Ռարոլթ Մոկարու 63·
Ռագաւ 11· 13·
Ռագուել 16· 19·
Ռամանոս · Տ · Ռոմանոս Ա ·
Ռան · Տ · Առան ·
Ռաջարդ (Ռիշար) 112·
Ռատուան 109·
Ռեբեկա 17
Ռեմանայ գիք 64·
Ռէ 94·
Ռիստակէս 43·
Ռոբովամ, Րոբովամ 23· 24· 25· 26·
Ռոճէր 117·
Ռոմանոս կայսր · Ա · 88·
Ռոմանոս Բ · 91·
Ռոմանոս Գ · 93·
Ռոպերդ 110·
Ռոստոմ Սաղճիկ · Ծ · 31·
Ռուբէն Ա · 111·
Ռուբէն Բ · 133·
Ռուզ 133·
Ռուզուքան 90·
Ռուքնադաւլա 96·
Ռստոմ · Տ · Մաջադաւլա ·

Սաբա 10· 13·
Սաբիլէ (Սիբիլլա) 21·
Սաբինոս Ծ · 34 ·
Սագաստան 60·
Սադոկ 23·
Սադուն իշխան 127·
Սալահադին 131· 134·
Սալար իշխան 100·
Սալգուխ 124·
Սախալթու 158·
Սախատա 130·
Սակգէն 37·
Սահակ (Նահապետ) 17· 18· 29·
Սահակ կթ · Ա · (Պարթեւ) 49· 51· 52· 53· 54·
Սահակ կթ · Բ · 57·
Սահակ կթ · Գ · 70· 71·
Սահակ Առապետ 56·
Սահակ եպիսկ · Բիւրականի 87·
Սահակ Մռուտ 85· 87·
Սահակ և Յովսէփ վկայք · 91·
Սահակ Թգ · Սիւնեաց 90·
Սահակ կայսր (Փիսիկ) 135·
Սահակդուխտ 91·
Սահերոն 16·
Սահլ սմբատեան 79·
Սաղա 10·
Սաղմանասար 23· 26·
Սամարիա ք · (Մամլուզ) 24· 25·

Սամէա 23· 24·
Սամէգար 21·
Սամէրոս 7· 13·
Սամճուլցէ 101·
Սամուէլ մարգարէ 22· 23·
Սամուէլ Անեցի 121·
Սամուէլ երէց 34· 37·
Սամուէլ կամրջաձորեցի 107·
Սամուստ 109· 118·
Սամփսոն 22·
Սանահնին վանք 88· 98· 140·
Սանատրուկ 34· 33·
Սանատրուկ բռնաւոր 43·
Սանջար սուլտան 97·
Սառա 16·
Սասանական (Սանասական) 31·
Սասունք 124· 133·
Սարգիս կթ · Ա · 90· 93·
Սարգիս կթ · Բ · 104·
Սարգիս եպիսկոպոս Հաղբատայ 103·
Սարգիս (խրատտու Մահմէտի) 63·
Սարգիս Աւագ · 127· 138·
Սարգիս նախահայր Զաքարեանց 138·
Սարգիս (Ս ·) խաչ · 123· 143·
Սարգիս Խաչենեցի 132·
Սարգիս (Ս ·) 123
Սարդարի ղան 130· 162·
Սարդանապաղ 13·
Սարի 93·
Սարկաւագ (վարդ· Յովհան·) 121·
Սարչուք (Սէլչուկ) 96·
Սաւուղ 22· 23·
Սաւսակիմ 24·
Սափան 108·
Սաֆա 63·
Սրքթան (Սէպէքթէկին) 94·
Սեաւ Լ· 'ի Կիւլիկիա 91· 111· 116·
Սեբաստիա (Սեաստ) 42· 47· 39· 92· 98· 112· 147·
Սեբաստոս · Տ · Օգոստոս ·
Սեգեկիա 26·
Սելեւկիա Կիլիկիոյ 136·
Սելում 23· 26·
Սեղբեստրոս Պապ 40· 82·
Սեմ 9· 10· 13· 13·
Սենայար 11·
Սենեքերիմ 13·
Սենեքերիմ Թգ · Արծրունի · 92·
Սենեքերիմ Թգ · Սիւնեաց 103·
Սերկեղի գ · 98·
Սերմի (Սերմիոն) 44·
Սերուք 13· 13·
Սեւադա Խաչենեցի 132·
Սեւադա Ջահապեան 79·
Սեան 71·
Սեւաստ · Տ · Սեբաստիա ·
Սեւերոս 39·
Սեւորդեաց գւ · 92· 100·
Սեւորդիք 81·
Սեւուկ 81·
Սեփովրա 19·
Սէթ 6· 7· 9· 12·
Սիգոն 24·
Սիգոս 23·
Սիմ Լ· 73·
Սինա 20· 49·
Սիոն կթ · 73·
Սիս 136· 162·
Սիսակ 14·
Սիսակեանք 30·
Սիրակուսա 20·
Սիւնիք 14· 30· 80·
Սլիման 72·
Սկուարի գ · 58·
Սղկունիք 40·
Սմբատ (Ճամբատ) 30· 33·
Սմբատ ասպետ որդի Բագարատայ 48·
Սմբատ բագրատ · Թգ · Ա · 87·
Սմբատ Բ · (Տիեզերակալ) 90·
Սմբատ Թգ · Սիւնեաց 103·
Սմբատ (Այրաքաջ) 33·
Սմբատ Բիւրատեան 76.
Սմբատ զօրավար 73· 76·
Սմբատ Խոստովանող 81·
Սմբատ կիւրապաղատ 72·
Սմբատ Մարզպան Վրկանայ 39·
Սմբատաւան (Բաբերդ) 77·
Սմլմօթ (Սիմ-էլ-մաւգ) 162·
Սոկրատ պատմիչ 44·
Սողոմոն 23·
Սողոմոն կթ · 76·
Սոմխէթ 90·
Սոնք 119· 126·
Սովիէ 29·
Սորիա 44·
Սոփի 37· 38·
Սուլիման 74·
Սուր անապատ 63·
Սուր հայկազն 13·

Սուրէն եղբայր Լուսաւ. 37·
Սուրէն մարզպան 61·
Սուրէն Պահլաւունի. 34·
Սուրհան Պարսիկ 70·
Սուրհապ 36·
Սուրմակ 52·
Սուքման 109· 111· 125·
Սպանիա 32·
Սպանիացւոց արքեպիսկոպոս 134·
Սպեր 77·
Ստեփանէ 125·
Ստեփաննոս կթ. Ա. 75·
Ստեփաննոս Բ. 89·
Ստեփաննոս կթ. Աղուանից 104·
Ստեփաննոս Կոն. 81·
Ստեփաննոս որդի պարոն Յովհաննու 147·
Ստաւակոս (Ստաւրակ կայսր) 84·
Սրաւ (Սէր–ապ) 95·
Սրուճ 13·
Սօղան 133·

Վազգէն 56· 111·
Վախթանգ Հաթերքայ տէր 140·
Վախթանգ Սակաւանց 140·
Վախտանգ Վրաց արքայ 56· 91·
Վահագն 15·
Վահան գողթնացի 72·
Վահան եպիսկոպոս Տարօնոյ 85·
Վահան (Վահանիկ) կթ. 89· 116·
Վահան ամատունի 45
Վահան մամիկոնեան 56· 57· 81·
Վահէ 15·
Վահէ ոստիկան 82·
Վահրամ Սարգիսեան 138· 142· 144·
Վահրամ (Գրիգոր Վկայասէր) 102· 104·
Վահրամ պատմիչ 94·
Վահրամ Պահլաւունի 97·
Վահրամ Պարսից զօրավար 59·
Վաղարշ թգ. Հայոց 36·
Վաղարշ թգ. Պարսից 57·
Վաղարշակ Ա. 30· 31· 32· 40·
Վաղարշակ Բ. 49
Վաղարշապատ 36· 37· 52·
Վաղարշաւան 36·
Վաղէնտինիանոս 45· 47·
Վաղէնտին զօրավար 67·
Վաղերիոս 39·
Վաղէս 45· 47·
Վայոց ձոր 52·
Վան 15· 32·
Վանական վարդապետ 147·
Վասակ պահլաւունի. 95·
Վասակ կիւրիկեան 145· 155·
Վասակ Սիւնի 54· 56·
Վասակ եղբ. Վահանայ մեծի 56·
Վասիդ 73·
Վասիլ Ա. կայսր 84· 85·
Վասիլ Բ. կայսր 91· 93·
Վասպուրականի թագաւորք 92·
Վասպուրականի ծով 155·
Վատած. (Տիբլովագացի) 161·
Վատնեան դաշտ 43·
Վարագայ վանք 98·
Վարազդատ թգ. 49·
Վարազդատ մարզպան 61·
Վարազվաղան 54· 56·
Վարազտիրոց 68·
Վարազորդատ 68·
Վարաժունիք 30·
Վարաչան ք. 74·
Վարբակէս 15·
Վարդ Ռշտունի 68·
Վարդ եղբայր Վահանայ 57·
Վարդան մեծն 51-53· 60·
Վարդան որդի Վասակայ 61·
Վարդանակերտ 71·
Վարդանաշատ գե. 144·
Վարդգէս աւան 36·
Վարձիայ վանք 69·
Վարոս 56·
Վեհիաւ ք. 135·
Վեսպիանոս 38· 110·
Վերիացիք կամ Վիրխա 31·
Վիգէն 124·
Վիլօս 16· 17·
Վիրապ Արտաշատու 121·
Վիրք 14·
Վլիթ 72· 74·
Վնասեպ 36·
Վնգոյ 53·
Վունդ 36·
Վռամ Բ. 51· 52·
Վռամշապուհ 49· 51·
Վտանիոտ 105·
Վրաց տուն 123·
Վրթանէս 37· 43· 45·
Վրկան 10·

Տամար. Տ. Թամար.
Տախալասան լ. 42·

Տակիտոս կայսր 39·
Տաճիկք 29·
Տայուշ· Տ · Տաւուշ ·
Տայք 59· 76·
Տանկրի 110· 114· 117·
Տանուտէրական գւ · 59·
Տաշիր 90·
Տապարաստան 95·
Ցաւալի 95·
Տարապկերտ 95·
Տարօն 40· 41· 58· 78· 80· 85·
Տաւուշ բ · գւ · 92· 119· 145·
Տափար սուլտան 113· 118·
Տափնաս 29·
Տեառնթագ 57·
Տէրունական բ · 119· 145·
Տիբեր Ա · կայսր 38·
Տիբեր Բ · 84·
Տիգրան Ա · (Երուանդեան) 15·
Տիգրան Բ · (Արշակունի) 32· 34·
Տիգրան Գ · (Վերջին) 36·
Տիգրան հայր Վահրամայ պատ-
մչի 94·
Տիգրանակերտ (Ամիթ) 34·
Տիգրիս 31·
Տիմոթ վարդապետ 69·
Տիմոթէոս պատր · Աղէքս · 82·
Տիմոթէոս (Կուզ) 84·
Տիտոս 35· 38·
Տիտոս կայսր 38·
Տիրան Ա · 15· 45· 46·
Տիրան Բ · 35·
Տիրան Գ · 45· 46·
Տիրան արքայ Ճենաց 37·
Տիրիթ 48·
Տիւրացիք 23·
Տիւրենացիք 14·
Տիւրոս 23·
Տողուղ-խաթուն 149· 150· 160·
Տոյնք 159·
Տուկիծ կայսր 110·
Տուղրիլ-Բէկ 96· 98· 101·
Տուղրիլ Ուժոյն 97·
Տուրք 31·
Տրայիանոս 38·
Տրապիզոն 59·
Տրապոլիս 134·
Տրդատ 37· 39· 40· 42· 43· 61· 74· 75·
Տրդատ որդի Գ · Տիրանայ 47·
Տրդատ Ա · կթ · 75·
Տրդատ Բ · կթ · 75·
Տրպատունիք 31·
Տփխիս 78·
Տօրոս 80·

Փալհաւան 130·
Փակէէ 25· 26·
Փակէէ միւս 25· 26·
Փաղէկ 10·
Փայեթոն 19·
Փայտակարան 43·
Փառան (Փառնակ) 25·
Փառան անապատ 63·
Փառանձեմ 48·
Փառխոս 100·
Փառնաւազ 15·
Փառներսեհ 46·
Փատլուն ամիրայ Գանձակայ 120·
122·
Փատլուն ամիրայ Դունայ 100· 103·
Փաւլիկեանք 106·
Փարաւոն 18·
Փեոփեոժէն ( Պորփիւրոժեն )
կայսր 118· 124·
Փերմելիանոս եպիսկոպոս 39·
Փերոժ · Տ · Փեոփեոժէն ·
Փիլարտոս 104·
Փիլաքսիոս 84·
Փիլիպուպոլիս 135·
Փիլիպպէ իշխան Փառխոսոյ 100·
Փիլիպպոս կայսր 36· 39·
Փիլիպպոս Վարդան կայսր 84·
Փիլոգոս 20·
Փինտ-Տատուն-խան · Ծ · 96·
Փիսիկ ( Սահակ կայսր) 132· 133·
135·
Փիւնիկէ 20·
Փիւնիկս 20·
Փլաբիանոս պատր · 85·
Փղշտացիք 21· 22·
Փնտխտար 162·
Փոկաս 84·
Փոկաս ապստամբ 92·
Փոյթ (Փոթի) 72·
Փոմա 15·
Փովկաս կայսր 60· 61·
Փոտ պատր · 82·
Փորոն 18·
Փուա 25·
Փռանկք 110· 111· 134
Փրանգէզք 134·

Քաղանէ 11.
Քաղդէացիք 7. 16. 26. 29. 42.
Քաղկեդոն 71.
Քաղկեդոնի ժողով 54. 68.
Քաղրթ 66.
Քամ 9. 10. 13. 15.
Քայաղ 15.
Քանան 30.
Քանդար թգ. 18.
Քաջաջ 54.
Քաջ-Վահանայ ամրոց 42.
Քասախ, Քասաղ գետ 36. 69.
Քալթար Օրբէլեան 130.
Քարթլ (Վրաստան) 91.
Քարթլոս 14. 91.
Քաւազին բ. լ. 145.
Քեբրոն 18.
Քիթբուղա 152.
Քիրամ 23.
Քնթունիք 30.
Քոբայր 122.
Քոհստան 95.
Քողցադ 63.
Քուշ 15.
Քուշանք 29.
Քուս 20.
Քուրդ իշխան 140.
Քուրդք 138.
Քսանթիս 18.
Քսարոս 16.
Քսերքսէս 27.
Քրիստափոր կթ. 57.
Քրիստափոր բ. 61. 62.

Օգոստոս 33. 34. 38.
Օղկան (Աւղկան) 118.
Օթմնու գ. 74.
Օձ բերդ 79.
Օմար 68.
Օշական գ. 52.
Օտա 39. 86.
Օրբէլեանք 126. 130.

Ֆիլիպ (այր Զապէլայ) 141.